

ՃԱԿԱՏԱԳՐՈՎ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ

Վեպ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Մեզնից յուրաքանչյուրը ծնվում է օժտված կյանքի որոշակի առաքելությամբ: Ու թե ինչպես պիտի այն աստիճանաբար սրբագրվի, կախված է ոչ միայն մեր գործողություններից, ինտուիցիայից, բնավորությունից, այլև շրջակա միջավայրից: Սակայն եթե ձևավորելու լինենք այն միտքը, որ մարդն է իր ճակատագիրը ստեղծում, այնքան էլ իրավացի չենք լինի, քանզի գոյություն ունեն նաև արտաքին հանգամանքներ, որոնք փոխում են մարդու ճակատագիրը: Մարդը ոչ իր մեղքով կարող է հայտնվել տարբեր իրավիճակների մեջ: Իզուր չեն ասում, որ ճակատագրից չես կարող փախչել: Ոչ ոք չի կարող գուշակել, թե իրեն ինչ ճակատագիր է սպասվում:

Ավետիսը դեռ չէր պատկերացնում, թե իրեն ինչպիսի փորձություն էր սպասվում՝ առանց մոր խնամքի ու աջակցության: Տասնչորսամյա պատանին Արևմտյան Հայաստանի Դատեմ գյուղից էր, որտեղ ծնվել էին նրա նախապապերը և որտեղ ապրում էր նա: Յուրաքանչյուր գեղեցիկ ակնթարթ լցված էր տազնապով, ցավով, գորոյան հանգույցի նմանվող անվերջանալի մտատանջություններով: Նա կազմվածքով նիհար էր, բայց բավականին հետաքրքրասեր, կենսուրախ, համառ տղա էր: Ավետիսը Խարբերդի «Եփրատ» քոլեջում կիսատ էր թողել ուսումը՝ նյութական միջոցներ չլինելու պատճառով /սրտի կաթվածից մահացել էր հայրը՝ Հովսեփ Մուրադյանը, որը մանկավարժ էր աշխատում գյուղի դպրոցում/: Այդ քոլեջը կառուցվել էր 1878 թվականին՝ ամերիկյան միսիոներության ակտիվ նախաձեռնությամբ: Միսիոներների նպատակն էր բողոքականություն տարածել հայ ժողովրդի մեջ՝ ատելություն սերմանելով հայ լուսավորչականների նկատմամբ: Ցավոք, կրոնական անջատումը բերում էր և օտարացում, ստեղծում ծուլման վտանգ: Կաթոլիկ և բողոքական միսիոներներն իրենց քարոզներով փորձում էին ժողովրդի մեջ արմատախիլ անել հայրենիքի գաղափարը ու բարեկեցիկ անկյուններ առաջարկել հեռավոր երկրներում: Հայերի գաղթը կազմակերպվում էր հատկապես դեպի Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Մեկնում էին խմբերով, ընտանիքներով: Քրդերի, հրեաների և մյուս ժողովուրդների մեջ միսիոներները հաջողություն չունեցան: Այնինչ հաջողություն գտնելով հայերի մեջ, նրանք իրենց կենտրոններն ստեղծեցին Տրապիզոնում, Կարինում, Տիգրանակերտում, Խարբերդում: Թուրք կառավարությունն այդ հարցում աջակցում էր նրանց: Այսպիսով, միսիոներներին հաջողվեց հայ ժողովրդին պառակտել, կազմելով դավանական խմբավորումներ: Այս ամենը, բնականաբար, բացասաբար ազդեց ազգային-ազատագրական պայքարի միասնության գաղափարի վրա:

Ավետիսը տհաճությամբ հիշեց քոլեջի տնօրենի հետ ունեցած իր հանդիպումը: Նա ամեն կերպ փորձեց խնդրել նրան՝ թույլ տալու ուսումը շարունակել քոլեջում՝ հետագայում ուսման վարձը վճարելու պայմանով: Սակայն տնօրենը սառնասրտորեն ասաց.

-Բայց դու այն տարիքին չես, որ քեզ թեկուզ գյուղ ուղարկեմ աշխատելու համար: Տարիներով սպասե՛մ, թե դու երբ փող կվաստակես ու կվճարես ուսմանդ վարձը:

-Ես շատ եմ ուզում սովորել: Այդ դեպքում ի՞նչ կարելի է անել,- համառորեն պնդել էր Ավետիսը:

Տնօրենը մի քանի վայրկյան լռելուց հետո, հարցրել էր.

-Ղու բողոքակա՞ն ես հավատքով:

-Ո՛չ: Ես լուսավորչական եմ:

-Այդ դեպքում քեզ ոչնչով օգնել չեմ կարող: Խորհուրդ եմ տալիս քեզ գնալ արհեստանոց և արհեստ սովորել:

Հետո Ավետիսը նրա մոտից զայրացած հեռացել էր: Նա հաստատապես համոզված էր, որ ինքը հանուն ուսման, իր հավատքից չի հրաժարվի: Հիշել էր հորը, որն իրեն դաստիարակել էր միշտ սկզբունքային լինել: Նա թևաթափ լինելով՝ անգամ մտածել էր որքանոց գնալու մասին: Սակայն գիտեր, որ այնտեղ էլ իրեն չէին ընդունի, քանի որ տարիքով արդեն մեծ էր:

Ավետիսը տխուր մտածեց այն մասին, որ ավելի լավ էր չսովորեր, արհեստավոր դառնար, երբեք չիրականանար իր երազանքը, միայն թե հայրը ողջ լիներ: Հայրը նրա համար մի ողջ տիեզերք էր, իր թիկունքն էր, իր խորհրդատուն, իր անփոխարինելի զրուցակիցը: Նա հիշեց, թե ինչպես էր հայրն իրեն մինչև դպրոց հաճախելը տառերը սովորեցրել: Ու իր մեջ վաղ հասակից ծնվեց ընթերցանության հանդեպ ունեցած սերը: Իսկ երբ վարժ կարդալ սովորեց, կարդում էր թերթերը, հոր ձեռքի տակ եղած տեղեկագրերը: Աստվածաշնչին ծանոթացավ ավելի ուշ՝ չորրորդ դասարանից:

Ավետիսը գիտակցում էր, որ հայրը շատ մեծ արժանիքներ ուներ՝ ազգասեր էր, ընկերասեր, օջախի մարդ էր: Բնավորությամբ կենսախիճ էր, բարի ու գթասիրտ: Տղան շարունակեց հիշել հոր մասնակցությամբ այն երեկոները, երբ նա երգում էր առավելապես հայրենասիրական բնույթի երգեր: Իսկ Կիլիկիայի ջարդերից հետո, երբ ծնվեց «Կիլիկիա» երգը, այն ավելի շատ էր երգվում իրենց տանը և ամեն անգամ հոր աչքերը թացանում էին: Պատանին հասկանում էր, որ հայրը սիրով հոգ էր տանում իր ապագայի մասին: Հիշեց մինչև Խարբերդ մեկնելը հոր հետ ունեցած զրույցը, հատկապես իր «ես»-ը շոյող նրա խոսքերը. «Հպարտ եմ, որդի՛ս, որ ուսումնատենչ ես: Իմացի՛ր, ընդհանրապես մեր ազգը առանձնահատուկ վերաբերմունք ունի ուսման և եկեղեցու հանդեպ: Թուրքերը հայերից կրկնակի շատ են քանակով, բայց հայ աշակերտների թիվը նրանցից կրկնապատիկ շատ է»:

Հայրական սերն ամենաթանկ նվերն էր Ավետիսի համար: Այդ սերը սատարում էր իրեն և իր վահանն էր: Սակայն հոր մահից հետո ոչ միայն միանգամից հօդս ցնդեցին պատանու երազանքները, այլև իրենց ընտանիքը հայտնվեց ծայր աստիճան չքավորության շեմին: Մայրը մենակ էր մնացել իր չորս զավակների հետ: Ավետիսն ուներ երեք քույր: Նրանց սովի չմատնելու համար տիկին Ալմաստը հինգ տարեկան դստերը՝ Սրբուհուն, իր ծանոթներից մեկի միջնորդությամբ տեղավորեց Խարբերդի գերմանական որբանոցում, որը բացվել էր 1895 թվականի ջարդերից հետո, «Գերմանա-հայ օգնության միության»/հետագայում՝ «Գերմանական արևելյան միություն/ նախածեռնությամբ, որի անմիջական կազմակերպիչը հայերի պաշտպան, գերմանացի գիտնական Յոհաննես Լեփսիուսն էր, ով որբանոցներ բացեց նաև Տիգրանակերտում, Վանում, Մալաթիայում, Սվազում, Ուրֆայում: Խարբերդի որբանոցում, ինչպես նաև բոլոր որբանոցներում գործում էին մի քանի արհեստանոցներ: Այն պատանիներն ու աղջիկները, որոնք դպրոցից հետո այլևս ուսումը չէին ցանկանում շարունակել, արհեստներ էին սովորում: Տղաները զբաղվում էին կոշակարությամբ, հյուսնությամբ, ներկարարությամբ: Աղջիկները կարուձև էին սովորում, ձեռագործություն, տնտեսություն վարել:

Ավետիսը մոր խնդրանքով ստիպված դերձակի արհեստ սովորեց՝ սկզբում Խարբերդում, այնուհետև՝ իրենց գյուղում: Միաժամանակ օգնում էր մորը հայրենի ծննդավայրում: Գյուղական աշխատանքներին այնպես էր վարժվել, որ վարձով ուրիշների պարտեզների խոտն ու արտերի ցորենն էր հնձում: Իսկ ընդամենը մի քանի օր առաջ մահից էր փրկվել: Այնպես պատահեց, որ Ավետիսը տեղացիներից մի հայ մարդու արտի ցորենը հնձեց, հավաքեց, մոտ քսան տոպրակ, դրանք բարձեց սայլին: Տերը խոստացավ տղային

վարձատրել սայլը բեռնաթափելուց հետո: Ավետիսը մնաց նրա արտում, սպասեց տիրոջը, բայց նա չեկավ: Պատանուն այնտեղ տեսավ քուրդ հովիվ Վալին, որը երեկոյան նախիրը գյուղ էր բերում:

- Ինչո՞ւ ես այս ուշ ժամին մենակ այստեղ մնացել,- հարցրեց նա:

- Արտի տիրոջը՝ Մոսոյին եմ սպասում:

- Մոսոյի՞ն, որի սայլերը ցերեկով ցորենով էր բեռնված:

- Որտեղի՞ց գիտես: Ես եմ նրա համար վարձով աշխատել:

- Թուրքերը հետապնդել են նրան ճանապարհին: Խեղճին ծեծելով սպանել են, հետո մարմինը քարշ տվել ծառի տակ՝ քարերը գլխին թափել, իսկ սայլը վառել են, որ իբրև հետքը կորցնեն:

- Անիրավներ՝... Ինչո՞ւ: Ախր նա բարի մարդ էր: Իսկ ես ուզում էի նրա հետ սայլով գնալ, օգնել: Մոսոն չթողեց:

- Ավելի լավ: Ողջ ես մնացել: Գնա՛ տուն և աղոթի՛ր:

Հոգնած տուն վերադառնալով՝ այդ օրը Ավետիսը մորը ոչինչ չասաց, բայց հետո խոստովանեց, որ իսկապես փրկվել է մահից:

- Վա՛յ մեզ: Օջախիս ծուխը հավիտյան պիտի հանգչեր,- հառաչանքով ասել էր մայրը՝ աղոթելով Աստծուն:

Սակայն ուսումնատենչ պատանին անպայման ցանկանում էր ուսումը շարունակել Պոլսում՝ որևէ վարժարանում: Մայրը զբաղվեց որդու ուսման գործերով: Անվճար ուսման համար թղթեր ուղարկվեցին Հայոց պատրիարքարան:

Այդ նույն ժամանակահատվածում Ամերիկայից մորական պապը նամակ ուղարկեց, ցանկանալով թոռանն իր մոտ տանել: Մայրը զգուշությամբ այդ մասին նախաձաշին հայտնեց որդուն:

- Ավետի՛ս, պապը նամակ է ուղարկել և ցանկություն է հայտնել քեզ Ամերիկա տանելու: Ճանապարհածախսի փողդ էլ կուղարկի:

- Ես Ամերիկա չեմ մեկնի, մայրի՛կ:

- Մեր հարևան Պողոսն էլ նամակ է ստացել այնտեղից: Նրա տղան այնտեղ ֆաբրիկայում է աշխատում, շաբաթը տասը դոլար է վաստակում:

- Բոլորս որ Ամերիկա մեկնենք, այստեղ ո՞վ պիտի մնա: Միայն թուրքե՞րը... Չէ՞ որ այստեղ էլ կարելի է փող վաստակել: Ես որ ուսում ստանամ, ապրուստս կապահովեմ: Մի՛ մտածիր:

Իսկ արդեն որոշ ժամանակ անց Պոլսից տղայի հորեղբայրը նամակ ուղարկեց, որով հայտնում էր այն մասին, որ Ավետիսն ընդունվել է Սանասարյան վարժարանը, որն այդ տարի փոխադրվել էր Սեբաստիա: Տիկին Ալմաստը որդու համար տաք վերմակ կարեց, սպիտակեղենը պատրաստեց, պարտքով փող վերցրեց: Խեղճ մայրն արցունքն աչքերին ճանապարհեց որդուն՝ խրատներ տալով նրան: Ավետիսը դեռ երկար ժամանակ պիտի հիշեր մոր այնքա՛ն սիրելի հայացքը ու նրա իմաստուն խոսքերը...

Ավետիսն ամբողջ ճանապարհին մտքերի մեջ լուռ հետևում էր այն ճամփաներին, որոնք անցնում էին գյուղերի, լեռների, գետերի կողքով: Իսկ երբ հեռվից նկատում էր եկեղեցիներ, մտովի տեղափոխվում էր իրենց օջախը, հիշելով եկեղեցական տոներն ու արարողությունները:

Պատանին ուշի - ուշով հետևում էր ջորեպաններին, ովքեր գերազանց գիտեին իջևանատները, նաև թե երբ պիտի ճանապարհվել, որպեսզի ցերեկով հասնեին հաջորդ իջևանատունը, որտեղ պետք է անասուններին կեր տային, իրենք էլ ճաշեին:

Վերջապես հասան Կիրասոն՝ Սև ծովի արևելյան ափին փռված քաղաքը: Իջևանեցին ծովամերձ պանդոկներից մեկում: Ավետիսն առաջին անգամն էր ծով տեսնում և հիացավ անապի թվացող հրաշալի ծովի տեսարանով: Մնացած ուղևորների հետ մտնելով պանդոկ՝

նա տաք թեյ խմեց ու մի քիչ էլ հաց կերավ: Այնուհետև ճանապարհի իր ընկերոջ՝ Սաքոյի հետ որոշեցին գնալ թուրքական նավային գործակալություն: Տիկին Ալմաստը որդուն նամակ էր տվել, որտեղ Օքտայ էֆենդուն խնդրում էր օգնել Ավետիսին և նավով անվճար Պոլիս ուղարկել: Տղաները հարցուփորձ անելով՝ գտան գործակալության տեղը, սակայն նշված էֆենդուն չգտան: Պարզվեց նաև, որ թուրքական նավերը զբաղված էին գերիներ տեղափոխելով, քանի որ Բալկանյան պատերազմի ավարտվելուն պես գերիների փոխանակություն էր կատարվում: Իսկ պատերազմն ավարտվել էր Թուրքիայի խայտառակ պարտությամբ: Նա Եվրոպայում կորցրել էր իր իշխանության տակ եղած երկրները՝ Բուլղարիան, Հունաստանը, Չեռնոգորիան, Սերբիան: Բալկանյան ժողովուրդներն, ի վերջո, ազատվել էին թուրքական ծանր լծից:

Ավետիսի հոգին տակնուվրա եղավ: Հուզմունքից սիրտն սկսեց արագ բաբախել: Նրա մոտ եղած փողը քիչ էր նավի տոմս գնելու համար: Ստիպված տոմսավաճառին խնդրեց, որ իրեն օգնի անվճար նավ մտնելու:

-Լավ, նավը կգա, մի բան կմտածե՛նք,- պատասխանեց նա:

Պատանին մի քիչ խաղաղվեց և դուրս եկավ փողոց: Քայլելով դեպի ծովափ, նա, մեկեն, ծանր մտորումների մեջ ընկավ. «Իսկ եթե չհաջողվի՞ տոմս գնել,-հարցնում էր ինքն իրեն,- այդ դեպքում կանցնեմ նավահանգիստ ուղևորների հետ, կսողոսկեմ նավ ու կթաքնվեմ, մինչև նավի լողալը: Իսկ եթե հանկարծ գտնեն ինձ, կխնդրեմ, որ այնտեղ թողնեն՝ նավի մեջ աշխատելու պայմանով: Անգամ եթե ինձ ծեծեն ու բանտարկեն, նավը չեմ թողնի»:

Հաջորդ օրը Ավետիսը պանդոկապետին վճարելով երկու օրվա վարձը, իրերը վերցնելով՝ դարձյալ քայլերն ուղղեց դեպի գործակալություն՝ անվճար տոմս գնելու: Սակայն գործակալը պատասխանեց, որ գոնե տոմսի կես գինը պիտի վճարել:

-Բայց ես փող չունեմ: Ինձ չե՞ք հավատում: Անպայման պետք է Պոլիս հասնեմ՝ ուսումնա շարունակելու:

Այս անգամ նրան ոչ ոք չպատասխանեց: Պատանին շվարած մի կողմ քաշվեց՝ մարդկանց չխանգարելու համար, բայց սաստիկ հուզմունքից արցունքները սկսեցին հոսել այտերի վրայով: Քառասունն անց բարետես մի տղամարդ, որին Մկրտիչ էին անվանում, ավելի մոտ կանգնած լինելով տղային, լսել էր աղերսը: Մոտենալով Ավետիսին՝ ասաց.

-Տղա՛ ջան, եթե քեզ տոմսի կես արժեքով տոմս կտան, վերցրո՛ւ այս փողը,- նա գրպանից հանելով այն, տվեց Ավետիսին ու պատրաստվեց մակույկ նստելու:

Պատանին աչքերին չէր հավատում: Նա իսկույն մտածեց, որ մոր աղոթքներն իրեն օգնեցին: Սակայն դիմելով իրեն օգնության ձեռք մեկնած անծանոթ տղամարդուն՝ ասաց.

-Ձեզ հավանաբար Աստված ուղարկեց ինձ մոտ: Շատ շնորհակալ եմ:

Ավետիսը սրբելով արցունքները, այս անգամ զվարթ տեսքով գնաց տոմս գնելու և ճշտեց նավը մեկնելու ժամը: Ու տեղեկացավ, որ շոգենավը միայն չորս օրից հետո է Պոլիս հասնելու: Նա մտավ խանութ և գնեց հաց, պանիր ու շաքար: Հետո արագ գնաց մակույկ նստելու: Քիչ անց նա նավի վրա էր: Տախտակամածի վրա կանգնած ուղևորները միայն տղամարդիկ էին:

Ավետիսին մոտեցավ կրկին պարոն Մկրտիչը և հրավիրեց իր նավախուցը: Նա տղային միրգ հյուրասիրեց և հարցրեց.

-Ո՞վքեր են քո ծնողները: Ինչո՞ւ ես մենակ ճանապարհ ընկել:

-Հայրս վարժապետ էր, մի քանի տարի առաջ մահացավ սրտի կաթվածից: Տանը մնացել են քույրերս, որոնց մայրս է խնամում,-պատասխանեց Ավետիսը, նաև չուզեց պատմել, որ վատ վիճակի պատճառով քույրերից մեկին որբանոց են հանձնել:

-Իսկ դու ինչո՞վ էիր զբաղվում:

-Սովորում էի Խարբերդի «Եփրատ» քոլեջում: Ընդամենը այնտեղ մեկ տարի մնացի: Հորս մահից հետո ուսումնս կիսատ մնաց: Հիմա ուզում եմ նորից ուսումնս շարունակել Սանասարյան վարժարանում: Հորեղբայրս գրել է, որ ինձ այնտեղ ընդունել են: Մայրս էր թղթերս ուղարկել:

-Դու առաջի՞ն անգամն ես Պոլիս մեկնում:

-Այո՛, պարոն Մկրտիչ:

-Ինչպե՞ս պիտի գտնես հորեղբորդ:

-Զգիտեմ, -պատասխանեց Ավետիսը՝ ցույց տալով իր բարեկամի հասցեն:

Մկրտիչը վերցնելով հասցեն՝ հարցական նայեց տղային:

-Հը՛մ...Դա հեռու չէ, քաղաքի կենտրոնական մասում է: Ոչինչ, ես կխնդրեմ իմ ծանոթներից մեկին, որ քեզ տեղ հասցնի:

-Շնորհակալ եմ, պարո՛ն: Ես իմ հորեղբորից կվերցնեմ ինձ տրամադրված տոմսի գումարը և ձեզ կվերադարձնեմ: Ձեր հասցեն տվե՛ք:

Մկրտիչը ձեռքը թափ տվեց և բարեհամբույր ժպտաց տղային:

-Պետք չէ: Իսկ եթե փողի կարիք ունես, էլի կարող եմ տալ, -առաջարկեց նա:

-Ո՛չ, շնորհակալ եմ: Ունեցած փողով տոմս գնեցի, նաև ուտելիք:

-Դե, չամաչես ինձնից: Եթե պետք կգամ, անպայման ինձ մոտ արի: Նավախցիկի համարը հիշի՛ր:

Ավետիսը կանգնեց և դուրս եկավ պարոն Մկրտիչի մոտից: Նա գնաց իր խուցը և պառկեց հանգստանալու: Այդ ընթացքում նաև նավաբեկություն եղավ: Դա չազդեց Ավետիսի վրա:

Վերջապես նավը հասավ նավամատույցին: Մարդիկ իրենց իրերով պատրաստվեցին դուրս գալ: Նավն իր սանդուղքն արդեն կախել էր: Պարոն Մկրտիչը, ինչպես խոստացել էր, իր ծանոթներից մեկին խնդրեց Ավետիսին օգնել տեղ հասնելու: Ծանոթը՝ Մովսես աղան, քիչ անց ծիսասյուղ մոտեցավ և պատանու իրերը տեղավորելով սայլի մեջ՝ ճանապարհ ընկավ:

Ավետիսի հորեղբայրը՝ Մարտիրոս աղան, մանր աչքերով, թավ բեղերով, թեթևակի դուրս ցցված փորով քառասունութ տարեկան տղամարդ էր: Նա իր կրտսեր եղբորից՝ Հովսեփից մեծ էր մի քանի տարով: Իր հարազատների հետ հիմնականում կապ էր պաշտպանում նամակների միջոցով: Ապրելով Թուրքիայի մայրաքաղաքում և գտնվելով բավականին հեռու մերձավորներից, չէր կարող մասնակցել ո՛չ նրանց ուրախությանը, ո՛չ տխրությանը: Իսկ կրտսեր եղբոր մահվան մասին լուրն ավելի ուշ իմացավ:

Մարտիրոս աղան երկու զավակ ուներ: Աղջիկը սովորում էր դպրոցում, իսկ որդին ավարտել էր ուսումը և օգնում էր հորը:

Ապրելով Պոլսի կենտրոնական թաղամասում՝ նա ուներ երկհարկանի տուն, ջրամբար, փոքրիկ այգի, իսկ խանութը և հացի փուռը գտնվում էին նույնպես այդ վայրում: Ավետիսը գնաց հորեղբոր խանութը: Հորեղբայրը ջերմությամբ դիմավորելով զարմիկին, նրան իր տուն տարավ: Կինը՝ Երանուհին, նույնպես սիրալիք ընդունեց տղային: Նա կլոր դեմքով, մանր աչքերով, նուրբ դիմագծերով միջին տարիքի կին էր: Տանտիրուհին իսկույն սեղան գցեց, և բոլորը միասին ճաշեցին:

-Դե, լավ, խանութը չեմ կարող երկար ժամանակ փակ թողնել: Ավետի՛ս, դու հանգստացի՛ր, լողացի՛ր, իսկ ես երեկոյան կգամ, կգրուցե՛նք,- Մարտիրոս աղան շուտափույթ դուրս եկավ տնից:

Տիկին Երանուհին ջուր տաքացրեց, որ Ավետիսը լողանար ու փոխեր շորերը: Պատանին մի տեսակ թեթևացած շունչ քաշեց, քանի որ զգաց, որ գտնվում է հարազատ միջավայրում:

Երեկոյան տնեցիները հավաքվեցին: Ընթրիքին ներկա էին նաև Ավետիսի հորեղբոր զավակները՝ քսանամյա Ղազարը, որ վերջերս էր վերադարձել Ամերիկայից և նրա քույրը՝ տասներեքամյա Աղավնին: Ընթրիքից հետո Մարտիրոս աղան հարցուփորձ արեց զարմիկից: Ավետիսը համառոտ տեղեկություն տվեց բոլորից:

-Եթե ուսման հանդեպ սեր ունես, ուրեմն խելքդ աշխատում է,- ժպտաց հորեղբայրը:

-Հայրս եթե չմահանար, ես հիմա Խարբերդի «Եփրատ» քոլեջում ուսումնա կշարունակեի, բայց...

-Հասկանալի է, ձգտում ես հորդ պես վարժապետ դառնալ:

-Այո՛, շատ եմ ուզում: Ես վաղը կգնամ հայոց պատրիարքարան:

Հաջորդ օրն առավոտյան Ավետիսը զբաղվեց իր գործով: Նրան հաջողվեց հանդիպել Հայոց պատրիարքարանի ուսումնական խորհրդի փոխատենապետի հետ: Սակայն նա խորը հիասթափություն ապրեց, երբ պարզվեց, որ ուշացել էր դասերից: Ուսումնական տարին վաղուց սկսվել էր, քանի որ հոկտեմբեր ամսվա վերջին օրերն էին: Փաստորեն երկու ամիս անցել էր: Ավետիսի հույսերն ասես միանգամից հոդս ցնդեցին: Նա ջանքեր գործադրեց ինչ-որ կերպ համոզել փոխատենապետին որևէ ելք գտնելու իր համար:

-Իսկ Պոլսում Սանասարյան վարժարանի պես դպրոց չկա՞,- հարցրեց նա հուզված ձայնով՝ հիշելով, թե ինչպիսի դժվարությունների միջով է անցել, մինչև հասել է այդտեղ:

-Ո՛չ: Պերպերյան և Կենտրոնական վարժարաններ կան, սակայն այնտեղ տեղ չունենք: Այնպես որ, գնա՛ տուն, մյուս տարի կգաս:

Ավետիսը քիչ մնաց անելանելի վիճակից ուշաթափվեց: Ախր ո՞նց բացատրեք, որ փողի խնդիր ունի ինքը: Ո՞նց պիտի տուն վերադառնար, հետո էլ ետ գար:

-Իսկ եթե մի դասարան ցածր նստեմ, չի՞ լինի,-համառեց պատանին, որը փորձում էր անպայման իր ուսման հարցը լուծել:

-Ո՛չ:

Ավետիսը ընկճված սրտով տուն վերադարձավ՝ մտածելով Սեբաստիա գնալու ճանապարհածախսի մասին: Սակայն նա փող չունեւր, հորեղբայրն էլ ասաց, որ պարտքեր ունի և չի կարող օգնել: Վերջին հույսը, այնուհանդերձ, հորեղբայրն էր, բայց նա անկարող գտնվեց: Դառնությամբ մտածեց, թե այդքանից հետո ինչով պիտի զբաղվի: Մինչ նա մտածումըների մեջ էր, Մարտիրոս աղան Ավետիսին խորհուրդ տվեց առհասարակ ուսումը չշարունակել: Այսինքն՝ նա իր հոր հակապատկերն էր: Հորեղբայրն առևտրականի հոգեբանություն ուներ:

-Շատ մարդիկ կան, որ չեն սովորել քո նշած այդ վարժարաններում, սակայն հիմա միլիոնատերեր են:

Ավետիսը չուզեց վիճել հորեղբոր հետ: Նա միայն հարցրեց.

-Հորեղբա՛յր, մի՞թե ձեզ մոտ ձրի դպրոց չկա, գնայի, սովորեի: Ասենք Մխիթարյան վարժարանում:

-Այնտեղ տեղավորվելու համար ծանոթ մարդ պիտի ունենաս կամ էլ փող պիտի տաս: Մի՛ մտածիր, եթե շատ ես ուզում ուսումդ շարունակել, մյուս տարի կփորձես:

Եվ հորեղբոր հետ այդ թեմայով խոսակցությունն ավարտվեց: Իսկ հաջորդ օրն Ավետիսը գնաց նրա հացի կրպակը՝ հորեղբորն օգնելու: Պատանին օգնեց հացը տանելու համապատասխան վայրեր: Դա առիթ հանդիսացավ, որպեսզի ավելի մոտիկից ծանոթանար շրջապատին, մարդկանց նիստուկացին:

Ազատ ժամերին Ավետիսը սիրում էր հայտնվել նավահանգստում, որտեղ յուրաքանչյուր նավի ժամանելուն պես իրեն հասակակից տղաներ էին հավաքվում այնտեղ: Նրանք թուրք տղաներ էին, որոնք իրենց աշխատանքի դիմաց փող էին վաստակում: Ավետիսն էլ բեռնակրություն արեց հորեղբորից թաքուն: Մի քանի օր անց Մարտիրոս աղան միջնորդեց,

որ զարմիկը լրագրեր վաճառեր փողոցներում: Սակայն նա ժամանակ էր գտնում նաև բեռնակրությամբ զբաղվելու: Մի օր, երբ ուշ վերադարձավ տուն, հորեղբայրն անհանգիստ, նաև բարկացած տոնով հարցրեց նրան.

-Ծո՛ղ, ո՞ւր էիր,- նա բարկությունից մի ապտակ հասցրեց զարմիկին:-Սա քեզ համար գյուղ է: Դու ապրում ես Պոլսում, ուր անտեր մարդուն հեշտությամբ կորցնում են:

Ավետիսը հուզվեց, ձեռքը տանելով դեպի ապտակից այրող այտը: Նաև հասկացավ, թե որքան էր նա անհանգստացել իր համար: Ավետիսն ազնվորեն բացատրեց հորեղբորն իր ուշանալու պատճառը, և ձեռքը տանելով դեպի գրպանը, փող հանեց ու մեկնեց նրան:

-Ի՛նչ,-Մարտիրոս աղան զայրույթից ձայնը բարձրացրեց:-Դու Պոլիս ես եկել համբալություն՞ւն անելու,-և խփեց նրա ձեռքին:

Փողը շաղ եկավ հատակին:

-Այլևս նման բան չտեսնեմ:

-Ուզում էի լրացուցիչ փող վաստակել,- փորձեց արդարանալ տղան:

-Մի՛ շարունակիր: Դու այժմ լրագրեր ես վաճառում, շուտով դերձակի մոտ էլ կտանեմ: Փողդ վերցրո՛ւ հատակից և գնա ճաշի՛ր: Միայն իմացի՛ր, որ քո արածն ինձ պատիվ չի բերում:

Ավետիսն այլևս ոչինչ չպատասխանեց: Նա մտածում էր իր հարազատների համար մի քիչ փող հավաքելու մասին: Մանավանդ որ մայրը գրում էր, թե ճանապարհածախսի համար վերցրած պարտքը չի կարողանում վերադարձնել և խնդրում էր փող ուղարկել, ինչպես նաև տուն վերադառնալ: Սակայն պատանին մտածում էր, որ ավելի լավ կլիներ նրանց գումարով օգներ, քան նորից ետ վերադառնար:

Հաջորդ օրը նա որոշեց լրագրերից բացի նաև թաշկինակներ վաճառել: Վերջապես Մարտիրոս աղան Ավետիսին տարավ իր ծանոթ դերձակներից մեկի մոտ: Վարպետը նրան մնալու համար տեղ հատկացրեց: Ավետիսին տրամադրվեց փոքրիկ, լուսավոր մի սենյակ, որտեղ նա տեղավորեց իր իրերը: Դերձակը միջին տարիքի մարդ էր՝ կլոր դեմքով ու բարի հայացքով:

Ավետիսի կացարանը նայում էր դեպի ծովը, և տղան այնտեղից հետևում էր նավերի ու նավակների եռուզեռին: Երեկոյան ուշ ժամերի երբեմն նա սիրում էր քայլել ծովեզրով, հիանալ ծովի տարերքով, թեև խոնավ, ցողաթաթախ քամին զարկում էր նրա դեմքին, սողոսկելով նաև մարմնի մեջ: Սակայն Ավետիսի սիրտն էլ խոհերից ասես ավելոծվում էր ծովի փոթորկի նման:

Սկսվեց 1914 թվականի առաջին աշխարհամարտը: Եվրոպան բաժանվեց երկու հակադիր ուժերի: Գերմանիան՝ ընդդեմ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, իսկ Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն էր: Թուրքիայում հայտնվեցին շատ գերմանացի սպաներ: Նրանք հաճախ թուրքական բանակի սպայի համազգեստ էին հագնում և ամենուր մարզում էին թուրքական բանակը:

Պատերազմի սկզբում Թուրքիան չեզոքություն էր պահպանում: 1914-ին Թուրքիայի և Գերմանիայի միջև ռազմական դաշինք կնքվեց: Թուրքիան սպասում էր, որ Ռուսաստանի համար ծանր վիճակ ստեղծվի, որից հետո միայն պիտի սկսեր իր հարձակումը: Սակայն Գերմանիան շտապում էր Թուրքիային ավելի շուտ ներգրավել պատերազմի մեջ, որպեսզի Ռուսաստանն արևմտյան ռազմաճակատի զորքերի մի մասը տեղափոխի Կովկասյան ռազմաճակատ և նպաստավոր պայմաններ ստեղծվեին գերմանական արշավանքի համար: Ահա ինչու նույն թվականի հոկտեմբերի 16-ին Թուրքիան պատերազմ հայտարարեց ցարական Ռուսաստանին, որը Գերմանիային սպառնացող միակ ուժն էր:

Դեռ պատերազմից առաջ Գերմանիան մուտք էր գործում Օսմանյան կայսրության քաղաքականության, տնտեսական ու մշակութային կյանքի ոլորտները, ակտիվորեն ցուցաբերելով իր ներկայությունը բոլոր մանր ու խոշոր գործերում: Աճում էր գերմանական կազմակերպությունների, դպրոցների, թերթերի, զանազան հիմնարկությունների ներկայացուցիչների թիվը, ամրապնդվում էր նրանց դիրքը երկրի ներսում: Այդ ամենին նպաստեց պատերազմի նախօրյակին ստեղծված «Գերմանա-թուրքական» կոմիտեի գործունեությունը: Եվրոպական տերությունից նոր փոխառությունները, տնտեսական և քաղաքական ազդեցության ուժեղացումը Թուրքիային դարձրին գերմանական իմպերիալիստների ֆինանսական վասալը, որը բազմաթիվ բնագավառներում կորցնելով իր ինքնուրույնությունը, ստիպված էր հնազանդորեն կատարել իր տիրոջ պահանջները, քանի որ արտաքին կապերը վերնախավի հարստացման կարևոր աղբյուրներից էին:

Ցեղասպանության ժամանակ գերմանացիներն էլ հարստացել են տեղահանված հայերի հաշվին: Երկաթուղու գերմանական ծառայողները համագործակցում էին թուրքական կառավարության կաշառված պաշտոնյաների հետ, հնարավոր բոլոր միջոցներով կորզում անպաշտպան տարագիրների ամբողջ փողն ու ունեցվածքը:

Սկսած հուլիսից, Պոլսի փողոցներում զորակոչ էր հայտարարված: Թուրքիան ընդհանուր զորակոչին ուզում էր հավաքագրել երեք միլիոն մարդու: Օգտվելով պատերազմական վիճակից, թուրքական կառավարությունը սանձարձակ էր դարձել քրիստոնյաների, հատկապես հայերի հանդեպ: Սկզբում իշխանությունները մեծացրին հարկերը: Նրանք հարկատու դարձրին և՛ հայ առևտրականներին, և՛ արհեստավորներին, և՛ գյուղացիներին: Հետո հրաման եղավ հավաքելու շրջակայքի ձիերն ու կառքերը՝ իբրև բանակին օժանդակելու համար: Այնուհետև զինվորներին հագուստով ապահովելու համար սկսեցին թալանել հայ վաճառականների կտորեղենի խանութները: Բոլոր փռատերերին, որոնց մեծամասնությունը հայեր էին, կարգադրել էին պարտադիր հաց մատակարարել Պոլսի զորանոցներում լցված զինվորներին: Բացի այդ, թուրքերը մտնում էին հայերին պատկանող խանութները, ռեստորանները, ավերում ու թալանում էին: Սկսվեցին նաև ձերբակալությունները: Ցավոք, հայերը դեռ հավատում էին թուրքերին և թալանը, կողոպուտը, բանտարկությունները ժամանակավոր երևույթ էին համարում, թելադրված պատերազմական դժվարին պայմաններից:

Եվ քանի որ Թուրքիան պատերազմ էր հայտարարել Ռուսաստանին, իթթիհատական թերթերը պաշտպանում էին իրենց կառավարության քաղաքականությունը: Մինչդեռ հայերը մտածում էին, որ Ռուսաստանը և եվրոպական մյուս տերությունները Թուրքիային կստիպեն ի վերջո լուծել Հայկական հարցը: Սակայն Թուրքիան այդ հարցն ուզում էր լուծել հրեշավոր ճանապարհով:

Ավետիսի զարմիկը զորակոչին չմասնակցելու համար թաքնվեց սկզբում իր կացարանում: Բայց մի օր Ավետիսի վարպետն ասաց.

-Գնում եմ զինբաժին՝ արձանագրվելու,-ու նա տղային վարձատրեց իր աշխատանքի դիմաց:

Զինակոչի պատճառով շատ արհեստանոցներ ու խանութներ փակվեցին: Օրեցօր կյանքը փոխվում էր, ապրուստը դառնում էր անտանելի ծանր: Խիստ բարձրացան հացի, նավթի և այլ մթերքների գները: Հացի համար արդեն հերթեր էին գոյացել: Մարդիկ ավելի շատ հաց էին գնում չորացնելու՝ նեղ օրվա համար: Ավետիսը նույնպես մթերքներ և շաքարեղեն գնեց: Փողոցները դատարկվեցին: Հորեղբոր տղան՝ Ղազարը, վերադարձավ իրենց տուն՝ փակվելով տան ներքնահարկում: Ավետիսը դարձյալ զբաղվեց լրագրավաճառությամբ: Այդ ամիսներին հայերենով լույս էր տեսնում «Վերջին լուր» թերթը, և նա կարողանում էր հայաշատ վայրերում գոռավով ծախել ձեռքի օրինակները: Ավետիսը կարդում էր նաև թերթեր՝ մասնավորապես թուրքերեն լեզվով՝ հետևելով պատերազմական վերջին

իրադարձություններին: Մի օր սրճարանում լսեց երկու թուրքի զրույցը: Նրա ականջին հասավ այն տեղեկությունը, որ Թալեաթը կանչել է Հայոց Ջավեն պատրիարքին և այլ պաշտոնյաներին, զգուշացրել է հեռու մնալ ռուսներից և մտածել հայկական բարենորոգումների մասին: Իսկ էնվեր փաշան ռուսական ռազմաճակատում և այլ զորամասերում գտնվող հայ զինվորներին զինաթափելով՝ ուղարկել էր աշխատավորական գումարտակ՝ խրամատներ փորելու:

Մոտենում էր Նոր տարին՝ **1915 թվականը**: Սակայն պատերազմի պատճառով մարդկանց դեմքերից անհետացել էր ուրախությունը: Այնուհանդերձ, մարդիկ իրար շնորհավորում էին:

Մարտիրոս աղայի Ամանորը շնորհավորելու եկան իրեն մտերիմ մարդիկ, խանութպաններ Սերոբը, Պետրոսը, Ջիվանը: Ավետիսը ևս գնաց հորեղբորը շնորհավորելու և նստեց հյուրերի մոտ՝ սեղանի ներքևի մասում: Նրանց խոսակցության թեման պատերազմն էր և հայերի վիճակը:

-Է՛հ, մենք այստեղ տաք տեղը նստած ուտում-խմում ենք, իսկ հայ զինվորները պատերազմի դաշտում արյուն են թափում Օսմանյան երկիրը փրկելու համար,- ասաց Ջիվան աղան՝ վերսկսելով ընդհատված զրույցը:

-Թուրքիան պատրաստ է իր հողերը պետք եղած դեպքում զիջել ուրիշ երկրների, բայց հայերին պապենական հողից մի թիզ չի տա,- վրդովված խոսեց Պետրոս աղան:

-Հայերի հավատարմությունը ոչ մի տեղ չի գնահատվում: Ո՞վ է մեզ հետ հաշվի նստում: Հայերը ռուսական զորքին չօգնեցի՞ն: Իսկ ռուսական ցարը ի՞նչ արեց մեզ համար: Դե, թող հրամայեր թուրքերին մեր հողերը վերադարձնելու, - մտախոհ, չիբուխը ծխելով ասաց Սերոբ աղան:

-Ախր ի՞նչ պիտի լինի մեր վերջը: Մենք հույսներս ռուսների վրա ենք դրել, բայց 1908 թվականին նույն ռուսական թագավորը հայկական դպրոցները փակել տվեց, հայկական եկեղեցիների կալվածքները բռնազավթեց,-ասաց Պետրոս աղան:

-Այնինչ հայերը հավատարիմ են ռուսներին: Նրանք Ռուսաստանին ապավինել են դեռ Իսրայել Օրու ժամանակից: Պետրոս Մեծն էլ խոստացել էր հայերին օգնել և լիիրավ իշխանություն տալ իր հովանավորության ներքո,-Պետրոս աղայի խոսքը լրացրեց Սերոբ աղան:

-Ցավոք, մենք միշտ ուրիշներին ենք ծառայել, բայց մեր ազգի մասին չենք մտածում: Հիմա էլ հայերը կռվում են Թուրքիայի բանակում, հարյուր հազարավոր հայեր են կռվում նաև ցարական ռազմաճակատներում: Իսկ ցարը հաջողության դեպքում կօգնի՞ մեզ՝ հայերիս, վերադարձնել Հայաստանը, -Մարտիրոս աղան լցրեց նորից հյուրերի բաժակները:

-Է՛, Մարտիրոս աղա, սուլթան Համիդը թողե՞ց, որ Հայաստան կազմվեր: Ընդհակառակը, նա հարյուր հազարավոր հայերի ջարդեց: Մեծ պետություններն էլ չդատապարտեցին նրան, -ասաց Ջիվան աղան:

-Եվրոպական պետությունները մշտապես դիվանագիտական խաղերի մեջ են: Ֆրանսիացիները հայերին կաթուղի դարձնելով են թափանցում Թուրքիա, Ամերիկան՝ բողոքականացնելով: Հետո էլ ամեն մեկը թուրքերից իր բաժինը կուզի: Սակայն մի բան հաստատ գիտեմ, որ այս դավանափոխություններն ավելի վտանգավոր են, ջլատում են մեր ուժը, ավելի վնասակար են, քան կուսակցությունների անմիաբանությունը: Մինչդեռ թուրքի համար դավանանքը նշանակություն չունի: Հայ ես, գլուխդ կթռցնի: Մեր հայերը սա պիտի հասկանան: Մենք հին ազգ ենք, մեր պատմությունն ու մշակույթն ունենք և այն ամեն կերպ պիտի պահպանենք,-Սերոբ աղան մտախոհ քաշեց իր չիբուխը:

- Ի՞նչ է, կարծում եք, եթե ներկայիս կառավարությունը մեզնից զավթած հողերի մի մասը ետ վերադարձնի, մենք կմոռանա՞նք թշնամանքը: Մոռացե՞լ եք, որ երիտթուրքերի օրոք

կատարվեցին Ադանայի ջարդերը: Դա էլ կազմակերպված էր, -Պետրոս աղան հարմար թիկնեց իր աթոռին:

- Ջավեշտալին այն է, որ դրանից հետո երիտթուրքերի կառավարությունը սկսեց իբր հետաքննություն անցկացնել, որը ձևական բնույթ էր կրում: Այդ փաստը, սակայն, ցույց տվեց, թե նրանք որքան հավատարիմ են հակահայկական քաղաքականությանը, որը տարվում էր Աբդուլ Համիդի կողմից: Այս ամենը լուրջ մտածելու տեղիք է տալիս,- պատասխանեց Սերոբ աղան:

- Երիտթուրքերն էլ երբ իշխանության անցան, հայերը շատ պայքարեցին, զոհեր տվեցին, հույս կապելով, որ նրանք հայերի պահանջը կբավարարեն: Այս պատերազմն էլ մի կողմից խանգարեց բոլորին,-հառաչանքով լրացրեց Ջիվան աղան:

-Ես էլ եմ այդպես մտածում,-ասաց տանտերը՝ բաժակը վերցնելով:- Եկեք խմենք մեր կենացը և ողջություն ցանկանանք բոլորիս,- դատարկելով բաժակը, նա շարունակեց:- Պատերազմի պատճառով մեր հարցը կծգծգվի: Պատերազմն ավարտելուց հետո տեսնենք թուրքական կառավարությունն իսկապե՞ս բարենորոգումներ կանի:

Հետևելով նրանց գրույցին, Ավետիսը զարմանում էր, թե ինչպես են ներկաները հույսեր կապում թուրք կառավարության հետ. «Չէ՞ որ այդ նույն կառավարությունը 1880-ի օգոստոսի 30-ի հրամանով արգելեց Հայաստան անվան օգտագործումը պաշտոնական գրություններում, պատճառաբանելով, որ այդպիսի վարչական միավորում Թուրքիայում չկա: Ջանգվածաբար բռնագրավվեցին ու այրեցին բոլոր այն գրքերը, որոնցում Հայաստան անունն էր հանդիպում: Մինչ այդ էլ Պոլսում արգելվեցին հայերեն ներկայացումները: Սահմանվեց մամուլի և գրականության խիստ քննություն: Հայկական նահանգները բնակեցվեցին Եվրոպայից գաղթած չերքեզներով ու մահմեդական այլ տարրերով: Փոստային բաժանմունքներում ու մաքսատներում ստուգումները խստացրեցին, հատկապես ռուսական հյուպատոսների ստացած գրությունների վրա: Նրանց կասկածում էին հայերի համար գաղտնի գենք ստանալու մեջ: Մի՞թե այս ամենի մասին շուտ են մոռացել հորեղբայրս ու իր համախոհները»:

- Իմ կարծիքով, միայն ռուսը կարող է ուժ գործադրել, որ թուրքը մեր հողերը տա,- իր խոսքը շարունակեց Ավետիսի հորեղբայրը:

-Իսկ ինչո՞ւ չպիտի տա,- գինովցած ասաց Սմբատ աղան:-Մեր հողերն է թուրքը զավթել, հիմա էլ թող ետ վերադարձնի մեզ:

-Եթե ռուսը մեզ չօգնեց, չի լինի: Ռուսն էլ մինչև օգուտ չունենա, իր շահը չունենա, մեզ չի օգնի: Եվ հիմա, պարոնայք, մի՛ մոռացեք, որ ցարին հայ ժողովրդի ճակատագիրը չի հուզում, նա Թուրքիայից նավթն է ուզում իր ձեռքը զցել, քարածխի, պղնձի, աղի և այլ հանքերի տերն է ուզում դառնալ ու Հայաստանի վրայով դեպի Արևելք գնացող ճանապարհներն են նրան հետաքրքրում: Ամեն բան պատերազմը կորոշի, եթե թուրքը չպարտվի,-իր մտքերը կիսեց սեղանակիցների հետ Սերոբ աղան:

-Եթե թուրքերը պարտվեն, մեր գործը կդժվարանա: Ուրիշներին էլ որ հողեր տան, մեզ որտեղի՞ց կտան,- Պետրոս աղան հարցական հայացքով նայեց գործընկերներին:

-Թուրքը, որ աշխարհի հողն էլ գրավի, իրենը կհամարի,-ասաց Մարտիրոս աղան:- Նախապես չենք կարող գուշակություններ անել: Շատ բան փոխվել է: Կան ազգեր, որ նախկինում թուրքի լծի տակ ձգնվել են, այսօր պետություն ունեն: Մենք նույնպես պետություն ու թագավորներ ենք ունեցել, կռվել ենք օտարների դեմ, բայց միաբանություն ու քաղաքականություն չենք ունեցել:

-Ճիշտ է,-արձագանքեցին բոլորը միաձայն:

-Հիմա էլ խելքի չենք եկել,- շարունակեց տանտերը:-Մեր կուսակցությունները համերաշխ չեն գործում: Ամեն մարդ իր դուրուկը կփչի:

-Թուրքերի մոտ այդպես չէ: Այսօր իշխանությունը իթթիհատականների ձեռքին է, սակայն իթիլաֆները, որ հակառակ են նրանց, իրենց պարբերական մամուլում ավելի շատ հայրենասիրական բնույթի կոչեր են հնչեցնում: Այսինքն՝ մարդիկ ինչքան էլ տարբեր գաղափարներ ունեն, ծառայում են հայրենքին մեկ մարդու պես:

-Ես մտածում եմ, այնուամենայնիվ, որ Թուրքիան պարտվի թե հաղթի, մեզ օգուտ չկա,- եզրակացրեց Պետրոս աղան և ոտքի կանգնեց:- Համբերենք, տեսնենք վերջն ի՞նչ կլինի,- և բաժակը վերցնելով՝ ասաց:- Թող այս Նոր տարին բոլորի սրտովը լինի: Հուսանք, որ տարին առատ լինի, աշխարհին՝ խաղաղություն, մեզ էլ՝ սեր, միություն լինի,-և հոտնկայս դատարկեց բաժակը:

Մյուսները հետևեցին նրան՝ նույն բարեմաղթանքներով և հրաժեշտ տվեցին միմյանց:

Ավետիսը նույնպես բաժանվեց բարեկամներից, գնաց դեպի իր կացարանը: Ճանապարհին նա մտքում վերլուծեց իր հորեղբոր և նրա մտերիմների գրույցը: Լինելով վաշխառուներ՝ նրանք երեկոյի գրեթե ողջ ընթացքում խոսում էին պատերազմից, հայկական բարենորոգումներից, Թուրքիայում եղած օգտակար հանածոներից, եվրոպական երկրների ունեցած դիրքից, սակայն նրանցից ոչ ոք անգամ չմտածեց, որ նույն երիտթուրքերը կարող էին ցանկացած պահին հայերին կոտորել ու նրանցից պաշտպանվելու համար զենքեր պիտի ձեռք բերվեն: Հավանաբար նրանց ավելի շատ մտահոգում էր իրենց ունեցվածքը, որ պատերազմի ժամանակ չպակասեր: Ավետիսը հիշեց հոր գրույցներն իր ընկերների հետ, երբ հայրը ընդգծում էր, որ սովորաբար ազատագրական շարժումների շրջանում ժողովրդական կոմիտեներն իրենց հեռու էին պահում հարուստ վաճառականներից ու վաշխառուներից, քանի որ նրանք առանձնապես շահագրգռված չէին երկրի ու ժողովրդի ճակատագրով: Մինչդեռ հայրը որպես մանկավարժ իր համախոհների հետ թաքուն զենքեր էին հայթայթում, մշտապես գիտակցելով, որ թշնամու կողքին ապրելով՝ իրենք պետք է զգոն լինեն, հարկ եղած դեպքում սուրը պատյան չդնել, այլ պաշտպանել, սեփական ընտանիքի, ազգի պատիվը:

Ավետիսը շարունակեց մտածել նաև պատերազմի մասին: Հիշեց, որ իրենց հարևաններից մի քանիսը ևս ռազմի դաշտում են: Հորեղբոր տղան դեռ թաքնված էր ներքնահարկում. «Երանի՛ պատերազմը շուտ ավարտվեր, որ հնարավորություն ընծեռվի լուծելու իմ ուսման հարցը», - տխուր մտածեց նա:

Սակայն ձմեռային քամին և ամպամած երկինքը մարդկանց կարծես գուժում էին պատերազմական ցուրտ ձմեռ, քաղց և զրկանքներ:

Փոքրիկ, շատ նեղ կացարանում լուռ էր: Կանթեղի աղոտ լույսը դողդողում էր սեղանի վրա: Գիշերային լռության մեջ լսվում էր միայնակ շան աղեկտուր ոռնոցը և ինչ-որ մոտակայքից բուի ողբերգական վայունը:

Ավետիսը տետրի թուղթը դրել էր ծնկներին և նամակ էր գրում մորը: Նա ցերեկային ժամերին բոլորովին ժամանակ չուներ: Աշխատանք էր գտել սրճարաններից մեկում որպես մատուցող: Աշխատում էր օրավարձով, իսկ սուրճը և թեյը անվճար էին տալիս: Հուզմունքից ու ծանր մտքերից պատանու ձեռքերը մի պահ դողացին կանթեղի լույսի պես: Նա փորձում էր հնարավորինս թեթև հնչերանգով ներկայացնել իր դրությունը, հորեղբոր հետ ունեցած հարաբերությունը: Հանկարծ նա սարսափելի կարոտ զգաց հարազատների հանդեպ: Հասկացավ, որ երբեմն ցանկություն էր ունենում թողնել ամեն ինչ և հեռանալ: Հիշում էր իր մանկությունը, երբ հայրը ողջ էր: Թախիծով էր հիշում ծնողների և քույրերի հետ անցկացրած երեկոները: Կարոտում էր ընկերներին: Ավետիսն իր հոգու խորքում սրբությամբ էր պահպանում այն աշխարհը, ուր միշտ իր հետ էին թանկագին մարդիկ: Այդ աշխարհում իր մտքերն էին, զգացմունքները, երազանքները և հուշերը: Ահա ինչու այդ աշխարհից դուրս

նրա օրերն ու ամիսները շատ դանդաղ էին անցնում: Եվ նա իր նամակում խոր ակնասանք էր հայտնում, որ դեռևս ի վիճակի չէր մորը և քույրերին օգնելու, որ շատ չնչին գումար էր վաստակում: Սակայն Ավետիսն այս անգամ էլ մորն անվերջ հուսադրում էր, որ անպայման կշարունակի ուսումը, միայն ինքը պիտի մի քիչ սպասի, մինչև ավարտվի պատերազմը, երկիրը խաղաղվի, և մարդիկ դառնան իրենց բնականոն կյանքին:

Խեղճ տղան չզգաց, թե ինչպես աստիճանաբար լույսը բացվեց: Իսկ նրա գործը սկսվում էր վաղ լուսաբացին: Նամակը ծալեց, դրեց գրպանը, հետո վազելով իջավ սրճարան՝ պանիր ու հաց ուտելու և տաք թեյ խմելու:

Կեսօրին սրճարան մտան իրեն ծանոթ երկու տղաներ: Նրանց սուրճ ու թխվածք հյուրասիրեց և քննարկեցին թերթերից կարդացած վերջին լուրերը: Հանկարծ այդտեղ հայտնվեցին երկու ոստիկաններ գինվորական դասալիք փնտրելով և մի քանիսին բռնեցին: Ավետիսին էլ նրանց հետ տարան ոստիկանություն: «Բայց ես գինապարտ չեմ», - անվերջ կրկնում էր պատանին: «Մեզ մոտ ամեն ինչ կբացատրես», - պատասխանեցին նրան:

Ոստիկանատանը մանրամասնությամբ հարցաքննեցին նրան, թե որտեղից է, ինչ է անում Պոլսում: Քանի որ ծննդյան վկայականը ձեռքին էր, այն ցույց տվեց և ասաց, որ ինքը Խարբերդի շրջանի Դատեմ գյուղից է, եկել էր մայրաքաղաք սովորելու նպատակով: Սակայն հանգամանքների բերումով ստիպված էր այժմ աշխատել: Աշխատում էր սրճարանում և այնտեղ էլ գիշերում էր:

- Իսկ դու քաղաքում բարեկամներ չունե՞ս, - հարցրեց ավելի տարիքով թուրք ոստիկանը:

- Ո՛չ, - պատասխանեց Ավետիսը:

Նա չուզեց ասել, որ հորեղբայր ունի, քանի որ վախենում էր, որ ոստիկանները ճշմարտությունը ստուգելու համար կհայտնվեն այնտեղ և իր զարմիկին կբանտարկեն:

- Գավառացիներով է լցվել մեր քաղաքը: Ձեզնից պրծում չկա, - զայրույթն արտահայտեց մյուս ոստիկանը:

- Բայց ես այստեղ ոչ միայն աշխատանք եմ գտել, այլև հասարակական կարգ չեմ խախտել, - տղան ճիգեր գործադրեց արդարացնել իրեն, թեկուզ ոչ մի հանցանք չէր գործել:

Միևնույն էր, Ավետիսին չարձակեցին և նրան բանտարկեցին ուրիշների հետ: Պատանին միանգամից հայտնվեց մի խառնիճաղանջ վայրում, ուր հավաքվել էին տարբեր ազգությամբ մարդիկ: Այսպիսով, նա իմացավ, որ իրեն տարել են չդատապարտվածների կենտրոնական բանտը: Նա տխուր խորհեց այն մասին, որ երևի ծնված օրվանից թուրքի սևեռուն նպատակը հայերին ջարդելն է և թե ինչու էին հայերն արտագաղթում... «Ամերիկա մեկնեց մանկությանս ընկերը՝ Արտաշեսը, - ինքն իրեն խոսեց նա: - Շուտով Լևոնը կմեկնի, հետո՝ Գևորգը, ով ինձ հետ դերձակություն էր սովորում: Իմ մորաքրոջ որդին էլ Ամերիկայում է, ում հարսնացուն վերջերս մեկնեց: Պապս ինձ առաջարկեց մեկնել նրա մոտ, չուզեցի: Մինչդեռ արտագաղթի պատճառները շատ են՝ մարդկանց նյութական վիճակը, ազատության ձգտումը, մարդ զգալը, ջարդերից խուսափելը: Ի՞նչ է ինձ սպասվում...»:

Ավետիսը բայց և այնպես չշփոթվեց: Նա հավատացած էր, որ իրեն շուտով բաց կթողնեն: Նրան այդ պահին մտահոգում էր սաստիկ քաղցի զգացումը: Շուտով բոլորին մեկական հաց բաժանեցին:

Հաջորդ օրն առավոտյան Ավետիսին կանչեցին ու ոստիկանի ուղեկցությամբ դուրս տարան: Պարզվեց, որ նրան որոշել էին աքսորել որպես գավառացու, թողնելով, որ Պոլսում ունեցած իրերը հավաքի: Պատանին այս անգամ ոստիկաններին ասաց, որ իրերի մի մասն իր ծանոթներից մեկի տանն է թողել և նրան ուղեկցեցին դեպի հորեղբոր տունը:

Ավետիսը հորեղբոր կնոջը՝ Երանուհուն բացատրեց ամեն ինչ և խնդրեց իր սպիտակեղենը մի տոպրակի մեջ դնել և իրեն տալ: Այնուհետև նա իրեն դրսում սպասող ոստիկանի ուղեկցությամբ հեռացավ:

Հորեղբայրը՝ Մարտիրոս աղան, Երեկոյան զայրացած եկավ ոստիկանատուն: Նա շփոթվածությունից իր տեղը չէր գտնում: Թեև միշտ սրտի խորքում զգում էր, որ զարմիկի հետ ինչ-որ վատ բան կարող էր կատարվել և շատ էր անհանգստանում եղբոր տղայի համար: Նա ոստիկաններին բացատրեց, թե ինչ նպատակով էր իր զարմիկը հայտնվել Պոլսում և որ պատերազմի պատճառով ամեն բան ձգձգվեց:

-Խնդրում եմ, արձակե՛ք նրան: Նա անտեր չէ: Ես ոչ միայն նրա հորեղբայրն եմ, այլև ես եմ թույլ տվել, որ նա սրճարանում աշխատի ու այնտեղ մնա, որպեսզի աշխատանքից չուշանա,- Մարտիրոս աղան ոստիկաններին ցույց տվեց իր անձնագիրը:- Նայե՛ք, մեր փաստաթղթերում նույն ազգանունն է:

Ոստիկանները նայելով նրա մեկնած անձնագրին, գլուխները բացասական տարուբերեցին, թեև զգացին, որ ճիշտ էր խոսում:

-Արդեն ուշացել եք: Նա սկզբում պիտի ասեր, որ Պոլսում բարեկամ ունի: Հիմա նրա թղթերը կնքված են ու գրանցված: Մենք ոչինչ անել չենք կարող:

-Բայց ես ձեզ իմ շնորհակալությունը կհայտնեմ,- Մարտիրոս աղան ձեռքի մատներով փողի մասին ակնարկեց:

-Ցավում եմ, չենք կարող:

-Աստված իմ, ի՞նչ պատասխան պիտի տամ մորդ,- հորեղբայրը հուսահատ նայեց Ավետիսին:- Հա՛, մայրդ քեզ նամակ էր ուղարկել, վերցրո՛ւ,-նա գրպանից հանեց ծրարը և մեկնեց տղային:

Ավետիսն էլ ձեռքի նամակը փոխանցեց հորեղբորը, որ մորն ուղարկեր:

Պատանուն ոստիկանները նորից բանտ տարան: Իսկ մյուս օրն առավոտյան բանտարկյալներին ոստիկանների հսկողությամբ տարան նավամատույցի մոտ: Հետո բրթեցին դեպի շոգենավը: Նրանց բոլորին կապեցին շղթաներով, և շոգենավը անջատվեց նավամատույցից: Շղթայակապ մարդիկ փռվեցին տախտակամածին մատաղացու ոչխարների պես:

Առաջին համաշխարհային պատերազմը պատեհ առիթ հանդիսացավ, որպեսզի թուրքական կառավարությունն իրագործեր հայության բնաջնջման հարցը, որը նախօրոք մշակված և որոշված էր «Իթթիհատ վե թերաքքի» /Միություն և առաջադիմություն/ կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից: Ջանգվածային տեղահանություններն ու կոտորածներն Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև Փոքր Ասիայի տարածքում գտնվող հայաբնակ վայրերում, չէին առնչվում ռազմական գործողությունների հետ: Արևմտահայության բնաջնջման ծրագիրը խարսխված էր նախորդ ժամանակներում սուլթանական Թուրքիայի գործադրած ջարդարարական քաղաքականության վրա: Իր նպատակի իրագործման համար թուրք կառավարությունն օգտագործում էր իր ռազմա-քաղաքական և տնտեսական ողջ ներուժը:

Հայերին զանգվածաբար բնաջնջելով և նրանց թիվը արհեստականորեն նվազեցնելով՝ թուրքական կառավարությունը ձգտում էր ազատվել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից և բարեփոխումների պարտադրված ծրագրից:

Մինչև համիդյան բռնապետության տապալումը երիտթուրքերն աշխատում էին ոչ թուրք ժողովուրդներին ներշնչել այն միտքը, որ 1876 թվականի սահմանադրության վերահաստատումով կվերանա ազգային խտրականությունը, և բոլորը հավասար կլինեն օրենքի առջև: Մինչդեռ իշխանության գլուխ անցնելուց հետո, երիտթուրքերը ոչ միայն մոռացան իրենց տված խոստումները, այլև ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նկատմամբ տրամադրվեցին բացահայտ թշնամանքով: Իրականում Թուրքիայում

քաղաքացի կարող էին ճանաչվել թուրքերը, և նրանք, ովքեր հավատափոխ կլինեին, կմոռանային սեփական լեզուն և կծուլվեին թուրքերի հետ: Այսպիսով, երիտթուրքերն ամբողջապես որդեգրեցին Աբդուլ Համիդի արյունարբու քաղաքականությունը՝ իրենց դաժանությամբ գերազանցելով նրան: Ազգային հարցը լուծելու համար ընտրեցին ազգերին ոչնչացնելու ճանապարհը: Այդ հանցավոր մտահղացման առաջին դրսևորումը եղավ 1909-ին Ադանայում, Կիլիկիայում և մի շարք քաղաքներում հայերի կոտորածը: Մինչդեռ 1914 թվականի սկզբին հայերի համար որոշակի լույս էր սփռվել: Նրանց խոստացան բարենորոգումներ, որոնց երաշխավորը Եվրոպան էր: Հատկապես Գերմանիայի և Ռուսաստանի միասնական ջանքերի շնորհիվ, երիտթուրքական կառավարությունը ստիպված 1914-ի փետրվարի 8-ին ստորագրեց բարենորոգումների նոր ծրագիր: Հայերն ըստ բնակչության թվի ներգրավվելու էին վարչության կազմում, դատարաններում և ոստիկանությունում: Նրանք զինված ծառայելու էին բանակում: Օրենքի առջև կանգնելու էին թուրքերի և քրդերի հետ հավասար: Չեզոք երկու ավագ տեսուչ՝ մի հուլանդացի և մի նորվեգացի, հսկելու էին նոր հրահանգների կատարումը: Հայերը կարծես հասել էին նրան, ինչին ձգտում էին: Հայերի առաջատար քաղաքական կուսակցությունը՝ դաշնակցությունը, երիտթուրքերի հետ համագործակցած պայքարում էր թուրքիայի նոր սահմանադրության համար: Սակայն երբ պայթեց Համաշխարհային պատերազմը, թուրքիան չեզոք ավագ տեսուչներին տուն ուղարկեց, հասկացնելով, որ բարենորոգումների ծրագրերն իր համար ավարտված են: Թուրքիան վերադարձավ իր հին քաղաքականությանը: Որոշեց քրիստոնեությունն իր կայսրությունից արմատախիլ անել:

1914 թվականին թուրքիայի արտաքին վարկերի գումարը հասավ 64 մլն ֆունտ ստեռլինգի: Նշված ընդհանուր գումարի 45,4 տկոսը պատկանում էր Գերմանիային, 25,9 տոկոսը՝ Ֆրանսիային և 16,9 տոկոսը՝ Անգլիային: Մնացած 12,8 տոկոսը բաժանվում էր ԱՄՆ-ի, Բելգիայի, Իտալիայի, Հոլանդիայի և այլ պետությունների միջև: Ահա նման կախվածության պայմաններում թուրքիան ստիպված էր մասնակցելու Առաջին համաշխարհային պատերազմին: Պատերազմին մասնակցելու կարևոր պատճառներից մեկն էլ հայերի տեղահանման ու բնաջնջման պլանի իրագործումն էր, որը համապետական ու համազգային բնույթ էր կրում: Թուրքիայի կառավարող շրջանները կարծում էին, որ պատերազմը տևելու է մի քանի ամիս և որ դրա ծախսերը, ինչպես հավաստում էին գերմանացի դաշնակիցները, հեշտությամբ կարելի էր ծածկել հայերի դարերով կուտակված և նրանցից գրավված նյութական հարստությամբ:

1914 թվականի հոկտեմբերի վերջին թուրքիան մտավ պատերազմի մեջ: Զինապարտ բոլոր հայերը զորակոչվեցին: Ազատվում էին նրանք, ովքեր կա՛մ փրկագին էին տալիս կա՛մ էլ կաշառում էին նրանց: Մնացած ոչ զինապարտ տղամարդիկ ռուսական սահմանի մոտ տեղակայված թուրքական բանակի համար պարեն էին տանում: Հայերը պատերազմի հենց սկզբից հայտարարեցին միասնական հայրենիքի պաշտպանության իրենց պարտքի և պատրաստակամության մասին: Հայերի հոգևոր առաջնորդը՝ Կոստանդնուպոլսի պատրիարքը, հրահանգեց ուղարկեց բոլոր վայրերը, հորդորելով հայերին եկեղեցիներում աղոթել թուրքական զենքի հաղթանակի համար:

Մինչ այդ ռազմական նախարար Էնվեր փաշան Կոնիայի հայ եպիսկոպոսին գրում է, որ հայ զինվորները ռազմի դաշտում կատարում են իրենց պարտքը: Նա խնդրում էր իր գոհունակությունն ու երախտագիտությունը հայտնել հայ ժողովրդին, որն աչքի էր ընկնում թուրքական կառավարության նկատմամբ իր անմնացորդ նվիրվածությամբ:

Սակայն 1915 թվականի հունվարի 2-ին ռուսական զորքերի ետ քաշվելուց հետո թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ իրականացնելու իր հրեշավոր ծրագիրը: Ոչ միայն տեղահանում ու կոտորում էին հայերին, այլև սկսեցին պաշտոնազրկել նրանց,

զինաթափել օսմանյան բանակի հայ զինվորներին՝ նրանցից կազմելով բանվորական վաշտեր: Բանտարկեցին բանակի սպաներին:

Թեև երկրի ներքին գավառներում սկսվել էին ջարդերը, սակայն մարդիկ հանկարծակիի եկան, երբ ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերվա ընթացքում ձերբակալեցին Պոլսի մտավորականության կարկառուն դեմքերին, շուրջ 250 հոգու: Իսկ մինչև մայիսի 10-ը ժողովրդին անջատեցին մոտ 3000 առաջնորդներից և խորհրդատուներից՝ գլխատեցին նրանց: Այդ մարդիկ անվանի ուսուցիչներ էին, հոգևորականներ, մտավորականներ: Դրանով թուրքերը մեկուսացրին ժողովրդին իրենց առաջնորդներից, որպեսզի գլխատված ժողովրդի հետ հեշտ լինել գործելը:

Ապրիլին Վանում բռնկվեցին խռովություններ: Հայերը բողոքեցին իրենց բնակավայրերում թուրքական և քրդական ջոկատների կատարած բռնությունների դեմ: Վանի նահանգապետը բողոքեց, որ զինաթափված հայ զինվորները, որոնք ներգրավված էին ճանապարհաշինության մեջ, փախչում էին իրենց գորամասերից: Հայկական թաղամասերում կազմակերպվում էր ինքնապաշտպանություն: Նրանք դիմադրեցին թուրքական բանակին այնքան ժամանակ, մինչև մայիսի 19-ին ռուսները գրավեցին Վանը:

Ղեկավարվելով երիտթուրքերի կուսակցության կենտրոնի հատուկ նիստի որոշումներով, թուրքական կառավարական շրջանները օրենքներ և միջոցառումներ էին մշակում հայ ժողովրդի պլանավորված բնաջնջման և գույքերի բռնագրավման վերաբերյալ: Թուրք ղեկավարությունը տեղական իշխանություններին կարգադրել էր հայերին թույլ չտալ գույքերի վաճառք և իրավունք վերապահել տեղահանվողներին՝ իրենց հետ վերցնել մեկ կամ մի քանի օրվա սննդամթերք միայն: Հատկապես հսկողություն էր սահմանվել թանկարժեք իրերի և զարդեղենի վրա, որոնց տանելը խստորեն արգելված էր: Ով կարողացել էր որևէ բան ծածուկ վերցնել իր հետ, թալանվել էր և հաճախ զոհվել:

Երիտթուրքերի կառավարության կողմից ստեղծվել էր հանձնաժողով, որ հայտնի էր «Երեքի գործադիր կոմիտե» անվամբ /«Թեշքիլաթ Մահուսետ»/, որը բանտերից ազատեց և հավաքագրեց քրեական հանցագործներին՝ մարդասպաններին ու ոճրագործներին՝ ստեղծելով ջարդարարական խմբեր, որոնք կոչվեցին չեթեներ: Նրանք հարձակվում էին անգն ու անպաշտպան գաղթականների քարավանների վրա՝ բարբարոսաբար սպանում ու թալանում էին նրանց: Իսկ հրաշքով ազատվածները քաղցից հյուծված ուրվականների նման հայտնվում էին Միջագետքի և Սիրիայի անապատներում:

Տեղահանության և կոտորածի ընթացքում գործի դրվեց նաև հայերին մահմեդականացնելու քաղաքականությունը: Մահմեդականացվեցին 300-400 հազար հայեր:

Քրիստոնյա երեխաներին մահմեդականացնելով թուրքացնելը նոր երևույթ չէր: Այն գալիս էր դեռևս միջնադարից: Եղեռնի ողջ ընթացքում կողոպուտի ու ոչնչացման են ենթարկվել 66 քաղաքների ու 2500 գյուղերի հայ ու քրիստոնյա ազգաբնակչությունը, կողոպտվել ու քանդվել են ավելի քան 200 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ:

Գարնանը ծովը շատ հիասքանչ էր և որպես հայելի իր մեջ արտացոլում էր կապույտ երկինքը: Այն արձակում էր ոչ սովորական բարություն, որն անբացատրելի ձևով մարդկանց ձգում էր իր կողմը: Սակայն այդ բարությունը չէր տարածվում թուրք ասկյարների վրա, ովքեր նավում շղթայակապ հայերին պետք է ավի իջեցնեին: Մինչդեռ այդ հայերից ոչ ոք հանցանք չէր գործել: Նրանց մեղքն այն էր, որ հայ են ծնվել:

Արդեն արշալույսը բացվել էր, երբ ոստիկանները նավի մեջ գտնվողներին արթնացրին և մակույկներով փոխադրեցին ցամաք: Ավետիսը չհասցրեց հմայվել այգաբացին ծովի անսահման գեղեցիկ պատկերով: Ավելին. արթնանալով, նա զգաց, որ թեթևակի մրսել էր և դողում էր մարմնով: Շղթաներից ազատելով նրանց, տեղավորեցին մի սենյակում, ուր

երկաթյա ճաղերով ամրացված լուսամուտների կեղտոտ ապակիներից աղոտ լույս էր թափանցում ցերեկով, իսկ գիշերը շատ թույլ վառվում էր պատից կախված լամպը: Նրանց կերակրեցին չոր հացով: Մի քանի օր հետո նրանց այնտեղից հանեցին և կրկին ոստիկանների ուղեկցությամբ ճանապարհ ընկան ուտքով: Շատերը գանգատվում էին քաղցից, բայց ոստիկանները չէին թողնում ճանապարհից թեքվել՝ սինձ ու բանջար ուտելու: Սակայն մթերք վաճառողներ կային: Ով մոտը փող ուներ, գնումներ արեց: Վերջապես հասան Սնտրըկ քաղաք, ուր ինչ-որ իջևանատանը պիտի անվճար մնային: Ոստիկանները նրանց կարգադրեցին իրենց համար գործ գտնել և փող վաստակել, բայց քաղաքից ոչ ոք իրավունք չունեի բացակայելու: Այդ քաղաքում բնակչությունը հիմնականում թրքախոս հույներ էին: Կային նաև եկվոր հայեր:

Ավետիսն այդ նոր միջավայրում ընկերացավ մի խումբ հայերի հետ, որոնք տարիքով իրենից շատ մեծ էին: Հատկապես մտերմացավ Օհանի հետ: Պետք էր սննդամթերք հայթայթել, իսկ դրա համար նախ պետք էր գործ գտնել: Մոտակայքում Ավետիսն Օհանի հետ օրավարձով առու մաքրելու աշխատանք գտան: Նաև տերերը օրվա մեջ երկու անգամ կերակրեցին նրանց: Այդտեղ աշխատելու ընթացքում պատանին հիշեց իր ծննդավայրը և մտածեց, որ հողագործական նույն աշխատանքը կարող էր կատարել իրենց գյուղում՝ օգնելով մորը: Էլ ինչի՞ համար էր խեղճ մայրը նոր հողամաս ու արտեր ձեռք բերել: Ո՞վ պիտի նրան սատարեր, եթե ոչ ինքը: Հող մշակելը հիմնականում տղամարդու գործ էր համարվում: Այնինչ ինքը չարձագանքեց մոր թախանձանքին՝ վերադառնալ հայրենի գյուղ: Այժմ նա շատ էր ափսոսում, որ հարազատների կողքին չէր և չօգնեց մորը պարտքերը մարելու: Իսկ երկու օր անց, հոգնած, երբ քնել էր այգում, հանկարծ աչքերը բացելով բակում արագիլներ տեսավ: Այս անգամ պատանու հոգում սաստիկ կարոտից անբացատրելի տխրություն թառեց: Մի պահ նույնիսկ թվաց, թե ճանաչում է այդ արագիլներին, թե նրանք վերադարձել էին իր հայրենի գյուղից և իրենց կափկափով ինչ-որ լուր էին ուզում հաղորդել իրեն: Երանությամբ հիշեց վերջին անգամ իրենց գյուղում անցկացրած Վարդավառի տոնը: Այնտեղ էր նաև գեղեցիկ Սիրանուշը, որին հեռվից-հեռու համակրում էր: Նա ծաղկավոր երկնագույն մետաքսյա շալով էր, որի ծայրը բռնել էր, որ քամին չթռցներ: Նա քայլում էր ապագա ամուսնու քրոջ հետ: Այդ ժամանակ նրա սիրտն անհանգիստ տրոփեց: Հիշեց, թե ինչպես էր Սիրանուշին նվիրված բանաստեղծությունը թղթի վրա ծալած միշտ գրպանի մի անկյունում պահել՝ աղջկան հանձնելու համար: Ու այնքան էին ծալած թղթի անկյունները մաշվել, որ ճնճուկի կտուցի պես հաճախ դուրս էր գալիս գրպանից: Սակայն այդպես էլ պատեհ առիթ չգտնվեց: Հետո մտածեց, որ իր զգացմունքը թերևս փոխադարձ չէր ու կարիք չկար նրա մասին մտածելու: Այդ օրն ինքը թաղեցի ընկերների հետ լողացան գետում, հիշեցին միասին անցկացրած զվարթ օրերը: Այնպիսի անբացատրելի բերկրանքով էր լցվել նրա հոգին, որ ինքը ձեռքերը դեպի երկինք պարզած՝ բացականչել էր. «Մի՞թե մարդու համար ավելի թանկ ու քաղցր բան կա, քան հայրենիքը»: Ավետիսը մտածեց. «Երանի արագիլները կարողանային իրենց թևերի վրա ինձ տուն հասցնել, որ ես մորս ներողամտությանն արժանանայի»: Նա երազեց այն մասին, որ իր մտքերն անպայման կնյութականանան ու քամու միջոցով կհասնեն մորը:

Օհանը հանկարծ ձայն տվեց Ավետիսին, և նա սթափվեց իրեն տանջող տարաբնույթ մտքերից:

Ցավոք, մի քանի օր անց նրանք նորից աշխատանք էին փնտրում: Եղած գումարը վերջացել էր: Իսկ հացի փող ոչ ոք այլևս չունեի: Տղաներից ոմանք պարզապես հաց էին մուրում մարդկանցից: Օհանը, որ համարյա իր հոր տարիքին էր, խնդրեց Ավետիսին նույնպես իր համար հաց մուրալ: Պատանին չհամաձայնվեց: Այդ օրն Օհանի հետ քաղցած մնացին: Մյուս օրն Ավետիսը դուրս եկավ քաղաք, շրջեց փողոցներով՝ սևագործ աշխատանք գտնելու: Զգում էր, որ քաղցից աչքերը մթնում էին և որ ուր որ է, կընկնի:

Բարեբախտաբար, միջին տարիքի մի հույն կին իր դռան առջև նկատեց երերացող քայլվածքով տղային և ներս հրավիրեց:

-Ո՞վ ես դու, տղա՛ս,- հարցրեց անծանոթ կինը թուրքերենով:

-Ազատ աքսորականներից եմ: Աշխատանք եմ փնտրում, որպեսզի սոված չմնամ,- ու դառնորեն փղծկաց հուզմունքից:

Կինը զգաց, որ չի սխալվել: Նրա գունատ դեմքից երևում էր, որ տղան քաղցած էր:

-Նստի՛ր այստեղ ու հանգստացի՛ր,- և գնաց ջուր բերելու: Բաժակը մեկնելով նրան՝ հարցրեց.

-Որտեղի՞ց եմ քեզ բռնել ոստիկանները:

-Պոլսում էի: Աշխատում էի սրճարանում:

Կինն այլևս հարցեր չսովեց: Նա շրջվեց ու գնաց հաց բերելու, որ սաստիկ քաղցից պատանին չուշաթափվեր: Նա մի քանի հաց ու պանիր տվեց: Ավետիսի աչքերը բացվեցին: Այնպիսի ախորժակով էր ուտում, ասես մեկ շաբաթ հաց չէր կերել:

Պանիր ու հացը կուշտ ուտելուց հետո նա մնացածը բերեց իր ընկերներին: Դարձյալ ճանապարհին հիշեց մոր խոսքերը. «Իմացի՛ր, տղա՛ս, աշխարհում երեք սարսափելի բան կա՝ բաժանումը, սովը և մահը»: Իսկ սովին նա առաջին անգամն էր երես առ երես հանդիպում:

Բարեբախտաբար, այդ ծանր օրերին նա հանդիպեց Սմբատ աղային, որը միջահասակ, նիհար, ցորնագույն կլոր դեմքով, սև մազերով, շագանակագույն աչքերով, եվրոպական ձևով հագնված քառասունն անց տղամարդ էր: Տնտղելով Ավետիսին, զգաց, որ տղան բավականին աչքաբաց էր ու խելամիտ:

-Լեզուներ գիտե՞ս,- հարցրեց նրան:

-Այո՛, թուրքերեն՝ գերազանց, անգլերեն՝ կիսով չափ: Ուսումնս կիսատ եմ թողել քուլեջում:

-Մաթեմատիկայից ինչպե՞ս ես: Հաշվել գիտե՞ս:

-Իհարկե,- նա համառոտ ներկայացրեց իր կենսագրական տվյալները:

-Իսկ արհեստ սովորե՞լ ես երբևիցե:

-Այո՛: Սկզբում իմ հայրենի գյուղում, իսկ հետո Խարբերդում դերձակություն սովորեցի: Նաև գյուղատնտեսական աշխատանքներին եմ ծանոթ:

-Տեսնում եմ՝ բավականին գործեր ես արել:

Սմբատ աղան առաջարկեց նրան աշխատել իր մոտ՝ փայտամշակման արհեստանոցում: Սակայն սկզբում նա միայն օգնում էր տան գործերում՝ շուկայից գնումներ էր կատարում, նաև նրա երեք տարեկան աղջկան էր զբոսանքի տանում: Այդ երեխայի հետ շփվելուց էլ հիշեց իր քույրերին, մասնավորապես որբանոցում գտնվող միջնեկ քրոջը՝ Սրբուհուն, որին մի քանի անգամ այցելել էր: Հանդիպելով քրոջը՝ նա շաքարեղեն էր տվել նրան: Քույրը մի քիչ արտասվել էր, հետո մի հատիկ նախադասություն էր ասել. «Մայրիկին ու ձեզ՝ բոլորիդ կարոտել եմ»: Ինքը պինդ գրկի մեջ էր առել քրոջը և չէր ուզում ցած իջեցնել: Եվ նա ավելի դառնացավ, երբ տեղեկացավ, որ միայն ամիսը մեկ անգամ են թողնում տեսակցություն ունենալ հարազատների հետ: Հավանաբար, նրանց նպատակն այն էր, որ երեխաները մոռանային տնեցիներին:

Հեռվում գտնվող քույրերի կարոտն Ավետիսն առնում էր Սմբատ աղայի փոքրիկ դստեր շնորհիվ:

Մայիսյան հրաշալի առավոտ էր: Բնության մեջ նոճիներով ու սոճիներով հարուստ անտառի գրկում օդը լցված էր բազմազան թռչունների դայլայլով, երփներանգ ծաղիկների բույրով: Իսկ սարալանջից գահավիժող առվակների խոխոջուներ, մերթընդմերթ լսվող

գորտերի ծայրը, մեղուների բզզոցը թափանցիկ օդը լցնում էին մանր զանգակներով, որն ասես ազդարարում էր ինչ-որ անհայտ մեղեդի: Գուցե՞ դա հենց գարնան ու ապրելու հույսի հիմն էր:

Սմբատ աղան Ավետիսին հանձնարարեց ձին տանել անտառ՝ արածացնելու: Պատանին ձին պարանով կապեց հաստաբուն մի ծառի, որ կենդանին արածեր, իսկ ինքը պառկեց բացատում՝ պատահած թմբի շվաքի տակ ու նայեց երկնականարին: Նրա հոգում կարոտալի քաղցրությամբ արթնացավ հայրենի գյուղի անդնդախոր ձորերի, կուսական անտառների և սառնորակ աղբյուրների հմայքը: Հիշողությունը նրա մեջ արթնացրեց հայրենական տան շունչը և գյուղի հոգսերով պատկերները ստվերների պես անցան նրա աչքերի առջևով: Պատանուն օրորեցին մանկության քաղցր հուշերը: Անգամ հիշեց իրենց շանը, որը մանկության օրերին աշխույժ թռիչքներով դիմավորում էր իրեն այգու ցանկապատի մոտ, փարվում իր ոտքերին, լիզում ձեռքերը և հանդիպման ուրախությունից կաղկանձում ու մռմռում: Հետո շունը շատ ծերացավ ու սատկեց:

Նա սթափվեց մտքերից, երբ տերը հանկարծ ձայն տվեց: Տղան իսկույն նստեց իր տեղում և հարցական հայացքով շրջվեց տիրոջ կողմը: Դժվար չէր նկատել, որ Սմբատ աղան անհանգիստ էր, ինչ-որ ներքին տագնապ կար նրա աչքերում:

-Ես ձեզ ուշացրե՞լ եմ, Սմբատ աղա:

-Ո՛չ: Իմ մտահոգությունն ուրիշ է,-ասաց նա՝ նույնպես նստելով Ավետիսի կողքին: Հետո ծխախոտը հանելով գրպանից՝ մի գլանակ վառեց: -Քաղաքում խուզարկություն է կատարվել, և թուրքերը քսան երիտասարդների են ձերբակալել, որոնց մոտ ատրճանակ են գտել: Նրանց աքսորել են:

-Բայց ինչո՞ւ միայն հայերին:

-Չգիտեմ: Ախր այդ տղաները խանութներ ունեին, որտեղ իրավունք էր տրված զենքեր վաճառելու:

-Սմբատ աղա՛, իմ ընկերներին նույնպես տարել են:

-Ո՞ր ընկերներին:

-Մինչև ձեզ մոտ աշխատանքի ընդունվելը, ապրում էի նրանց հետ: Մեզ՝ բոլորիս միասին բանտարկեցին և բերեցին այստեղ: Չէ՞ որ մենք ազատ աքսորականներ էինք հաշվվում: Քանի որ հիմա ձեզ մոտ են ապրում, մի քիչ փող կարողացա ետ զցել ու գնացել էի նրանց օգնելու: Բայց երկու-երեք օր առաջ թուրքերը նրանց տարել էին անհայտ ուղղությամբ:

-Ի՞նչ է կատարվում, չեմ հասկանում,- մտախոհ ու տխուր ասաց Սմբատ աղան:- Վերջերս թուրքերի հետ էի: Երկու հոգու հյուրասիրեցի և դիտմամբ հարբեցրի, որ նրանցից որևէ բան իմանամ բանտարկված հայ տղաների մասին, բայց նրանք ոչինչ չասացին: Միայն հաղորդեցին, որ նրանց գտնվելու վայրը մի քանի օր հետո հայտնի կլինի: Մեր հայերին ոչ միայն բանտարկում են, այլև պաշտոնանկ են անում:

-Սկսվե՛ց,- Ավետիսը վախեցած աչքերը հառեց իր տիրոջը՝ հիշելով վաղամեռիկ հոր հետ ունեցած վերջին զրույցը:

-Ի՞նչը սկսվեց,- հարցրեց Սմբատ աղան:

-Հայրս ասում էր, որ թուրքերի կողմից մեզ ավելի սարսափելի բաներ են սպասվում, որ հենց մենք զենքը հանձնենք, նրանք մեզ ոչխարի պես մորթելու են:

Փայտամշակման արհեստանոցի տերը կասկածով նայեց պատանուն, որի խոսքերն իրեն մտահոգվելու տեղիք տվեցին:

-Հայրս իր ընկերների հետ զենքեր ունեին, որոնք թաքցնում էին գերեզմանոցներում, քանի որ թուրքերն ամեն պահ կարող էին խուզարկել մեր տներն ու նկուղները: Ես ինքս ականատես եմ եղել, թե ինչպես էին ոստիկանները մտնում հայոց թաղերը և զենք գտնելու նպատակով խուզարկում տները, նկուղները, նույնիսկ ջրհորները:

-Գիտենք,- արձագանքեց Սմբատ աղան:-Հայերի մեծ մասը սովորաբար զենքը թաքցնում է գերեզմանատանը: Ես էլ եմ այդպես արել: Սակայն եթե թուրք ոստիկաններն ուշադիր լինեն, ապա կտեսնեն, որ հայոց գերեզմանատանն օրեցօր ավելանում են տապանաքարերը, որոնց վրա խաչեր են փորագրված: Այնինչ այդ անանուն տապանաքարերի տակ հայկական թաղերի գինապահեստն է:

-Հայերը Թուրքիայի տարբեր շրջաններում պետք է ընդհանուր թշնամուն ջախջախելու ծրագիր կազմեն: Մենք միասնական պետք է լինենք, այլապես երկպառակության դեպքում թուրքերը հեշտությամբ մեզ կջարդեն:

-Դու բավականին պատրաստված ես խոսում,-նկատեց Սմբատ աղան:

-Իմ հորից հայրենասիրական դասեր եմ սովորել: Նա գիրք էր գրում հայդուկային շարժման, հերոս ֆիդայիների, հայրենասիրական խմբավորումների մասին:

-Ուրեմն՝ կիմանաս, որ թուրքերը մեզ պարբերաբար կոտորել են, թե չէ չէին լինի Ջեյթունի, Վանի ապստամբությունները անցյալ դարի 70-80-ական թվականներին: Այդ ապստամբություններին ուշացումով արձագանքեցին Վասպուրականում, Սասունում, Ալաշկերտում: Ի վերջո, սուլթան Համիդի հրամանով կազմակերպված 1894-96 թվականների հայկական ջարդերը՝ Պոլսում, Էրզրումում, Տրապիզոնում, Սասունում և այլ քաղաքներում: Այդ ջարդերի զոհը դարձան 200-300 հազար հայեր:

-Երիտթուրքերի օրոք էլ կատարվեցին Ադանայի, Կիլիկիայի ջարդերը: Դա էլ կազմակերպված էր, քանի որ մահմեդականներին էին բաժանել զենքեր, բանտերից ազատել էին հինգ հարյուր հանցագործների: Բարեբախտաբար, Սիսում, Ջեյթունում և ուրիշ բնակելի վայրերում կազմակերպեցին ինքնապաշտպանություն՝ խուսափելով ջարդերից:

-Մի՞թե նորից կոտորած է մեզ սպասվում,- Սմբատ աղան մտախոհ բարձրացավ տեղից: Անսպասելի տագնապ,անորոշ մի ցավ սողոսկեց մարմինը:

Այնուհետև երկուսով ձիու սանձը բռնած վերադարձան արհեստանոց: Սմբատ աղան իր աշխատակիցների համար կացարան էր սարքել: Ուներ նաև պահեստի համար նախատեսված շենքեր, ախոռ, մարագ: Փայտերը քաղաք էին տանում երեք զույգ եզները, իսկ տարածքը պահպանում էին հինգ շներ: Բանվորներն այնտեղ անվճար էին կերակրվում: Աշխատողներն արդեն նախաձառել էին ու աշխատում էին: Սմբատ աղան անտառի սառը ջրով լվացվելուց հետո նույնպես պատրաստվեց նախաձառելու, երբ թուրք հեծյալ մի ոստիկան հայտնվեց տարածքում:

-Ի՞նչ է պատահել վաղ առավոտյան,- զարմացավ Սմբատ աղան՝ հարցական նայելով ծանոթ ոստիկանին:

-Ոստիկանապետն է ձեզ կանչում:

-Մի քանի օր առաջ ամբողջ գիշեր նրա հետ էի:

-Զգիտեն: Ես հրաման կատարող եմ:

-Լավ,- Սմբատ աղան ոտքի վրա արագ մի բան կերավ ու իր ձիով նրա հետ հեռացավ:

Արհեստանոցում աշխատակիցները խառնված իրար նայեցին: Այդտեղ և՛ հայեր էին աշխատում, և՛ հույներ, և՛ թուրքեր: Նրանց մեջ ազգությամբ հույն Պաուլոյի աչքերում տազնապ կար, որ ցանկանում էր արտահայտվել, բայց չէր համարձակվում: Ավետիսը որսաց նրա հայացքը և ինքն էլ անհանգիստ մտքերով գնաց նախաձառելու: Գործեր շատ կային: Պետք է հասցներ: Սկզբում նա հաշվառեց տախտակները, առանձնացնելով առավել լավորակները՝ վաճառքի համար: Հետո գնաց անտառ՝ բանվորներին օգնելու գերանները կրելու՝ եզների օգնությամբ:

Մինչև աշխատանքի ավարտը Սմբատ աղան արհեստանոցում չէրևաց: Երեկոյան Ավետիսը տուն վերադարձավ: Տանտերը դեռ տուն էլ չէր եկել: Խեղճ պատանին խիստ մտահոգված լինելով՝ ընթրիքից հրաժարվեց և գնաց իր սենյակը՝ հանգստանալու: Ծանր

մտքերն ամբողջ օրվա ընթացքում ասես անընդհատ կրծում էին ուղեղը: «Ինչո՞ւ միայն հայերին են բանտարկում,-ինքն իրեն հարցնում էր նա:- Գուցե Սմբատ աղային էլ արքորել են: Ուրեմն՝ իրեն էլ հերթը կհասնի: Բայց ո՞ւր պիտի տանեն բոլոր հայերին: Չէ՞ որ Թուրքիայի տարածքում՝ բոլոր նահանգներում, քաղաքներում ու գյուղերում միլիոնավոր հայեր են ապրում: Բանտերում էլ տեղ չի լինի նրանց տեղավորելու: Հայրս պատմում էր, որ ժամանակ առ ժամանակ թուրքերը ջարդեր են կազմակերպում, այրում են հայերի տները, ունեցվածքը թալանում: Այսինքն՝ ամեն կերպ ցանկանում են ազատվել մեզնից: Բայց չէ՞ որ աշխարհում չկա մի պետություն, ուր ապրեին միմիայն իրենց ազգին պատկանող մարդիկ: Հո՞ ֆրանսիայում միայն ֆրանսիացիներ չեն ապրում կամ Անգլիայում՝ միայն անգլիացիներ: Հավանաբար, թուրքերը երկրագնդի երեսին ապրող ամենազգվելի, ամենախորամանկ ու նենգ, արյունարբու ազգն են», - եզրակացրեց Ավետիսը: Հետո մտքերը նրան ավելի հեռուն տարան: Այս անգամ նա մտածեց իր մանկության ընկերների, դասընկերների մասին: Արդյո՞ք նրանց էլ վտանգ չի սպառնում:

Այդ գիշեր պատանին համարյա չքնեց: Ու վաղ լուսաբացին դուրս եկավ այգի՝ մաքուր օդ շնչելու: Մեծ եղավ նրա ուրախությունը, երբ լսեց Սմբատ աղայի ծայնը.

-Ա՛յ տղա՛, գիշերը չե՞ս քնել: Ինչո՞ւ ես այդքան շուտ գարթնել:

-Սմբատ աղա, դուք այստե՞ղ եք,- գարմանքով Ավետիսը նայեց տիրոջը:-Այո՛, չեմ քնել: Ձեզ էի սպասում:

-Ես շատ ուշ եկա: Ջորահավաքի համար էին կանչել:

-Բայց դուք երիտասարդ չեք: Ի՞նչ գորահավաքի մասին եք խոսում:

Սմբատ աղան բարեհամբույր ժպտաց:

-Ասում են, դա եկվորներին չի վերաբերում, բայց ոստիկանապետը խոստացավ կաշառք տալու դեպքում ազատել ինձ: Այսօր կտանեն նրա պահանջած ոսկիները՝ կտամ ու ազատ կլինեմ:

Ավետիսը խոր արտաշնչեց: Նա մտածեց, որ թուրքերի համար պատերազմն էլ առիթ է, որ հայերին էլ՝ ավելի թալանեն, նրանց ռազմի դաշտ ուղարկեն՝ շուտ ոչնչացնելու համար:

-Դու իմ երեկվա հանձնարարությունը կատարեցի՞ր:

-Այո՛, Սմբատ աղա: Արհեստանոցում ամեն բան կարգին է: Դուք ձեր հարցերը լուծե՛ք:

-Ճիշտ ես: Գնանք միասին նախաձաշենք: Այնուհետև դու կրկին կգնաս արհեստանոց, իսկ ես՝ ավելի ուշ կգամ,- Սմբատ աղան ձեռքը դնելով տղայի նիհար ուսին՝ տուն մտավ:

Թուրքական իշխանությունների նպատակն էր բռնագաղթի միջոցով հնարավորին չափ շուտ վերացնել հայերին: Հայերի տեղահանությունը կատարվել էր չափազանց զգուշությամբ ու խորամանկորեն: Նախապես կտրել էին նրանց միջև եղած հաղորդակցությունը, ինչպես հրահանգել էր ներքին գործոց նախարարը՝ Թալեաթը: Տարհանում էին մարդկանց խաբելով .«Խիստ կարճ ժամկետով տեղափոխելու ենք հարևան քաղաքը»: Եվ մարդկանց իրենց բնակավայրերից տեղահանելով՝ շարունակում էին խաբել նրանց՝ հաջորդաբար փոխել տալով վայրերը:

Փոխադրամիջոցների բացակայության պատճառով խեղճ տարագիրները շաբաթներով, ամիսներով ուժասպառ քայլում էին ոտքով և նրանց մեծամասնությունը ճանապարհների մեռնում էր՝ չդիմանալով սովին, ծարավին, բռնություններին: Թուրքիայի տարածքների մեծ մասը վերածվել էր դիարանների: Գետերն ու ձորերը, կիրճերն ու ջրհորները լցված էին դիակներով: Անպաշտպան տարագիրները գյուղերի մոտով անցնելիս էլ նրանց կանանց անարգում էին, թալանում: Ոստիկաններն էին կանչում նրանց: Մանավանդ սարսափելի էին քրդական լեռնաբնակ ցեղերը: Քրդերը նույնիսկ կարող էին խլել մարդկանց ներքնաշորերը,

և նրանք քայլում էին մերկ՝ արևի տակ, առանց ուտելիքի ու ջրի: Իսկ որևէ աղբյուրի հանդիպելիս, պետք է դրան տային, որ թույլատրեին ջուր խմելու: Որպեսզի մեծացնեին զոհերի թիվը, Եղեռնի կազմակերպիչները հայերին ստիպել են նույն ճանապարհը մի քանի անգամ անցնել:

Մի քանի օր անց Սմբատ աղային ոստիկանությունից նորից կանչեցին: Այս անգամ սակայն նա մռայլ վերադարձավ տուն: Հրամայված էր ընտանիքով լքել բնակավայրը: Եվ ոչ միայն նրան, այլ տեղի բոլոր հայերին արքորում էին: Սմբատ աղան մտածեց, թե որքան ստոր ու անաղուհաց են թուրքերը: Չէ՞ որ նրանք նախապես գիտեին, որ բոլոր հայերին պետք է արտաքսեին, այդ դեպքում ինչո՞ւ իր համար զորահավաքին մասնակցելու պահը ներկայացրին: Ընդամենը թալանելո՞ւ իր ոսկիները: Ասենք ինքն էլ գիտեր, որ հայերի գլխին ինչ-որ անհասկանալի դամոկլյան սուր էր կախված, քանի որ նախապես զենքերն էին հավաքել, որ երիտասարդների են բանտարկել և ուղարկել ինչ-որ անհայտ ուղղությամբ, հայերին էին պաշտոնանկ արել: Եվ ինչքան էլ նա տարիներ ի վեր նորմալ հարաբերությունների մեջ էր թուրք ոստիկանների, մյուս պաշտոնյաների հետ, այդ փաստը հաշվի չառնվեց, ոչ էլ մշտապես նրանց տրվող խնջույքներն ու կաշառքները:

Նա ոչինչ չկարողացավ իմանալ, թե ինչ վտանգ էր սպառնում իր հայրենակիցներին, իրեն, շրջապատին: Սմբատ աղան իր մոտ կանչեց Ավետիսին և կարգադրեց գնալ փայտամշակման արհեստանոց: Նրա բոլոր պահեստներն այնտեղ էին: Ավետիսը պետք է բանվորների հետ երեք սայլեր բարձեր՝ ցորենով, այլուրով, ձիթայուղով: Պատանին շճեց տիրոջ կարգադրությունից: Նա նույնպես հուսահատված էր: Դա նշանակում էր, որ ինչ-որ չափով իր խաղաղ կյանքն ավարտվեց: Ինքն էլ նրանց հետ պիտի արքորվեր: Միայն թե խնդրեց Ավետիսին, որ փայտամշակման արհեստանոցում չհայտնի բեռներ տեղափոխելու բուն պատճառը, քանի որ այնտեղ բացի հայերից, նաև թուրքեր կային: Հնարավոր էր, որ վերջին պահին պարզապես չկատարեն իրենց տիրոջ հրամանը:

-Իսկ ինչո՞ւ ձեզ պիտի արքորեն: Չէ՞ որ դուք վճարել էիք:

-Դրա հետ կապ չունի: Բոլոր հայերին այստեղից քշում են:

-Այդ դեպքում թող յուրաքանչյուրին իրենց բնակավայրն ուղարկեն:

-Դու հարցեր ես տալիս, որոնց պատասխանները չգիտեմ: Գնա՛, առաջադրանքը կատարիր: Շատ չուշանա՛ս,- խոսքն ավարտեց Սմբատ աղան:

Ավետիսը շուտով հասավ արհեստանոց: Թուրք պահեստապետին հայտնեց տիրոջ կարգադրությունը, ավելացնելով, որ այդ ամենն արվում էր իբրև տիրոջը զորակոչից ազատվելու նպատակով: Արդեն երեկոյան բանվորների հետ սայլերով բեռնված նա տուն վերադարձավ: Սմբատ աղան վարձատրեց իր բանվորներին: Իսկ իրենք մի քանի օր անց մի խումբ հայերի հետ սայլերով ճանապարհ ընկան: Մարդիկ իրենց հետ վերցրել էին անկողին, հագուստ, չնչին քանակով չկոտրվող սպասք և գումար: Ավետիսն իր տիրոջ սայլապանն էր: Նրանք ոստիկանների ուղեկցությամբ շարժվեցին դեպի արևելք:

Օրը երեկոյանում էր, երբ սայլերը կանգնեցին մի թրքաբնակ գյուղի մոտ: Եզներն արձակեցին մարգագետնում արածելու: Դեպի անհայտություն մեկնող ճամփորդներն էլ որոշեցին մի քիչ ճաշել: Հենց այդ ընթացքում մի թուրք ոստիկան մոտեցավ նրանց և հարցրեց, թե նրանցից ով է Սմբատ էֆենդին, որ նրան կանչում են:

-Համեցե՛ք, միացե՛ք մեզ: Կճաշե՛նք, միասին կգնա՛նք:

-Շնորհակալ եմ,- պատասխանեց նա և հեռացավ:

-Իմ կարծիքով, քեզ լավ բանի համար չեն կանչում,-ասաց Սմբատ աղայի մտերիմներից մեկը:

Իսկապես, Սմբատ աղայի երկու զույգ եզներն իրենց սայլերով բռնագրավեցին: Դեռ բնակավայրից շատ չէին հեռացել, երբ թուրքերը սկսեցին իրենց կողոպուտը:

Սմբատ աղան իր տեղը չէր գտնում:

-Եթե ուզում էին եզները վերցնել, մինչև ճանապարհվելն ասեին, որ ես էլ ուրիշ բան մտածեի:

-Գուցե՞ վիճել ես նրանց հետ,- հարցրեց կինը:

-Ոչ մեկի հետ չեմ վիճել:

Նրանք շարունակեցին իրենց ճանապարհը: Տղամարդիկ հետիոտն էին: Ճանապարհը մերթ փոխվում էր արահետի, մերթ՝ լեռան, մերթ՝ անցնում էին անտառների միջով, մերթ՝ քաղաքների, գյուղերի միջով: Վերջապես հասան Ազ-Հիսար, որտեղ հայերը զգալի թիվ էին կազմում: Մարդիկ ճանապարհից հոգնած ու քաղցած՝ հանգստանում էին, երբ նրանց հայտնեցին, որ հաջորդ օրը գնացքով պիտի տեղափոխվեն: Բայց ո՞ւր...Ոչ ոք չգիտեր: Նրանք մի փոքր հաց կերան ու հանգստացան: Իսկ մյուս օրը երեկոյան նրանց լցրին վագոնները: Մարդիկ շտապելուց իրենց հետ մոմեր չէին վերցրել, իսկ նավթի լամպերը իրերի խորքում էին: Թանձր խավարի ու լռության մեջ լսվում էր մերթ երեխայի լաց, մերթ մեկը ծանր հազում էր, մեկը քնած խռմփացնում էր:

Ավետիսը լուռ կուչ էր եկել վագոնի դռան ակյունում: Նա մտածում էր, որ եթե տեղահանում են հայերին, ուրեմն այն վերաբերվում էր նաև հարազատներին: Մտովի պատկերացրեց, թե ինչպես էր մայրը շալակելու անհրաժեշտ իրերը, ամեն ինչ թողնելով թուրքերին: Դեռ իր վերջին ոսկեդենն էլ ծախեց նոր հողամասի ու արտերի համար: Ինչպե՞ս պիտի սնվեին, ո՞վ պետք է նրանց օգնության ձեռք մեկներ: Նա իր երկու քույրերին էլ հետը պիտի քարշ տար անհայտ ճամփաներով՝ արևի տակ, անձրևներին... Նայեց վագոնից դուրս: Գնացքը սլանում էր անտառի միջով ու հանկարծ լսելի եղավ բուի չարախինդ քրքիջը, և հորիզոնում ցրված ամպերը նրա աչքին արնագույն էին դարձել:

Եղեռնի ժամանակ խարբերոցիների մի խումբ աքսորեցին Տիգրանակերտի կողմով դեպի Ուրֆա: Այդ խմբի մեջ գրեթե բոլորը աղքատ դասակարգի մարդիկ էին: Մյուս խումբն աքսորեցին դեպի Եփրատի եզերքը: Թուրքական կառավարությունը ռճրագործության նույն ծրագիրն իրականացրեց երկրի հայաբնակ բոլոր նահանգներում, անգամ հեռավոր խուլ գյուղերում:

Դատեմ գյուղի բնակիչներն էլ տագնապի մեջ էին: Սկզբում կառավարության կողմից հրաման ստացվեց, որ պետք է մի քանի օրվա ընթացքում բոլոր զենքերը հանձնել: Մի մասն ինքնակամ հանձնեց, մյուս մասն էլ մատնեց՝ զենքերի տեղը հայտնելով: Այնինչ շատերը թաքցրել էին դրանք հողի տակ, զերեզմանոցներում: Հրամանը վերաբերում էր ոչ միայն հայերին, այլև թուրքերին: Բանտարկեցին ֆիդայիներին: Մարդկանց մի մասն էլ մտածում էր, որ ով ֆիդային է, նա կարող էր վախենալ, իսկ իրենց ինչո՞ւ պիտի որևէ վտանգ սպառնար: Կառավարությունը հավաքեց նաև տասնութ, տասնինը և քսան տարեկան տղաներին՝ բանվորական վաշտեր կազմելու համար: Այս փաստին ևս հանգիստ արձագանքեցին: Ոչ ոք ամենասուսկալի աղետի մասին չէր կանխագույն:

Ալմաստը ցերեկով իր այգում քաղիան էր անում, մտածելով Ավետիսից ստացած նամակի մասին: Այն, որ տղան ապրում էր հորեղբորից առանձին և ինքն էր դժվարությամբ իր փողը վաստակում, մորը ցավ էր պատճառում: Չէ՞ որ նա որդուն այդքան մեծ չարչարանքով այնտեղ էր ուղարկել ուսումը շարունակելու, ոչ թե լրագրեր վաճառելու կամ բեռնակրություն անելու համար: Եվ այնքան սուղ էին նրա նյութական պայմանները, որ տարիուկես էր անցել, սակայն մորն անգամ չնչին գումար չէր ուղարկել պարտքերը մարելու: Նա դառնությամբ մտածում էր, որ եթե որդին իր կողքին լիներ, հեշտ կլիներ նաև մարդկանց փողերը ետ

վերադարձնելը: Ու թեև Ավետիսին հասցեագրված իր նամակներում աղերսում էր նրան տուն վերադառնալ, որդին չէր արձագանքում: Գուցե պատճառը հենց ետվերադարձի հետ կապված փողի՞ խնդիրն էր:

Ալմաստին իր ծանր մտքերից հանեց հարևանուհին, որը վախեցած ու շփոթված դեմքով մտավ նրա այգին:

-Ալմաստ, արագացրո՛ւ, մեզ աքսորում են:

-Որտեղի՞ց իմացար:

-Կողքի գյուղի մարդկանց արդեն տարհանել են: Թուրք զինյալները շուտով մեզ մոտ կհայտնվեն:

- Ո՞ւր են մեզ տանելու:

-Ոչ ոք չգիտե:

Հարևանուհին ինչպիսի արագությամբ հայտնվել էր, նույնպիսի շտապ քայլերով հեռացավ:

Ալմաստի հոգին տակնուվրա եղավ: Թուրքերն ո՞ւր պիտի իրենց աքսորեն, թե՞ տանում են բոլորին կոտորելու: Մտնելով տուն՝ կարգադրեց աղջիկներին ինչ-որ ունեն, չունեն՝ հագնեն: Նա նաև թուրքերենով անիծում էր նրանց արյունախում ազգը, միաժամանակ մտածելով, թե ճանապարհին իր հետ ինչ պիտի տաներ:

-Բայց մենք հագնված ենք, մայրի՛կ,- ասաց տասը տարեկան Նուբարը:

-Գիտեմ, աղջի՛կս: Մենք հեռանում ենք այստեղից, որպեսզի շորերը բեռ չդարձնենք, նորից հագնվե՛ք:

-Մայրի՛կ, իսկ եթե մեր տնից ոչ մի տեղ չգնա՞նք: Կփակենք մեր դռներն ու լուսամուտները ու ձայն չենք հանի,- Նուբարը վախից կուչ էր եկել:

-Գժվե՛լ ես, աղջի՛կս: Նրանք ամեն ինչ ջարդելով ներս կգան և մեզ տեղնուտեղը կսպանեն,- պատասխանեց մայրը:

Վախից երեխաները լաց եղան:

Ալմաստն անօգնական ու անտեր, թաց աչքերով փորձեց հանգստացնել երկուսին: Այնուհետև նա վերցրեց իր և երեխաների համար ամենաանհրաժեշտ պարագաներից՝ հագուստներ և սպիտակեղեն՝ լցնելով ձեռքի բոխչայի մեջ: Ուրիշ բոխչայում տեղավորեց այգու բազմազան չորացրած մրգերից, շաքար ու հաց: Նաև մի քանի մուրաբաներ վերցրեց: Չմոռացավ և սեղանին դրած նավթի լամպը: Դուռը փակելուց հետո Ալմաստը չոքեց գետնին ու կարոտով համբուրեց հողը: Նա ծնկաչոք ձեռքերը պարզած օգնություն աղերսեց Տիրոջից:

Գյուղում ահավոր աղմուկ էր: Ամենուր լսվում էին մարդկանց գոռում-գոչյունները, երեխաների լացը, կովերի բառաչը, շների հաչոցը: Ալմաստը Նուբարին խնդրեց բռնել չորս տարեկան քրոջ՝ Մանուշի ձեռքից և բաց չթողնել ճանապարհին: Ինքն էլ վերցնելով երկու բոխչաները՝ խառնվեց գաղթականների խմբին: Մարդիկ շարունակում էին հուսահատ բղավել, անիծելով թուրքերին: Ալմաստը մարդկանց այդ ժխորի մեջ մտածեց իր երկու զավակների՝ որբանոցում գտնվող աղջկա ու Ավետիսի մասին: Եթե հայերին տեղահանում են, ապա դա վերաբերում էր հավանաբար բոլոր նահանգներին: Ստացվում էր, որ նրա որդուն էլ կաքսորեն և ինքն այլևս չի կարող տեսնել նրան: Եթե իմանար, թե ինչ էր իրենց սպասվում, նա միակ տղային կուղարկեր Ամերիկա: Չէ՞ որ իր հայրն ու եղբայրն այնտեղ էին և պատրաստ էին Ավետիսի ճանապարհածախսի փողն ուղարկել, նրան տիրություն անել: Այն ժամանակ որդին կտրականապես հրաժարվեց, ինքն էլ գոհ մնաց որդու որոշումից: Ալմաստը մտածեց, որ ինքը մարգարե չէ, ի վերջո, որ իմանար, թե որն էր ճիշտ լուծումը: Որդին այն ժամանակ խոսում էր հայրենասիրության մասին: Անշուշտ, իրենց ծննդավայրն այդտեղ է՝ թուրքերի մոտ, բայց թուրքերն են կառավարում երկիրը, իրենց հպատակեցնում այնտեղ ապրող ազգերին, փորձելով մահմեդականացնել կամ հակառակ

դեպքում բնաջնջել նրանց: Ղա էր իրականությունը: Մտքերի մեջ խորասուզված, հանկարծ Ալմաստը հիշեց, որ Ավետիսից ստացած վերջին նամակն իր հետ չէր վերցրել: Նա շարքից դուրս գալով՝ ուզեց արագ քայլերով գնալ դեպի իրենց տան կողմը: Զինված թուրք ասկյարներից մեկը գոռաց նրա ետևից, կարծելով, թե ցանկանում էր փախչել:

-Այդ ո՞ր ես փախչում, գյավո՛ւր:

-Քո դաժանությունից վախեցող չկա, շո՛ւն,- Ալմաստը սաստեց նրան նույն թուրքերենով:

-Քեզ ասում եմ՝ ետ դարձի՛ր,- ոստիկանը հրացանը ձգեց, սակայն տեսնելով, որ կինը չի կանգնում, բոլորի համար անսպասելիորեն կրակեց նրա վրա:

Ալմաստը միանգամից փռվեց գետնին: Երեխաները լացելով վազեցին դեպի մայրը՝ գրկելով նրա անշնչացած մարմինը:

-Այս լակոտներին հեռու տարե՛ք նրանից, թե չէ մնացած գնդակներն էլ չեն խնայի,- զայրացած շարունակեց նույն ոստիկանը՝ հրացանի փողը պահելով երեխաների ուղղությամբ:

-Բայց նա ո՞ր պիտի փախչեր, եթե երեխաներն իր հետ էին: Հրացանդ իջեցրո՛ւ,- նրան սաստեց կողքի թուրք ոստիկանը:

Հետո դիմելով մարդկանց, հարցրեց, թե ովքեր են մահացած կնոջ երեխաների բարեկամները, թող առաջանան ու տանեն նրանց: Ավետիսի հորաքույրը նրանց մեջ էր: Սարսափահար կատարված տեսարանից՝ նա լացակուրմած աչքերով մոտեցավ աղջիկներին, բռնեց նրանց ձեռքերից և Ալմաստի թողած իրերն էլ վերցնելով, միացավ իր հարազատներին: Եվ որպեսզի մարդիկ այլևս հանկարծ չփորձեին տեղից շարժվել կամ փախչելու փորձ անեին, այս անգամ թուրք զինյալները գյուղացիներին չորս- չորս կապեցին պարաններով ու ստիպեցին այդպես քայլել մինչև Մեզիրե:

Գնացքը փնջալով կանգ առավ «Աֆիոն Գարահիսար» կայարանի առաջ: Խայտաբղետ հասարակությունը խառնվեց կառամատույցում: Աֆիոն Գարահիսարը մտնում էր Կոնիայի նահանգի մեջ: Այն եղել էր բռնազաղթված հայերի առաջին մեծ հավաքակայանը: Այստեղ բեռնաթափեցին հայերին, որոնք միացան կայարանամերձ հարթության վրա փռված հարյուր հազարավոր տարագիր հայերի: Մարդիկ խոսում էին տարբեր բարբառներով: Նրանք եկել էին տասնյակ զանազան քաղաքներից ու հարյուրավոր գյուղերից: Որոշ շրջանների նույնիսկ հին ու միջին սերնդի հայերը թրքախոս էին: Նրանք իրար հետ ծանոթանում էին և յուրաքանչյուրը ողբալով էր հիշում իր թողած տունը, այգին, արտը, սեփական խանութները, արհեստանոցներն ու գործարանները: Ոչ ոք չէր ուզում հավատալ հայերի հանդեպ թուրք կառավարության կազմած դաժան ծրագրին, քանի որ հայերը միշտ էլ կատարել են կառավարության հրամանները, հանդուրժել պաշտոնյաների կամայականությունները:

Գաղթականները կայարանում էին՝ նրա մերձակայքում, սակայն նրանց քաղաք մտնելն արգելված էր: Ընդհանրապես հայերի մուտքն արգելված էր քաղաքներ անգամ ճանապարհային հսկիչներով: Թուրքերը մթերքներ էին բերում կայարան՝ վաճառելու: Մարդիկ խմբերով էին ման գալիս, մանավանդ աղջիկները և հարսները, երբ պետք էր լինում ջուր բերելու: Նրանք իրենց տգեղացնում էին, երեսներին մուր քսելով և զլխաշորով փաթաթելով դեմքերը: Գեղեցիկ աղջիկներին թուրքերն առևանգում էին, հետո վերադարձնում անարգված՝ բզկտված շորերով:

Այդ երեկո մութն ընկնելուն պես ասկյարները խմբով եկան, մտան մարդկանց շարքերը, և լուցկի վառելով հարս ու աղջիկ գտնելով, զոռով՝ զենքի սպառնալիքի տակ քաշեցին տանելու: Հայ տղամարդկանցից երկուսի համբերությունն այլևս սպառվել էր:

-Հերի՞ք եղավ անարգե՞ք մեր կանանց: Բաց թողե՛ք նրանց,- հոխորտաց նրանցից ավելի երիտասարդը:

-Դու ո՞վ ես, գյավո՛ւր, որ ինձ վրա ձայնդ բարձրացնես,- դեղնած ատամների տակից ֆշշացնելով պատասխանեց թուրք ոստիկանը:

-Նա էլ քեզ նման մարդ է: Ի՞նչ կլիներ, եթե ձեր աղջիկների ու կանանց հանդեպ մենք այդպես տմարդի գտնվեինք,- ընկերոջը պաշտպան կանգնեց մյուս հայ երիտասարդը:

-Բայց դուք ո՞վքեր եք, այ փսլնքոտնե՛ր: Մի՛ մոռացեք, որ ձեզ հետ մենք կվարվենք այնպես, ինչպես ուզենանք,- և հրացանը ձգելով կրակեց երկուսի վրա՝ սպանելով նրանց:

Նրանց անշնչացած մարմինների կողքով անցան թուրքերը, այս անգամ նկատելով մի անկյունում կույզ եկած տասներեք տարեկան սիրուն աղջկա: Բռնի քաշեցին աղջկան, վերջինս հուսահատ բարձր ճչաց վախից: Աղջկա եղբայրը, որ նստած էր քրոջ կողքին, հարձակվեց թուրքի վրա: Այս անգամ նույն թուրք ոստիկանը հավիտյան լռեցրեց եղբորը՝ հրացանի մի կրակոցով և քրոջը տարավ: Երեխաների մայրը բարձրաձայն սգաց որդու մահը:

Մարդիկ սարսափահար ականատեսը եղան այս ամենին: Նրանց շարքերում էր միջին տարիքի, սև կարճ մորուքով եկեղեցու սպասավորը, որին էլ դիմեց տարեց կանանցից մեկը:

-Տեր հա՛յր, քիչ է հայերս սովահար ենք լինում այս ճամփաներին, դեռ թուրք ասկյարներն էլ մի կողմից են մեզ սպանում: Մինչև ե՞րբ,- իր զայրույթն արտահայտելով՝ արտասվեց նա:

-Մի՛ լացեք, համբերե՛ք,- կարծես հորդորեց տեր հայրը:

-Մեր ժողովրդին այլևս համբերություն մի՛ քարոզեք: Մենք կկործանվե՛նք:

Տեր հայրը լռեց:

-Լռո՞ւմ եք, որովհետև կշարունակեք մարդկանց նույն քարոզները տալ: Ես այս տարիքիս ողորմություն եմ խնդրում մարդկանցից: Դուք գոնե հասկանո՞ւմ եք, որ աշխարհում մարդու համար ամենածանր բանը ողորմություն խնդրելն է:

-Դուք զավակներ չունե՞ք,- հարցրեց տեր հայրը:

-Ունեցել էի: Այս բորենիները նրանց կորցրին, սպանեցին: Չե՞ք տեսնում, թե ինչքան քիչ է այս ամբոխի մեջ տղամարդկանց թիվը: Գլխատել են շատերին: Մեզ էլ սպանեին, չտեսնեինք այս ահավոր տեսարանները: Գուցե ասե՞ք, թե ինչ է սպասվում մեզ վաղը, մյուս օրը...

-Աստված մեզ հետ է: Լույսը կբացվի, կիմանա՛նք,- տխուր հեռացավ տեր հայրը:

-Ի՞նչ կիմանանք, տեր հա՛յր: Ժողովուրդը խելագարվում է, իսկ դուք առաջվա պես ասում եք, որ համբերե՛նք,- նրա ետևից ճչաց կինը:- Այնինչ այս դաժան օրերին Աստծո սպասավորներն անհանդուրժելի պիտի համարեին թուրքական իշխանությունների արարքները:

-Այդ ինչպե՞ս, -հարցրեց սև գլխաշորով գլուխը փաթաթած մի ծեր կին:

-Անցյալ դարի 80-ական թվականներին Ներսես վարդապետ Խարախանյանը Տարոնում զենքի դիմելու և ինքնապաշտպանության բացահայտ քարոզներ էր անում: Կամ մշեցի Հակոբ սարկավազ Ղևոնդյանին հիշենք, որը Պոլսում հրապարակած իր բանաստեղծություններով զենքի դիմելու և անկախության կոչեր էր անում: Իհարկե, նա բանտարկվեց, բայց պատրիարքարանի միջամտությամբ ազատվելով՝ կրկին իրեն նվիրեց ազատագրական շարժման սուրբ գործին՝ արհամարհելով բոլոր վտանգները:

-Քո բողոքը տեղին է, քո՛ւյրս,-ասաց մի տարեց տղամարդ:-Բայց քո նշածը, ցավոք, բացառիկ օրինակներ են: Իրականությունն այն է, որ մեր եկեղեցիներն էլ մեզ հանդարտության կոչ արեցին, որ հավատանք թուրքերի ստերին: Ջավեշտալի է, նրանք մեզ որոշել էին մորթել, իսկ մեր կրոնավորները հավատացնում էին, որ մեզ միայն տեղահանում

են, ուրիշ ոչինչ: Նրանք ականջալուր եղան թուրքական կառավարության ձայնին: Բայց չէ՞ որ նրանք միշտ են մեզ խաբել: Է՛հ,- ձեռքը թափ տվեց դառնացած ծերունին:- Մի՞թե մեր հայկական թագավորությունը չկործանեցին մեր հոգևոր իշխանությունները: Ե՞րբ են նրանք կանգնած եղել մեր ժողովրդի կողքին:

Գաղթականներից շատերն անտարբեր մնացին նրանց խոսակցությանը: Պատճառն այն էր, որ նրանցից յուրաքանչյուրն իր ցավն ու վիշտն ուներ: Նրանց մի մասը տախտակի կտորներից, թաղիքի լաթերից փոքրիկ ծածկոցներ էին շինել և կուչ եկել նրանց տակ: Ոմանք սավաններից վրաններ էին պատրաստել՝ պատսպարվելով այնտեղ: Իսկ ուրիշները փողոցներից հավաքած տաշեղներով ու չորացած խոտերով կրակ էին վառել և մրոտված կեղտոտ ամանների մեջ գարու ալյուրից կերակուր էին պատրաստում: Ոմանք էլ շվարած ու տարակուսած՝ նստել լալիս էին գաղթի ժամանակ սպանված կամ ճանապարհին կորած հարազատների համար: Շատերն էլ քաղցից թուլացած՝ պառկել էին պատերի տակ և փորձում էին քնել սովահարության տանջանքը մոռացության տալու համար:

Գիշերները մարդիկ վախով էին աչք փակում հանգստանալու: Նրանց քունը խանգարում էր շնագայլերի ոհմակի կաղկանձը և կլանչը: Կենդանիները մարդկանց անթաղ դիակներ ուտելով՝ ավելի էին զագագել և հողից հանում, ուտում էին ոչ խորը թաղված դիակները, ցերեկային բաժինը թողնելով անզղներին, ագռավներին:

Հագիվ էր լույսը բացվել, երբ ոստիկանները հրամայեցին գաղթականներին քանդել վրանները և ճանապարհ ընկնել: Հանկարծ լսվեց որդեկորույս մոր աղեկտուր ճիչը: Մոտակայքում գտել էին երեկ երեկոյան ոստիկանների կողմից բռնի տարած տասներեքամյա աղջկա արյունաթաթախ դիակը: Հասկացվում էր, որ շնագայլերի պես թուրքերից շատերն էին նրա վրա հարձակվել: Խեղճ կնոջ տղային ու աղջկան հողին հանձնեցին միասին՝ մեկ գերեզմանում: Մայրը կպել էր շիրմաթմբին և հողը լցնելով իր գլխին՝ ողբում էր. «Աստված իմ, անզգամ Աստված, անօրեն Աստված, թուրքացած Աստված, ի՞նչ բերիր մեր գլուխը: Ի՞նչ է արել մեր ազգը: Քի՞չ ենք աղոթել, աղաչել, մատաղներ արել: Ինչո՞ւ ես կուրացել ու հանդուժում ես այս ամենը...»:

Մարդիկ հագիվ պոկեցին նրան շիրմաթմբից և քարավանի հետ տարան:

Գաղթականների քարավանը տխուր, լալահառաչ, վերջին կարոտով հրաժեշտ էր տալիս հարազատ վայրերին և շտապում առաջ, դեպի անորոշ, անծանոթ աշխարհը: Անարգանքով, զոհերով ու տանջանքներով հեղեղված նրանց ճանապարհն ասես ուներ միայն սկիզբ: Այնինչ արյունով ներկված դժվարին ճանապարհի վերջը չէր երևում: Մութն ընկնելուն պես մահը խորհրդանշող սև ագռավները ծուլորեն թափահարելով իրենց թևերը, պտտվում էին քարավանների գլխավերևում, այգիների, ծառերի, թփերի շուրջ: Այս ամենը նման էր մահվան արշավանքի, երբ ավերված, հրդեհված էին գյուղերը, քաղաքներն ու փողոցները ամայացած, մագաղաթներն ու մատյանները ցիրուցան եղած, հայոց պատմությունը վառողի ծխի հետ խառնված, մարդկանց գեղեցիկ երազները շրջված էին ու գահագուրկ:

Ավետիսը միշտ ուշի-ուշով գնում էր շուրջը, գուցե պատահեք այնպիսի մարդկանց, որոնք պատրաստ կլինեն իրեն զինելու, իրենց շարքերն ընդգրկելու: Սակայն նման մարդիկ դեռ հորիզոնում չէին երևում: Հանկարծ պատանու ուշադրությունը գրավեց ճանապարհի մեջտեղում պառկած մի պառավ կին: Նա մտածեց, թե կինն ինչու էր հատկապես այդտեղ հանգստանում: Իսկույն ևեթ մոտենալով նրան՝ ասաց.

-Մայրի՛կ, վեր կա՛ց, ճանապարհի եզրին պառկի՛ր:

Սակայն հաջորդ ակնթարթին նա նկատեց, որ կինը կարծես թե չէր շնչում: Բռնեց նրա ձեռքից՝ ստուգելու զարկերակը: Մարմինը սառել էր: Ե՞րբ էր մահացել, դժվար էր պարզել:

Ավետիսի կողքով գաղթական կանայք անցան: Հարցրեց նրանց, արդյո՞ք չեն ճանաչում անծանոթ կնոջը: Բայց կանայք գլուխները բացասաբար օրորեցին: Ավետիսը ստիպված քայլերն ուղղեց վրաններում գտնվող մարդկանց կողմը: Նրանցից մեկը ճանաչեց մեռած կնոջը: Նրա անունը Ջարուհի էր: Ապրում էր մենակ, միակ որդուն թուրքերը սպանել էին: Ավետիսն առաջին անգամն էր անտեր մեռելի հանդիպում: Թեև ինչ խոսք, նա մտածեց, որ ոչ միայն այդ կինը, այլև իր ողջ ազգն էր անտեր մնացել: Նա դիմեց վրաններում գտնվող տղամարդկանցից երեք երիտասարդների, օգնելու իրեն հողին հանձնելու կնոջ դին: Նրանք բահ ու բրիչ բերեցին և վրաններից որոշ հեռավորության վրա փոս փորեցին և Ջարուհուն գերեզման իջեցրին: Նոր էին հողը ծածկել, երբ երեք դիակ բերեցին: Նորից երեք տղաներով գերեզմաններ փորեցին: Նույն օրը նրանք չորսով տասը գերեզման փորեցին: Ոմանք չնչին գումար տվեցին տղաներին և քահանային:

Մի քանի օր շարունակ պատանին անծանոթ երիտասարդների հետ գերեզմաններ էր փորում և իր աշխատանքի դիմաց ստացած օրավարձով հաց էր գնում: Կարո՞ղ էր նա կյանքում երբևիցե մտածել, որ կգա մի ժամանակ, երբ ստիպված կլիներ տիրապետել աշխարհում ամենատխուր արհեստին՝ գերեզմանափորի գործին: Սակայն Ավետիսն այդ սարսափելի գործից հրաժարվեց, երբ իմացավ, որ մոտակա սրճարանում մատուցողի աշխատանք կար: Իսկ քանի որ իրենց քարավանը յոթ օր շարունակ նույն տեղում պիտի մնար, որոշեց հանդիպել սրճարանի թուրք տիրոջը, որին ներկայանալով տեղեկացրեց, որ նման աշխատանքի փորձ ձեռք էր բերել Պոլսում եղած ժամանակ: Տերը համաձայնվեց վերցնել նրան: Ավետիսը զգաց, որ նա հավանում էր իր արագաշարժությունը, մաքրությունը և որ պակաս կարևոր չէր, խոսում էր մաքուր թուրքերենով:

Օրվա մեջ տղան հազիվ մի քանի ժամ էր հանգստանում, սակայն գոհ էր իր աշխատանքից: Մի քանի օր անց սրճարանի տերն իր վերաբերմունքը միանգամից փոխեց պատանու նկատմամբ: Ավետիսին տեսնելով՝ քթի տակ հայիոյում էր:

-Անհավա՛տ, գյավո՛ւր, սրիկա՛...

Տղան սկզբում համբերեց՝ հիշելով մոր խրատները, որ օտարության մեջ պետք է հանդուրժել, շատ խոսքեր չլսելու տալով: Ցավոք, տերը տեսնելով Ավետիսի անտարբերությունը նրա հասցեին հնչող խոսքերին, ավելի կատաղեց և ավելի բարձր սկսեց հայիոյել, այս անգամ հայիոյելով ծնողներին ու ազգին: Տղայի ազգային արժանապատվությունը վիրավորվեց և ի վերջո համարձակություն ունեցավ հարցնելու, թե ինչու է իրեն անվերջ հայիոյում:

-Շատ լավ եմ անում, գյավո՛ւր: Դու ո՞վ ես, որ ինձ դիտողություն ես անում,- թուրք սրճարանատերը մի ուժեղ ապտակ հասցնելով նրան՝ մի քանի դրամ շարտեց և դուրս հանեց սրճարանից:

Վերցնելով գումարը՝ նա վիրավորված ու լուռ հայտնվեց փողոցում: Ավետիսն անվերջ մտածում էր, թե ինչու էին թուրքերն անսահման ատելությամբ լցված հայերի հանդեպ: Չէ՞ որ նրանք էին միշտ, տարբեր ժամանակներում հայերին սպանել, կոտորել, թալանել: Թուրք սրճարանատիրոջ ապտակը, սակայն, վիրավորեց նրա՝ տղամարդու արժանապատվության զգացումը՝ ծնելով վրեժխնդրության ծարավ. «Ինչո՞ւ առաջվա պես մերոնք հայրենասիրական կազմակերպություններ չեն ստեղծում, ինչպիսիք տարիներ առաջ եղել են Պոլսում, Կարինում, Վանում և հայաշատ այլ կենտրոններում: Այդպիսի խմբակներից էր «Սև խաչը», «Պաշտպան Հայրենյաց»-ը, «Զինակիր»-ը, «Հայրենասերների միությունը», որոնք ստեղծված էին թուրքական ու քրդական հարստահարությունների դեմ պայքարելու, ժողովրդի մեջ ինքնապաշտպանության ոգին տարածելու, հեղափոխության զինվորներ պատրաստելու համար: Նրանց շարքում հատկապես պետք է ընդգծել 1878-1879 թթ. Վանում ձևավորված «Սև խաչը», որի անունը նշանակում էր՝ ով դավաճանի, սև խաչ

կքաշվի նրա վրա: Նրա գործունեությունն առավել մարտական բնույթ ստացավ 1881-ին Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հետ համագործակցելուց հետո: Ինչո՞ւ են քնել մեր օրերի հայրենասերները: Ինչո՞ւ թռուցիկներ չեն բաժանում, որ համախմբվենք: Ես էլ կմիանամ նրանց, զենք կբռնեմ և կպաշտպանեմ մեր հազարավոր մայրերի, քույրերի պատիվը»,- տխուր մտածեց Ավետիսը: Այնուհետև սարսուռով հիշեց Խարբերդում ողբերգական մի դեպքի մասին, որը լսել էր իր ընկերոջ՝ Արտաշեսի հորից՝ Խաչատուր աղայից: Իսկ դեպքը հետևյալն է. Ինչ-որ թուրք հայերից մեկին պարտքով փող էր տվել: Վերջինս ամիսներ շարունակ փողը չէր կարողացել վերադարձնել: Թուրք պարտատերը զայրացած տոկոսներ էր ավելացրել իր գումարին և ընդհանրապես անհնար դարձավ պարտքը վերդարձնելը: Թեկուզ հայ մարդը խոստացավ պարտքը մարել, բայց ձգձգվեց: Ի վերջո թուրքը մի օր կանչեց նրան իր մոտ, տարավ իր նկուղը, սպանեց նրան, մասնատեց մարմինը և տակառի մեջ թթու դրեց: Ամենացավալին այն է, որ այդ մասին երբ ոստիկաններն իմացան՝ իրենց յուրայինին չպատժեցին: Վերհիշելով Խաչատուր աղայի պատմած ողբերգական դեպքի մասին, նա կարծես ավելի համոզվեց, որ թուրքերի և հայերի միջև կոնֆլիկտներն արյունալի ավարտ են ունենում: Դեռ դա միայն մի դեպք էր, բայց նրանք հայերին ոչնչացնում էին ամբողջ գյուղերով, քաղաքներով:

Պատանին նորից ու նորից աստելությամբ լցվելով թուրքերի դեմ, միաժամանակ հիշեց իր սիրած հեղինակի՝ Րաֆֆու հերոսներին, որոնք գիտակցում էին, որ հանուն արդար գործի, հանուն ազատության իրենք կարող էին զոհվել, բայց մտածված գնում էին մահին ընդառաջ:

Ու թեկուզ թուրքական կառավարության հրահանգով տեղահանել էին հայերին ու քշում էին իրենց տներից, թալանելով նրանց գույքը, ունեցվածքը, միևնույն էր, նրանց կրքերը չէին հանդարտվում: Նա դանդաղ քայլեց փողոցներով, մտածելով, թե որտեղ պիտի գիշերեր: Այն օրերին գոնե գիշերում էր սրճարանում: Միայնակները քնում էին շատ ժամանակ բաց երկնքի, իսկ ընտանիքավորները պատսպարվում էին սավանների, ծածկոցների տակ: Նայում էր շուրջը, մտածելով դարձյալ գիշերելու մասին, երբ իր կողքով թուրք տղաներ անցան: Նրանք թևերի տակ դռներ ու լուսամուտներ էին տանում: Պարզ էր, որ տեղահան արված հայերի բնակարաններն էին թալանում: Թուրքերն իրենց երկրում ոչ մուսուլմանների հանդեպ բավականին սանձարձակ էին պահում՝ չվախենալով իրենց գործած հանցանքների համար քաղաքակիրթ երկրների կողմից դատապարտվելուց, քանի որ պատերազմ էր, և եվրոպական բոլոր երկրներն իրենց շահերն էին հետապնդում:

Անցնելով մի շենքի մոտով, հանկարծ մեկը վերևից ձայն տվեց Ավետիսին: Նրան կանչում էին: Ո՞վքեր էին: Գլուխը դեպի վերև դարձրեց ու տեսավ, որ թուրքեր էին: Մտածեց, որ հավանաբար գործի համար էին կանչում: Ավետիսն առանց վախենալու բարձրացավ նրանց մոտ: Նախասրահում երեք երիտասարդներ էին՝ կոկիկ հագնված ու բարետես արտաքինով: Ինչ-որ ազարակում աշխատանք առաջարկեցին Ավետիսին, գրույցից հասկանալով, որ նա խելամիտ է և տիրապետում է թուրքերենին:

-Դու որպես հսկիչ կաշխատես՝ս ինձ մոտ՝ ազարակում,- ասաց ներկա գտնվողներից հազիվ թե երեսունն անց մի երիտասարդ:- Քեզ ձի կտրամադրվի, դու կգրանցես ամեն օր բանվորների կատարած աշխատանքը և շաբաթը մեկ անգամ կտեղեկացնես ինձ: Կգա՞ս մեզ մոտ աշխատելու:

-Այո՛, էֆենդի,- Ավետիսն ուրախացավ նրա առաջարկից:

-Բայց դու պետք է մեր կրոնն ընդունես: Քո անունը կփոխենք, կդնենք Հյուսեին, քեզ կթալատենք և հետո մի թուրքի աղջիկ կտանք, -ասաց նստածներից մեկ ուրիշը՝ խորամանկ նայվածքով:

Այդ առաջարկից Ավետիսի ուղեղը մթազնեց, սենյակն ասես գլխի վրա շուռ եկավ: Չկորցնելով իր հավասարակշռությունը՝ նա կտրուկ պատասխանեց.

-Ձեր պայմաններին չեմ կարող համաձայնվել: Ես քրիստոնյա եմ, որպես այդպիսին էլ հրաժեշտ կտամ կյանքիս, ցտեսություն՝ և,- ու քայլերն ուղղեց դեպի դուռը:

-Դու դեռ շատ կփոշմանես: Շատ պնդաձակատն ես,- նստածները ցննիկաբար ծիծաղեցին տղայի վրա:

Ավետիսը զայրույթով շտապ քայլերով իջավ աստիճաններից՝ մտածելով, որ գենք ունենալու դեպքում իր փամփուշտները չէր խնայի այդ թուրք երիտասարդների ձակատներին շարելու համար: Նա հպարտությամբ հիշեց առաջին հայ ֆիդայիներին՝ Աղբյուր Սերոբին, Գևորգ Չաուշին, Անդրանիկին: Ինչպես կուզենար նրանց պես քաջ զինակիցների շարքերում հայտնվել, ապրել հայոց լեռների ծերպերին, բայց միշտ պայքարել թուրքական բռնակալական լծի տակ ճնշված, մարդկային բոլոր իրավունքները կորցրած իր ժողովրդի համար՝ ըմբոստանալով բարբարոսության դեմ:

Նա մտածումնքների մեջ էր, երբ հանկարծ փողոցում իր հարագատ բարբառով խոսակցություն լսեց: Շրջվեց: Իր հեռավոր բարեկամներից մեկն էր՝ Արսենը՝ ընկերոջ հետ: Ընկերը ոտքից կաղում էր: Նա այդ վիճակին էր ընկել երկու-երեք տարեկան հասակում, երբ 1895 թվականի հայկական ջարդի ժամանակ հորը սպանել են, իրեն էլ զցել են բարձր լուսամուտից: Նրա ոտքը փշրվեց, և նա կաղ մնաց: Արսենը տասը տարի առաջ էր դուրս եկել ծննդավայրից և նույնպես ապրում էր Պոլսում: Նրանք իրար պատմեցին գլխներին եկածը:

-Իսկ թեզ ինչո՞ւ քշեցին: Չէ՞ որ պոլսեցիներին ձեռք չէին տալիս,- հարցրեց Արսենը:

-Այո՛: Հրամանը միայն գավառից եկած հայերի համար էր: Ինձ էլ մի զիշեր նավ նստեցրին և ուղարկեցին:

Արսենը Ավետիսին առաջարկեց գնալ իրենց հետ մի թաքստոց, որի մասին ոչ ոք չգիտեր: Դա երկհարկանի, թալանված հայի տուն էր, որի նկուղներից մեկում էին մնում: Այնտեղ դեռ ապահով էր համարվում, քանի որ ոստիկանները չէին եկել:

Առավոտյան Ավետիսը գնաց կայարանի ուղղությամբ: Դարձյալ հացի փող վաստակելու համար օրավարձով գործ էր փնտրում: Ոչինչ չստացվեց: Նա գնաց վրանների կողմը, ուր ամեն օր մարդիկ էին մեռնում սովից, հիվանդություններից: Պատանին նորից հանձն առավ գերեզմանափորի տխուր աշխատանքը: Նա մի քանի տղաների հետ գերեզմանոցներում նախապես փոսեր էին փորում՝ մինչև տերերը կբերեին հողին հանձնելու իրենց հարագատների դիերը: Իսկ մահացողների թիվն օրեցօր շատանում էր: Տղաներն այլևս չէին հասցնում գերեզմաններ փորելու գործը և ստիպված էին մի փոսի մեջ իրար վրա չորս-հինգ դիակ տեղավորել:

Ավետիսը հոգնած իր նոր կացարանն էր վերադառնում ուշ երեկոյան: Բարեկամը՝ Արսենը, այդ թաքստոցն էր բերել ուրիշ հայերի, ովքեր չնչին առիթով կռվում էին իրար հետ, աղմուկ բարձրացնելով: Մի օր ուշ երեկոյան ժամին ոստիկաններն աղմուկի վրա եկան և նրանց բոլորին տարան կայարանի պահակակետը: Արսենն իր ընկերոջ հետ կարողացան փախչել, բայց Ավետիսը չհասցրեց: Այնտեղ, ուր տարան նրան, կային տարբեր տարիքի երեսուն հոգի: Նրանց մեջ ամենատարիքովը Մելքոն պապն էր: Նա յոթանասուներեքամյա պատկառելի արտաքինով մարդ էր՝ խոշոր ու կաղնեգույն աչքերով, սեպածև, ալեխառն մորուքով, որին աքսորել էին Անկարայից: Ավետիսը հետախուզեց շուրջը, մտածելով այդտեղից փախչելու մասին: Նա իր ծրագրի մասին հայտնեց տարեց այդ մարդուն, որին բանտարկյալները պարզապես ամի էին անվանում:

-Պետք չէ փախչելու մասին մտածել, կբռնվե՛ս,- խորհուրդ տվեց ալեհեր ծերուկը:

-Գիշերները իմ փորած անցքը մեծացնում եմ: Ամեն ինչ կհաջողվի,- վստահաբար ասաց Ավետիսը:

-Է՛հ, տղա՛ս, -հոնքը վեր քաշելով ասաց Մելքոնը:- Ո՞ւր պիտի փախչես: Այստեղ նույն թուրք ոստիկաններն են, ինչ՝ պատերի ետևում: Մեր ժողովուրդը փախչելու տեղ չունի: Բոլորիս կյանքը նրանց ձեռքերում է:

-Միևնույն է, կփորձեմ փախչել, եթե մտքիս դրել եմ:

-Երևում է, որ փոքր ժամանակից էլ համառ ես եղել, բայց սա այն դեպքը չէ, երբ համառությամբ մի բանի կհասնես:

Գիշերը Ավետիսն իր հորը տեսավ երազի մեջ: Իբրև ինքը իրենց գեղեցիկ պարտեզում էր, երբ հանկարծ հայրը ծառերի ետևից գիրքը ձեռքին, իրեն նկատելով՝ հարցնում է. «Դու դեռ այստե՞ղ ես: Ամոթ է, տղա՛ս, այդպես խղճուկ քարշ գալը: Հիշի՛ր իմ դասերը և անպայման ելք գտիր այդ դժոխքից փախչելու: Դու պետք է զենք վերցնե՛ս և կռվե՛ս»: «Գիտե՞ս, հայրի՛կ, քեզնից հետո ուսումս կիսատ մնաց», - ի պատասխան ասաց ինքը: «Այժմ ամոթ է այդ մասին հիշելը: Եթե խորհրդիս չհետևես, այլևս հետս չխոսես», - ասաց նա հանդիմանանքով ու հեռացավ:

Իսկ վաղ լուսաբացին, երբ բոլորը դեռ քնած էին, նա արթնացավ, և հոր պատկերը նրան մի պահ տարավ Դատեմ գյուղը: Այս անգամ նա հիշեց իրենց դպրոցում գրականության ուսուցչի՝ Մանուկյանի կազմակերպած բեմադրության մասին: Սցենարը հենց նա էր գրել: Այն կոչվում էր «Ազատատենչ հայերի պայքարը»: Բեմադրությանը մասնակցում էին միայն տղաները, աղջիկներ չկային, քանի որ նրանց ծնողներն ի սկզբանե արգելել էին նրանց բեմ բարձրանալու: Մանուկյանի գրած սցենարի համաձայն՝ ֆիդայիների խումբը կռվում է քրդերի դեմ, քանի որ թուրքերը վատ կընդունեին, եթե բացահայտ թշնամանքի մասին իմացվեր: Քրդապետը նրանց հայտնաբերելու դեպքում մեծ պարգև է խոստանում: Հարևան գյուղից մի դավաճան հայ է հայտնվում՝ առաջարկելով իր ծառայությունները: Վերջինս առաջնորդում է ոստիկաններին, որոնք էլ ձերբակալում են ֆիդայիներին և նրանց զլխատելու հրաման է արձակվում: Սակայն վաղ առավոտյան, երբ շոթայակապ բերում են մահապարտներին, դահձապետը պատրաստվում է սուրը բարձրացնել՝ առաջին հարվածը հասցնելու, քրդի շորերով ծպտված հայերի մի խումբ հանկարծակի հարձակվում է և զնդակով գետնին տապալում դահձապետին: Ոստիկանները ահից փախչում են: Դավաճանին բռնում ու շոթայում են՝ տանելով դատաստան տեսնելու:

Այդ ներկայացման մեջ իրեն երկու դեր հատկացրին, մեկը՝ հայրենասեր ֆիդայիներից մեկի, մյուսը՝ քրդապետի, որը պետք է բռներ ֆիդայիներին: Քանի որ նա բոլորից լավ էր տիրապետում թուրքերենին, այդ պատճառով էլ քրդապետի դերն էլ նրան տվեցին: Եվ քանի որ հայրը՝ Հովսեփը, ներկայացման օրը զբաղված էր, հետևաբար ինքը մորը խնդրեց անպայման ներկա գտնվել: Իսկ մայրը չմերժելով որդու խնդրանքը, ապշած էր մնացել նրա դերասանական խաղից, մանավանդ երբ կատարում էր ֆիդայիների դերը՝ ազգասիրական կոչեր հնչեցնելով: Իսկ քրդապետի դերում ինքը պարզապես հիացմունք էր առաջացնում թուրքերենի իր իմացությամբ: Այդ օրը իրենց դպրոցի տնօրենը նույնպես իր գոհունակությունը հայտնեց մորը: Սակայն էականն այն էր, որ գրականության ուսուցիչն այդ բեմադրությամբ իրենց հայրենասիրական դասեր էր տալիս: Իսկ դա նշանակում էր, որ ինքը ազգասեր պիտի լինի իրական կյանքում, ոչ թե՛ բեմի վրա: Այսինքն՝ հարմար պահին պիտի գործի, ցույց տալով իր անկոտրում կամքը և ուժը:

Ցավոք, հաջորդ օրը փախչելու փորձ անելիս թուրք ոստիկաններից մեկը բռնեց Ավետիսին և ռետինե մահակով ուժեղ հարվածն իջավ նրա ուսին: Մելքոն պապը ցանկացավ միջամտել, սակայն նույն մահակով ոստիկանը նրան այնպես հարվածեց, որ տարեց մարդը փլվեց հատակին:

Ավետիսին քարշ տվին ոստիկանապետի մոտ, որը զայրույթով ու ատելությամբ նայելով հանդուգն տղային, հարցրեց.

-Լակո՛տ, դո՞ւ էիր ուզում փախչել:

-Ո՛չ: Ես ո՞վ եմ, որ այստեղից փախչեմ:

-Գյավո՛ւր, իմ ոստիկանին հավատա՞մ, թե՞ քեզ,- ասաց նա՝ ուժեղ ապտակ հասցնելով:

Այնուհետև նայելով իր կողքին հրամանի պատրաստ զինվորներին, հայացքով հասկացրեց, թե ինչ պիտի անել: Իսկ նրանք ծեծում էին մարդկանց, տարբեր չարչարանքների ենթարկում: Բանտարկյալների համար օգտագործվում էին չարչարանքի գործիքներ, որոնց մեջ տխուր հռչակ էր վայելում հանրահայտ ֆալախկան: Պատժվողի մերկ ոտքերը դրվում էին երկու՝ հատուկ սարքված փայտերի արանքում, սեղմվում էին, բարձրացվում վերև և սկսում էին թաց ճիպոտներով կամ մահակներով հարվածներ հասցնել զոհի ոտքերի կրունկներին ու թաթերին, մինչև ուշագնաց լինելը: Ապա արյունաթաթախ ոտքերն իջեցվում էին աղաջրի մեջ և տանջանքը շարունակվում էր: Իսկ այն հայերը, ում կասկածում էին զենք թաքցնելու մեջ, հարվածների թիվը հասցնում էին 200-ի, նույնիսկ 800-ի:

Թուրք ոստիկաններն Ավետիսին տապալեցին գետնին, մեկը կոշիկներն էր քաշում, մյուսը՝ գուլպաները, մեկ ուրիշը ոլորեց ոտքերը: Ոճրագործի տեսքով զինվորներից մեկը չոր ցլաջիլի մտրակը ձեռքին սպասեց հրամանին:

-Երեսուն հատ,- հրամայեց ոստիկանապետը:

Եվ տղայի ներբանի երկայնքով հաջորդեց հարվածը հարվածի ետևից: Ավետիսը ցավից գոռում էր, բայց նրան լսող չկար: Տասը հարվածից հետո նա ուշաթափվեց: Այլևս ոչինչ չէր հիշում: Նրան տարան բանտ՝ ընկերների մոտ: Գիշերը ուշքի եկավ: Երբ բացեց աչքերը, ոտքերն ուռած էին, արյունոտված ու փաթաթված: Ջգաց, որ շորերը թաց էին, շուրջը խավար էր:

-Վա՛յ, մատներ՛րս,- տնքաց նա ցավից:

-Արթնացա՞ր,- ասաց Մելքոն պապը հայրական գուրգուրանքով: -Մի քիչ համբերի՛ր, կլուսանա, աղաջուր կդնենք, կանցնի:

Առավոտյան զգաց նաև, որ քայլել չէր կարողանում: Ստիպված չորեքթաթ գուգարան գնաց: Կոշիկները և գուլպաները չկային: Չկային և փողերը: Նա փոխեց թաց վերնաշապիկը: Սակայն ուժեղ քաղցից այս անգամ քիչ էր մնում ուշաթափվել: Դրան ունեցող բանտարկյալներն իրենց համար ոստիկանների օգնությամբ ուտելիք էին բերել տալիս: Հարկ եղավ վերնաշապիկներից մեկը բանտարկյալներից մեկին վաճառել, փողը տվեց Մելքոն պապին, որ ուտելիքի և աղ ճարելու հոգս աներ: Բարեհամբույր տարեց տղամարդը աղաջրով թրջոցներ դրեց նրա ոտքերին:

Մի շաբաթ հետո հերթապահ ոստիկանը հայտնվեց և բանտարկյալներին միանգամից հանեց բակ:

Դրսում այնքան մարդ էր հավաքվել, որ անգամ օդ չկար շնչելու: Հետո մարդկանց խմբերի բաժանեցին, քշեցին դեպի բեռնատար կառամատույց: Նախապես երկուական ոստիկան կանգնած էին յուրաքանչյուր վագոնի դռան երկու կողմերում: Մելքոն պապը և Ավետիսը վերջում բարձրացան: Այնինչ ներսում մարդիկ այնպես էին իրար վրա կուտակվել, որ ոմանք ուշաթափվել էին, ոմանք էլ ընդմիջտ հրաժեշտ էին տվել կյանքին:

Երբ գնացքը ժամանակ առ ժամանակ կանգ էր առնում ջուր ու վառելիք վերցնելու, գաղթականներն էլ վագոններից թափվում էին ջուր խմելու և մթերքներ գնելու: Գոյացած հերթերի պատճառով նրանց մի մասը ո՛չ հասցնում էր ջուր վերցնել, ո՛չ էլ՝ մթերքներ: Ոստիկանների խիստ հսկողությամբ բոլորը ժամանակին պետք է վագոնները բարձրանային:

Գիշեր էր, երբ գնացքը կանգ առավ: Մարդիկ ամենից շատ քաղց էին զգում: Շուտով հաց բերեցին, սակայն հացն այդտեղ կրկնակի թանկ էին վաճառում: Ավետիսը փող չուներ ու մոտեցավ մի զինվորականի:

-Բայց մեզ ասել էին, որ այստեղ հացն անվճար պիտի ստանանք:

-Ինձ ինչպես կարգադրել են, այդպես էլ հրամանը կատարում եմ,-պատասխանեց նա :

-Փող չունեցողները պիտի մեռնեն:

-Հայվա՛ն, ի՞նչ ես հիմար հարցեր տալիս: Դուք ապրելու իրավունք չունեք:

Ավետիսը բռունցքները սեղմած՝ քիչ էր մնում քացով հարվածեր նրան: Մելքոն պապը, որ կանգնած էր Ավետիսի մոտ, նկատեց ատելությունից շողացող նրա աչքերը ու զգուշությամբ ասաց.

-Այլևս մի՛ վիճիր, Ավետի՛ս: Մենք այսօր հաց կունենա՛նք:

Նա իր ներքնակը տվեց զինվորականին և երկու հաց վերցրեց: Երկուսով այնքան քաղցած էին, որ միանգամից հացը կուլ տվեցին, չմտածելով հաջորդ օրվա մասին: Իսկ մյուս օրն Ավետիսը ստիպված այս անգամ իր ներքնակը ծախեց, առնելով մի քիչ հաց ու պանիր: Ի՞նչ արած, դրամ չունեցողներն ամենուր ստիպված էին ապրանքափոխանակություն կատարել:

Գաղթականները շարունակեցին ճանապարհը: Քայլում էին ոստիկանների հայիոյանքով համեմված գոռոցների ներքո և ռետինե մահակների ուղեկցությամբ: Մի կողմից նրանք ստիպում էին մարդկանց շարքերը խտացնել, մյուս կողմից էլ աչք դնելով գեղեցիկ աղջիկների ու կանանց վրա, ճանապարհից մի կողմ էին քաշում: Չէին կարողանում քայլել ծանր հողի կանայք ու ծերերը: Դժվար էր ճանապարհը փոքր երեխաներ ունեցող մայրերի համար, մեկին գրկում էին, մյուսին՝ շալակում, երրորդի ձեռքից բռնում: Մարդիկ երբեմն խնդրում էին ոստիկաններից, որ քարավանը կանգ առներ, մի բան ուտեին ու հանգստանային: Ոստիկանները թեև համաձայնվում էին, բայց զայրացած տոնով շարտում էին.

-Գյավուրներ՝ շուտ կոտորվե՛իք, լավ կլինե՛ր: Թե չէ՝ մենք էլ տուժում ենք՝ քայլելով ձեզ հետ:

-Մի՞թե մենք ուզում էինք մեր տուն-տեղը թողնել: Ձեր կառավարության հրամանն էք դուք կատարում,- ասաց մի կին՝ երեխան գրկին:

-Դուք ի վերջո սատկելու եք: Կառավարության հանցանքն այն է, որ ձեզ տեղում չսատկացրեց, որ մենք էլ ազատվե՛ինք, դուք էլ...

Այլևս ոչ ոք ոչինչ չպատասխանեց:

Ծերությունը սովորաբար ուժեղացնում է ի սկզբանե մարդու մեջ եղած հատկությունները: Այն կարծես նման է մարդու դիմաց դրված խոշորացույցի: Նախանձն ավելի նախանձոտ է դառնում, բծախնդիրը՝ ավելի կամակոր, խելացին՝ ավելի խելամիտ և այլն:

Մելքոն պապը տարիների հետ իմաստնացել էր, դարձել քչախոս, չափավոր՝ ուտելու և խմելու մեջ: Անցնելով տառապանքների և դժվարությունների միջով, նա կյանքի մեծ փորձ էր ձեռք բերել: Մելքոնը չափազանց մտահոգված էր, անհանգիստ: Արթուն եղած ժամերին անվերջ մտածում էր իր հարազատների մասին: Աքսորի ճամփան կտրել էր նրան իր մեծ գերդաստանի հետ ունեցած կապից: Մելքոն պապը որպես խոհարար աշխատում էր թուրք բարձր պաշտոնյայի ռեստորանում, երբ մի օր նրան կանչեցին ոստիկանությունից: Այնտեղից էլ ուրիշ հայերի հետ արտաքսեցին Անկարայից: Պարզ էր, որ քաղաքից քշել էին նաև իր զավակներին: Նա երեք զավակ ուներ, մեկ որդի և երկու դուստր: Բոլորն էլ ընտանիքներ ու երեխաներ ունեին: Ինքը կնոջ հետ ապրում էր որդու ընտանիքի հետ: Որդին էլ երկու տղա ուներ, որոնցից ավագն Ավետիսի տարիքին էր, տասնվեց տարեկան: Ինչքան էլ հույսը չէր կորցնում, որ մի օր կհանդիպեր նրանց, բայց օրերն անցնում էին և

հույսն էլ կարծես նահանջում էր, քանի որ գաղթի ճանապարհին ականատես լինելով թուրք ոստիկանների բազմաթիվ դաժանություններին, վախենում էր, որ որդին իր տղաների հետ կենդանի չլինեին: Ղառնությամբ մտածում էր, որ եթե վատ բան պիտի պատահեր, թող իր հետ կատարվեր: Միևնույն էր, արդեն կյանքն ինչ-որ չափով ապրել էր և մահից չէր վախենում: Իր պառավ կինն էլ առողջական խնդիրներ ուներ, թե նա ինչպես պիտի դիմանար գաղթի անվերջանալի ճանապարհներին, չգիտեր: Մելքոն պապը մտահոգված էր ոչ միայն իր զավակների, հարազատների, այլև իր ժողովրդի տարագիր ճակատագրով: Նա շարունակեց մտածել, որ դեռ բարեբախտություն էր, որ հանդիպել էր Ավետիսին ու նրան սիրում էր հարազատ թոռան պես: Խեղճ տղան նույնպես լինելով միայնակ իրեն հարազատ պապիկի պես էր վերաբերվում, հոգ տանում իր մասին, թե չէ ինքն այդ տարիքին ոչինչ անել չէր կարող: Այնինչ Ավետիսը գաղթի ճանապարհներին օրավարձով աշխատելով, չարչարանքով հացի փող էր վաստակում իրենց երկուսի համար և դեռ փող ավելանալու դեպքում կիսում էր իր հետ: Այդպես կաներ միայն թոռը՝ Հակոբը, որն Աստված գիտե, թե որտեղ էր:

Առավոտից Ավետիսը դարձյալ դուրս էր եկել հացի փող ձարելու, իսկ Մելքոն պապը կայարանամերձ տարածքով մտախոհ շրջում էր՝ նայելով հարյուրավոր գաղթականների: Հանկարծ մեկը ձայն տվեց նրան: Շրջվեց: Իր վաղեմի ծանոթներից էր՝ Քերոբ էֆենդին, որը սեփական ռեստորան ուներ Անկարայում: Նա վաթսուներկու տղամարդ էր՝ միջահասակ, կոկիկ հագնված, կիրթ շարժումներով: Քերոբ էֆենդին մենակ չէր: Կողքին մի երիտասարդ կար:

-Ղո՞ւ էլ ես այստեղ,- տեսնելով նրան՝ իր զարմանքն արտահայտեց Մելքոն պապը:

-Ես հա՞յ չեմ,- ժպտաց Քերոբ էֆենդին:- Թուրքերն ինձ ինչի՞ համար պիտի խնայեին: Թե՞ թուրք պաշտոնյան, որին տասնյակ տարիներ ծառայել ես, չգիտեր, որ քեզ էլ կաքսորեն:

-Է՛հ, սա մեծ ողբերգություն է մեր ազգի համար: Ո՞ւր են մեզ տանում, մինչև որտե՞ղ...Ոչ ոք ոչինչ չի ասում:

-Թուրքերը գաղտնիք պահել գիտեն: Ղա արդեն հաստատ է,- ասաց էֆենդու մոտ կանգնած երիտասարդը, որի անունը Հայրապետ էր:

-Ղու մենա՞կ ես, թե՞,- հարցրեց Քերոբ էֆենդին:

-Ո՛չ: Ես տասնվեցամյա մի պատանու հետ եմ միշտ լինում: Մեզանից նա է հացի փող վաստակում: Անունն Ավետիս է:

-Այդ դեպքում գնանք մոտակա սրճարանը: Տաք սուրճ կամ թեյ կխմենք, հետո էլ կգրուցենք,- առաջարկեց էֆենդին:

Մելքոն պապը լուռ հետևեց նրան: Հետո էլ դրսում շատ թափառելուց հնարավոր էր մրսեր, մանավանդ որ աշնան երկրորդ ամիսն էր գլորվում: Ու քանի որ իր ներքնակն էլ երկու հացի հետ էր փոխել, գիշերները մրսում էր:

Քերոբ էֆենդին երեքի համար տաք թեյ և հաց ու պանիր պատվիրեց: Սրճարանում շարունակվեց փողոցում սկսված զրույցը, որը վերաբերում էր հայ ժողովրդի ճակատագրին:

-Երևի թուրքերը մեր հայ պաշտոնյաներից էին դժգոհ, որ այս տեղահանությունն ու ջարդը կազմակերպեցին,-ասաց Հայրապետը:

-Ղու միամիտ բաներ ես խոսում: Նախ՝ մեր ղեկավարները միշտ էլ հավատարիմ ծառայել են նրանց: Հարկերը պատերազմի ժամանակ բարձրացրել են, էլի ձեռն չեն հանել, չեմ խոսում նաև ուրիշ կամայականությունների մասին: Եթե դժգոհել են, նրանց ազատեին, տեղահան չանեին: Քո ողջ ազգին են հալածում, տղա՛ս: Յոթ տարեկան տղա երեխաներն ի՞նչ մեղք են գործել, որ առանձին շրջաններում նրանց բոլորին կոտորել տվեց: Անարգում են մեր կանանց, աղջիկներին: Նրանք մեր ազգն են ուզում ոչնչացնել: Սա է ճշմարտությունը,- բորբոքվեց Քերոբ էֆենդին:

-Քեզ հետ համամիտ եմ, Քերո՛ւբ, -ասաց Մելքոն պապը՝ կում-կում խմելով թեյը։-Մենք մեր պապենական հայրենիքում թշնամու կողքին ենք ապրել, այն ոխերիմ թշնամու, որ քեզ հետ հաց կիսելով, ամեն պահ թիկունքից ոչ միայն կարող էր հարվածել, այլև սպանել, թալանել։ Հիմա նրանք հայերին մուրացկաններ դարձնելով՝ կտիրանան մեր ունեցվածքին, կհարստանան ու մեզ վրա կծիծաղեն։

-Նրանք վաղուց էին մեզ վրա ծիծաղում։ Գիտես, իմ ռեստորանը շատ պաշտոնյաներ էին հաճախում։ Նաև Հայոց պատրիարքարանից ծանոթներ ունեի, որոնք դժգոհում էին երիտթուրքերի կառավարությունից։ Ղեռ մինչև պատերազմը, 1913-ին նրանք քանի՛ նամակներ էին ուղարկել Պոլսի հայոց պատրիարքարանին։ Մեզ՝ հայերիս, անվանում էին անիծյալներ, որ իբրև նրանց աղետներ ենք բերում, երբ բարձրաձայնում ենք եվրոպական պետություններին, որ Թուրքիայում հայերի իրավունքները չեն պաշտպանվում և օգնություն էինք խնդրում նրանցից։ Այդ նամակներում սպառնում էին մեզ, հիշեցնելով, թե հայերը որ երկրում են ապրում և որ իրենք թույլ չեն տա միջամտելու իրենց ազգային-քաղաքական գործերին։

-Ցավն էլ այն բանի մեջ է, որ մենք, ինչպես քիչ առաջ ասացի, նրանց կողքին ենք ապրում։ Այս երկիրը կոչվում է Թուրքիա, ոչ թե Հայաստան,- զայրույթով ասաց Մելքոն պապը։

-Այդպես էլ կա,- խոսքը շարունակեց Քերոբ էֆենդին։- Պատրիարքարանին ուղղված նամակներից մեկում նրանք բացահայտ գրել էին, որ թուրքական սուրը հարյուր հազարավոր գյավուրների է սպանել և դեռ միլիոններով էլ կսպանի։ Եվ նրանք գտնում են, որ հայերը «թոքախտի միկրոբներ են», որից պիտի ազատվել։ Այսքանից հետո մերոնք ոչինչ չեն ձեռնարկել և սպասել են...

-Ի՞նչ անեին, երբ բոլոր տեղերից զենքերը բռնի կերպով վերցրել էին,- հարցրեց Հայրապետը։

-Հենց դա էլ նշանակում էր, որ մեզ շատ մեծ աղետ էր սպասվում, ինչը մեր պաշտոնյա հայերը չեն պատկերացրել։ Ինչպե՞ս եղավ, որ հենց Պոլսում մի գիշերվա մեջ 250 մտավորականների ձերբակալեցին և կորցրին։ Կարծում եք, մեր դավաճան հայերից նրանց չե՞ն օգնել գտնելու մերոնց հասցեները։ Մեկ է, այդ նույն դավաճանները մի օր կկանգնեն դատաստանի առջև։ Մեր հայրենասեր տղաները նրանց կոչնչացնեն։

-Իսկապես, այստեղ գաղթականները պատմեցին, որ երբ պատգամավորներ Գր.Զոհիրապին ու Վարդգեսին կայարանապետը, նաև առանձին զինված մարդիկ Ուրֆայից ցանկացել են փախցնել նրանց և ազատել, չէին համաձայնվել, ասելով, թե իրենց հետ ոչինչ չի պատահի։ Այնինչ նրանց սպանեցին և երկու օր անց թուրքերը նույն մարդկանց ժամացույցներն ու գոտիներն էին վաճառքի հանել շուկայում, - էֆենդու խոսքը լրացրեց Հայրապետը։

Հույն մատուցողը մոտեցավ նրանց։ Քերոբ էֆենդին նաև սուրճ պատվիրեց։

-Իրականում հայերի ջարդը կազմակերպել են հրեաները, -ասաց Քերոբ էֆենդին։- Ես նաև նյութապես աջակցում էի հայերենով լույս տեսնող «Վերջին լուր» թերթին, հետևաբար ավելի շատ տեղեկություններ ունեմ...

-Ինչպե՞ս,- զարմացավ Մելքոն պապը։

-Ղուք որտեղի՞ց պիտի իմամաք։ Միայն մամուլի հետ շփվողները գիտեին, թե ինչ կրքեր են բորբոքվում, որ հրեաները և երիտթուրքերը միավորվել էին ետին պլան մղելու հայերին, հույներին, արաբներին, բուլղարներին, նվազեցնելու նրանց դերն ու տեղը երկրի քաղաքական կյանքում։ Հրեա մեծահարուստները ատում էին ցարական Ռուսաստանը, այնինչ հայերը ռուսասերներ են։ Նույնիսկ Անգլիան, որ Ռուսաստանի դաշնակիցն էր, հրեաները նրանց դեմ են լարված։

-Մի՞թե հնարավոր չէր արտասահմանյան երկրների մամուլին հավաստի տեղեկություններ ուղարկել, թե ինչ է կատարվում Թուրքիայում,- հարցրեց Հայրապետը:

-Է՛հ,- դառը քնծիծաղեց էֆենդին:- Կարծում ես, թե հայերը քի՛չ են հեռագրեր, ահազանգեր, գրություններ ուղարկել եվրոպական տարբեր կազմակերպությունների: Նրանք միայն իրենց թերթերի առաջնորդող էջերում տեղեկություններ են տալիս, թե իրականում ինչպիսի ջարդ են կազմակերպել թուրքերը, բայց ոչ ոք մեզ չի ցանկանում օգնել: Ավելին ասեմ, նույն այդ արտասահմանյան մամուլը նույնպես կաշառված է: Կաշառված են նրանց թղթակիցները, քանի որ հաճախ ապատեղեկատվություն են տարածում, գրելով, թե հայերը հալածված չեն Թուրքիայում: Ֆրանսիական առանձին թերթեր նույնիսկ արդարացում են թուրքական կառավարությանը, հայերին անվանում խռովարարներ, անհավատարիմ հպատակներ: Հրեա բուրժուական լրագրությունը գրեթե առանց բացառության հայերին ներկայացնում է «կիսավայրենի, ավազակ»:

-Եվ ոչ ոք ճշմարտությունը չի՞ կարող բարձրաձայն հնչեցնել,- բորբոքվեց Հայրապետը:

-Հետաքրքիրն այն է, որ անգլիացի դեսպան Լոուրըրը երիտթուրքական կոմիտեն անվանում է «Միության և Առաջադիմության» հրեական կոմիտե, որ հրեաները երիտթուրքերի գլխավոր ոգեշնչողներն են: Նա նաև հավաստում է, որ երիտթուրքերի «Ազատություն, հավասարություն և եղբայրություն» նշանաբանը միաժամանակ իտալական մասոնների նշանաբանն է:

-Քո պատմածներից ստացվում է, որ հայերի ջարդը մասոնների՞ սարքած գործն է,- Մելքոն պապի աչքերը քիչ մնացին դուրս թռչեին ակնախորշերից:

-Ճիշտ այդպես: Նույն Թալեաթ փաշան մասոնական թեմի պարագլուխներից է և պատասխանատու պաշտոնների նշանակեց երկրում միայն մասոններին կամ կոմիտեի հետ կապված մարդկանց: Երիտթուրքերն ի սկզբանե կապ հաստատեցին միայն օսմանցի և արտասահմանցի հրեաների հետ: Իսկ հրեան իր տնտեսական բարձր գիտակցությամբ թուրքին ծուղակը զցեց: Քանի որ Իսրայելի սուրբ հողերը գտնվում են թուրքական սահմանների ներսում, բնական է հրեաների ձգտումը՝ նշանակալից դիրք գրավել, որպեսզի իրականացնի իր իդեալները՝ ստեղծել իսրայելական անկախ պետություն Պաղեստինում կամ Բաբելոնում: Հրեաները երիտթուրքերին դրամական օգնություն են ցույց տալիս, դրա համար էլ իրենց իրավունքներն ունեն նրանց նկատմամբ: Դեռևս 1910 թվականի ապրիլին հողվածներից մեկում հրեա Իսրայել Չանգվիլը, որ իր վրա էր վերցրել ամբողջ թուրքական ազգային պարտքի վճարման ծանրությունը, հրապարակավ խոստովանում է իր մայրենի լեզուն հռչակել թուրքերենը, եթե երիտթուրքերը հրեաներին անսահմանափակ ներգաղթ արտոնեին դեպի Պաղեստին,- խոսքն ավարտեց Քերոբ էֆենդին:

-Այդ դեպքում եթե նրանց հրեշավոր նպատակը հայերի ջարդը կազմակերպելն էր, ինչո՞ւ տեղահանեցին: Սպանեին նրանց իրենց տներում,- Մելքոն պապն իր հարցական հայացքն ուղղեց բանիմաց էֆենդուն:

-Այդ մասին էլ են մտածել: Նրանք այդքան դիակները չէին կարող հողին հանձնել, իսկ տեղահանության ժամանակ մի մասին կարող էին գետերը զցել, ձորերից շարտել, կրակների մեջ վառել: Եվ հետո ուզում էին անպայման կտտանքների ենթարկել հայերին, ստորացնել, ծաղրել նրանց:

-Աստված նրանց յոթնապատիկ կպատժի, - ասաց Մելքոն պապը, որն ստացած տեղեկություններից գայրանալով՝ դողում էր:

-Եթե իսկապես Աստված՝ կա,- տխուր ասաց Քերոբ էֆենդին:

Դրսում արդեն աշնանային անձրև էր մաղում: Նրանցից ոչ ոք դեռ չէր ուզում լքել տաքուկ անկյունը: Ծանր մտքերը նստածներից ոչ մեկին հանգիստ չէին տալիս:

Գաղթականների քարավանը, տառապած ու հուսահատ, շարունակում էր ճանապարհը, ժամանակ առ ժամանակ կանգ առնելով: Նրանք չգիտեին օրը, ժամը, միայն ցերեկն ու գիշերն էին տարբերում: Կանգառների տևողությունն էլ կախված էր կայարանապետերից, գնացքավարներից, ոստիկանապետերից: Սակայն աքսորականների հանգիստն էլ լի էր վտանգով ու անախորժություններով: Կանգառներին թուրքերը գալիս էին գյուղերից, որպեսզի գեղեցիկ կանանց անարգեն՝ ոստիկանների թույլտվությամբ: Այդ թուրքերի մի մասն էլ գալիս էր զուտ երեխա հափշտակելու և ուղղակիորեն մարդկանց դիմելով՝ առաջարկում էին երեխան իրենց վաճառել: Հայ տղամարդիկ հսկում էին կանանց ու աղջիկներին՝ առևանգումը կանխելու համար: Հատկապես չափազանց վտանգավոր էր միայնակ ջրի գնալը: Եթե մայրը երեխայի հետ էր, երեխային հափշտակում էին, մորն էլ անարգելով՝ մենակ արձակում էին: Թեև թուրքերը ցանկացած ժամանակ էլ խմբով շրջապատում էին կանանց, առևանգելով մի քանիսին և մի քանի ժամ հետո վերադարձնում էին: Թուրքերը տղամարդկանց նույնպես թալանում կամ սպանում էին, եթե նրանք մուրացկանների պես չէին հագնված: Ամեն անգամ որևէ տեղ իջևանելուց, թեկուզ այն մի գիշեր տներ, յուրաքանչյուր ընտանիք կամ խումբ, իր տեղը հարթելով, խփում էր սավանից կամ սեղանի սփռոցից սարքած վրաններ: Մարդիկ արդեն հմտացել էին դրանք արագ խփելուն ու քանդելուն:

Ավետիսը և ծերունի Մելքոնը առավոտից քաղցած էին մնացել: Տղայի աշխատած փողը երկու օր հերիքեց ուտելիքի համար: Նա սովորականի պես գնաց օրավարձով աշխատանք գտնելու: Անցնում էր մի պարտեզի կողքով, երբ տեսավ, որ տերը դարպասի մոտ կանգնած է: Մոտեցավ նրան ու հարցրեց, թե արդյո՞ք օգնելու գործ ունի:

-Այո՛, ահագին աղբ ունեմ, որ պետք է փոխադրել ուրիշ տեղ:

-Ուրեմն, կգամ ու կօգնեմ,- ուրախացավ Ավետիսը:

-Ավելի լավ կլինի երկուսով գաք, որովհետև մենակ դժվար կլինի:

Ավետիսը շտապ գնաց Հայրապետի ետևից, որի հետ մի քանի օր առաջ էր ծանոթացել՝ Մելքոն պապի միջոցով: Հայրապետն անտրամադիր էր:

-Քերոբ էֆենդին չկա: Այդ պատճառով էլ անհանգիստ եմ,- ասաց նա:

-Երբվանի՞ց չկա: Դու փնտրե՞լ ես նրան:

-Երեկ առավոտյան եմ վերջին անգամ տեսել: Երեկոյան չկար: Հիմա էլ...

-Երևի բարեկամների է հանդիպել: Ուր որ է, կերևա: Արի՛ միասին գնանք մի քիչ հացի փող վաստակենք, գուցե նա այդ ընթացքում էլ եկած լինի:

Հայրապետը համաձայնվեց: Նրանք միասին գնացին այն տան կողմը, որին կից պարտեզում տերը սպասում էր նրանց:

Պայմանավորվեցին վարձի համար և սկսեցին աղբը լցնել պարկերը ու տեղափոխել: Սակայն Ավետիսն զգաց, որ սարսափելի քաղցած է և ծնկները ծանրությունից այնպես էին դողում, որ հագիվ իրեն պահեց գետնին չտապալվելուց: Ընդամենը երկու պարկ էր քարշ տվել, երբ խնդրեց տիրոջից իրենց հասանելիք գումարի կեսը տալ՝ հաց գնելու համար: Տերը խղճաց նրան ու գնաց տնից հաց ու պանիր բերեց տղաների համար: Հայրապետի հետ նրանք միանգամից խժռեցին ուտելիքը և շարունակեցին աշխատել: Կեսօրին ավարտելով գործը և գումարը վերցնելով՝ եկան հանդիպելու Մելքոն պապիկին: Ավետիսն ինչպես միշտ, փողի կեսը տվեց նրան, որ նա քաղցած չմնա:

-Քերոբ էֆենդին ո՞ւր է, չի երևում,- հարցրեց նա Հայրապետին:

-Երեկվանից չկա: Ավետիսի հետ ուզում ենք գնալ նրան փնտրելու:

-Իսկ ինձ, Ավետի՛ս, ինչո՞ւ ես մենակ թողնում: Առանց քեզ ես անտեր եմ,- աղերսանքով ասաց Մելքոն պապը:

-Ղու առավոտից մինչև հիմա բերանդ ոչինչ չես դրել: Պետք է հաց ու պանիր առնես,-
ասաց Ավետիսը:

-Ճանապարհին կուտեմ և ձեզ հետ կգամ:

Տղաներն իրար նայեցին:

-Ուրեմն՝ գնացի՛նք: Ժամանակ չկորցնենք,- ասաց Հայրապետը:

Երեքով սկսեցին փնտրել Քերոբ էֆենդուն: Մոտենում էին առանձին խմբերի, հարցուփորձ էին անում, նույնիսկ վրաններում գտնվողներից էին փորձում տեղեկություն ստանալ: Այնուհետև որոշեցին դեպի աղբյուրի կողմը գնալ: Այնտեղից գալիս էին երկու թուրք երիտասարդներ, որոնք հրճվանքով դիմեցին նրանց.

-Այստեղ մի գյավուրի են սատկացրել, տարե՛ք փոսը գցեք, որ չհոտի:

Երեքն էլ սարսափահար իրար նայեցին: Նրանցից ամեն մեկն էլ սրտի խորքում ուզում էր հավատալ, որ դա իրենց չի վերաբերում: Ցավոք, Քերոբ էֆենդին էր պառկած աղբյուրից քիչ հեռու՝ սվինահարված: Պարզ էր, որ նրան սպանել էին աղբյուրի մոտ, երբ մենակ գնացել էր ջուր խմելու: Հավանաբար թուրքերը հետևել էին նրան: Տեսնելով, որ կարգին հագնված էր, աչք էին դրել նրա վրա: Սպանելուց հետո հանել էին նրա բաձկոնն ու ժամացույցը: Տարել էին նաև թանկարժեք գոտին, որի մեջ Հայրապետի ասելով՝ հարյուր ոսկի էր թաքցրել: Տղաները փոս փորեցին էֆենդու համար և նրա դին հանձնեցին հողին՝ աղբյուրից ոչ հեռու:

Մելքոն պապը մռայլ նստեց մի լպրծուն քարի վրա ու չիբուխը հանելով՝ ծխեց: Գրպանում երկու հատիկ ծխախոտ էր մնացել: Նա շատ հազվադեպ էր ծխում: Ավետիսը խղճաց նրան ու գայրացած տոնով բարձրաձայն ասաց.

-Ի՞նչ կլինի, որ մենք՝ տղամարդիկ, միանանք, թուրք ոստիկաններից հրացանները խլենք, թեկուզ մեզնից էլ տասնյակ զոհեր լինեն, բայց մենք և՛ նրանց կսպանենք և՛ մարդկանց կազատենք գերությունից:

-Բա հետո՞...Ո՞ւր պիտի գնանք, ճամփա չգիտենք: Իսկ մարդի՞կ...Եթե թուրք խուժաններն այդ մասին իմանան, ինչպե՞ս կվարվեն՝ հազարավոր հայ կանանց ու երեխաների հետ,- վրդովված ասաց Մելքոն պապը:

-Այդ դեպքում պետք է զենքներս միշտ ցած դնենք, վիզներս էլ դեմ տանք, որ մեզ կոտորեն: Եթե պայքարել չգիտենք, ինչո՞ւմ է մեր կյանքի իմաստը:

-Է՛հ, տղա՛ս, իհարկե, կռվել գիտենք, բայց թուրք կանոնավոր զորքի դեմ ի՞նչ անենք: Եթե պիտի կռվենք, ապա ոչ անջատ-անջատ, այլ միասին, թե չէ թուրքերի նպատակն է մեզ ոչնչացնել աշխարհի երեսից:

-Բայց չե՞ս կարծում, որ եթե այսպես շարունակվի, մեր ազգը կկորչի: Թշնամու դեմ իր գործածած զենքով պիտի կռվել: Մենք էլ թուրքի, քրդի պես վրեժխնդիր պիտի լինենք, եթե մեզ վիրավորում են, սպանում ու անարգում են,- ըմբոստացավ Ավետիսը:

-Իրավացի ես, բայց մենք անջատ-անջատ չպիտի գործենք: Գիտես, մեր հայրենասեր, անվախ տղամարդիկ խմբերով լեռներն են բարձրացել, հարձակվում են թուրքերի վրա, փորձելով պաշտպանել հայ տարագիրներին:

-Ցավոք, նրանց թիվը քիչ է: Մեր ողջ ազգը դարձավ անպաշտպան՝ թուրքին հանձնելով զենքերը: Մեր մեծահարուստները ոչ թե իրենց կալվածքների մասին պիտի մտահոգվեին, այլ սեփական ժողովրդի, ավելի շատ զենք ձեռք բերեին, քան թշնամուն մատուցամբ հանձնեին այդ ամենը:

-Հիմա ազգովի դատապարտված ենք: Թուրքերը մեզ վտարում են մեր երկրից:

-Իսկ Բալկանյան ժողովուրդները ինչպե՞ս ապստամբեցին թուրքական լծի դեմ ու անկախացան: Մենք էլ պետք է հետևենք նրանց օրինակին, կռվենք, արյուն թափենք, թե չէ ազատությունը հենց այնպես, հեշտությամբ չի նվաճվում:

-Հայերը մշտապես հույսը դրել են ցարական Ռուսաստանի օգնությանը: Իհարկե, ռուսները մեզ անկախություն չեն տա, բայց գոնե մեր ժողովուրդը կփրկվի ֆիզիկապես ոչնչացումից:

-Մելքոն պապի, ես շատ եմ մտածում մորս ու քույրերիս մասին: Իսկ եթե նրանց նույնպես սպանել են... Աստված ոչ արասցե, ես ողջ մնալու դեպքում պարտավոր եմ վրեժխնդիր լինել նրանց փոխարեն, հարյուր հազարավոր մեր զոհերի փոխարեն...

Հայրապետը Մելքոն պապի հետ լռեցին: Հեռվից՝ վրանների մոտից լսվեցին ողբաձայն ճիչեր...

Լուսինը սև ամպի տակից մերթ լողալով դուրս էր գալիս՝ լուսավորելով շրջակայքը, մերթ էլ՝ փախչելով թաքնվում էր ամպերի տակ՝ ավելի թանձրացնելով շրջապատի խավարը:

Երեկոյան թուրք ոստիկաններն իրենց հետ այլուր ու ոսպ բերեցին վաճառելու գաղթականներին: Մարդիկ փող չունեին և նրանց հետ ապրանքափոխանակություն էին կատարում, առաջարկելով ոսկեդենն ու արծաթեդենը, ժամացույցներ, վերնաշապիկներ, ներքնազգեստներ և այլն: Կարձ ժամանակամիջոցում ամեն ինչ վաճառվեց, և նրանք սկսեցին կրակ վառել, անաղ խմորի գնդեր կամ ոսպ եփել: Սակայն քաղցից գաղթականներից շատերն անհամբերությամբ կրակից հանում էին կիսաեփ հացի գնդերը կամ կիսաեփ ոսպը և ազահաբար ուտում էին:

Հիսունհինգամյա մի տղամարդ, միջահասակ, լիքը դեմքով, ցախը շալակին և ոսպն ու այլուրը ձեռքին, մոտեցավ վրանի առջև որդու հետ գլխահակ նստած մի կնոջ և խնդրեց իրեն օգնել ոսպը եփելու: Կինը, որ նրա հարևանությամբ վրաններից մեկում էր ապրում, քաղցած էր մնացել:

-Ուզում եմ, որ մենք միասին ճաշենք, մանավանդ որ վառելիք էլ ունեմ, -ասաց տղամարդը, որի անունը Արշավիր էր:

Կինը չառարկեց: Ընդհակառակը, ուրախացավ, քանի որ ամբողջ օրվա ընթացքում որդու հետ քաղցած էին մնացել: Միայն հարցրեց:

-Եթե և՛ վառելիք ունեք, և՛ ուտելու բան, ինչո՞ւ ինքներդ կրակ չվառեցիք:

-Նկատեցի, որ ձեզ այլուրից և ոսպից բաժին չհասավ:

-Չէր էլ հասնի, քանի որ ապրանք չունեինք փոխանակելու: Մտածում էինք՝ գուցե անվճար տրամադրվեք:

Արշավիրը լուռ կրակը վառեց: Կինը կաթսայի համար դանդաղ քայլերով մտավ վրան: Տղան օգնեց մորը ջուր բերելու: Արշավիրը կնոջը պատմեց իր մասին: Նա մասնագիտությամբ բժիշկ է: Նրա կինը գաղթի ճանապարհին մահացել էր: Երեխաներից տեղյակ չէր, քանի որ երբ իրենց տեղահանեցին, նրանք տանը չէին: Այդպես էլ կորցել են իրար:

Երբ կրակը վառեց, կինը փոքրիկ կաթսան դրեց կրակին, իսկ իրենք նստեցին կրակի շուրջը: Արշավիրը Ադանայից էր, իսկ իրեն անծանոթ կինը՝ Հաճընի շրջակա գյուղերից: Նա էլ էր կորցրել իր հարազատներին:

-Երբ մեր գյուղը պաշարեցին, մենք այգիներում էինք: Ես ու որդիս մի կերպ թաքնվեցինք: Երբ թուրքերը բոլորին տեղահանեցին, գիշերով եկանք թաքուն մեր տուն, թաքնվեցինք պաշարով ու կահ-կարասիով լի նկուղում: Այնտեղ մեկ ամիս մնացինք: Հետո երկու կամ երեք օրը մի անգամ գիշերները դուրս էինք գալիս աղբյուրից ջուր բերելու, պաշար գտնելու: Մեր բարեկամներից երկու հոգի հրաշքով մեզ գտան: Նրանք պատմեցին, որ տեղահանվածներից տեղեկություն չունեին, իսկ լեռներում և այգիներում գտնվողներին գտել էին թուրքերը ու կոտորել: Մեզ համար անտանելի էր մթին խորշում երկար մնալը: Մի ծանոթ քուրդ ունեինք, որը թաքնված հայերի համար գիշերները հաց էր տանում: Նա մեզ այդտեղից հանեց և ուրիշ տեղ ուղարկեց: Միևնույն է, թուրքերը մեզ բռնեցին և միացրին

գաղթականների խմբերին,- խոր հառաչանքով ասաց տանջված կինը, որը չգիտեր, թե ուր էին իր ամուսինը մյուս որդու հետ, քույրերն ու եղբայրները:

Նրանք երկուսով գրուցում էին, երբ մոտեցավ կմախքի նմանվող մի տարեց կին՝ քրքրված հագուստով, տանջված դեմքով, ալեհեր մազերով: Խնդրեց նրանց օգտվել կրակից: Քանի որ ցերեկը անձրև էր տեղացել, երեկոյան եղանակը խոնավ էր ու ցուրտ: Տեղավորվելով կրակի մոտ՝ պառավ կինն ամբողջ մարմնով կծկվեց:

Արշավիրը որպես բժիշկ նկատեց, որ նա խիստ հուսահատված էր ու քաղցած:

-Մորաքո՛ւյր,- դիմեց նրան բժիշկը,- այս աքսորը բոլորիս կյանքը մաշեց:

-Է՛հ, տղա՛ս, - արծազանքեց նա:- Ինչքա՞ն մարդ կորցրինք գաղթի ճանապարհին: Աստված անուժ է օգնելու մեզ,- հետո խորը տնքալով շարունակեց:-Ո՞վ է տեսել, որ հղի կնոջ փորը սրով ճեղքեն, տեսնելու համար տղա՞ է, թե՞ աղջիկ:

Վերջին խոսքերի վրա նա ուշաթափվեց՝ «աղջի՛կս» բացականչելով: Արշավիրն իսկույն նրա թևերից բռնեց, որ չընկներ կրակի վրա: Վրանի կինը ջուր բերեց: Նրան ուշքի բերեցին:

-Չէ՛, այդպես չեղավ, դու մեզ վախեցրիր: Եթե քեզ չբռնեի, կրակի մեջ պիտի ընկնեիր,- ասաց Արշավիրը:

-Իմ ապրելն ի՞նչ իմաստ ունի այսքանից հետո, երբ աղջկաս աչքիս առաջ սպանեցին: Ինձ ինչի՞ ափսոսացին, շուտ կազատվեի այս տանջանքներից:

-Մորաքո՛ւյր, ես էլ գաղթի ճանապարհին կնոջս կորցրի: Երեխաներս չգիտեմ, թե ուր են: Նույնպես չգիտեմ ծեր ծնողներիս, եղբայրներիս տեղը: Հիմա բոլորովին մենակ եմ:

-Նրանք գազաններից գազան են: Մեզ հանեցին քաղաքներից, գյուղերից, մեր տները, եկեղեցիները թալանեցին, շատերին կոտորեցին: Ցավալին այն է, որ այն թուրքերը, ովքեր սեղան են նստել հայերի հետ, ավելի անգութ, ավելի անխիղճ գտնվեցին: Սոսիկ թուրքերից մեկը հանեց մորաքրոջս աչքերը, ասելով, որ իբրև նա ծիծաղել է իր հոր վրա: Քրոջս էլ անարգելուց հետո սպանեց, ես ու աղջիկս հրաշքով փախանք: Ճանապարհին աղջկաս էլ սպանեցին, -այլևս նա ոչ մի բառ չասաց: Նրա շրթունքները դողացին, աչքերը լցվեցին արցունքներով, և նա հեկեկաց...

Վրանի կինը տաք շոր բերելով՝ օգեց տարեց կնոջ ուսերին, որը դողում էր և՛ ցրտից, և՛ քաղցից, և՛ վշտից:

Ոսպն արդեն կիսաեփ էր եղել: Վրանի կինը չկոտրվող ափսեների մեջ ոսպից լցրեց նստածներից յուրաքանչյուրի համար և միասին ճաշեցին: Այդ ընթացքում նրանց մոտեցավ Ավետիսը՝ շալակին ցախը և այլուրը: Մելքոն պապն էլ նրա հետ էր: Խնդրեցին նրանց օգնել կրկին կրակը թեժացնելու: Իրենք նույնպես քաղցած էին: Բժիշկը տեղ սվեց նրանց կրակի մոտ: Այժմ նրանց հետ շարունակվեց գրույցը: Ոչ միայն նույնն էր գաղթականների ցավն ու մտատանջությունը, նույնն էր բոլորի ճակատագիրը:

-Մեր հայ պաշտոնյաները օգնեցին թուրքերին՝ տեղահանելու բնակչությանը: Ինչո՞ւ չմտածեցին մեր մասին, որ զենքերը նախապես բռնագրավեցին և անզեն ժողովրդին իրենց տներից քշելով՝ հրի ու սրի կմատնվեցին, -գրույցին խառնվեց վրանի կինը:

-Մերոնք մտածել են ոչ միայն իրենց, այլև գավակների մասին: Իհարկե, նրանք գիտեին, որ մեր ողջ ժողովրդի գլխին վտանգ է կախվել, որ անպայման ողբերգություն կլինի, բայց չափերի մասին չէին պատկերացնում,- ասաց Մելքոն պապը:

-Բոլոր ազգերին էլ Աստված է ստեղծել: Ինչո՞ւ է մի ազգ մյուսին ոչնչացնում,- պառավ կինը հարցական հայացքը դարձրեց նստածներին:

-Կարծում եմ, նորություն չէ այստեղ նստածներիցս ոչ մեկի համար, որ թուրքը միշտ էլ ջարդել է մեզ, կոտորել, թալանել, այրելով մեր ունեցվածքը: Հիմա էլ պատերազմ է, եվրոպական պետություններից յուրաքանչյուրն իր շահն է հետապնդում այս պատերազմի մեջ: Ո՞վ է մտածում թուրքիայում ապրող հայերի մասին,- վրդովված ասաց Արշավիրը:

Զրույցի ընթացքում քննադատեցին ազգային տարբեր գործիչների անհեռատեսությունը, պարզամտությունն ու ոչ խորամանկությունը: Եկան այն համոզման, որ թուրքը ռուսին չկարողացավ հաղթել և իր գայրույթը թափեց անտեր, անպաշտպան հայերի վրա՝ որպես ռուսամուկների:

Ավետիսը և Մելքոն պապը միասին իրենց քաղցը հագեցրին: Շատ ուշ էր արդեն: Նստածները ցրվեցին: Սակայն վրան չունենալու պատճառով ցրտից Ավետիսը Մելքոն պապի հետ թավալվեցին տաք մոխիրների մեջ:

Հիշողությունը նման է սուր ծայրերով հրազենային բեկորի, որը գոյություն ունի յուրաքանչյուր մարդու մեջ: Այն հզոր ուժ է, որին չես կարող հրամայել, ոչ էլ կարող ես նրան մերժել: Երբեմն նա այնպիսի դեպքեր է արթնացնում, որ մարդու սիրտը սեղմվում է անտանելի ցավից և մարմինը պատում է սառը քրտինքով:

Ավետիսը վաղ արթնացավ: Դարձյալ երազի մեջ տեսել էր ծննդավայրը, տնեցիներին, ընկերներին: Նա անվերջ մտածում էր, թե ուր են իր հարազատները: Պատանին հույս ուներ, որ մի օր կհանդիպի նրանց: Սակայն այդ օրն ուշանում էր: Նրան հաճախ թվում էր, թե ինքը ոչ թե տասնվեց տարեկան էր, այլ վաթսուներե անց մի տղամարդ էր: Եղեռնն ասես օրեցօր ծերացրել էր բոլորին: Ավետիսին երբեմն թվում էր, թե մի դար է անցել այն օրից, երբ բաժանվել էր իր ծննդավայրից: Այնպիսի ծանր փորձությունների միջով էր անցել, որ նույնիսկ ծիծաղելի էր հիշել մանկության օրերը, իր խենթություններն ու արկածները: Նա նաև շատ անգամ էր մտաբերել ընկերներին, մասնավորապես հաշմանդամ Ջաքարին, թե ինչպե՞ս պիտի նա անվերջանալի ճանապարհն անցներ: Բոլորովին առողջ մարդիկ չէին դիմակայում այս տանջանքներին, ուր մնաց թե հիվանդները: Հիշում էր նաև իր քույրի ընկերներին՝ Նշանին, Ներսեսին: Ինչպե՞ս են վերաբերվել թուրքերը քույրերուն ու վարժարաններուն սովորողների հետ: Արդյո՞ք ողջ են նրանք և իր պես գտնվում են գաղթի դժվարին ճանապարհներին, թե՞...Ո՞վ գիտե...Նա պիտի հանդիպեր որևէ խարբերոցու, որպեսզի տեղեկություններ իմանար: Ավետիսն ամեն անգամ սրտի մեծ տրոփյունով էր սպասում նոր շոգեքարշների ժամանելուն, դիմավորում էր անծանոթ մարդկանց, օգնում նրանց բեռներն իջեցնելու և փնտրում էր հարազատներին, ընկերներին, ծանոթներին, բայց նրանք դեռ չկան ու չկան: Նրանց շարքերում նույնպես չկան ինչ-որ կերպ ծայտված ըմբոստ այն տղամարդիկ, ում հետ ինքը կուզենար միանար՝ ազատվելով անվերջանալի դժոխային տեսարաններից:

Դեռ լույսը չբացված, լսվեց թուրք ոստիկանի գորգոռոցը՝ քանդել վրանները: Գաղթականներն արագ իրար խառնվեցին: Ավետիսը նախորդ օրվանից իր մոտ մնացած գումարից մի քիչ ուտելիք գնեց իր և Մելքոն պապի համար:

Ճանապարհներին շարունակ մարդիկ էին մահանում: Իսկ այդ նույն ճանապարհների եզրերին հաճախ գաղթականների քարավանը հանդիպում էր նեխած կամ հոշոտած դիակների, որ թողել էին իրենցից առաջ գնացողները:

Ճանապարհին Ավետիսի առջևից մի կին էր քայլում իր երեխաների հետ: Մեկին գրկել էր, մյուսին՝ շալակել, երրորդի ձեռքից էր բռնել: Նա խնդրեց իր կողքից քայլող ծանոթ կնոջը վերցնել իր գրկի երեխային և ջուրը զգել, բայց այնպես, որ ինքը չտեսնի:

-Ինչո՞ւ ջուրը զգեմ, մե՞ղք չէ երեխան,- սաստեց նրան կնոջ գրուցակիցը:

-Եթե թողնենք ճանապարհին, թուրքերը կտանեն, կմեծացնեն, և նա մեծանալով, հայերին կսպանի ու մի թուրք էլ կավելանա:

-Ախր երեխան ինչո՞ւ մեռնի, եթե դու նեղված ես:

Ավետիսը լսելով երկու կանանց խոսակցությունը, ներքուստ խիստ այլայլվեց: Ու թեև ճանապարհին նա մարդկանց օգնում էր վարձով բեռը տեղափոխելու, այս անգամ խղճալով բազմազավակ մորը, մոտեցավ նրան և երեխային վերցնելով՝ ասաց.

-Մի՛ նեղվիր, մորաքո՛ւյր: Ես նրան իմ շալակը կառնեմ:

-Ես հազիվ եմ նրանց համար կեր ճարում: Թուրքերը սպանեցին ամուսնուս: Մեն-մենակ շատ չարացած եմ:

-Պետք չէ չարանալ: Բոլորս էլ նույն վիճակի մեջ ենք: Երեխային անվճար ինձ մոտ կպահեմ մինչև իրիկուն:

Վշտացած ու կմախքի նմանվող կինը թեթևակի շիկնեց բարի պատանու առաջարկից և մեղմացած տոնով ասաց.

-Շնորհակալ եմ, եղբա՛յրս: Աստված թո՛ղ քեզ միշտ պահապան լինի,- և Ավետիսը նկատեց, որ նրա փոս ընկած աչքերից արցունքի երկու խոշոր կաթիլներ սահեցին այտերով:

Տղան սրտի խորքում ոչ միայն խղճաց անծանոթ կնոջը, այլև ավելի ատելությամբ լցվեց թուրքերի դեմ, որոնք մանկահասակ երեխաներին մահմեդականացնում էին: Ահա ինչու էր կինը վախենում այդ չարիքից: Նա ցանկանում էր մի երեխային զոհ տալով՝ փրկել մյուս երեխաների կյանքը:

Ավետիսն անծանոթ կնոջ նիհար երեխային շալակած՝ ակամայից հիշեց որբանոցում գտնվող իր քրոջը: Նա տխուր մտածեց այն մասին, թե ինչպես են վարվել թուրքերը Խարբերդի տարբեր որբանոցներում երեխաների հետ: Արդյո՞ք սպանել են նրանց, թե՞ մահմեդականներ են դարձրել: Հետո հասկանալով, որ քույրը գտնվում էր գերմանական որբանոցում, կարծես ինքն իրեն մի քիչ հանգստացրեց այն հույսով, որ երևի նրա հետ ոչինչ չի եղել, քանի որ գերմանացիները թուրքերի դաշնակիցներն էին և չէին հակառակվի նրանց ծավալած մարդասիրական գործունեությանը:

Երբ քարավանը թեքվեց դեպի հարավ՝ ճանապարհի աջ կողմում մի դիակի շուրջ հավաքված էին երեք տասնյակից ավելի ագռավներ: Գաղթականները գարշահոտից քթներից բռնեցին, այնպիսի ահավոր հոտ էր տարածվել:

Դեռ մութը չէր ընկել, երբ ոստիկանները թույլ տվեցին մարդկանց հանգստանալու: Նրանց իջևանած տեղում կային հին շորերի պատառիկներ և մոխիրների մնացորդներ: Դա նշանակում էր, որ նրանցից առաջ գաղթականներ էին գնացել: Քաղցից ու ծարավից մարդիկ ուժասպառ էին եղել, և շատերը փռվեցին գետնին՝ շունչ առնելու: Եվ քանի որ նրանք շաբաթներով ու ամիսներով չէին լողանում, չլվացված շորերի մեջ ոջիլներ էին հայտնվում, անհանգստություն պատճառելով մարդկանց:

Երբ իջևանեցին, Ավետիսը շալակի երեխային հանձնեց մորը, որը շնորհակալություն հայտնելով նրան, նաև օրհնեց:

-Աստված թող քեզ երկար կյանք պարգևի: Կուզենայի մեզ միանայիր, մի բան միասին ուտե՛ինք:

-Չէ՛, ես ուտելու բան ունեմ: Կերակրե՛ք ձեր երեխաներին և այլևս մի՛ փորձեք ազատվել որևէ մեկից: Առանց այն էլ թուրքերի նպատակն է մեզ ոչնչացնել: Այնպես որ, պետք չէ ինքներս մեզ ոչնչացնենք,-ասաց Ավետիսը:

-Ղու գրկվե՞լ ես ծնողներից,- հարցրեց կինը:

-Հայրս մահացել է մինչև պատերազմը, իսկ մորիցս ու քույրերիցս տեղեկություն չունեմ: Նրանք ապրում էին Խարթերդի նահանգի Ղատեմ գյուղում: Ես գտնվում էի Պոլսում, երբ ինձ աքսորեցին:

-Խեղճ տղա...Ղու բոլորովին մենակ ես մնացել:

-Այստեղ քարավանի ներսում շատերն են մենակ մնացել: Եթե պետք լինի օգնել ձեզ, ինձ կդիմեք:

Ավետիսը շոջվելով հեռացավ՝ փնտրելու Մելքոն պապին: Երբ գտավ նրան, տղային դուր չեկավ ծերունու դեմքը: Նա մի տեսակ շատ գունատ էր, համարյա դեղնած դեմք ուներ: Մելքոն պապի մոտ դեռ երեկվանից հացի մնացորդ կար: Երկուսն էլ խիստ քաղցած էին և բավարարվեցին չոր հացի մնացորդով: Այս անգամ պահակ ոստիկանները թույլ չտվեցին մարդկանց մոտակայքից մթերքներ գնել: Սակայն երեկոյան աղջամուղջին մի սայլակ մոտեցավ նրանց: Ոստիկանները գաղթականներին շարք կանգնեցրին և յուրաքանչյուրին մեկական կես կիլոգրամանոց հաց տվեցին: Մարդիկ նաև ծարավել էին, բայց ոստիկանները նրանց թույլ չտվեցին գետին մոտենալ՝ ջուրը չկեղտոտելու համար: Գաղթականները ստիպված բավարարվեցին ոռոգման համար նախատեսված առվակի ջրից օգտվելով:

Քամին շարունակում էր բերել նեխած դիակների հոտը, որին վարժվել էին նրանց ռունգերը:

Ուշ երեկոներին աքսորականների իջևանատեղերում համարյա մեռելային լռություն էր տիրում: Միայն մերթընդմերթ վերևից կամ ներքևից լսվում էին հրացանի կրակոցներ: Այդ ահագանգ էր ինչ-որ մեկի սպանվելու մասին, որը կա՛մ ցանկացել էր փախչել կա՛մ չենթարկվել: Օդը լի էր վտանգներով, տառապանքով, ցավով, արցունքներով: Թվում էր, թե լեռներն էլ գլուխ էին խոնարհում՝ տեսնելով հարյուր հազարավոր մարդկանց վիշտն ու հալածանքները:

Մելքոն պապը մռայլ խոհերով ծանրացած գլուխը հենել էր ինչ-որ ծառի ու մտածում էր. «Չէի կարող պատկերացնել, որ թուրքի վայրենության ու ատելության աստիճանը կգերազանցեր մարդկային բանականության բոլոր սահմանները: Նրանք հայերի նկատմամբ ժամանակ առ ժամանակ ջարդեր են կազմակերպել առանձին վայրերում: Բայց ո՞վ կմտածեր, որ Թուրքիայի ողջ տարածքում բնակեցված հայերին հնարավոր է տեղահանել ու մաս-մաս ոչնչացնել: Ու թուրքերի ձեռքից բռնող չկա: Եվրոպական պետությունները տարված են պատերազմով: Ամեն մեկն իր բաժինն է ուզում ստանալ այդ կռիվներից: Անգլիան ձգնում է տիրապետել Միջագետքի նավթին, Արաբիային, Պաղեստինին և բռնել Հնդկաստանի ճանապարհները: Ամերիկայի Միացյալ Նահանգները ձգտում են տիրել Միջերկրականին, Եգիպտոսին և Հայաստանին: Ֆրանսիան պահանջում է իրեն տալ Կիլիկիան, Սիրիան և Հարավային Հայաստանը: Գերմանիան իր արևելյան խոշոր ծրագրերը կարող է իրականացնել միմիայն դաշնակիցների պաշտպանության դեպքում: Ցարական Ռուսաստանը նույն ակնկալություններն ունի Մերձավոր Արևելքում: Հայերի ճակատագիրը ոչ մի երկրի չի հետաքրքրում: Նրանց հետաքրքրում են ցամաքային ու ջրային տարածքներն ու բնական հարստությունները, այլ ոչ թե մարդիկ: Ու ավելի մեծ բաժին կհասնի նրան, ով ուժեղ է: Բնության օրենքն է այդպես: Եթե թուրքերը մեծ կրակի խառնարան ունենային, հայերին խումբ- խումբ այնտեղ կենդանի կվառեին, այլ ոչ թե կտեղահանեին վայրից վայր, ոտքով կամ գնացքով: Միայն թե ուժերս ինձ չդավաճանի, հասնեմ Հալեպ, այս տանջանքներից կազատվեմ»:

Ավետիսը տեսնելով նրա վշտահար դեմքը, վախեցավ: Մտածեց՝ գուցե նա մրսել էր ու հիվանդացել: Այդ օրը կեսօրին ուժեղ անձրև եկավ, քամին թռցրեց կամ պատռեց բոլոր վրանները: Խեղճ աքսորականների դրությունը վատթարացավ:

-Մելքո՛ն պապի, վա՛տ ես զգում քեզ,- անհանգիստ հարցրեց նա:

-Չէ՛, տղա՛ս, ծանր մտքերի մեջ էի թաղվել:

-Դու ճիշտն ասա, ինձնից ոչինչ մի՛ թաքցրու: Ինչ էլ պատահի, հոգ կտանեմ քո մասին:

-Չասեիր էլ, քո քայլերից հասկացվում է, թե ինչպիսի վերաբերմունք ունես բոլորի, հատկապես իմ հանդեպ: Ամիսներ ձգվող այս տանջալից ճանապարհներին քո շնորհիվ եմ դիմանում, թե չէ վաղուց ոտքերս տնկած կլինեի:

-Մելքո՛ն պապի, խոստացի՛ր, որ նման բան չես անի: Մեզ դեպի Հալեպ եմ տանում: Իսկ այն քեզ համար հարազատ քաղաք է, քանի որ այնտեղ աշխատել ես:

Մելքոն պապը մի քանի վայրկյան լռեց: Նա մտածում էր՝ արդյո՞ք ուժերը կհերիքեն մինչև այդ ցանկալի պահը: Ջգում էր, որ օրեցօր քայլելիս ոտքերը ոչ միայն շատ էին ուռչում, այլև իրեն չէին ենթարկվում: Գիշերներն էլ ցրտից դժվարությամբ էր աչքերը փակում: Մրսելուց վերջույթները միշտ սառած էին:

-Իհարկե, Ավետի՛ս: Երբ հասնենք Հալեպ, ես խոհարար կաշխատեմ: Չեմ էլ թողնի, որ աշխատես: Դու որպես իմ թոռնիկ՝ ուսումդ պիտի շարունակես:

Ավետիսը երկընտրանքով նայեց նրան:

-Չգիտեմ: Իսկ քեզ համար, Մելքո՛ն պապի, խոհարարի սպիտակ գլխարկ կգնեմ ու կնվիրեմ:

-Ինչո՞ւ ես մտափոխվել: Այլևս սովորել չե՞ս ուզում,- զարմացավ Մելքոն պապը:

-Առայժմ՝ ոչ: Ծրագրերս փոխվել են: Եթե ողջ մնացի, վրեժ կլուծեմ մատնիչներից, այնուհետև՝ թուրք պարագլուխներին մեկ-մեկ կոչնչացնեմ...

Մելքոն պապի ակնաբիբերը լայնացան: Նա միաժամանակ ոգևորվեց պատանու ուղեղում ծագած նոր ու պայծառ մտքերից:

-Կեցցե՛ս: Եթե վրեժխնդիր լինես թուրք իշխանավորներից, ովքեր մեր ժողովրդին այս վիճակին հասցրին, խնդրում եմ, անպայման բարձրաձայնիւր այդ մասին, որ հանգիստ հանգչեմ: Ուրիշների պես ես էլ շիրիմ չեմ ունենա: Ոչինչ, իմ անունով մոմ կվառես մեր եկեղեցիներից մեկում և կաղոթես ինձ համար: Աղոթքդ ինձ կհասնի,- և Ավետիսի ծանր մտքերը ցրելու համար այս անգամ նա քթի տակ բարեհամբույր ու գոհ ժպտաց, նաև հուշերի գիրկն ընկնելով: -Հալեպում ապրածս տարիներին շատ ջախել էի: Երանի՛ իմանայիր, թե այն ժամանակ օրերս ինչքան լավ էի անցկացնում: Գեղեցիկ աղջիկներն էլ հանգիստ չէին տալիս ինձ:

-Հետո՞...Պատմի՛ր քո արկածներից: Հո աղջիկները գլխիդ փորձանք չե՞ն բերել,- Ավետիսի հետաքրքրությունը կրկնապատկվեց:

-Ես խաղաղասեր մարդ եմ իմ տեսակով: Ինձ հետ ոչինչ չէր պատահի: Տղա՛ս, երանի՛ սուրճ լիներ, միասին վայելեինք: Ո՞վ կմտածեր, որ կգա մի օր, երբ անգամ սուրճ խմելու հնարավորություն չենք ունենա:

-Է՛հ,- ձեռքը թափ տվեց Ավետիսը:-Մելքո՛ն պապի, էս սրիկա թուրք ոստիկանները մեզ արգելում են մեր կողքով հոսող գետին մոտենալ ու ջուր խմել: Մենք միայն առվից ջուր պիտի խմենք:

-Երանի՛ մեր տանը լինեի, կինս մեզ կիյուրասիրեր, -Մելքոն պապը հուշերի գրկից դուրս չէր գալիս:

-Հիշո՞ւմ ես նրան,- միամիտ հարցականով Ավետիսը նայեց պապին:

-Կարծում ես, եթե նա ծեր է, ինձ պետք չէ՞: Իմացի՛ր, ինչքան հին է ջութակը, այնքան քաղցր է հնչում երաժշտությունը: Մենք՝ մեծահասակներս, մեր զգացմունքներով չենք զիջում ձեզ:

Անշուշտ, Ավետիսը չէր կարող դա զգալ, քանի որ կյանքի փորձ չուներ: Նա մոր խրատների պես ընդամենը հետևում էր Մելքոն պապի ասածներին:

-Մելքոն պապի, կներե՛ս ինձ, եթե նեղացրի քեզ: Բայց եթե տաք թեյ ուզենաս, ես ջուր կբերեմ ու մենք բժիշկ Արշավիրին կայցելենք: Նա վրանի մոտ միշտ կրակ է վառում: Ամանով ջուր կտաքացնենք ու կխմենք: Գոնե չենք մրսի:

-Շատ լավ միտք է: Գնացի՛նք:

Իսկապես երբ երկուսով հասան բժշկի վրանը, արդեն կրակ էր վառվում: Հեռվից նկատելի էր, որ նա մենակ չէր: Երեք հոգով էին:

-Բարի երեկո,- ասաց Մելքոն պապը,- եկել ենք ձեզ մոտ մի քիչ տաքանալու և տաք թեյ խմելու:

-Համեցե՛ք: Տեղավորվե՛ք կրակի մոտ: Ես վրանից ամանը կբերեմ,- նա տեսավ Ավետիսի ձեռքի ջուրը:

Երբ բժիշկը վրանի ներսից ամանը բերեց և լցնելով ջուրը՝ դրեց կրակին, կողքին նստածները լուռ հետևեցին նրան: Մելքոն պապն զգաց, որ իրենց պատճառով ընդհատվեց կիսատ մնացած զրույցը: Իսկ բոլոր վրաններում, կրակների շուրջ աքսորականների թեման նույնն էր՝ գաղթի ճանապարհներին տեսած սարսափները և թուրքերի կատարած վայրագությունները թուրքիայի տարբեր նահանգներում, քաղաքներում, գյուղերում:

Երզնկայից միջին հասակի ոսկրացած դեմքով մի կին շարունակեց իր պատմությունը.

-Իմ հարազատներին բոլորին սպանեցին մեր քաղաքի թուրք գազանները: Միայն ես էի ազատվել: Ծնողներիս էլ սպանեցին, մնացի անտեր և քաղցած ու ծարավ թափառեցի սարերում ու ձորերում: Բայց այդպես երկար մնալ չէի կարող ու որոշեցի գնալ քրդերի մոտ: Մտածում էի, թող սպանեն, ինչ կուզեն, թող անեն: Իմ բախտից հայ լինելս չխանգարեց նրանց: Քրդերը կերակրեցին ինձ, քրդի լաթեր հագցրին ու մնացի նրանց տանը՝ ծառայելու: Սակայն մի օր թուրքերն ինձ գտան, և ես միացա աքսորականների բազմությանը:

-Թուրքերի նման արնախում ազգ երևի աշխարհում չկա,- գայրույթով ասաց Մելքոն պապը:- Թե՛ կա, ես չգիտեմ,- այս անգամ նայեց բժիշկ Արշավիրին:

-Չկա՛: Աֆրիկյան վայրի ցեղերի միջև էլ կռիվ է լինում, բայց նրանցից յուրաքանչյուրը հասկանում է, թե ինչի համար է կռվում՝ տարածքի՞, ուտելիք հայթայթելո՞ւ, թե՞ վրեժխնդրության: Թուրքերը նենգ ազգ են: Նրանք խաբելով տեղահանեցին հայերին, խաբեցին մեր անվանի մարդկանց, կաթողիկոսին, վարդապետներին, որ իրենց ծրագիրն իրականացնեն,- ի պատասխան ասաց բժիշկը:

-Նրանք ոչ միայն մեզ քչեցին մեր տներից, այլև հայոց հարուստ գրադարանները, եկեղեցիների գրքերն ահագին դեզերով վառեցին, օրերով, շաբաթներով ծուխը քուլա- քուլա բարձրանում էր երկինք: Եփրատը լցրին դիակներով,- իր խոսքն ավարտին հասցրեց Երզնկայից վշտահար կինը:

-Մեր հիշողություններից երբեք չեն ջնջվի այն սարսափելի տեսարանները, որոնց ականատեսներն էինք մենք,- զրույցին խառնվեց Սպիրի գավառի կոտորածներից հրաշքով փրկված մի կին:- Թուրքերը մեր տղամարդկանց առանձնացրին և սպանեցին, իսկ մեզ՝ կանանց տանում էին գյուղից գյուղ, ավանից ավան և բաժանում էին ցանկացողներին: Ինձ ծեծեցին, պահեցին գոմում, որ ընդունեմ մահմեդականությունը: Աղջիկները և կանանց մեծ

մասը խաչ էին կրում: Թուրքերը նրանց պարանոցներից հանում էին խաչերը, գցում էին գետնին և մտրակի հարվածներով ստիպում էին կոխկրտել խաչը,- արտասվեց կինը:

Նստածներից յուրաքանչյուրը կրկին ու կրկին լցվեց անբացատրելի ատելությամբ իրենց հոշոտող թշնամու հանդեպ:

-Իսկ եթե որևէ մեկը հանդգներ նրանց Ղուրանը ոտքի տակ դնել, ի՞նչ կանեին: Չէի՞ն խելագարվի,- իր զայրույթն արտահայտեց Մելքոն պապը:

-Նրանք մեզ խաբում էին, ասելով, որ հայերին ողջ աշխարհում կոտորել են: Ռուսաստանի հայերին էլ իբր ռուսներն են կոտորել, որ ամեն տեղ հայերին արդեն վերջ են տվել:

-Ինչքան էլ մեզ ուզենան սպանել, ոչնչացնել, ջուրը նետել, հայ ազգը կապրի աշխարհի երեսին: Ցավոք, մեր պատմական հայրենիքում երկրի տերերը թուրքերն են, և նրանք ինչ փորձանք ասես մեր գլխին չեն բերում,- ասաց բժիշկ Արշավիրը:

Կրակի վրա դրված ջուրը վաղուց եռում էր: Նա վրանից բաժակներ բերեց իր բախտակիցներին թեյ հյուրասիրելու համար:

Առավոտյան Ավետիսն արթնացավ և հիշեց, որ իր ծննդյան օրն է: Այդ օրը լրանում էր տասնվեց տարին: Դարձյալ նա սրտի թրթռուկ հիշեց ծննդավայրը, իր ծնողներին, քույրերին, որոնց հետ հաշտ ու խաղաղ էին ապրում: Գաղտնիք չէր, որ իր հանդեպ ծնողներն առանձնակի վերաբերմունք ունեին, քանի որ ինքը միակ տղան էր և նրանց միակ հուսալի հենարանը պիտի դառնար հետո: Ցավն ապրում էր նրա կրծքի տակ այն պատճառով, որ մորը պարտքի տակ գցեց, որպեսզի ուսումը շարունակեր, իսկ հետո Պոլսից նրան գումար այդպես էլ չուղարկեց պարտքերը մարելու: Այժմ մտածում էր, թե ուր էին նրանք՝ մայրը քույրերի հետ: Ո՞ր ճամփաներով են նրանց տարել: Արդյո՞ք ոչինչ չի պատահել նրանց հետ:

Ավետիսի գրպանում փող չկար, որ սնունդ հայթայթեր: Սակայն նա իրավունք չունեի հուսահատվելու: Չէ՞ որ միակ երազանքը հարազատներին գտնելն էր, իսկ դրա համար պետք է մաքառեր, ապրեր, չմեռներ սովից, որի ճիրաններում ամեն օր մարդիկ էին մեռնում:

Ոստիկանների հրամանով դարձյալ գաղթականները ճանապարհ ընկան: Ավետիսն ուշի - ուշով նայեց շուրջը: Մտածում էր, գուցե ինչ-որ մեկը կարիք ուներ, որ օգներ բեռները տանելու: Հանկարծ շարքերում նկատեց մի ծեր մարդու, որ հագիվ էր ուռած ոտքերը քարշ տալիս: Ավետիսը հավասարվեց նրան: Անձանոթը խղճալի հայացքով նայեց նիհար կազմվածքով տղային, որի կաշին ու ոսկորներն էին մնացել ու մտածեց. «Արդյո՞ք նա կարող է իմ բեռը կրել»: Ավետիսն ասես կարդաց նրա մտքերը:

-Շալակե՞մ բեռդ, -հարցրեց նա:

-Հա՛, տղա ջան, եթե ուժ ունես:

-Իհարկե, ունեմ:

-Օգնի՛ր ինձ, հացի փող կտամ:

Ավետիսն էլ հենց դրա կարիքն ուներ: Նա բեռն առավ շալակը և քայլեց ծերունու հետ համընթաց:

-Երբեք չեմ մտածել, թե ազգս այս օրին կհասնի: Գիտե՞ս, տղա՛ս, ես նախկինում վարժապետ եմ եղել,- տրտնջաց ծեր տղամարդը:

-Վարժապե՞տ,- ակնածանքով հայացքն ուղղեց անձանոթ մարդուն:

-Այո՛, ինչո՞ւ ես զարմանում:

-Չեմ զարմանում, հիացմունքս եմ արտահայտում, քանի որ հայրս նույնպես վարժապետ էր: Բայց նա շուտ մահացավ,- հոգոց հանեց Ավետիսը:

-Սակայն այս չարչարանքի ճանապարհին կիրթ ու անկիրթ լինելը մեկ է: Ցավը բոլորիս հավասարեցրել է,- տնքաց ծերունին:

-Այո՛, հորեղբա՛յր, հիմա միայն գոյության կռիվ է:

-Հաճախ հարց եմ տալիս ինքս ինձ, թե ում է պետք այդպես ապրելը: Այն ամենից հետո, ինչին բոլորս ենք ականատես եղել, ապրելու սիրտ էլ չմնաց:

-Թուրքերի ուզածն էլ, հորեղբա՛յր, այն է, որ մենք չլինենք:

-Այդպե՛ս է, տղա՛ս, այդպե՛ս է: Թուրքիան փոխանակ պատերազմելու իր թշնամիների դեմ, իր զորքը փոխանակ ռազմաճակատ ուղարկեր, մեզ վրա է կենտրոնացրել իր ուժերը: Անգեն հայերին է ջարդում ու քշում իր երկրից:

-Բայց սա նաև մեր պապենական հողն է: Նա իրավունք չուներ մեզ հետ այդպես վարվելու,- անծանոթ ծերունու հետ գայրացավ Ավետիսը:

-Վաղ և ուշ միջնադարում եղել են մարդկային ջարդերը, Եվրոպայում էլ ժողովուրդների տեղահանումն ու աքսորը մեծ թիվ չի կազմել, սակայն այն, ինչ թուրքերն են անում հայերի գլխին, պատմության ամենասարսափելի էջն է կազմում: Թուրքիայում երկու միլիոնից ավելի հայեր են ապրում: Նրանց հաջողվել է ուժով տիրանալ մեր հայրենիքին, հիմա էլ զավթեցին մեր կալվածքները և նրանց ձեռքին է ուժը, կանոնավոր բանակը, ամեն ինչ... Նրանց նպատակն է ոչնչացնել մեր գենը: Իսկ ինչ մնում է գենքով պաշտպանվելուն, անշուշտ, առանձին վայրերում գենքերով հայ տղամարդիկ պաշտպանվել են, բայց վե՛րջը... Հնարավո՛ր է միթե սովորական գենքերով նրանց հրանոթների հետ կռիվ տալը... Այդ պատճառով էլ թուրքերին հաջողվեց իրենց զորքի մեծ քանակով հայերի ապստամբությունները ճնշել:

-Բայց մենք երկու տասնամյակ առաջ ունեինք հայդուկային շարժում, որի հերոսական կենտրոնը դարձավ Սասունը: Այնտեղ կազմակերպվեց Արաբոյի և Աղբյուր Սերոբի հայդուկային խումբը, որը կռվում էր սուլթանական լծի դեմ,- ասաց Ավետիսը:

-Հայդուկային շարժման մասին կարգին տեղեկացված ես,- իրեն ուղեկցողին դիմեց տարեց տղամարդը:

-Նախ՝ հայրս սասունցի էր: Նրա ծնողները 1894-ի Սասունի ջարդի զոհերը դարձան: Երբ թուրքերը հարձակվեցին, տատս թոնրի առջև հաց էր թխում: Այդ վայրենիների ճանկը չընկնելու համար նա իրեն վառվող թոնիրն էր զցել, իսկ պապիս ու հորաքրոջս տանջամահ անելուց հետո սպանել էին, տունն էլ՝ հրդեհել:

Տարեց վարժապետին հուզեց պատանու պատմությունը: Նա զգաց, թե կազմվածքով նիհար այդ մարմնի մեջ ինչքան ուժ, ատելություն ու վրեժխնդրություն կար թշնամու հանդեպ:

-Հայրս էլ պատմության ուսուցիչ էր աշխատում մեր գյուղի դպրոցում: Նա գիրք էր ուզում գրել արևմտահայ ազգային- ազատագրական շարժումների մասին: Այն անավարտ էր մնացել: Սակայն ես երբեմն ծանոթանում էի այդ անտիպ գրքի հետաքրքիր էջերին:

-Ուրեմն կիմանաս նաև, որ հայդուկային խմբի կազմում էին Գևորգ Չաուշը, Գուրգենը, Վարդանը, Հրայր Դժոխքը: Նրանց անունները հավերժ կմնան մեր ժողովրդի ազգային- ազատագրական շարժման պատմության մեջ: Դժբախտաբար, 1899-ին Սասունի Գեղաշեն գյուղի բնակիչ Ավոյի ձեռքով թունավորվում է Սերոբ փաշան, որից հետո թուրքերը հարձակվում են նրա վրա ու սպանում: Աղբյուր Սերոբի սպանությունից հետո հայդուկային շարժման գլուխն անցավ Անդրանիկը, որը վրեժխնդիր եղավ նրան թունավորողից ու սպանողից: Անդրանիկի խմբում էին հայդուկներից Գևորգ Չաուշը, Մուրադ Սեբաստացին, Առաքելը, Սմբատ Բորոյանը, Հակոբ Կոստոյանը, Մարկար Սպաղանցին և ուրիշներ:

-Հայրս պատմում էր, որ Անդրանիկի անունը լսելիս թուրքերը ահ ու սարսափի մեջ էին ընկնում,- ոգևորված ասաց Ավետիսը:

-Անկասկած: 1903-ին նրա ղեկավարությամբ ստեղծվեց Ազգային միություն, հայդուկային ու կամավորական ջոկատներ: Ստեղծվեց նաև ինքնապաշտպանական զինվորական խորհուրդ՝ նրա գլխավորությամբ:

- Պապի՛, ո՞ւր է հիմա քաջ զորավարը, որտե՞ղ է գտնվում: Ինչո՞ւ մեզ օգնության չի հասնում:

-Երբ 1914-ին սկսվեց պատերազմը, Անդրանիկը տեղափոխվեց Թիֆլիս և նշանակվեց կովկասյան բանակի հրամանատարության տակ գործող հայկական կամավորական առաջին ջոկատի հրամանատար:

-Ռուսական բանակում հազարավոր հայեր են կռվում թուրքերի դեմ: Մի՞թե չեն օգնի մեզ՝ վերջ տալու այս կոտորածին:

-Ղա այնքան էլ հեշտ չէ: Ուրիշ տերություններ իրենց շահերն ունեն այս երկրում, հայերի ճակատագիրը նրանց չի մտահոգում:

-Բայց մեր ազգի զորավարները մեզ պիտի ամեն գնով պաշտպանեն: Գիտեմ, որ Բալկանյան պատերազմի ժամանակ բուլղարական դրոշի տակ կռվում էին Քարեգին Նժդեհը և Անդրանիկը: Նրանք կազմել էին հայկական վաշտ, որը հերոսությամբ մարտնչում էր թուրքերի դեմ: 1913-ին երբ նրանք հաղթությամբ մտան Մարմարայի եվրոպական ափին գտնվող Ռոդոսթո քաղաքը, բուլղար ժողովուրդը ծաղկեպսակներով դիմավորեցին մեր զորավարներին: Անդրանիկը ստացավ բուլղարական սպայի կոչում և բազմաթիվ շքանշաններ: Ինչո՞ւ մեր զորավարները օգնում են ուրիշ ժողովուրդների՝ ազատվելու թուրքական լծից, իսկ մեզ՝ ոչ:

Տարեց վարժապետը լռեց: Զգաց, որ պատանու խոսքերի մեջ դառն ճշմարտություն կար:

Ճանապարհն անվերջանալի էր թվում: Անցնում էին ժայռոտ դժվարամատչելի տարածքներով: Ավետիսը ետ շրջվեց: Մելքոն պապը չէր երևում: Նա էլ ծեր էր և միշտ ետ էր մնում ընդհանուր քարավանի շարքից: Ոստիկանները թույլ տվեցին մարդկանց կանգ առնել հանգստանալու: Մարդիկ քաղցած էին ու ծարավ:

Ավետիսը բեռը թողնելով ծերունու մոտ, պառավ կանանց հետ իջավ ձորը լվացվելու, ապա ձորամիջով իջավ ներքև: Դեռ իրիկնային աղջամուղջը չէր թանձրացել և թփուտների մեջ երևում էին մերկ տղամարդկանց դիակներ: Նրանցից շատերը երիտասարդներ էին՝ հոշոտված մարմիններով: Քանակը հավանաբար քսանից ավելի կլիներ:

Ավետիսը սարսռաց այդ տեսարանից: Իհարկե, նա աքսորի ճանապարհին բազմաթիվ դիակների է հանդիպել, ինքն էլ հաճախ ստիպված գերեզմանափոսեր էր փորել, բայց միանգամից հոշոտված այդքան քանակի դիակներ չէր տեսել: Ջուր խմելուց հետո նա ծերունի վարժապետին էլ ջուր բերեց և վերցնելով բեռը, դարձյալ ճանապարհ ընկան:

Ավետիսը երբ իր տեսածի մասին պատմեց ծանոթներին, նրանք ասացին, որ մեկ շաբաթ առաջ իրենց եկած ճանապարհի անտառամերձ, նեղ հատվածում զինվորական համազգեստով փախստականներ հարձակվել էին ռազմամթերք փոխադրող սայլերի վրա և տեղի էր ունեցել փոխհրաձգություն սայլապաններին ուղեկցող զինվորների և հարձակվողների միջև, սպանվել էր երկու զինվոր: Սակայն մարդկանց հաջողվել էր սայլերից բավական փամփուշտ ու հրազեն վերցնել՝ տանելով անտառ: Փախստականներին գտնելու համար թուրքերը մի վաշտ զինվորներ էին ուղարկել, բայց ապարդյուն էին անցել նրանց ջանքերը: Եվ գազազած թուրք զինվորները վրեժխնդիր եղան դրա փոխարեն այդ ճանապարհով գնացող այս տարագիրներից: Երկու տասնյակից ավելի տղամարդկանց անջատեցին խմբից և տանելով ձորը՝ սվինահարեցին նրանց: Ավետիսը ցավով մտածեց նաև թուրքական պառլամենտի պատգամավորներ Գր.Ջոհրապի ու Վարդգեսի մասին, որոնք չուզեցին փախչել: Նրանք, անկասկած, վախենում էին թուրքերի նույն վրեժխնդրությունից, որ իրենց պատճառով անմեղ մարդիկ կկոտորվեին:

Վերջապես տարագիրների խումբը հասավ մի փոքրիկ քաղաքի երկաթուղային կայարան, որը միանում էր Հալեպ- Բեյրութ-Դամասկոս ֆրանսիական ընկերության երկաթուղուն:

Ավետիսը բեռը հանձնելով ծերունի վարժապետին և իր վարձը ստանալով, փնտրեց Մելքոն պապին: Վերջինս չափազանց ուժասպառված, հյուծված տեսք ուներ: Այդ կայանատեղում մարդկանց այլուր բաժանեցին: Ավետիսն իր և պապի համար կրկնակի բաժին վերցրեց: Այնուհետև խնդրեց Մելքոն պապին /ծանոթ կանանցից մեկից աման խնդրեց/ ամանի մեջ խմորը հունցել, մինչև ինքը չորացած ձյուղեր կբերի՝ կրակ անելու: Կայարանից ոչ հեռու գտնվող փոքրիկ բլրի տարածքից պատանին ձյուղեր կտրելով, հիշեց մորը, իրենց գյուղը, թե ինչպես էր ծննդան համար մորն օգնում փայտ հավաքելու անտառից: Հիշեց մոր խրատները, նրա անսահման բարի, սիրագործող հայացքը և մենակ արտասվեց: Հետո թևով աչքերը սրբելով, ցախը շալակեց, ճանապարհին նաև մի քանի թիթեղ գտնելով:

Մելքոն պապի հետ նրանք կրակ վառեցին, թիթեղը դրեցին և խմորը կիսատի կուլ տվեցին: Երկուսն էլ ամբողջ օրը ոչինչ չէին կերել:

-Այս օրը լավ կհիշեմ, իմ ծննդյան օրվա ընթրիքը,- Ավետիսը գոհ նայեց Մելքոն պապին:

Ծերունին թախիծով ժպտաց ու չարձագանքեց:

-Հը՛, պապի, ինչո՞ւ չես խոսում: Այսօր էլ փորներս մի բան մտավ, թե՞ չկշտացար:

-Կշտացա, որդի՛ս: Ծնորհակալ եմ: Բայց ուժերս գնալով պակասում են: Այս տարիքս հե՞շտ է հարյուրավոր կիլոմետրերով ճամփա կտրել:

-Դժվար է, գիտեմ: Սակայն չէ՞ որ մենք երկուսով դիմացկուն ենք:

-Դու ջահել ես, կդիմանաս, իսկ ե՞ս...

-Զէ՛, այդպես մի՛ խոսիր: Դու ինձ վախեցնում ես: Եթե վատ ես զգում, բժիշկ Արշավիրին գտնեմ և խորհուրդ հարցնեմ,- անհանգստացավ Ավետիսը:

-Ի՞նչ խորհուրդ հարցնես: Բժիշկն առանց դեղի ո՞նց պիտի հիվանդին օգնի: Մեզնից յուրաքանչյուրը պետք է իր մեջ հաղթահարի ցավը, հիվանդությունը, ինչքանով հնարավոր է: Չե՞ս տեսնում, թե ամեն օր ինչքան մարդ է մահանում: Մահանում են անգամ չնչին պատճառներից, որովհետև պայմաններ չկան բուժվելու: Էլ չեմ խոսում, որ սովն էլ մի կողմից է մարդկանց հնձում: Եթե այսօր կենդանի եմ մնացել, միայն քո շնորհիվ:

-Դու ինձ համար շատ հարազատ մարդ ես, Մելքոն պապի: Երբ ինձ հաջողվում է մի կտոր հաց գտնել ու քեզ հետ կիսել, հոգեպես ինձ բավարարված եմ զգում: Ցավը, տանջանքը մեր օրերում նաև մարդկանց սրտերը մի տեսակ քարացրել է, անտարբեր դարձրել: Ես միայնության հետ հաշտվել չեմ կարող:

-Մի՛ նեղացիր, որդի՛ս: Ես քո կողքին եմ,- սրտապնդեց Մելքոն պապը:

-Շատ լավ: Դու կրակի մոտ տաքացի՛ր: Իսկ ես գնամ մի քիչ ձյուղեր հավաքեմ և վաճառեմ: Մարդիկ ինձ խնդրել են օգնել: Նրանց տված փողը վաղը մեզ պետք կգա սնունդ հայթայթելու:

-Գնա՛, տղա՛ս, կսպասե՛մ քեզ...

Քաղց, ծարավ, բռնություններ, անթաղ դիակների կույտեր: Ահա սրանք էին երկար ժամանակ ուղեկցում հայ տարագիրներին: Ողջ հայ ազգի առջև թուրք գազանները բացել էին դժոխքի բոլոր դռները և վայրենի հռհռոցով հետևում էին անմեղ ժողովրդի սպանդին:

Ահ ու սարսափը հետապնդում էր խեղճ տարագիրներին ոչ միայն ցերեկային ժամերին, այլև՝ մայրամուտին: Ահա ինչու հաճախ գիշերով վրանները հսկում էին հայ տղամարդիկ՝ թևերին կարմիր ժապավեններ կապած: Սակայն նրանք արթուն հսկիչներ էին՝ առանց զենքի:

Ամեն առավոտ լսվում էր թուրք մունետիկների հայտարարությունը՝ «Իսլամացե՛ք, հայե՛ր, ազատվե՛ք»: Այս հորդոր-հրահանգը տրվում էր կառավարության կողմից: Մարդիկ հիմնականում չէին արձագանքում: Կրոնափոխ էին եղել նրանք, ովքեր ճանապարհներին չէին հայտնվել:

Վերջապես աքսորականները կրկին ճանապարհ ընկան: Բայց դեռ վրանների սահմանից դուրս չէին եկել, երբ Մելքոն պապը հասակով մեկ փռվեց թիկունքի վրա: Ավետիսը վախեցած իսկույն ևեթ ոտքի հանեց նրան և փորձեց առանց շփոթվելու լվանալ նրա դեմքը, պարանոցը և օգնեց նրան նստելու: Մելքոն պապի դեմքը քաթանի պես գունատ էր: Նա զգաց, որ այլևս ի վիճակի չէր քայլելու:

-Մելքո՛ն պապի, ախր երեկ էլ ասում էի քեզ գնանք բժիշկ Արշավիրի մոտ, ինձ չլսեցիր,- հորդորեց նրան Ավետիսը:

-Ո՞վ գիտե, թե հետո ի՞նչ է կատարվում,- տրտնջաց Մելքոն պապը նվաղ ձայնով:

-Բայց մենք միասին Հալեպ պիտի հասնեինք: Դու ինձ խոստացել էիր,- աղերսագին հայացքով նայեց իր համար այնքան հարազատ դարձած ծերուկին:

-Խոստացել էի, բայց շաբաթն ուրբաթից շուտ եկավ: Իմ ֆիզիկական վիճակը սրտիս ցանկության հետ հաշվի չի նստում:

Ավետիսը հուսահատ հայացքով նայեց նրան: Հիշեց, որ իր մոտ միշտ մտավախություն կար, թե Մելքոն պապն ինչքան կդիմանար այս տաժանակիր կյանքին:

- Երևի իմ հեռանալու ժամը մոտեցել է...

-Այդպես մի՛ խոսիր, պապի՛ :

-Աստծուց շնորհակալ եմ, որ քեզ իմ ճանապարհին հանդիպեցի: Ես այն տարիքին չեմ, որ պայքարեմ գոյատևելու համար:

Ոստիկանները մտրակները ձեռքներին շտապեցնում էին մարդկանց: Նրանք նաև իրենց կողմը նայեցին:

- Արի՛ տանեմ քեզ ձորեզրին կառուցած միհարկանի շենքի մոտ, ուր կան քո տարիքի մարդիկ,- առաջարկեց Ավետիսը՝ նրա թևից բռնելով:

Պատանին կարողացավ Մելքոն պապին հասցնել այն տեղը, ուր մարդիկ իրենց օրերն ու ժամերն էին հաշվում: Նստեցրեց նրանց մոտ, իր մոտ եղած հացի վերջին մնացորդը տվեց պապին, նաև իր ուսապարկը, որպեսզի այն որպես ծածկոց ծառայեր նրան: Ողջագուրվեց Մելքոն պապի հետ, իսկ «մնաս բարով» ասելիս նրա աչքերը թացացան: Այնուհետև Ավետիսն արագացրեց իր քայլերը՝ միանալու աքսորականների քարավանին:

Կեսօրին ուժեղ անձրև տեղաց՝ թրջելով մարդկանց շորերն ու անկողինը: Աքսորականները հագիվհագ էին քայլում ցեխաջրերի միջով՝ դողալով ու հեկեկալով: Այդ օրը ճանապարհին տասը հոգի մահացան: Ավետիսն ամբողջ օրը քաղցած անցկացրեց: Նաև անվերջ տխուր մտածում էր Մելքոն պապի մասին:

Երեկոյան կողմ, երբ ոստիկանների հրահանգով աքսորականները կանգ առան հանգստանալու, դարձյալ արագ վրանները խփեցին: Ավետիսը սաստիկ քաղց էր զգում: Նկատեց, որ գերեզմանոցի ստորոտում առևտրի հրապարակ կար: Այնտեղ էին հավաքվել շրջակա գյուղերի թուրք, քուրդ և արաբ բնակիչները, ամեն տեսակի սննդամթերքներով, մրգերով ու բանջարեղենով: Ավետիսն զգաց, որ քաղցին չի դիմանում, նույնիսկ մտածեց

գողանալ ինչ-որ բան ու փախչել, բայց չէր համարձակվում: Մի տեղ ծմերուկի կեղև տեսավ: Վրան ճանճի պարս էր լցվել, պետք էր լվանալ: Ջուրը մոտ էր, վերցրեց և լվաց դրանք: Ուտելուց հետո նորից գնաց առևտրի հրապարակ: Բարեբախտաբար, մի անժանոթ երկու խնձոր գլորեց դեպի նա, տիրոջը հավաստացնելով, որ դրանք փտած էին: Ավետիսը կերավ խնձորները ու կարծես աչքերը բացվեցին:

Ավելի ուշ, երեկոյան վրանների առջև կրակ էին վառում, ճաշ էին եփում ու տաքանում: Մելքոն պապը չկար կողքին: Եվ որ ցավալի էր՝ մնացել էր առանց բարի ծերունու քաղցր խոսքերի, առանց հաճելի զրուցակցի:

Գետինը թաց էր անձրևից և գիշերելու համար բավականին թափառելուց հետո կանգ առավ կարպետից սարքված մի փոքր վրանի առջև, որի մեջ ծվարել էին միջին տարիքի մոտ երկու կին և մի պատանի: Ավետիսը խնդրեց նրանց թույլ տալ պառկել վրանի ներսում՝ մուտքի մոտ: Նրանք համաձայնվեցին: Այդ պահին նրանց մոտ մտավ հարևան վրանից իրենց տարեկից մի կին, և նրանք սկսեցին խոսել իրենց ցավերից, թուրքերի հետ ունեցած դաժան միջադեպերից:

-Մեր Չատը,- սկսեց վրանատերերից Լուսաբերը,- լսել էր Յոզղատում, Բողազյանում, շրջակա հայկական գյուղերում կատարված խուզարկությունների և ձերբակալությունների մասին, և գյուղացիները մտածում էին ինչ անել, երբ թուրքերն իրենց մոտ հայտնվեին: Գյուղական ավագանին որոշեց ոչ մի զենք չհանձնել և ոչխարի պես չմորթվել: Այս որոշումից հետո զինված երիտասարդությունը բարձրացավ ԱԳ -Դաղի բարձր լեռը: Երբ թուրքերը հայտնվեցին Չատում և պահանջեցին զենքերը հանձնել, գյուղացիները որսի հրացաններ և դաշույններ տվեցին: Սակայն ոստիկաններին հայտնեցին, որ երիտասարդությունը զինված լեռն էր բարձրացել: Մի դասակ հեծյալ ոստիկանների ուղարկեցին նրանց ձերբակալելու համար: Նրանց չհաջողվեց տղաներին բռնել: Գյուղում սկսվեց խուզարկություն, դաժան կոտորած: Չատի ութսուն նշանավոր մարդկանց շղթայակապելով՝ ուղարկեցին Բողազյան, այդ թվում՝ իմ ամուսնուն: Այնուհետև Չատի բանտարկյալներին փոխադրեցին Յոզղատի բանտը և հաջորդ օրն այնտեղ բանտարկված յոզղատցիների հետ տարան սպանդանոց-ծորը: Տեղ հասնելով, երբ կացիներով զինված խուժանն սկսեց պատրաստվել կացնահարության, կապվածներից չաթցի Թորոսենց Ռուբենը, որ նախապես մեկ ձեռքը ազատել էր կապանքից, գրպանում եղած դանակով կտրեց իր, ապա բոլոր բանտարկյալների կապերը և նրանք հարձակվեցին կացնավորների վրա և փախան տարբեր ուղղությամբ: Այսպիսով, չաթցիներից բացի, ազատվեցին նաև յոզղատցիները:

-Իսկ Չաթի բնակչության հետ ի՞նչ եղավ,- հարցրեց շիկավուն մազերով, սիրունատես Մաքրուհին:

-Անզեն բնակչությունն էլ ուրիշ գյուղացիների նման թուրքերի վայրագությունների զոհը դարձան: Այդտեղ կույս գեղեցիկ աղջիկները ձեռք ձեռքի տված իրենց ագում էին բարձր ժայռերից: Բնակչության մի մասն էլ փախավ և թաքնվեց տարբեր տեղերում: Նրանց թվում և ինձ հաջողվեց փախչել: Ես երկու փոքր աղջիկներիս և ծծկեր տղայիս հետ էի: Սակայն չմատնվելու համար ստիպված էի խեղդել որդուս՝ վրան պառկելով:

Մի պահ վրանում քար լռություն տիրեց: Ոչ ոք չէր համարձակվում խոսել: Նրանցից յուրաքանչյուրը տեսնում էր, որ Լուսաբերի ծայրը դողում էր այս սարսափելի դեպքը հիշելիս: Նա զգում էր իր որդեսպան լինելու դաժանությունը: Բայց ուրիշ ելք չունեի, քանի որ ծծկեր, անլեզու երեխան ճչալիս է եղել:

-Հետո ինձ գտան իմ հարևանուհիները: Նրանցից մեկի հետ գիշերով գնացինք գյուղ, մտանք մեր տունը, դռները կոտրված էին, գույքը՝ թալանված: Ես գտա իմ ոսկեղենը, վերցրի այս վերմակը և այս կարպետը,- Լուսաբերը ցույց տվեց վրան դարձրած կարպետն ու վերմակը:

-Է՛հ, իմ տեսածն էլ զուլում դեպքեր էին,- ասաց գեղեցկադեմ Մաքրուհին:-Ծանոթ թուրքերը մեր գյուղի մեծերին տեղեկացրել էին գալիք աղետի մասին, խորհուրդ տալով փախչել: Երիտասարդության մի մասը փախավ սարերը, մյուսներն առանց շորերը հանելու, սպասում էին թուրքերին: Նախապես ունեցած դրամը և զարդեղենը կարել էին հագուստների ծալքերում: Մի օր լուսաբացին թուրք ոստիկանները հարձակվեցին գյուղի վրա, շրջապատեցին այն: Մի մասին հաջողվեց փախչել, շատերը հրացանազարկ էին եղել, մի մասն էլ իրեն զցել էր պարտեզները, ձորը, քար ու թփի տակ: Թուրքերը ոստիկանների հետ լցվել էին գյուղ, սկսվել էր թալանը և մնացած գեղեցիկ հարս ու կանանց էին ջոկում: Ինձ էլ հաջողվեց երկու տարեկան երեխայիս վերմակով փաթաթված փախչել: Ամուսինս զորակոչված է եղել: Սկեսուրս ու սկեսրայրս փախուստի միջոցին սպանվեցին: Մի քանի օր մնացի «Աղվեսի որջ» քարանձավում, ապա ինձ մոտ եկան համազյուղացիներից երկու կին և պատմեցին գյուղում կատարված դաժանությունների մասին: Հոր աչքի առջև կիսամորթ էին անում որդուն, մոր աչքի առջև բռնաբարում աղջկան և այլն: Ծնողները չէին դիմանում այդ դաժանություններին, իրենց զցում էին ձորը:

Լսվեցին ոտնաձայներ: Հայ համայնքի կողմից նշանակված հերթական զիշերապահներն էին, ովքեր պետք է ահազանգեին, եթե գողերը հարձակվեին: Սակայն անգեն աքսորականներն ի՞նչ կարող էին անել թուրքական կառավարության կողմից հրահրված, զինված ավազակների դեմ:

Լսվեց շոգեքարշի երկար ու զիլ կանչը, և գնացքն արագընթաց մտավ կայարան ու կանգ առավ երկրորդ գծի վրա: Վագոններից իջան կանայք ու երեխաներ: Ավետիսը գնաց նրանց ընդառաջ՝ բեռներն իջեցնելու համար: Մի ծեր կին խնդրեց օգնել իրեն և որպես վարձատրություն՝ երկու հատ ցորենի հաց տվեց:

-Խարբերոցի՛,- գոռում էր Ավետիսը, վագոնների կողքից անցնելով ու նայում էր մարդկանց, իր հարազատներին, բարեկամ-ծանոթներին հանդիպելու հույսով:

Ջզուշությանբ, բայց հետաքրքրությամբ նայեց յուրաքանչյուրի դեմքին, աչքերին, հասակին, մարմնի կազմին, ձեռքերին՝ ծանոթության կապ գտնելու: Ոչ մի դիմագիծ նրան ծանոթ չթվաց: Եվ ինչպե՞ս կարելի էր ճանաչել, երբ բոլորն այլափոխված էին, հյուծված, ցնցոտիներով, սևացած, գանազան տեսակ գլխարկներ քաշած մինչև աչքները: Բոլորն էլ կիսավայրենի արտաքինով էին և կենսունակության կայծերը մարել էին զրկանքի ճանապարհներին:

-Ավետի՛ս, - մեկը հանկարծ ծայն տվեց նրան:

Պատանու սիրտը դող ընկավ: Շրջվեց: Իր վարպետի կինն էր, այն վարպետի, ում մոտ դերձակություն էր սովորել: Տղան հագիվ ճանաչեց նրան: Վարպետի կինը շատ էր փոխվել դեմքով, այտոսկորները ցցված էին, շրթունքները՝ կապտած, չափազանց նիհար էր մարմնով:

-Ի՛նչ լավ է, որ դու ողջ ես մնացել,- շարունակեց ծանոթ կինը:-Այնինչ խարբերոցի տղամարդկանց, սկսած յոթ տարեկանից, հավաքել ու տարել էին կացնահարել: Նրանց բոլորին Մաստառի ու Ծովքի վրա Հազար պապ լեռների փոսերն էին լցրել:

Ավետիսը մի ակնթաթ հիշեց իրեն ծանոթ, հարազատ դեմքերը: Դրանց թվում էր իր դերձակը՝ խնամակալը՝ պրն Խորենը, իր ընկերոջ հայրը՝ Խաչատուր աղան, որը որդուն՝ Արտաշեսին, կոտորածից փրկելու համար ուղարկեց Ամերիկա, ուսուցիչ Հովակիմը և այլք:

-Գիտեմ,- գլուխը թախծոտ կախեց Ավետիսը:

-Ամուսնուս էլ սպանեցին, նաև երկու տղաներիս, ինձ հետ այս հինգ տարեկան որդուս լաթերի մեջ փաթաթել էի որպես ծանրոց ու դրել շալակիս, որպեսզի նրան էլ հանկարծ չտանեին: Գոնե այս մեկը փրկվեց:

Այնուհետև պատանին դառնությամբ մտածեց իր մանկության ընկերների՝ Նշանի, Ներսեսի, Զաքարի, Մամիկոնի, Ծատուրի, Մեսրոպի և մնացածների մասին: Նրանք իր ապրած կյանքի հրաշալի այն հատվածն էին կազմում, առանց որոնց երբեք հուշերի մասին ոչ ոքի հետ անգամ ակնարկել չէր կարող:

-Ավետիս, դու ինձ չե՞ս լսում:

-Իհարկե, լսում եմ, նաև մտածում եմ իմ ընկերների մասին: Չեմ ուզում հավատալ, որ նրանք այլևս կենդանի չեն:

-Է՛հ, միայն Խարբերդում չէին այդ սարսափելի դեպքերը, այլև մյուս քաղաքներում ու գյուղերում,- նրանց խոսակցությանը խառնվեց շվարած հայացքով միայնակ մի կին:

Ավետիսը պատկերացրեց, թե ինչպես Խարբերդից այդտեղ չորս ամիս ոտքով քայլելով եկել էին ամայի ու անջուր վայրերով: Ճանապարհին շատերը ծարավից ցած էին նետվում: Եթե որևէ տեղ ջրհոր էին տեսնում, թուրքերը ամաններ չէին տալիս ջուր քաշելու, շորերից կպատռեին ու կտորի մասերն իրար կապելով՝ կախում էին ջրհորի մեջ թրջվելու: Հետո վեր էին քաշում և բերաններով ծծում էին: Պարզ էր, որ թուրքերի նպատակն էր, որ գաղթականները չդիմանային ու ոչնչանային ճանապարհներին:

Ծանոթ կնոջից բաժանվելուց հետո Ավետիսը կրկին ժամանած մարդկանց մեջ ծանոթներ ցանկացավ փնտրել: Բարեբախտաբար, հանդիպեց իրենց գյուղի հարևանուհուն՝ Վարդուշին:

-Վա՛յ, Վարդու՛շ, - պատանին այնպես գոռաց՝ քայլերն ուղղելով դեպի նա, որ շրջապատի մարդիկ մի ակնթարթ ակնապիշ հայացքները դարձրին նրա վրա:

Տղան նկատեց, որ հարևանուհին մի պահ շշմել էր՝ իր աչքերին չհավատալով:

-Ավետիս, դու այստեղ ի՞նչ գործ ունես,- հարցրեց նա:- Իսկ մայրդ ասում էր, որ Պոլսում էիր ու այնտեղից քեզ արտաքսել էին: Նա շատ էր լացում քեզ համար: Լավ էր, որ ողջ ես մնացել:

-Առայժմ ողջ եմ...Ո՞վ գիտե,- հարցական նայեց Վարդուշին:

-Դու մեր տղաների օրը չընկար: Նրանց բոլորին սպանեցին:

Պատանին կարծես մեղավոր զգաց իր ողջ մնալու համար, քանի որ ծանոթները միայն այդ մասին էին ակնարկում: Եվ եթե նա իր ընկերների կողքին չէր, դա միայն ճակատագրի դիպված էր: Այս անգամ հուզմունքից արցունքներով լցվեցին նրա աչքերը:

-Չգիտեինք մեզ ինչ էր սպասվում: Քրդերն իրենց հոտը նախապես քշել էին: Հայերը ցանկացան իմանալ պատճառը, բայց նրանց ետևից չհասան: Հետո ոստիկանները եկան և խաբեցին, թե եկել էին անասունների քանակը ստուգելու: Տղամարդիկ էլ հավատալով՝ դուրս եկան, իրենց անասունները բերեցին: Նրանք էլ բոլորին կապեցին: Ամենից առաջ մեր գյուղի տերտերի տղային, որ նոր էր կարգվել ու հարգված էր, հոր աչքի առաջ մորթեցին տապարով, հետո էլ հորը սպանեցին: Պարզվեց, որ Չմշկածագի ու շրջանի թուրքերից քչերն էին մասնակցել այդ սպանողին: Ոճիրն իրականացնելու համար բանտից ազատել էին Մալաթիայի և նրա շրջանների մահապարտներին, ոճրագործներին ու զինել էին թալանի մարմաջով տարված քրդերին, որպեսզի հայկական գյուղերի տղամարդկանց սպանեն, կանանց, երեխաներին աքսորեն:

-Իսկ մայրս ձեզ հետ չէ՞ր,- անհանգիստ հարցրեց Ավետիսը՝ Վարդուշից լսելով իրեն ծանոթ պատմությունները:

Հարևանուհին մի պահ շփոթվեց ու լռեց:

-Հը՛, ինչո՞ւ լռեցիր: Ինչ-որ բա՛ն է պատահել: Պատմի՛ր,- Ավետիսի անհանգստությունն ավելի խորացավ:

-Մայրո՞, անշուշտ, մեզ հետ էր: Երկու քույրերդ էլ նրա հետ էին: Բայց նա գոռաց ուստիկանների վրա՝ ասելով. «Եթե ուզում եք, որ մենք մեռնենք, այստեղ սպանեք մեզ»:

Ավետիսը վախից մռայլվեց: Նա ականատես էր եղել նմանատիպ դեպքերի, երբ գաղթականները փորձել են դիմադրություն ցույց տալ թուրք ուստիկաններին:

-Նրանք ծեծեցի՞ն մորս, - հարցրեց կատաղած աչքերով:

«Երանի՛ չէր»,-մտքում ասաց Վարդուշը և չուզեց ճշմարտությունն ասել այն մասին, որ նրա մորն իր աչքի առջև էին սպանել:

-Զէ՛, նրանք զայրացան մորդ վրա: Հետո մենք թողեցինք, հեռացանք:

-Իսկ մա՛յրս...Ո՞ւր է նա:

-Զգիտե՛մ: Հավանաբար նրանց ուրիշ խմբի հետ են տարել,-ստեց Վարդուշը:

Ավետիսի աչքերը լցվեցին արցունքներով, ու նա զայրույթից ատամները կրճտացնելով հեռացավ:

Թեթև ամպամածություն կար: Մայրական կարոտից ծխացող սրտով պատանին ուղղվեց շուկայի կողմը: Անհաղթահարելի քաղցի զգացում ուներ: Ճանապարհին մի փտած խնձոր գտավ, վերցրեց գետնից, սրբեց ու կերավ: Հետո թափառեց վրանների կողքով: Վրաններից մեկի կողքով անցնելիս, բարեսես մի կին իրեն ձայն տվեց: Շրջվեց: Կինը կես հաց տվեց նրան՝ վրան քամած մածուն քսած: Երախտագիտությամբ վերցնելով այն, նա ուտելով հեռացավ:

Մութն աստիճանաբար վրա էր հասնում, սակայն նա գիշերելու տեղ չուներ: Նորից վրանների մոտ հանդիպեց Վարդուշին, որն իր քրոջ հետ էր: Խնդրեց գիշերելու համար տեղ տալ իրեն, բայց չհամաձայնվեցին: Վարդուշը խորհուրդ տվեց տեր լինել կողքի վրանում պառկած համազյուղացիներից մեկին՝ Ջարթիկին, որը մահամերձ էր: Ավետիսը պետք է նրան ջուր տար, փոքր-ինչ խնամեր, որպեսզի կնոջ մեռնելուց հետո նրա բրդյա վերմակը ժառանգեր: Երկու օր անց կինը մահացավ: Ավետիսը ժառանգություն ստացավ վերմակը: Նա բոլորովին չէր ուզում, որ Ջարթիկը մահանար: Սակայն գոյության կռիվ էր: Կենդանի մնացած գաղթականը շարունակում էր ապրել մեռնողի հաշվին:

Խավար երեկոներից էր: Ահ ու սարսափի օրեր էին...Մարդիկ կտրվել էին իրենց տուն ու տեղից, աշխատանքից. դարբինը՝ դարբնոցից, քարտաշն՝ իր քարից, հացթուխն՝ իր հացից, բժիշկը՝ հիվանդներից, գյուղացին՝ հանդ ու անասունից, այգիներից, արտերից: Հովիվներն այլևս կրակներ չէին վառում, սրինգ չէին նվագում: Չկար ազատ կյանքը, գործարանների եռուզեռը, մարդկանց խառնիճաղանջ երթը, զվարթ կանչերն ու ծիծաղը: Մեռելային լռություն էր...

Երեսունհինգամյա Սաթենիկը նրբին, գրեթե անշուշտ քայլերով դուրս եկավ վրանից, աղջկա՝ տասնմեկ տարեկան Աննայի ձեռքից բռնած: Նա Սպիրի կոտորածներից հրաշքով փրկված կանանցից էր: Սաթենիկի ամուսնուն թուրքերը սպանել էին, իսկ տասնվեցամյա աղջկան՝ առևանգել: Բարեբախտաբար, երկու որդիները զենքը ձեռքներին լեռներն էին բարձրացել: Գաղթի ճանապարհին հանդիպած սարսափելի տեսարաններից նա պապանձվել էր, կորցրել խոսելու ընդունակությունը: Քաղցած չմնալու համար փոքրիկ Աննան մուրացկանություն էր անում: Պատահում էր՝ շրջում էր միայնակ վրանների մոտով, իսկ ավելի հաճախ մոր ուղեկցությամբ էր դուրս գալիս: Սաթենիկը շատ էր վախենում, որ աղջկան էլ իրենից կխլեն: Մոխրագույն զխաշորով նա պինդ փաթաթել էր զլուխը, ճակատը և վախվորած աչքերով շուրջը նայելով՝ աղջկան թեթևակի հրեց առաջ: Երկուսով կամացուկ

մտան մոտակա վրաններից մեկը, ուր խարբերոցի երկու կանայք էին և հաց ու ջուր խնդրեցին: Անծանոթ կանայք մոր ու աղջկան հրավիրեցին ներս:

-Եթե կարող եք, մեզ գոնե կես հաց տվեք, -աղերսով նրանց դիմեց աղջիկը:- Այսօր գրեթե ոչինչ չենք կերել:

Սաթենիկը ևս գլխով դրական ազդանշան տվեց: Կանայք իրար նայեցին և մի ամբողջ հաց մեկնեցին աղջկան: Սաթենիկը ձեռքով շնորհակալություն հայտնեց ու շրջվեց, որպեսզի հեռանան երկուսով:

-Իսկ ջո՞ւրը,- հարցրեց վրանի կանանցից Վերժինեն:-Վերցրե՛ք այս դույլը, կիսով չափ լիքն է: Կդատարկե՛ք ու ետ կբերե՛ք: Բայց ինչո՞ւ մայրդ ոչինչ չի խոսում,- դարձյալ հարցական հայացքը կինն ուղղեց Սաթենիկին:

-Նա կորցրել է խոսելու ընդունակությունը, - տխուր պատասխանեց Աննան:

-Խե՛ղճ աղջիկ, մորդ փոխարեն ես պատասխանում և հոգ տանում երկուսիդ համար: Բայց մի՛ գնացեք, նստե՛ք մեզ հետ, մի քիչ կզրուցենք,- նրանց առաջարկեց խարբերոցի մյուս կինը՝ Խանումը:

-Նախ երկուսով հաց կերեք, որպեսզի ուշագնաց չլինեք,-ասաց Վերժինեն:

Սաթենիկը հացը կիսեց աղջկա հետ, և նրանք մեծ ախորժակով այն լուռ ծամեցին: Աննան նայեց մորը, որը լռությամբ համաձայնվեց և կուչ եկավ վրանի մի անկյունում:

-Է՛հ, բոլորս էլ գաղթի ճանապարհին սարսափազդու տեսարանների ականատեսներ ենք: Բայց ո՞ր դեպքից հետո մայրդ կորցրեց խոսելու ընդունակությունը,- Աննային դիմեց խարբերոցի կանանցից երիտասարդը՝ Խանումը:

-Երբ թուրքերը քրոջս անարգեցին մորս աչքի առջև: Հետո թուրք ոստիկաններից մեկը նրան մի քանի ոսկով ծախեց մեկ ուրիշին: Քույրս ճշում էր, աղաղակում, փորձելով ինքնասպանություն գործել, բայց կանխեցին: Ինձ ու մորս ծեծեցին, ստիպեցին մահմեդականություն ընդունել, բայց դիմադրեցինք: Մեզ այնուհետև միացրին գաղթականների քարավանին:

Աննայի խոսքերի վրա Սաթենիկն ուշաթափվեց:

-Աստված իմ, մա՛յրս,- ճչաց աղջիկը՝ գրկելով մորը:

-Երևի երկար ժամանակ քաղցած մնալուց է ուշաթափվել,-ասաց Վերժինեն՝ ջրով շփելով Սաթենիկի ճակատը, քունքերը և պարանոցը:

Սաթենիկն ուշքի եկավ: Աննան խորը հառաչեց՝ մեղավոր հայացքով նայելով տանջված մորը:

-Երևի ոչինչ չափտի պատմեի: Մայրս հավանաբար նորից վերհիշեց ամեն ինչ, - գրեթե լացակումած ասաց Աննան:

Մայրը գլուխը թեթևակի օրորեց այն ազդանշանով, որ իր հետ ամեն ինչ կարգին է: Հետո նա մի մեծ բաժակով ջուր խմեց՝ նստելով տեղում:

-Գնա՛նք, մայրի՛կ,-առաջարկեց աղջիկը՝ նայելով մորը:

-Մի քիչ էլ մնացե՛ք: Մայրդ իրեն թույլ է զգում: Վերջապես մեզ մոտ նրա հետ ոչինչ չի պատահի,- սրտապնդեց աղջկան Վերժինեն:-Աղջի՛կս, քեզ թվում է, թե մենք պակաս սարսափների միջով ենք անցել: Եթե մայրդ համաձայնվի, իմ պատմությունը կանեմ:

Սաթենիկը դարձյալ գլուխը դրական օրորեց: Նա մտածեց, որ միևնույն է, այդտեղ գտնվող բոլոր մարդիկ իրար բախտակիցներ էին:

-Մենք երկուսս էլ խարբերոցից ենք:- Երբ բոլորիս քշեցին քաղաքից, ամուսինս ապրում էր Ամերիկայում: Ես կարողացա որոշ չափով գումար, հագուստ վերցնել և երկու դուստրերիս հետ՝ տասը և տասներկու տարեկան, ստիպված էինք անհայտ ճամփա ընկնել: Հույս ունեինք, որ մեզ դեպի Մալաթիա կտանեին, սակայն քշեցին դեպի հարավ՝ Տավրոսի բարձրաբերձ լեռները: Հաճախ մենք ստիպված էինք չորեքթաթ ժայթերը մազլցել: Այդ

ընթացքում շատ երեխաներ և ծերեր զոհվեցին: Մեռածներին թաղելու մասին խոսք լինել չէր կարող: Նրանք վայրի գազանների համար կեր էին դառնում:

-Սակայն մի՛ մոռացիր ասել, որ շատ մայրեր իրենց զավակների դիակները մեջքներին կապած օրերով քարշ էին տվել նրանց՝ այն հույսով, որ կկարողանան ինչ-որ տեղ թաղել, փրկել շների և ուրուրների բաժին դառնալուց,- լրացրեց նրան Խանումը:

Աննան ու մայրը ուշի- ուշով լսում էին նրանց պատմությունը: Սարսափազդու այդ տեսարաններին իրենք ծանոթ էին:

-Մեզ կողոպտելուց հետո մեզնից հեռացրին տղամարդկանց ու սպանեցին,- շարունակեց խարբերոցի կինը:-Այդ կողոպուտին մասնակցում էին նաև քրդերը, որոնք վերցնում էին իրենց դուր եկած կանանց ու աղջիկներին: Երբ խլելու այլևս ոչինչ չմնաց, քեցին փոշոտ անապատ: Մեզ շրջապատեցին մեծ թվով քրդեր, մեր շորերն էլ հանեցին ու մերկացրին: Այնուհետև քրդերը մոտ 2000 կանանց ու աղջիկների մերկ բազմությունը քեցին մի նեղ վայր ու չորս կողմից գնդակոծեցին մեզ: Ով եզրում էր կանգնած, գնդակահարվեց: Ես ողջ մնացի, նաև դուստրերս: Երբ քրդերը հեռացան մեզնից, միայն մի քանի հարյուրն էին կենդանի մնացել: Այնուհետև շարունակեցինք մեր ճամփան, սակայն երկու երեխաներս հաց էին ուզում ինձնից: Երբ ճանապարհին մի քանի քուրդ ծիավորների հանդիպեցինք, խնդրեցի երկու աղջիկներին իրենց հետ վերցնել: Նրանց տարան:

Կինն արտասպեց, թևքով սրբելով արցունքները:

-Դուք ձեր աղջիկներին այլևս չե՞ք տեսնի,- հարցրեց Աննան:

-Չգիտեմ: Ես ուզում էի, որ նրանք ողջ մնան, իսկ ես մեռնեի, բայց չմեռա: Պատկերացնո՞ւմ եք, օգոստոսյան արևն այրում էր մեր մերկ մարմինները: Հերկված հողում մենք ձեռքերով փոսեր էինք փորում, որտեղ պատսպարվում էինք միջօրեի արևից: Հետո ոստիկանները եկան և կրկին մեզ խմբովին քեցին:

Մի պահ տիրեց քար լռություն: Նստածներից յուրաքանչյուրն էլ նույն դաժան սարդոստայնի մեջ էր հայտնվել: Ի՞նչ էր սպասվում նրանցից ամեն մեկին, ոչ ոք չգիտեր:

Սաթենիկը բռնեց Աննայի ձեռքից ու խոնարհաբար գլուխն օրորելով և կիսով չափ ջրով լիքը դուլլը վերցնելով՝ դուրս եկավ վրանից: Նրանք թեքվում էին իրենց վրանի կողմը, երբ Ավետիսը մոտեցավ նրանց ու խնդրեց թույլ տալ գիշերելու: Աննան նայեց մորը, որը գլխով բացասական նշան տվեց:

-Ո՛չ, հնարավոր չէ, մայրս չի ուզում,- պատասխանեց աղջիկը:

-Բայց ես հո թուրք չեմ: Պետք եղած դեպքում կօգնեմ ձեզ,- համառեց տղան:

Սաթենիկը կրկին գլուխը թափահարեց և երկուսով անհետացան խավարում: Նա իր ընտանիքի հետ կապված ողբերգական դեպքերից հետո վախենում էր բոլորից:

Այդ օրն Ավետիսը փող չունենալու պատճառով մի թուրք սրճարանատիրոջ մոտ մի քանի օրով գրավ դրեց իր վերմակը և դրա դիմաց մի քիչ փող վերցրեց սնվելու համար: Մինչդեռ գիշերելու տեղ չունեի: Գարուն չէր, որ դրսում քներ: Արդեն ծմեռ էր: Այնուհանդերձ, ծածկոց չունենալով, նա ծվարեց ծածկված շուկայի մի անկյունում: Սակայն պահակն այնտեղից վտարեց նրան: Նա գնաց մոտակա խանութ, խնդրեց տիրոջն ավելի հատակը, ջուր բերել ու նրան տեղ տվեցին ու մի կտոր հացի մնացորդ: Խանութպանը խղճալով նրան, թողեց, որ այնտեղ գիշերի, դուռը վրան փակելով:

Առավոտյան խանութպանի տղան ցինիկաբար շարտեց,

-Ո՞րջ ես մնացել: Մենք կարծում էինք, որ գիշերը կմեռնես և իզուր նեղություն պիտի քաշեինք գարշելի դիակդ դուրս նետելու համար:

Ավետիսը նկատեց, թե ինչքան թշնամանք կար հայերի հանդեպ: Նույնիսկ մտածեց, որ նրանք իրեն կարող էին սպանել գիշերով, եթե ուզենային: Չէ՞ որ նրանք էին երկրի տերերը... Կրեժխնդրության զգացումը նրա մեջ ուժգնանում էր օրեցօր:

Աքսորականների քարավանի հետ Ավետիսը հասավ Քիլիս քաղաքը, ուր հիմնականում թուրքեր էին բնակվում: Նա և՛ քաղցած էր, և՛ մրսած, սակայն ծանոթներից և ոչ մեկը չհամաձայնվեց, որ իրենց մոտ պատասպարվեր: Մութն ընկել էր: Հազիվ թույլ մարմինը քարշ տալով՝ նա կծկվեց շենքերից մեկի բակի նկուղում: Կարողանալով հաղթահարել քաղցի զգացումը՝ Ավետիսը քնեց: Երագում տեսավ ծնողներին: Ամեն ինչ այնքան իրական էր: Հայրը թթենու ծառի տակ էր, մայրն այգու ծառերն էր ջրում, քույրերը խաղում էին: Հանկարծ ինքն այգու դարպասի մոտ տեսավ վիրավոր ընկած մի ձի: Ավետիսը մոտեցավ, նետը հանեց նրա ոտքից և վերքը կապեց: Իբրև ձին ասաց. «Շնորհակալ եմ, Ավետի՛ս: Դու ինձ օգնեցիր, ես էլ կօգնեմ քեզ»: Պարզվեց, որ կախարդական ձի էր՝ պատրաստ կատարելու իր ցանկությունը:

-Ուզում եմ ապրել, ապրե՛լ երկա՛ր ու երջանիկ,- շնջաց Ավետիսը:

-Դու անպայման կապրե՛ս,- պատասխանեց ձին՝ դուրս գալով դարպասից:

Վաղ լուսաբացին, երբ պատանին բացեց աչքերը, դարձյալ մռայլ իրականության մեջ հայտնվեց: Նա անդառնալի կարոտով հիշեց իր ծնողներին, հարազատ միջավայրը, երբ ամեն օր շրջապատված էր ծնողների սիրով և այդ երջանկությունը սովորական էր թվում, նույնիսկ աննկատ: Իսկ հիմա գաղթի ճամփաներին անհույս ու մոլորված գոյատևում էր...Նրա պատանեկան գեղեցիկ կյանքը ջարդվել էր, ինչպես ջարդվել էր իր ազգի ճակատագիրը:

Թեկուզ գիտակցում էր, որ դեռ երախտապարտ պիտի լիներ Աստծուն ողջ մնալու համար, քանի որ իր ընկերներն ու հասակակիցները մորթվել էին թուրք դահիճների ձեռքով: Մի ակնթարթ հիշեց նրանց դեմքերը ու աչքերը խոնավացան: Հետո նա իր մեջ ուժ հավաքելով՝ ցրտից սրթսրթալով գնաց շուկա: Չնչին գումար կար ձեռքին: Մտածեց, որ առևտրականները եկած կլինեին, գոնե ուտելու համար մի բան կգներ: Ճանապարհին նկատեց, որ պատին հենված էր մի աղջիկ: Նա ձեռքը մեկնած անցորդներին՝ հաց էր մուրում: Ճանաչեց աղջկան: Վերջերս հանդիպել էր նրան մոր հետ՝ վրաններից մեկի առջև: Դա փոքրիկ Աննան էր, ում մայրն արգելեց գիշերել իրենց մոտ: Աղջկա կողքով անցավ, սակայն խղճալով նրան, կրկին ետ դարձավ՝ հիշելով իր մոր խոսքերը. «Մարդկանց բարություն արա՛ այն այն ժամանակ, երբ քո օգնության կարիքն ունեն, ոչ թե այն ժամանակ, երբ դո՛ւ ես ցանկանում»:

Ավետիսն աղջկա ափի մեջ լուռ մի հացի գումար դրեց ու հեռացավ: Նա իր համար խաչած սիսեռ ու հաց գնեց, որ բավականին էժան էր: Հանկարծ մեկն իր անունը տվեց: Շրջվեց ձայնի ուղղությամբ: Սմբատ աղան էր, փայտամշակման արհեստանոցի նախկին տերը, ում մոտ ժամանակին աշխատել էր: Նա իր ընկերոջ՝ Խորենի հետ էր: Սմբատը խղճաց Ավետիսին: Պատանին գրեթե անձանաչելի էր դարձել իր չափազանց նիհար տեսքով, ցնցոտիներով, ձգված դեմքով:

-Ավետի՛ս, այդ ի՞նչ վիճակի մեջ ես: Հազիվ ճանաչեցի քեզ:

-Ի՞նչ անեմ...Դեռ լավ է, որ սովից չեմ մահացել:

-Գնանք մեզ հետ:

Ավետիսն ուրախությամբ հետևեց նրանց:

-Դու ձերոնց չե՞ս հանդիպել:

-Ո՛ջ: Մեր գյուղացիներից հանդիպեցի, որ մորս ու քույրերիս հետ են եղել, բայց հետո բաժանել են: Ո՞ղջ են, թե՞ ...,- Ավետիսը խոսքը կիսատ թողնելով՝ դարձյալ հիշեց իր երազը ու լռեց:

-Հույսդ մի՛ կորցրու: Չի իմացվի: Բայց ինչպե՞ս էիր սնվում: Չունեցողներն այս ծանր ճանապարհներին երկար չեն դիմանում,- բարեհամբույր ժպտաց նախկին տերը:

Ավետիսը կարճ տեղեկացրեց, որ մեռելներ էր թաղում, ծերերի ծանր իրերն էր քարշ տալիս, ցախ էր հավաքում ու վաճառում, թուրք սրճարանատերերի ու այգետերերի տարածքն էր ավլում, մաքրում: Սմբատ աղան ընկերոջ հետ նրան տարան լավ կերակրեցին: Եվ ոչ միայն այդ օրը, այլև ամբողջ մի շաբաթ:

Ավետիսն այդ օրերին մնաց իջևանատանը՝ նրանց վարձած սենյակում: Սակայն թուրք իջևանատերը մի օր դիտողություն արեց պատանուն, որ նրա վերմակից ավելով ոջիլներ է մաքրել: Ավետիսը զայրացավ նրա դիտողությունից:

-Այդ ոջիլները մեր տնից չեն բերել: Մեր ողջ ազգին դուք եք այս օրին հասցրել: Մենք չենք լողանում ամիսներով: Հազիվ մի քիչ ջուր ենք գտնում ծարավից չմեռնելու համար:

Իջևանատերը գլուխն օրորեց և հեռացավ: Նա ոչինչ չասաց, քանի որ իր երկրի տերերի ծրագրին գերազանցապես տեղյակ էր:

Սմբատ աղան Ավետիսին հանձնարարություն տվեց: Նա պետք է մի նամակ տար ծանոթներից մեկին, որն ապրում էր Քիլիսից հեռու՝ արվարձաններից մեկում: Պատանին կոշիկներ չունեւ: Դեկտեմբերի ցրտերին լաթերով էր փաթաթել ոտքերը: Սմբատի ընկերը՝ Խորենը, նրան կոշիկներ տվեց:

-Հազի՛ր այս կոշիկները, որ ոտքերդ չմրսեն: Այդ վիճակում դժվար կլինի քեզ համար ոտքով երկար ճանապարհ գնալը,- ասց խորենը:

Ավետիսը ոչ միայն ուրախացավ նրա առաջարկից, այլև մտածեց, որ կոշիկները հավանաբար հետո պիտի վերադարձներ տիրոջը: Սակայն գոհ էր իր վիճակից, որ իրեն կերակրել էին և կոշիկներ տվել, թեկուզ ժամանակավորապես:

Նա ճանապարհ ընկավ՝ Սմբատ աղայի հանձնարարությունը կատարելու: Ճանապարհի կեսը դեռ չէր անցել, երբ մի թուրք տղա մոտեցավ ու առաջարկեց իրեն վաճառել կոշիկները: Ավետիսը չհամաձայնվեց:

-Ես ոտաբոբի՞կ պիտի մնամ,- ասաց նա:

-Բայց ես քեզ փող կտամ, դու սովից չես սատկի,- ատելությամբ ատամները կրճտացրեց թուրք տղան:

-Ինձ պե՛տք չէ քո փողը: Հեռացի՛ր այստեղից,-Ավետիսն այնպես ափսոսաց, որ ձեռքին զենք չկար, որ տեղնուտեղը իր թշնամուն սատկացներ:

Անծանոթ թուրք տղան կարծես թե հեռացավ, սակայն հետապնդեց Ավետիսին: Այն էր, անցնում էր նեղ արահետով, երբ հանկարծակի հարձակվեց պատանու վրա: Ավետիսը դիմադրեց, նրա հաստ վիզն առնելով ձեռքերի մեջ: Բայց մի ակնթարթ զգաց, որ հակառակորդը մի բանով ծակեց ձախ ոտքը և կոշիկը բռնությամբ հանեց: Թուրքը դանակով խփել էր Ավետիսի ոտքին: Ստիպված իր շապիկից մի կտոր կտրեց՝ արյունը դադարեցնելու համար և ոտքը կապեց: Մյուս կոշիկը շարտեց թուրքի երեսին: Նա ոտաբոբիկ հասավ նշված տեղը: Այն ինչ-որ գրասենյակ էր, որտեղ էլ հանձնեց Սմբատ աղայի տված գրությունը: Գրասենյակում մի երիտասարդ տեսնելով ցրտից կապտած նրա դեմքը, առաջարկեց վառարանի մոտ նստել ու տաքանալ: Ավետիսը նրանից լաթեր խնդրեց ոտքերին փաթաթելու համար: Նա ինքնաբերաբար հիշեց այն մասին, թե ինչպես էին թաղեցի ընկերներով ժամանակ առ ժամանակ մասնակցել թուրք լամուկների հետ կռիվներին: Այն ժամանակ ինքը ցույց տալով իր հնարամտությունը, իրեն ենթարկեց մոտակա թաղերի տղաներին և խումբ ստեղծեց: Յուրաքանչյուրի զենքը լավ փայտից

պատրաստված ճիպտուն էր: Մյուս զենքը պարսատիկն էր: Մի փոքր առիթի դեպքում Ավետիսի հրամանով տղաները սկսում էին կռվել: Սկզբում գործի էին դնում ճիպտունները, հետո երբ հակառակորդը նահանջում էր, օգտագործում էին պարսատիկները: Նրանք քարե կարկուտ էին սարքում թուրքերի վրա: Սակայն պատահում էր, որ կանում էր որևէ մեկի գլխին կամ մարմնին: Հենց երկու տարի առաջ թուրք տղաների հետ կռվելուց հետո, երբ փախչում էին, իր ընկերը՝ Ջաքարը, պատից ցատկելով ներքև՝ վնասեց ողնաշարը և այլևս չքայլեց: Ղասերը նա պատրաստում էր տանը՝ տարեվերջին հանձնելով քննությունները: Ավետիսը շատ անգամ էր զգացել, որ թուրքը դաժան է, երբ դիմացինը խեղճ է, վախկոտ: Այդ պատճառով նա միշտ ընկերներին հորդորում էր, որ չվախենան, որ կռվեն ոչ թե պաշտպանվելու, այլև հաղթելու համար՝ մշտապես ցույց տալով իրենց առավելությունը:

Պատանին բավականին տաքացել էր, երբ մի քանի ոջիլներ դուրս եկան տաբատի վրա: Ավետիսն ամաչելով՝ աշխատեց ծածկել դրանք, սակայն գրասենյակի երիտասարդը նկատել էր ոջիլները և նրան խնդրեց հեռանալ այնտեղից: Գրության պատասխանին սպասելու համար նա մտածեց գիշերն իր համար մի տեղ գտնել: Ջեռքին մի քիչ գումար կար, որը Սմբատ աղան էր տվել: Նա գտավ մի պանդոկ, և տիրոջը խնդրեց որոշ գումարի դիմաց թույլ տալ իրեն մոտակա գոմում քնել: Ձյան փաթիլները դանդաղ ցած էին իջնում, այնինչ ինքը ոտաբոբիկ շարունակում էր սարսռալ ողջ մարմնով: Թուրք պանդոկապետը ձեռքի լապտերը մոտեցնելով տղային՝ ասաց.

-Դու այս գիշեր կմեռնես, քեզ ի՞նչ պիտի անեմ:

-Ոչինչ էլ չես անի: Իմ մասին քեզ ոչ ոք ոչինչ չի հարցնի,- պատասխանեց Ավետիսը: -Եթե մեռնեմ, կասես, որ խղճացել ես ինձ և լուր կտաս հայի մեռել թաղող ասորիներին, որոնք էլ քարշ տալով ինձ կտանեն, մի փոսի մեջ կզգեն:

Թուրք պանդոկապետը մի պահ վարանելով՝ ասաց.

-Միայն թե այնտեղ էշեր կան: Լավ, գնա՛ գոմում պառկի՛ր,- ու ցույց տվեց գոմի կողմը:

Ավետիսը դողալով կծկվեց գոմի մի անկյունում՝ չոր գոմաղբ գտնելով և թաղվեց դրա մեջ: Գիշերն էշերը մի քանի անգամ քացով խփեցին նրան:

Առավոտյան լսվեց պանդոկապետի ձայնը, որն իր ծառային դիմելով՝ ասաց.

-Արի՛Ֆ, գնա՛, տես, էն տղան ո՞րջ է, թե՞ մեռած:

-Ո՛րջ եմ, աղա՛, շնորհակա՛լ եմ,- ի պատասխան Ավետիսը գորաց գոմից:

Նա կրկին իր քայլերն ուղղեց այն գրասենյակի ուղղությամբ, որտեղից պիտի վերցներ Սմբատ աղայի գրության պատասխանը: Վերցնելով այն, նա վերադարձավ նախկին տիրոջ մոտ՝ պատմելով նրան ու ընկերոջը կոշիկի հետ կապված պատմությունը:

-Դու հո չե՞ս գժվել, որ այս ծանր ժամանակներում թուրքի հետ փորձել ես կռվել,- կշտամբեց տղային Սմբատ աղայի ընկերը՝ Խորենը:

-Ի՞նչ անեի: Լուռ ոչխարի պես հեզաբար սպասեի, մինչև կոշիկներս կհանե՞ր այս ցրտին:

-Իսկ եթե դանակը ոտքիդ չխփեր, այլ սիրտդ կոխեր, ի՞նչ պիտի անեիր:

Ավետիսը լռեց: Նա հասկացավ, որ գազազած թուրքից ամեն բան սպասելի էր:

Նրանք լավ վարձատրեցին Ավետիսին ու բաժանվեցին: Պատանին իր համար մի բրդյա վերմակ գնեց, իսկ մնացած փողով՝ ուտելիք: Նրան հաջողվեց ևս մի քանի օր զանազան պատերի տակ քնել:

Այդ գիշեր՝ բքին քամին վրաններից շատերը պատառոտել էր՝ թողնելով դրանց ծվենները: Ողջ մնացած մարդիկ նման էին շնչող կմախքների: Այդ գիշեր ցրտահարությունից շատերն անշնչացան:

Հայ տարագիրների թաղման գործը Քիլիսում կառավարության հանձնարարությամբ, ստանձնել էին ասորիները՝ շրջիկ դիասայլերով, որոնք ամեն օր հանդիպում էին հայերին «մեռել չկա՞» հարցումով: Եվ կարծես յուրաքանչյուր ոք մեռնելու իր հերթին էր սպասում:

Խարբերոցի Վերժինեն հարևան վրանից Սաթենիկի աղջկա՝ տասնմեկամյա Աննայի հետ հասել էին բողոքական Սոկրատի սենյակը օգնություն խնդրելու համար: Մրսելուց հիվանդացել էին Աննայի մայրը և Վերժինեի քույրը: Սոկրատը նրանց երկու հատ տաք շալ տվեց և փակ ամանով տաք թեյ: Տեսնելով աղջկա կույզ եկած, սառած դեմքը, եկեղեցու սպասավորը դիմեց նրան:

-Մոտեցի՛ր, աղջի՛կս, տաք վառարանի մոտ: Նստի՛ր, տաքացի՛ր:

Աննան լուռ մոտեցավ՝ նստելով կիսով չափ կոտրած աթոռին:

-Ես հիմա երկուսիդ համար տաք թեյ նույնպես կլցնեմ, միայն մի քիչ սպասեք, որ թեյնիկի մեջ ջուրը եռա,- նա իր պահարանից հանեց երկու հաց ու տվեց նրանց:

Վերժինեն ևս նստեց աղջկա մոտ՝ տաքանալու: Նա իր մռայլ մտքերը ցանկացավ կիսել Սոկրատի հետ:

-Մինչև ե՞րբ, տեր հա՛յր, այսպես պիտի տանջահար լինենք:

-Այդ հարցի պատասխանը միմիայն Աստծուն է հայտնի:

-Աստված չկա՛: Մենք նրան չենք հավատում: Եթե գոյություն ունենար, թույլ չէր տա թուրքերի անմարդկային արարքները: Մի ողջ ազգ է ոչնչացվում, մորթվում նրա աչքի առջև...

Սոկրատը լռեց՝ սենյակում դեսուդեն քայլելով:

-Տեսնում եմ, որ պատասխան չունեք: Բայց մի՞թե մենք՝ հայերս, խոնարհաբար չենք ծառայել Աստծուն: Թուրք կառավարությունն իր հրեշավոր ծրագիրն իրականացնելու և ժողովրդին տեղահանելու համար ընդգրկել էր մեր եկեղեցու սպասավորներին, համոզելու մարդկանց՝ կատարել նրանց հրամանները: Մի՞թե նաև չխաբեցին ձեզ... Ինչպե՞ս հաշվեհարդար տեսան Աստծո ծառաների հետ...

-Իրավացի ես: Թուրքերը մեզ խաբեցին: Նրանք հավատացրին հայ լուսավորչական եկեղեցու Կոստանդնուպոլսի պատրիարք Ջավենին՝ հանգիստ տեղահանվելու: Նա էլ իր հերթին տեղեկացրեց բոլոր հայ եպիսկոպոսներին և փոխերեցներին, որ հայ ազգը պետք է մինչև վերջ հավատարիմ ծառայի թուրք կառավարությանը, որը պատերազմում էր ուրիշ պետությունների հետ և «համաձայնի բոլոր զոհողություններին՝ հանուն օսմանյան գահի փառքի բարձրացման, հանուն հայրենիքի պաշտպանության»...

Քահանա Սոկրատը լռեց՝ երկաթի կտորով խառնելով վառարանի կրակը: Նրա համար ծանր էր վերհիշել այն ամենն, ինչ տեսել էր ականատեսի աչքերով:

-Մեր եկեղեցիներից մեկի քահանային թուրքերը բռնեցին և աչքերը հանեցին՝ քրիստոնեական հավատքի համար, -ասաց Վերժինեն:

-Ցավոք, դահիճներն ի սկզբանե ահավոր կոտանքներ էին նախատեսել ուսուցիչների, քաղաքական գործիչների, հոգևորականների համար: Տեղյակ եմ, օրինակ, որ Դիարբեքիրում հինգ, թե վեց քահանայի լրիվ մերկացրել էին, նրանց վրա ծուրթ լցրել, քարշ տվել քաղաքի փողոցներով: Ոմանց գլխատել էին, ոմանց էլ՝ մահակի հարյուրավոր հարվածներ հասցրել մի գիշերվա մեջ և սպանել...

-Դուք կարո՞ղ էիք նրանց պես հարկ եղած դեպքում դաժան լինել:

-Ո՛չ: Ես դաժան մարդ չեմ: Դեպքերի բերումով կարող եմ լինել պահանջկոտ, որը մարդկանց կողմից անգամ սխալ է ընկալվում: Իհարկե, ինչպես յուրաքանչյուր ոք, ես էլ իմ թերություններն ունեմ: Սակայն Աստված աշխատում է ինձ հետ:

-Երբեք չե՞ք զղջացել ձեր ընտրած ուղու համար, չե՞ք հիասթափվել,- հարցրեց Վերժինեն:

-Մի քանի անգամ հիասթափվել էի: Հիասթափվել էի ինքս ինձնից: Ինձ թվացել է, որ իմ աղոթքները երկինք չէին հասնում: Մտածում էի, գուցե մեղքեր էի գործել: Իսկ հետո, երբ հետադարձ հայացք ձգեցի, հասկացա, որ Աստված երևի ինձ փորձության առջև էր կանգնեցրել: Ուժերս հավաքեցի և համոզվեցի, որ չպետք է վախենալ:

-Մենք այլևս վախենալու ոչինչ չունենք, այնքան սարսափների ենք ականատես եղել, որ հաստատ դժոխքում էլ չես հանդիպի,- ասաց Գոհարը:

Ներս մտավ Ավետիսը՝ մրսած, կապտած դեմքով ու ձեռքերով: Նա նույնպես եկել էր օգնություն խնդրելու: Լսել էր, որ հայ տարագիրների որբերին հավաքում էին և թուրքացնելու նպատակով որբանոց էին բացել: Սակայն այնտեղ ընդգրկում էին միայն մինչև տասնչորս տարեկան երեխաներին:

-Իսկ դու քանի՞ տարեկան ես,- հարցրեց Սոկրատը:

-Տասնվեց:

-Լա՛վ: Դու այնքան նիհար ես, փոքրամարմին, որ քո տարիքին չես էլ երևում: Կօզնեմ քեզ այնտեղ ուղարկել որպես տասնչորս տարեկան տղայի:

Թեյնիկն արդեն եռում էր: Սոկրատը բոլորի համար թեյ լցրեց, նաև շաքար տրամադրեց թեյը քացրացնելու՝ հացը դնելով սեղանին:

-Եվ դու պատրաստվում ես թուրքանա՞լ,- մի տեսակ գայրույթով հարցրեց Վերժինեն:

-Երբե՛ք: Ինձ ժամանակավոր ապաստարան է պետք, որ չմեռնեմ:

-Ապրե՛ս, տղա՛ս:

-Գաղթի ճամփաներին մի քանի անգամ ինձ մահմեդականացնելու առաջարկներ են եղել, որպեսզի ազատվեմ տանջվելուց, նրանց մոտ հանգիստ ապրեմ, բայց ես չհամաձայնվեցի,- պատասխանեց Ավետիսը՝ նոր միայն նկատելով Աննային, որը լուռումունջ կիսախավար սենյակում իր թեյի բաժակի մեջ երկու կտոր շաքար գցեց:

-Ինչպե՞ս է մայրդ: Նա ո՞րջ է, - հարցրեց Ավետիսը՝ դիմելով աղջկան:

-Այո՛, բայց ջերմություն ունի: Եկել եմ տաք շալ ու թեյ տանելու նրան,- կամաց ձայնով պատասխանեց աղջիկը:

-Դու չե՞ս ուզենա ինձ հետ որբանոց գալ:

-Ո՛չ: Ո՞վ պիտի մայրիկիս տիրություն անի: Հետո էլ մորս հետ ես ինձ ապահով եմ զգում:

-Բացի նրանից, դու ոչ ոք չունես՞,- հարցրեց Ավետիսը:

-Երկու եղբայր ունեմ՝ Միքայելը և Եղիշեն, որոնք ինքնապաշտպանական ջոկատներում կռվում են թուրքերի դեմ: Նրանք հասցրել էին լեռները փախչել, երբ թուրքերը հայտնվեցին: Այդ արնախումները բռնությամբ տարան սիրունատես աղջիկներին: Ավագ քրոջս՝ Աշխենին էլ տարան:

Աննայի աչքերը լցվեցին արցունքներով: Ավետիսը ոչ միայն կրկին գայրույթով լցվեց թուրք ասկյարների դեմ, այլև Աստծո կամոք ուզեց, որ շուտ հասներ իր վրեժխնդրության ժամը:

Վերժինեն մեղմորեն հանգստացրեց աղջկան:

- Աննան մոր պաշտպանն է և նրան խնամողը: Հետո էլ որբանոցում ո՞վ գիտե, թե ինչպես են վարվում երեխաների հետ: Թուրքերը մի փոր հաց տալու համար հնարավոր է բոլորին բռնությամբ մահմեդական դարձնեն:

-Ես կփախչեմ պետք եղած դեպքում,- ասաց Ավետիսը՝ մտածելով իր ծրագրի մասին:

Սոկրատը հետևելով նրանց գրույցին՝ ոչինչ չարձագանքեց:

Որբանոցը, ուր հայտնվեց Ավետիսը, մի ընդարձակ գոմ էր հիշեցնում: Երբ նա ներս մտավ, խսիրների վրա թափված որբերը հագիվ ոտքի կանգնեցին ու կրկին ընկան չոր խոտերի վրա, որը որպես ներքնակ էր ծառայում: Նրանք հինգից տասը տարեկան ուրվականների նմանվող երեխաներ էին, որոնց փոս ընկած աչքերի լույսը դանդաղ մարում էր:

Պատանին սարսռաց այդ անգութ տեսարանից: Նա որբանոցի խնամողներին հայտնեց, որ իր համար նախընտրելի է ցրտին մեռնել, քան ապրել այնտեղ: Ավետիսին հաջորդ օրը տեղափոխեցին մեծերի որբանոցը: Տղան հասկացավ, որ թուրքական կառավարությունը որբանոց էր բացել, որտեղ չկար ո՛չ անկողին, ո՛չ ծածկոց, ո՛չ վառելիք, ո՛չ հագուստ: Թուրքերն ափսոսացել էին տեղահանված հայերի ընտանիքներից թալանված գույքը տրամադրել մանուկներին:

Ավետիսը, որ Սմբատ աղայի տված փողով վերմակ էր գնել, պահել էր մի տեղ: Այն իր թաքստոցից վերցնելով՝ փաթաթվեց նրա մեջ, տաքացավ և ճաշ ուտելուց հետո փորձեց քնել: Նա մտածեց, որ Աստված շատ դաժան էր ինչպես իր, այնպես էլ ողջ ազգի հանդեպ: Սակայն նրա մեջ ապրող երկրորդ «ես»-ը բարձրաձայնեց, որ, ընդհակառակը, ինքը երախտապարտ պիտի լինի իր Աստծուն, որ ամեն անգամ իրեն հաջողվում էր հաղթահարել դժվարությունները, մի միջոց գտնել ամեն իրավիճակից փրկվելու համար: Նորից մտածեց իր ընտանիքի մասին. «Արդյո՞ք ողջ են իմ հարազատները...մա՛յրս: Ա՛խ, ինչքա՛ն են կարոտել մորս: Ո՞ր ուղղությամբ են նրանց տարել, որ չենք հանդիպել: Այնպես են վախենում կորցնել նրանց: Չէ՞ որ ընտանիքս իմ ամրոցն է», - տխուր մտածեց Ավետիսը և հոգնած փակեց աչքերը: Արթնանալուց հետո նա ծանոթացավ որբանոցում գտնվող տղաների հետ: Նրանցից շատերը տառապում էին լուծով և խմում էին սենյակի անկյունում դրած մեծ կարասի սառը ջուրը: Այդտեղ գտնվող հիսուն որբերից միայն տասը հոգի վերմակ կամ ծածկոց ունեին: Երեխաներին սպասարկում էին երկու հայ կանայք, որոնք մնում էին այն սենյակներում, որոնք որպես խոհանոց ու ցախանոց էին օգտագործվում:

Որբերի օրապահիկը երկու մատնաքաշ հաց էր և երկու անգամ ապուր էին տալիս: Այն ձավարով ոսպ ու սիսեռով էր: Սակայն երեխաները երկար ժամանակ այնքան էին քաղցած մնացել, որ ուտելուց չէին կշտանում: Իսկ այն տղաները, որ քիչ-միչ փող ունեին, թաքուն հաջողացնում էին քաղաքից գուտ ոսկոր գնել և վառարանի վրա տաքացնելով՝ շան պես հաճույքով կրծում էին: Միս բուլորովին չէին տալիս: Որբերը հիվանդանում էին և ամեն օր մահվան դեպքեր էին գրանցվում: Ավետիսը նույնպես ջերմություն ունեցավ, ջերմություն ունեին նաև մյուսները: Ոստիկանները հսկում էին նրանց, վախենալով, որ համաճարակ կտարածվի: Սակայն Ավետիսը կանանցից միայն տաք թեյ էր խնդրում, տղաներին էլ խորհուրդ էր տալիս սառը ջուր չխմել: Որբերից մեկը՝ Գարեգինը, որը մտերմացել էր Ավետիսի հետ, ուզում էր օգնել նրան:

- Ասա՛, Ավետի՛ս, ի՞նչ բերեմ, որ կազդուրվես:
- Մածուն եմ ուզում, բայց փող չունեմ:
- Ես գոտիս կվաճառեմ ու թաքուն՝ ոստիկանների աչքերից հեռու, կգնամ շուկա:
- Կարո՞ղ ես:
- Կփորձեմ չբռնվել:
- Զգույշ եղի՛ր: Իմ պատճառով վտանգի մեջ չհայտնվես:

Իսկապես Գարեգինին հաջողվեց թաքուն դուրս գալ որբանոցի շենքից, գոտին վաճառել ու մածուն գնել հիվանդ ընկերոջ համար: Ավետիսին մածունը կարծես թե օգնեց, և նա շուտ ոտքի կանգնեց: Ցավոք, ընկերը հիվանդացավ ու մահացավ: Բարձր ջերմությունից մահացավ նաև Գարեգինի գեղեցիկ քույրը, որը տասներկու տարեկան էր:

Ավետիսը վշտացավ: Նա մյուս ընկերոջը՝ Ջավենին, սաստեց, որ հանկարծ սառը ջրից չօգտվի, եթե ուզում է ողջ մնալ: Ընկերը, բարեբախտաբար, կազդուրվեց: Որբանոցի մեջ էլ նրանք միասին դիմավորեցին 1916 թվականը: Ամանորից առաջ որբանոցի երեխաներին խնամող կանայք բոլորին լողացրին՝ ոտից գլուխ փոխելով շորերը: Որբերի վզները կապեցին սնդիկով օծված բամբակյա երիզներ՝ ոջիլը կանխելու համար, բայց մի քանի օր հետո ոջիլները նորից շարվեցին երիզի շուրջը և նրանք այդ վզնոցները գցեցին թիթեոյա վառարանը, որ վառվում էր սենյակում: Որբանոցի կանայք Ավետիսին որպես խելացի ու աչքաբաց պատանու, հսկիչ նշանակեցին, որպեսզի կարգապահություն սահմաներ, ճաշը, քունը կազմակերպեր, գրել, կարդալ սովորեցներ: Տղան հաճույքով էր կատարում իր պարտականությունները:

Մի օր էլ թուրք ոստիկանները որբանոցի բակը մտան և հրամայեցին բոլորին հավաքել անկողինները և հետևել իրենց: Ավետիսը որպես երեխաների հսկիչ՝ առարկեց, ասելով, որ տնօրենը չկա և իրենք իրավունք չունեն տեղաշարժվելու: Բայց ո՞վ էր լսողը: Եկեղեցու սպասավորը՝ տեր Սոկրատը, որն այդ պահին հայտնվել էր որբանոցում, փորձեց պաշտպանել որբերին, երբ ոստիկաններից մեկն ասաց.

-Երիք չէ՞, որ սրանք կառավարության վրա բեռ լինեն: Մեծ տղաներ են: Ի՞նչ օգուտ են մեզ տալիս: Դու էլ, որ մեր շնորհիվ ես ողջ մնացել, շնորհակալ եղի՛ր: Հիմա նրանց հետ քեզ էլ կքշենք: Երկու սայլ հաց ձեզ հետ կուղարկեմ:

Տեր Սոկրատը ոչինչ չարձագանքելով, միացավ որբերի հետ, որոնց ոստիկանները սայլերը լցրին: Սայլերից մեկում էլ Քիլիսում տեղավորված հայ կանայք ու երեխաներ էին: Կեսգիշերին որբերին հաց բաժանելով, տեղավորեցին մեծ գոմում, այնինչ կանանց ու նրանց երեխաներին թողեցին դրսում:

Գիշերը սաստիկ ցուրտ էր: Լուսաբացին մի կին գոմի դուռը ուժեղ թակեց՝ խնդրելով բացել: -Խնդրո՞ւմ եմ, տղաս սառե՛լ է: Օգնե՛ք ինձ,- լացակումած ասաց կինը:- Վերցրե՛ք նրան և ձեր ծոցում տաքացրե՛ք:

Ավետիսն իսկույն ևեթ նրա ձեռքից խլեց հինգ տարեկան տղա երեխային և պառկեցրեց իր անկողնում: Այդ կնոջը հետևեցին մյուսները: Բոլորի երեխաներն էլ նույն վիճակում էին: Որբ տղաները բոլորին օգնեցին: Բայց արդեն հաջորդ օրը թուրք ոստիկանները կանանց բաժանեցին գյուղերը՝ թուրքացնելու նպատակով:

Ավետիսն ընկերոջ հետ որոշեց փախչել այդտեղից: Նախորդ օրը ճանապարհին մի կտոր մորթի էր գտել, այն ոտքերին փաթաթեց կոշիկների փոխարեն, վերմակն էլ ուսին գցելով՝ Ջավենի հետ կարողացան ճողոպրել: Այնպես պատահեց, որ կես ճանապարհին նրանց մի հեծյալ թուրք ոստիկան հանդիպեց.

- Վե՛րջ, բռնվեցի՛նք,- քթի տակ վախեցած շշնջաց Ավետիքը:
- Հանգիստ պահի՛ր քեզ,- պատասխանեց Ավետիսը:
- Ո՞վքեր եք, դեպի ո՞ւր եք գնում,- հարցրեց թուրք ոստիկանը:
- Նոր ապաքինված զինվորներ ենք: Հիվանդանոցի գլխավոր բժշկի թույլտվությամբ մեկ ամսով արձակուրդ ենք գնում մեր տները: Գնում ենք դեպի Ադանայի նահանգ:
- Ահա՛ թե ինչ: Ձեր շորերն ու դեմքի գույնն իսկապես ապացուցում են ասածիդ ճշտությունը, - պատասխանեց ոստիկանը և հեռացավ:

Ընկերներով իրար նայելով խոր շունչ քաշեցին: Բայց երկուսն էլ քաղցած էին և ոչ մի գրոշ էլ չունեին: Ճանապարհին միայնակ ուղևորի հանդիպեցին, որը գորացրվել էր և տուն էր վերադառնում: Նրա հետ հավասարվեցին, և Ավետիսը օգնեց նրան ուսապարկը շալակելու, ուսին գցած իր վերմակը տալով ընկերոջը: Երբ հանգստացան, զինվորը հանեց երկու կիլոգրամանոց հաց և ծխով չորացրած ձուկ: Տղաներն ախորժակով հաց կերան: Զինվորը նաև վճարեց Ավետիսին՝ բեռը քարշ տալու համար:

Վերջապես հասան Իսլահյեի: Քաղաքի մուտքն ազատ էր: Ջավենի հետ Ավետիսը տեղավորվեց շուկայի մուտքի մոտ՝ ավերակ մի պատի տակ: Ընկերոջը թողնելով այդտեղ, Ավետիսը գնաց ուտելիք գնելու: Ինչ-որ բան էր գնել, երբ շուկայից դուրս գալով, դիմացի շենքից հայտնվեց թուրքական սպայի հագուստով, բարեձև կազմվածքով, սև բեղ ու մորուքով մի տղամարդ և ձեռքով նշան արեց՝ իրեն մոտենալու: Նա այնքան գունար տվեց Ավետիսին, որ երկու շաբաթ ուտելիք կարող էր գնել: Պատանին ուրախությունից շշմել էր: Հետո պարզեց, որ նա զինվորական բժիշկ էր, ու թեև թուրքերեն էր խոսել, բայց ազգությամբ հայ էր, որն աշխատում էր շուկայի դիմաց գտնվող հիվանդանոցում:

Երբ Ջավենին նա պատմեց այդ մասին, ընկերը ոգևորվեց.

-Պետք է գնալ նրա մոտ և շնորհակալություն հայտնել:

-Այո՛, մենք սովից որոշ ժամանակ կփրկվենք:

Հաջորդ օրը երկուսով հայտնվեցին հիվանդանոցի մուտքի մոտ և սպասեցին իրենց ծանոթ բժշկին: Շուտով նա եկավ, որին էլ տղաներն իրենց երախտագիտությունը հայտնեցին:

-Բայց ես իմ պարտքն եմ կատարել,- ժպտաց անծանոթ բժիշկը:

-Մեր ո՞ր ծառայության համար:

Բժիշկը լռեց: Չուզեց խոստովանել, որ ազգությամբ հայ է և իր սիրտը չի կարող չցավել նրանց համար, որ ինքը պարտադրված է ծառայում թուրքերին:

-Դուք պարզապես բարի մարդ եք և ցանկացել եք օգնել մեզ,- ասաց Ավետիսը:

Բժիշկը նորից ժպտաց: Նա հիվանդանոցի պատուհանից նկատել էր տեսքով հյուծված հայ պատանիներին և որոշել էր օգնել նրանց՝ սովը հաղթահարելու: Սակայն տղաները հագիվ տասը քայլ էին հեռացել, երբ նույն բժիշկը նրանց կրկին կանչեց: Այս անգամ նա մի պարկ հանձնեց նրանց: Պարկի մեջ հանգուցյալների հագուստներ էին՝ տաբատներ, բաձկոններ, վերնաշապիկներ:

Տղաների ազատությունը շատ կարճ ընթացք ունեցավ: Նրանք երկուսով վերմակն ու պարկը շալակած ուղղություն էին վերցրել դեպի հյուսիսային ճանապարհի կողմը, որին ծանոթ էին, երբ թուրք ոստիկանները բռնեցին նրանց՝ միացնելով գաղթականների քարավանին:

-Մեր ուրախությունն ավարտվեց: Ո՞վ գիտե, գուցե գաղթականների այս խմբին պիտի տանեն գլխատելու,- Ջավենն անհանգիստ նայեց ընկերոջը:

-Դեռ ոչինչ չիմացած՝ վախեցած եզրահանգումներ ես անում: Գոնե անհոգ եղիր, որ հագուստներ ունենք ու կարող ենք և՛ հագնել և՛ ուտելիքի հետ փոխանակել,- սրտապնդեց նրան Ավետիսը:

Երկար ճանապարհ անցնելուց հետո ոստիկանները մարդկանց թողեցին, որ հանգստանային: Մարդիկ, սակայն, ժամերով քայլելուց հետո, ինչպես միշտ, ավելի շատ ջրի կարիք ունեին, բայց արգելված էր տասնհինգ- քսան մետր հեռավորությամբ հոսող զուլալ աղբյուրից օգտվել: Երբ թուրք ոստիկանապետն իր մոտ կանչեց զինվորների մեծ մասին ինչ-որ հանձնարարություն տալու, առիթից օգտվելով՝ ընկերներով վազեցին մոտակա առվակի մոտ ու պառկելով գետնին, սկսեցին հագուրդ տալ ծարավին՝ ծծելով թե՛ ջուր, թե՛ ցեխ: Հանկարծ հնչեց դաժան ոստիկանապետի հրամանը:

-Հե՛յ, ոստիկաններ՛ր, խփե՛ք նրանց, մի՛ թողեք, որ մի կաթիլ ջուր խմեն:

Հրամանը լսելով՝ թուրք ոստիկանները հրացանների կոթով, ոտքով սկսեցին հարվածել ջրի վրա պառկած մարդկանց: Ավետիսին ու Ջավենին էլ բաժին հասան այդ հարվածներից:

Խեղճ գաղթականներին նորից շարք կանգեցրին և հրամայեցին արագ քայլել: Սաստկացավ շարքային ոստիկանների հայիոյանքն ու կատաղությունը հայերի հանդեպ: Նրանցից մեկը նույնիսկ զայրոյթով շարտեց. «Քիչ մնաց, կազատվենք ձեզնից»:

Ավետիսն ու Ջավենն իրար նայեցին տագնապած աչքերով:

-Լսեցի՞ր...Ես զգում եմ, որ մեր վերջը եկել է,- արձագանքեց Ջավենը:

-Գուցե վախեցնո՞ւմ են մեզ: Պիտի համբերե՛նք: Առայժմ փախչելու հնարավորություն չունենք:

Ջավենը լռեց: Նրա սիրտն այնպիսի արագությամբ սկսեց խփել, որ թվաց, թե ուր որ է, շուտով կտապավի գետնին:

Գաղթականների խումբը հասավ մի գյուղ, ուր քրդական տարազով կանայք հայտնվեցին՝ կաթ, մածուն ծախելու: Թուրք ոստիկանները դիմեցին մարդկանց՝ իբրև օգնելու գյուղացիներին: Այդ կոչով նրանք ծաղրում էին հայ տարագիրներին և նրանց խոսքերը թունոտ գավեշտի էին նման:

-Այս քրդերը խեղճ գյուղացիներ են, շորից, վերարկուից տվե՛ք նրանց, որ հագնեն:

Բռնությամբ ու խաբեությամբ թալանված ամբողջ հայ ազգին քիչ էր, որ մուրացկաններ էին դարձրել, դեռ շարունակում էին հայերին ստորացնել քրջոտ, անգրագետ, մտածողությամբ նրանցից ոչ պակաս վայրենի ու մարդասպան քրդերի առջև: Ցավոք, գաղթականները վարժվել էին ծաղր ու ծանակի ենթարկվելուն: Եվ ոստիկաններն առանց սպասելու հոգնած, բզկտված գաղթականների արձագանքին, մոտեցան նրանց, իրենց ձեռքով վերցրին մեկից վերարկուն, մյուսից կոշիկներ, մեկ ուրիշից շորերն ու սպիտակեղենը, տարան քրդերին տվեցին, փոխարենը կաթ ու մածուն վերցրին իրենց համար:

Երբ մարդիկ մի քիչ շունչ առան, ոստիկաններն այս անգամ հրամայեցին երկշարք կանգնել, որովհետև գաղթականները վազելով պիտի անցնեին արտերի և անտառի միջով: Հրամանն իսկույն ևեթ կատարվեց: Ետ մնացողի համար հրացանակոթը, սվինը, գնդակը պատրաստ էր: Ճանապարհի երկու կողմում քուրդ ջահել հարսներ ու աղջիկներ մանգաղով հունձ էին անում: Նրանք ապշահար էին եղել այդ տեսարանից: Թուրքերը հյուժված մարդկանց ցանկանում էին ոչնչացնել՝ անվերջ հորիմնելով անմարդկային արարքներ: Նրանք վամպիրների պես հագնում էին՝ ստորացած տեսնելով գաղթականներին: Եվ եթե երիտասարդ ու միջին տարիքի մարդիկ մի կերպ հաղթահարում էին բարձունքները, նույնը չէր կարելի ասել ավելի տարեցների մասին: Վաթսունամյա մի տղամարդ, մոտենալով ոստիկանապետին, աղաչեց իրեն խնայել, չվազեցնել: Նա ցույց տվեց իր քրքրված ոտքերը:

-Որտեղի՞ց ես,- կեղծ բարեսրտությամբ հարցրեց թուրք ոստիկանապետը:

-Ադանայից, բեկ էֆենդի,- պատասխանեց տղամարդը:

-Նրան Ադանա ուղարկի՞ր՝ սվինո՞վ,- հրամայեց նա իր կողքին կանգնած ոստիկանին:

Տղամարդուն տեղնուտեղը սպանեցին: Մարդիկ սարսափահար միմյանց նայեցին: Ավետիսի ու Ջավենի ոտքերը քարերին կանելով, նույնպես արյունոտվել էին, բայց վախից վազում էին առաջ:

Սարը շրջանցելուց հետո, թույլ տվեցին մարդկանց հանգստանալու: Ավետիսը մոտեցավ թուրք ոստիկաններից մեկին, առաջարկեց նրան իրերը տանել մի պայմանով, որ իրեն վազեցնել չտան, որ միայն քայլեր և թույլ տար ջուր խմել: Նա համաձայնվեց և կարգադրեց մյուս ոստիկաններին ձեռք չտալ Ավետիսին: Նրանք հանգիստ քայլելու համար փող էին ուզում, այլապես հրամայում էին վազելով ճանապարհն անցնել:

Ոստիկանապետը տասը հոգու, ովքեր հիվանդ էին և չէին կարողանում քայլել, հրամայեց տեղավորել սայլերի վրա և տեղափոխել քաղաքի զինվորական հիվանդանոցը: Ավետիսն

առիթից օգտվելով՝ ծլկեց մի կերպ, ցանկացավ լինել հիվանդների շարքում: Գնաց ու պառկեց հիվանդների կողքին: Մինչդեռ այդ խեղճերին անտարբերությամբ շարտել էին մոտիկ թիերի վրա ու սպասում էին: Քիչ անց մի սայլ մոտեցավ: Այնտեղից իջավ թխադեմ, կոկիկ հագնված մի բժիշկ և զննեց յուրաքանչյուրին: Այնուհետև ուղղվելով Ավետիսի կողմը՝ ասաց.

-Գնա՛, կորի՛ր այստեղից:

-Բայց, բժի՛շկ, ուրքիս վերքը ցավում է: Օգնե՛ք ինձ:

-Սուտ հիվանդ մի՛ ձևացիր: Գնա՛ այստեղից,- գայրացավ թուրք բժիշկը:

Ավետիսը ստիպված ենթարկվեց, տխուր մտածելով, որ իր փախչելը չհաջողվեց: Սակայն նա մտնելով թիերի մեջ, հետաքրքրությամբ ուզեց տեսնել, թե ինչ պիտի անեին հիվանդներին հետ: Եվ սարսափելի տեսարան բացվեց նրա առջև: Սայլապանները հիվանդներին սեղմ շարեցին իրար կողք-կողքի, հիվանդների վրա լցրին սպիտակ հող, ապա սայլում եղած ամաններով ջուր լցրին: Լսվեցին մարդկային աղերսագին ճիչեր: Բանվորները տեղում փոս փորեցին:

Ավետիսն այդ տեսարանից այլայլված՝ ճողոպրեց, միանալով գաղթականների իր խմբին: Ջավենին նա պատմեց ամեն ինչ:

-Ի՞նչ է մեզ սպասվում: Երևի ուրքի վրա էլ կմեռնենք կամ էլ մեզ էլ ողջ-ողջ կթաղեն:

-Եթե չփախչենք, քո ասածը կլինի: Դու ինձ վստահի՛ր, մի բան կմտածեմ,- ասաց Ավետիսը: Տղաներն իրենց մոտ եղած հագուստների մի մասը փոխանակել էին մթերքների հետ և սոված չէին մնում:

Հաջորդ օրը մարդկանց նորից շարք կանգնեցրին: Ավետիսը սովորության համաձայն, կանգնեց երկրորդ շարքում՝ բարձրահասակ մի տղամարդու ետևում: Ջավենն իր կողքին կանգնեց: Երբ հրաման եղավ քայլելու, այդ պահին Ավետիսն իրեն գցեց ետևի խոր առվի մացառների մեջ՝ Ջավենի բաձկոնից քաշելով, որն էլ հետևեց ընկերոջը:

Երկուսով այնտեղ գերլարված, կուչ եկած՝ մնացին այնքան, մինչև մութն ընկավ: Իսկ երբ շարունակեցին ճանապարհը, դիմացը մի հսկա քարայր տեսան: Մտնելով այնտեղ՝ ծանոթացան երկու հայ տղամարդկանց հետ: Նրանցից մեկի եղբայրն էր մահացել: Կարիք կար գերեզման փորելու: Ավետիսն ընկերոջ հետ իրենց օգնությունն առաջարկեցին: Նրանք համաձայնվեցին և տղաներին արված աշխատանքի դիմաց վարձատրեցին՝ տալով բաձկոն և կոշիկներ: Կոշիկները ընկերը վերցրեց, իսկ Ավետիսը բաձկոնը թուրքերի հետ պարենով փոխանակեց: Բայց քանի որ վախենում էին բռնվելուց, ցերեկով ավելի շատ թաքնված էին մնում: Սակայն ուտելու բան չունեին: Մթերքները վերջացել էին:

-Մենք ստիպված պիտի մեր թաքստոցից դուրս գանք, -ասաց Ավետիսը:

-Իսկ եթե մեզ բռնե՞ն,- հարցրեց Ջավենը:

-Ուրիշ ելք չունենք: Պետք է ուտելիք հայթայթենք:

Ընկերներով դեռ նոր էին թաքստոցից դուրս եկել, երբ ճանապարհին մի ձիակառք երևաց: Վախից պատանիները կարծես շնչահեղձ եղան: «Միայն թե չբռնվենք», - քթի տակ շշնջաց Ավետիսը:

Ձիակառքը կանգնեց ընկերների մոտ: Այնտեղից դուրս եկավ քառասունն անց թուխ դեմքով մի տղամարդ ու թուրքերենով հարցրեց նրանց.

-Այդ ո՞ր, տղանե՛ր:

Երկուսով վախվորած՝ իրենց նիհար ուսերը վեր քաշեցին:

-Երևի թաքստոցից դուրս եկած փախստականնե՞ր եք, թե՞ սխալվում եմ:

Ավետիսը զլուխն օրորեց, իսկ Ջավենն անշարժ մնաց տեղում:

-Դուք հնձել, կալսել գիտե՞ք,- հարցրեց անծանոթ տղամարդը:

-Այո՛, բեկ է ֆենդի, այգու, դաշտի հետ կապված աշխատանքները լավ կատարում ենք:

-Իսկ կոշիկ կարե՞լ կամ դերձակություն անե՞լ...

-Դրանից էլ գլուխ ենք հանում: Ժամանակին արհեստներ ենք սովորել,- արագ պատասխանեց Ավետիսն իր և ընկերոջ փոխարեն, մինչդեռ միայն դերձակությունից էր հասկանում:

-Շատ լավ, կգա՛ք երկուսդ ինձ մոտ աշխատելու: Մենք Հալեպ կգնա՛նք:

-Իսկ եթե ոստիկանները ստուգե՞ն կառքը և բռնե՞ն մեզ:

-Երբե՛ք: Նրանք ինձ ճանաչում են: Մտե՛ք իմ կառքը,- ասաց թուրք ֆերմերը:

Ավետիսը նայեց Ջավենին և ուրախացած բացականչեց.

-Ասում էի, չէ՞, որ Աստված մեզ կօգնի: Իմ երա՛զը, կախարդական իմ ձի՛ն օգնեց մեզ:

-Ո՞ր կախարդական ձին, քեզ չեմ հասկանում,- շփոթված հարցրեց Ջավենը:

-Ես քեզ հետո կպատմեմ, - և ուսապարկը ձեռքին թռավ կառքի մեջ:

Ջավենը հետևեց նրան: Ավետիսը մտածելով, որ արհեստ ունեցողը նույնիսկ նման ահավոր դեպքերում կարող է ազատվել իր թշնամուց, հիշեց մորը, որն անվերջ ստիպում էր իրեն արհեստ սովորել՝ ասելով. «Արհեստը նույնիսկ փրկում է մարդուն գերությունից»:

Ճանապարհին անցնելով հայկական եկեղեցու ավերակների կողքով՝ Ավետիսը խնդրեց կառքի տիրոջը մի պահ կանգնել այդտեղ: Դուրս գալով կառքից ու գլխահակ կանգնելով կոտրված խաչքարերի առջև՝ նա կամաց աղոթեց. «Աստվա՛ծ իմ, ազգիս ու հայրենիքիս հանդեպ ունեցած իմ սերը ուզում եմ գործով ապացուցել: Դու ևս ականատեսն ես այն դժոխային տեսարանների, որ թուրքերի դաժան ձեռքերով են կատարվում: Օգնի՛ր ինձ լույս սփռելու իմ ճամփին, որ ես կարողանամ իղձս կատարել, վրեժխնդիր լինել իմ հարազատների, իմ ընկերների, բոլոր նրանց համար, ովքեր այլևս չկան: Թո՛ւյլ տուր ինձ պատվով պաշտպանելու իմ տառապած ժողովրդի անունը, թեկուզ նահատակվելու գնով, մանավանդ որ բազմաթիվ մահեր եմ տեսել, որոնք ինձ համար այնքան սարսափելի չեն, որքան ապրելը երկրի վրա որպես խղճուկ քաղաքացի: Տե՛ր իմ, վերջին անգամ ինձ հասի՛ր, քանզի միայն վրեժխնդրության ծարավս հագեցնելը իմ հոգուն անդորրություն կպարզևի: Ես

սասունցիների արյան կանչով պարտավոր եմ արժանապատվորեն, չխնայելով կյանքս, դա անել հանուն արդարության...Եթե չկատարեմ երդումս, պատժի՛ր ինձ, ո՛վ Տե՛ր», - երդման վերջում նա աջ ձեռքը բռունցք արած՝ վերև բարձրացրեց՝ նայելով երկնքին...

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ավետիսի, ինչպես նաև հայ ժողովրդի մի ստվար հատվածի ճակատագիրը կախված էր ցեղասպան թուրք ազգի դաժան կամքից: Երկու տարի շարունակ գտնվելով աքսորի դժոխային տեսարաններով լի ճանապարհներին, նա ամեն օր, ամեն ժամ պայքարել է մահվան դեմ: Իր ժողովրդի հետ համբերատար կրելով ծանր խաչը, հույս ուներ Աստծո ցանկությամբ փրկվել թուրք ոհմակի ճիրաններից: Եվ իրականում նա ոչ թե հայտնվեց միլիոնուկես զոհերի թվում, այլ՝ յաթաղանից փրկված փոքրաթիվ քանակով մարդկանց շարքում:

Ավետիսն ընկերոջ՝ Ջավենի հետ 1916 թ. հայտնվեց Հունաստանում, մի երկրում, որը մինչև 1821-ը լինելով Օսմանյան կայսրության մաս, կրել է թուրքական լծի բոլոր դառնությունները՝ կոտորածներ, ծուլում, արտաքսում պատմական հայրենիքից: Թուրք - հունական հարաբերությունների վրա իր ազդեցությունն է թողել առաջին հերթին Պոնտոսի հույների ցեղասպանության փաստը, որն իրականացվել է երիտթուրքերի և հետագայում քաղաքական դաշտում նրանց փոխարինած քեմալականների կողմից: Ըստ ցեղասպանության համեմատական ուսումնասիրությունների հիմնադիր Ռուդոլֆ Ջոզեֆ Ռումմելի, 1900-1923 թթ. ընթացքում թուրքական տարբեր վարչակազմեր սպանել են 3.500.000-ից մինչև 4.300.000 մարդ. այդ թվում՝ հայերի, հույների և այլ քրիստոնյաների: Այդ հեղինակի «Մահ՝ կառավարության ձեռքով» աշխատության մեջ նշված է Թուրքիայի հայկական և հունական ցեղասպանության զոհերի թիվը, որը կազմում է 2.500.000, որից 2.102.000-ը հայեր են: Նրանցից 1.500.000-ը սպանվել են երիտթուրքերի, իսկ մնացածը՝ Մուստաֆա Քեմալի «ազգայնականների» կողմից: Հույն զոհերի թիվը 750.000 էր: 2.700.000 հույներից, որոնք ըստ օսմանյան վիճակագրության 1910 թվականին ապրել են Թուրքիայում, միայն 1.400.000-ն է հասել Հունաստան: Այդ երկրում հունահայ համայնք կա, որն ստեղծվել էր Թուրքիայում 1895-96 թթ. հայկական ջարդերի հետևանքով, ինչպես նաև 1915 թ. Մեծ Եղեռնից հետո: Հետագայում 1922-23 թթ. հայ գաղթականների թիվը հասել է 120 հազարի: Հայերը կենտրոնացած էին Հունաստանի տարբեր քաղաքներում ու կղզիներում, այդ թվում՝ Աթենքում, Սալոնիկում, Կրետե, Սամոս, Քիոս, Ջավկինթոս և այլ հունական կղզիներում: Հայ գաղթականները հիմնականում գյուղացիներ էին, բանվորներ, արհեստավորներ, առևտրականներ, նաև մտավորականներ կային: Այնտեղ հիմնվեցին հայկական դպրոցներ, կազմակերպվեցին բարեգործական, հայրենակցական, մարզա-մշակութային միություններ: Սկսեցին հրատարակել պարբերականներ: Հունահայ համայնքում գործում էին հայ քաղաքական կուսակցություններ: 1890 թ. Աթենքում հրատարակվել է հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան «Հնչակ»-ը: 1910 թվականից լույս էին տեսնում նաև «Նոր աշխարհ» և «Ազատ օր» թերթերը:

Ավետիսը և Ջավենը տեղավորվեցին գաղթականներին տրամադրված հատուկ կացարաններում: Երկու ընկերներին տրամադրվեց մի փոքրիկ սենյակ, որի լուսամուտներից և պատշգամբից երևում էր Էգեյան ծովը: Նրանք աշխատանքի

տեղավորվեցին Աթենքում գործող գեյթունի գործարանում: Ու քանի որ շաբաթ և կիրակի օրերին չէին աշխատում, սովորում էին հունարեն լեզուն, ծանոթանում էին երկրի տեսարժան վայրերին:

Հունաստանի մայրաքաղաք Աթենքը հունական մշակույթի ամենահզոր քաղաքն էր, հայտնի էր ոչ միայն իր հնագույն հուշարձաններով, թանգարաններով, այլև այնտեղ էր կենտրոնացված արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը: Անկասկած, Աթենքը համարվելով աշխարհում ամենագեղեցիկ ու հեքիաթային քաղաքներից մեկը, առանձնանում էր նաև իր հարուստ ու հետաքրքիր պատմությամբ: Չէ՞ որ մանկությունից շատերը ծանոթ էին հին հունական լեգենդներին և նրանց հերոսներին: Հայտնվելով այդտեղ, սովորական մարդն իրեն ինքնաբերաբար զգում է այդ լեգենդներում տեղ գտած հերոսներից մեկը: Ամեն ինչ չքնաղ է այդտեղ՝ և՛ լեռները, և՛ տաք ծովը: Ու թվում է, թե հունական աստվածների շունչն ամենուր է:

Ավետիսն ընկերոջ հետ կարծես գտնվում էր դրախտում: Այստեղ այլևս թուրքերը հայերին չէին կարող հետապնդել, սպանել, հոշոտել, բռնաբարել: Այստեղ պաշտպանված էր մարդու իրավունքը, ինչ ազգության էլ նա պատկաներ: Եվ գուցե տասնվեցամյա պատանին շարունակեք գեղեցիկ ծրագրերի մասին երազել, եթե ժամանակ առ ժամանակ հայացքը չզարնվեր էգեյան ծովի ալիքներին: Չէ՞ որ այդ նույն ծովի ափերն էին ողողում բռնապետական Թուրքիան, որտեղ գտնվում էր իր ծննդավայրը: Արդեն չորս տարի շարունակ բնակվում և աշխատում էր քաղաքակիրթ այս չքնաղ վայրում, բայց անցյալի դառը հուշերը հանգիստ չէին տալիս նրան: Ու, ամենակարևորը, ասես դավաճանում էր ինքն իրեն, գաղթի ճանապարհին հարազատ դարձած Մելքոն պապին տված խոստումներին: Անընդհատ վերհիշում էր նրա հետ ունեցած իր գրույցները: Ինքն այն ժամանակ խոստացել էր ողջ մնալու դեպքում վրեժխնդիր լինել հարյուր հազարավոր զոհերի փոխարեն: Եվ Մելքոն պապը ոգևորվել էր նրա խոսքերից ու խնդրել էր. «Եթե վրեժխնդիր լինես թուրքերից մեր ժողովրդին այս վիճակին հասցնելու համար, անպայման բարձրաձայնիր այդ մասին: Ուրիշների պես ես էլ շիրիմ չեմ ունենա: Ոչինչ, իմ անունով մոմ կվառես մեր եկեղեցիներից մեկում և կաղոթես ինձ համար: Աղոթքդ ինձ կհասնի»: Ու եթե տարիներ շարունակ Ավետիսն իր երազների մեջ հաճախ տեսնում էր նրան, առաջվա պես սիրալիր գրուցում, խորհուրդները լսում, վերջերս արդեն իր երազներում պապն այցի չէր գալիս: Հավանաբար զգում էր, որ իր պատգամը չէր կատարել: Չէր տեսնում նաև հարազատներին, մորը, քույրերին: Ինքը փրկվեց կոտորածից: Իսկ իր հարազատները... Գուցե նրանք էլ իր պես փրկվել են: Մի՞թե նրանց ճակատագիրն իրեն չէր հետաքրքրում: Չէ՞ որ ինքը, որ ապրում էր գեղեցիկ ներկայով, նաև անցյալ է ունեցել: Ինչպե՞ս պիտի շարունակեք առաջ նայել, երբ անցյալի հետ պարտքերը չի փակել:

Ավետիսը թերթերից տեղեկացել էր, որ ավարտվել է Առաջին համաշխարհային պատերազմը, որ Եղեռնի կազմակերպիչների, երիտթուրքերի կուսակցության պարագլուխների ու նախարարների դատավարությունը սկսվել է 1919թ. ապրիլի 27-ին և ընդհատումներով շարունակվել մինչև հունիսի 26-ը: Դատավճիռը հրապարակվեց 1919թ. հուլիսի 5-ին: 31 հանցագործներից 4-ը՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, իսկ մնացած 27-ից ոմանք՝ տարբեր տարիների ազատազրկման, ոմանք էլ ազատվեցին հանցանշանների բացակայության պատճառով: Սակայն Թուրքիան չէր հանդարտվել, շարունակում էր կռիվները Արևելյան Հայաստանում, թեկուզ 1918 մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը, քեմալական Թուրքիան չէր ուզում հրաժարվել հայ ժողովրդին բնաջնջելու ծրագրից: Կռիվներ էին մղվում Ջանգեզուրում, Արցախում և այլուր: Դեռ 1919թ. զորավար Անդրանիկը կոչ էր անում աշխարհի հայությանը՝ միանալ իր զորքին: Արդեն 1920 թվականն էր, բայց մարտերը շարունակվում էին: Ու՞մ էր սպասում Ավետիսը...

Ավետիսն անհանգիստ գիշեր անցկացրեց: Այս անգամ երագում հայրն էր հայտնվել ու դժգոհել էր որդուց, թե ինչու հարազատներին չի փնտրում, ինչու է փափկակյաց կյանք վարում: Հետո նույնիսկ հանդիմանել էր. «Որդի՛ս, հիշի՛ր, որ դու պետք է արժանապատիվ ապրես: Թուրքական իշխանությունները հայաշատ վայրերը դարձրել են գերեզմանոցներ, բայց դու ինքդ մի թուրք սպանե՞լ ես: Ո՛չ: Դու մենակ չես կարող ոչինչ ձեռնարկել, սակայն ուղիներ փնտրիր վրեժի լուծելու թուրք ասկյարներից: Եղի՛ր անողոք նրանց հանդեպ հանուն ինձ, հանուն հազարավոր զոհերի հիշատակի»:

Ավետիսը փորձեց խորհուրդ հարցնել հորից, բայց նա կարծես թե վիրավորված հեռացավ: Խեղճ պատանին զարթնեց քնից ու ծանր մտքերով խորասուզված դիմավորեց լուսաբացը: Իրեն այնքան մեղավոր զգաց, այնպես անօգնական այն ծույլ աշակերտի պես, որ դժվարությամբ էր հասկանում տրված թեմայի բովանդակությունը: Եվ նա հանկարծ ըմբոստացավ ինքն իր դեմ, որ ձեռքերը ծալած նստել էր հանգիստ: Մի՞թե ինքն այդպես եսասեր էր մեծացել: Սակայն հետո մտաբերեց, թե գաղթի ճանապարհին ինչքան մարդկանց է օգնության հասել, վերջին պատառ հացը նրանց հետ կիսել: Իսկ այդ մի կտոր հացը նա հեշտությամբ չէր վաստակել, այլ թուրքերի մոտ նվաստացել էր, ամեն տեսակի սև գործ էր արել, այդ թվում գերեզմանափորի դաժան աշխատանքը, որ ինքն էլ սովից չմահանար: Եվ Աստծո կամոք ողջ էր մնացել: Սակայն և՛ իր ուսումն էր կիսատ թողել, և՛ հայկական եկեղեցու ավերակների առջև ընկած կոտրված խաչքարի մոտ տված խոստումը: Այն է՝ ողջ մնալու դեպքում իր ազգի հանդեպ ունեցած սերը գործով ապացուցել: Իսկ ե՞րբ է գործելու ժամանակը...

Ջավենն արդեն արթնացել էր քնից ու վեր կացավ տեղից երկուսի համար սուրճ պատրաստելու: Սովորաբար ընկերներից ով շուտ էր արթնանում, նա էր այդ գործը կատարում: Երբ սուրճը պատրաստ էր, ներս բերեց սենյակ: Ավետիսը դեռ շարունակում էր անհանգիստ շուռումուռ գալ անկողնում:

-Ընկեր, վեր կաց, սուրճը եփել եմ,- Ավետիսին դիմեց Ջավենը:

Ավետիսը ծուլորեն շրջվեց և թախծոտ հայացքով նայեց ընկերոջը:

-Իսկ ծխախոտ՞ը:

-Բայց դու հազվադեպ ես ծխում: Քեզ հետ ի՞նչ է պատահել:

-Եթե դարակում մի հատիկ մնացել է, տո՛ւր ինձ:

Ջավենը երկիմաստ հայացք ձգելով նրան՝ կողքի դարակից հանեց ծխախոտի տուփը, իսկ սառնարանից նարնջի հյուսթ:

-Վերցրո՛ւ, այսօր քեզ ամեն ինչ կարելի է: Ես իրավունք չունեմ ցանկությունդ չկատարելու, որովհետև քո ծննդյան օրն է:

-Բոլորովին մոռացել էի,- մեղավոր ժպտաց Ավետիսը:

Այնինչ Ջավենը սուրճը դնելով սեղանին, նաև կողապահարանից գեղեցիկ կաշվից մի գոտի հանելով՝ մեկնեց ընկերոջը:

-Ի՞նչ լավ նվեր է, շնորհակալ եմ, Ջավեն, -ասաց Ավետիսը և մատներով շոշափելով գոտին՝ խորը արտաշնչեց:

Ջավենը, որ հետևում էր նրա շարժումներին, կարծեց, թե նա գոտին չէր հավանել:

-Դեմքիդ արտահայտությունը մի տեսակ փոխվեց: Չհավանեցի՞ր նվերը:

-Շատ լավն է, ընկերս: Պարզապես գոտին վերցնելով հանկարծ հիշեցի որբանոցի մեր ընկերներից Գարեգինին: Երբ ես հիվանդացա և բարձր ջերմությամբ պառկած էի, սիրտս մածուն ուզեց: Նա մեզ հսկող ոստիկաններից ծածուկ գնաց իր թանկարժեք գոտին վաճառեց և մածուն բերեց ինձ համար: Ափսո՛ւ, որ նա էլ, քույրն էլ հիվանդացան ու մահացան:

- Ես էլ կմահանայի, եթե քեզ չլսեի: Շատերը սառը ջուր խմեցին և աղիքային հիվանդություն ստացան, իսկ դու ասացիր, որ միայն տաք թեյ խմեմ, -ընկերոջ հետ թախծեց Ջավենը: -Բայց այսօր միգուցե չտխրեմք, քանի որ քո քսանամյա տարեդարձն է և այդ գոտին միակ նվերը չէ: Ես նաև քեզ համար ձեռքի ժամացույց եմ գնել: Վերցրո՛ւ այն:

-Ինչո՞ւ ես այդքան շռայլություն արել: Գոտին հերիք էր:

Բացելով տուփը՝ Ավետիսը, այնուհանդերձ, հավանեց այն և կապեց թևին:

-Հիմա մտածիր, թե ում ենք հրավիրելու քո տարեդարձին: Կգնանք որևէ սրճարան և այնտեղ կնշենք,- ասաց Ջավենը:

-Մենք երկուսով կնշենք, ոչ մեկին չեմ ուզում հրավիրել: Լուրջ ասելիք ունեմ քեզ: Այսօր կիրակի է: Սուրճի խմիր և պատրաստվիր, միասին կգնանք Աթենքի իմ սիրած վայրերից մեկը:

Ավետիսի նախընտրած վայրերից մեկը Աթենքի շրջաններից Պլանկան էր: Այդտեղ փողոցներում աճեցրած զեյթունի, մանդարինի ծառերը յուրահատուկ շուք էին հաղորդում ամբողջ տարածքին: Մարդիկ նստում են բացօթյա սրճարաններում, սուրճ են խմում, զրուցում կամ էլ գինի ըմբռնում: Պլանկայի շրջանը ձգվում է Մոնաստիրակի կամ Սինտագմա հրապարակի միևնույն ուղղությամբ: Հատկապես հրաշալի է երեկոյան հեռվից հիանալ Ակրոպոլիսով: Այն հին միջնաբերդ է, որը գրավում է զբոսաշրջիկներին: Սովորաբար այնտեղ մարդիկ շատ են հավաքվում:

Արդեն 1920թ. փետրվար ամիսն էր: Բնականաբար, փոքր-ինչ ցուրտ եղանակին ավելի հարմարավետ էր փակ սրճարանում նստելը: Երբ ընկերներով ներս մտան, դասական դանդաղ երաժշտություն էր հնչում: Պատերին երկրի գեղեցիկ բնապատկերներն էին ծովի անդրադարձով: Ոսկեգույն շրջանակի մեջ փակցված էր հունական սիրո և գեղեցկության աստվածուհու՝ Ափրոդիտեի պատկերը: Ընդհանրապես Հունաստանում հունական դիցաբանության աստվածների անուններով կան վայրեր, փողոցներ, տեղանուններ: Դա հույն ժողովրդի քարտ-բլանշն էր:

Սրճարանը կարմիր կահույքով էր կահավորված՝ բաց վարդագույն և ճերմակ վարագույրներով: Այս ընդհանուր մթնոլորտը տրամադրող էր ռոմանտիկ ու սիրով հագեցած ժամեր անցկացնելու համար: Երբ ընկերներով տեղավորվեցին սրճարանի անկյուններից մեկում, նրանց մոտեցավ երիտասարդ մատուցողը: Ճաշացանկից ընտրելով իրենց նախընտրած ուտեստները, նաև մեկական գավաթ գինի պատվիրեցին: Մատուցողը գինի բերեց մինչև պատվերը բերելը:

-Քո կենացը, Ավետի՛ս, թող քո քսանամյա գարունները հնգապատկվեն: Քեզ երջանիկ բախտ եմ կամենում,- ժպտաց Ջավենը գինու բաժակը մոտեցնելով ընկերոջ բաժակին:

-Շնորհակալ եմ, Ջավեն, քեզ հետ միասին:

Ընկերները գինին կիսով չափ դատարկեցին:

-Մինչև ուտելիքը կբերեն, դու քո մտքինը ասա՛: Ի՞նչ կարևոր ասելիք ունես, -Ջավենը հարցական հայացքով նայեց ընկերոջը:

-Մենք պետք է Թուրքիա վերադառնանք, -առանց նախաբանի հայտարարեց Ավետիսը: -Կներես, ես պիտի վերադառնամ, դու կարող ես մնալ այստեղ: Պետք է որոնեմ հարազատներիս: Գուցե ողջ են մնացել: Խարբերդի որբանոցում էլ քույրս է՝ Սրբուհին: Վաղը կգնամ գործարան, վերջնահաշիվս կպահանջեմ ու առանց հապաղելու կմեկնեմ:

Ջավենը մի պահ մռայլվեց: Նա չհասկացավ Ավետիսի այս հանկարծակի որոշման պատճառը:

-Կարծում ես հիմա անվտանգ է Թուրքիայում մեզ՝ հայերիս համար: Թեև Եղեռնի կազմակերպիչներին դատել են, բայց մյուսները մինչև վերջին հայը չմաքրեն երկրից, չեն հանգստանա:

-Զգիտեմ իսկապես ինչքանով է անվտանգ այնտեղ, բայց մենք այժմ հունական անձնագրեր ունենք և օտարերկրյա քաղաքացիներ ենք համարվում: Ջավեն, հասկացիր, ես գլուխս բարձին հանգիստ դնել չեմ կարող, մինչև որևէ տեղեկություն չունենամ նրանցից: Իմ կամքը քեզ չեմ ուզում թելադրել: Որոշումը քոնն է: Դու իմ միակ հավատարիմ ընկերն ես, ինչ որոշում էլ կայացնելու լինես, համաձայն եմ քեզ հետ,-ասաց Ավետիսը:

-Որտեղ էլ մեկնես, միշտ քեզ հետ կլինեմ: Ծնողներս սպանվել են, ավագ եղբայրս զինապարտ էր, թուրքերը տարան և բոլոր հայ զինվորներին կացնահարեցին: Միայն ես եմ փրկվել մեր ընտանիքից, -թախծեց Ջավենը գինու բաժակից ևս մի կում անելով:

-Գիտեմ: Դու ոչ միայն իմ ընկերն ես, այլև կրտսեր եղբայրս, քանի որ քեզնից երկու տարով մեծ եմ: Մենք միասին ծանր ու դաժան օրեր ենք անցկացրել, ու ես չեմ պատկերացնում, թե ինչպես քեզ մենակ պիտի թողնեմ,-բայց Ավետիսը չուզեց մինչև վերջ խոսել իր ծրագրերից, որի մեջ մտնում էր նաև վրեժխնդրության գործը:

Քիչ անց մոտեցավ մատուցողը՝ բերելով ուտելիքները: Տղաները ևս մեկական բաժակ գինի պատվիրեցին գուցե հրաժեշտ տալու հյուրընկալ Հունաստան երկրին:

Մի քանի օր անց Ավետիսը և Ջավենը Աթենքից ինքնաթիռով հասան Պոլիս: Մի պահ նա դարձյալ մռայլ հուշերով տարվեց, քանի որ հենց այդ քաղաքից թուրք ոստիկանները իրեն բռնեցին ու քշեցին, մինչդեռ ինքը թափառաշրջիկ չէր, ոչ էլ գող, աշխատում էր սրճարանում և մնալու համար կացարան ուներ: Այն ժամանակ նա տասնչորս տարեկան էր: Նրա միակ մեղքը հայ լինելն էր:

-Հիմա ո՞ւր պիտի գնանք,-նրան ծանր մտքերից հանեց Ջավենը:-Գուցե՞ հորեղբորդ ես ուզում տեսնել:

-Ոչ: Նրան հետո կայցելենք: Այժմ մի կառք կվարձենք ու դեպի նավահանգիստ կգնանք: Շոգենավով կմեկնենք Կիրասոն քաղաք, այնտեղից էլ կառքով Խարբերդ,- պատասխանեց Ավետիսը և ձեռքով արեց կողքից ընթացող կառքին:

Ողջ ճանապարհին որոշ հուշեր հանգիստ չէին տալիս Ավետիսին: Այդ ընթացքում ընկերոջ հետ հազիվ հատուկենտ բառեր փոխանակեցին: Իսկ շոգենավում ուղևորները հիմնականում թուրքեր էին, որովհետև միայն խոսակցությունները թուրքերեն լեզվով էին հնչում այս կամ այն կողմից: Ցեղասպանությունից հետո թուրքերի հանդեպ ատելությունը պատանու հոգում այնքան էր խորացել, որ հիմա խորշանք էր զգում նրանց կողքին անգամ նույն տախտակամածին կանգնելիս, քանի որ նրանց ձեռքերով ավերվել, մորթվել, ապականվել էր ամեն ինչ, ինչ հայկական էր: Բայց չէ՞ որ Թուրքիան նաև հայերի հայրենիքն է: «Պղծելով ամեն բան, վաղը նրանք կեղծ պատմություն էլ կհորինեն, որ իրենց երկրում սակավաթիվ հայեր էին ապրել», -մտքում ինքն իրեն խոսեց Ավետիսը:

Քիչ անց ընկերներով լքեցին տախտակամածը և փակվեցին իրենց խցում մինչև Խարբերդ հասնելը:

1915 թվականի հայկական սպանդի ընթացքում առավել տուժած նահանգներից էր Խարբերդը: 37 հազար քառ. կմ տարածքով այդ նահանգում Եղեռնից առաջ բնակվում էր 306 հազար մարդ, որոնցից 115 հազարը հայեր էին: Խարբերդ քաղաքում հայերի թիվը 20 հազար էր, Մալաթիայում՝ 5 հազար, Արաբկիրում՝ 5 հազար և այլն: Հայերի թվաքանակն ըստ Կ.Պոլսի պատրիարքարանի տվյալների, մոտ 163 հազար էր: Նրանք ունեին 73 դպրոց՝ 5780 աշակերտների համար:

1919 թվականի սեպտեմբերի 17-ին Խարբերդ ժամանեց գեներալ Ջ.Հարբորդի առաքելությունը: Հանդիպելով ամերիկացի քարոզիչներին, գեներալը հարուստ տեղեկություններ ստացավ ամբողջ նահանգի մասին: Ըստ այդ տեղեկությունների, նահանգում մնացել էին 25 հազար հայ քրիստոնյաներ և մոտավորապես նույնքան էլ՝ բռնի մահմեդականացված հայեր:

Խարբերդում Ավետիսը Ջավենի հետ նախ գերմանական որբանոց գնացին: Երբ նա սրտի դողով մոտեցավ որբանոցի դարպասին, զարկերակն անհանգիստ սկսեց տրոփել: Տարիներ առաջ, նախքան Պոլիս մեկնելը, երբ որպես դերձակ էր աշխատում Խարբերդում, երեք անգամ այցելել էր քրոջը՝ Սրբուհուն: Նրա համար միշտ քաղցրավենիք էր տանում: Վերջին այցելության ժամանակ քույրը հրաժեշտից առաջ հարցրեց.

-Ավետիս, ե՞րբ է մայրիկն ինձ այստեղից տանելու: Չեմ ուզում որբանոցում մնալ: Ես մեր գյուղն եմ ուզում գնալ: Շատ եմ ցանկանում մայրիկի մոտ լինել:

-Շուտով, քույրիկս, մի քիչ էլ համբերիր: Անպայման քեզ կտանենք այստեղից,- պատասխանել էր Ավետիսը՝ հագիվ հուզմունքը թաքցնելով:

Նա ինչպե՞ս քրոջը բացատրեր, որ մայրն այդ քայլին դիմել էր, որ երեխան սովամահ չլիներ: Հոր մահից հետո իրենց ընտանիքի նյութական վիճակը բավականին ծանր էր: Մայրը ուրիշների տներն էր մաքրում, լվացք անում, այգի մշակում, որպեսզի իր երկու քույրերին կերակրեր, որոնցից մեկը երեք տարեկան էր, մյուսը՝ ութ:

-Ո՞ւմ եք ուզում,- պատանուն հարցրեց որբանոցը հսկող պահակը:

-Ցանկանում եմ քրոջս տեսնել: Գուցե կանչե՞ք դաստիարակչուհուն:

Քիչ անց մոտեցավ միջին տարիքի մի կին և Ավետիսին հարցրեց.

-Դուք այստեղ առաջին անգամ՞ն եք այցելում: Ձեր դեմքն ինձ ծանոթ չէ:

-Ո՛չ: Եղել եմ այստեղ մի քանի անգամ, բայց Եղեռնից առաջ էր: Քրոջս եմ փնտրում: Նրա անունը Սրբուհի է: Նա հիմա տասնմեկ տարեկան է:

Անծանոթ դաստիարակչուհին գլուխը բացասական շարժելով՝ ուղեկցեց Ավետիսին տնօրենի մոտ: Եվ մեծ եղավ նրա հիասթափությունը, երբ իմացավ, որ քրոջը որդեգրել են ու տարել Գերմանիա:

-Կներե՞ք, բայց ոչնչով չեմ կարող ձեզ օգտակար լինել,- կարեկցանքով այս անգամ պատասխանեց որբանոցի տնօրենը:- Կարևորն այն է, որ քույրիկդ ողջ է մնացել և չի մահմեդականացվել: Սրբուհուն գերմանացի ամուսիններ են որդեգրել: Դուք հնարավորություն ունեք փնտրել ու գտնել նրան, ինչը չեն կարող անել շատ-շատերը:

Ավետիսը գլխահակ դուրս եկավ որբանոցից: Ջավենը նրան սպասում էր դարպասի մոտ: Հեռվից տեսնելով ընկերոջը, նա իսկույն ևեթ կռահեց, որ քրոջը չէր գտել այնտեղ:

-Մի՛ հուսահատվիր, երբ կրկին Հունաստան մեկնենք, այնտեղից կկապվենք գերմանական համապատասխան հիմնարկությունների հետ: Գուցե հաջողվի գտնել նրան,- Ջավենը փորձեց հուսադրել ընկերոջը:

-Սրբուհուն գերմանացի ամուսիններ են որդեգրել: Նա գերմանական կրթություն ու դաստիարակություն կստանա ու կմոռանա մեզ, -պատասխանեց Ավետիսը: Գնանք դեպի շուկայի կողմերը, որտեղ սովորաբար կառքեր են լինում: Պետք է շուտափույթ մեկնենք մեր գյուղ:

Շուկայում Ավետիսի աչքովն ընկավ գետնին ընկած Աստվածաշունչը: Փոքր աթոռին նստած թուրք տղամարդը գրքի էջերից պոկում ու դրա մեջ արևածաղիկ էր լցնում ու վաճառում: Նա մի պահ քայլերն ուզեց ուղղել դեպի մանրավաճառը, քացով խփելու նրան, բայց հետո զսպեց իրեն: Ավետիսն ականատես էր եղել, թե ինչպես էին թուրքերը ավիրել հայկական եկեղեցիները, թալանել գույքը, ջարդուխուրդ արել խաչքարերը, վառել հին մատյանները, ծաղրել կրոնը, խեղճ ու անօգնական գաղթականներին հրամաններ

հնչեցնելով՝ «Իսլամացե՛ք, հայեր»։ Բայց նրանք, ովքեր սովի և հրի էին մատնված գողգոթայի ճամփաներին, արհամարհում էին թուրք մունետիկների կոչերը։

Նա հասկացավ, որ իրավունք չունեի անմիտ քայլ անել, քանի որ անելիքներ ունեի և ծրագիր, որ պիտի անպայման իրականացնեի։ Պարզապես Հունաստանից վերադառնալուց առաջ չէր պատկերացնում, թե ինչքան դժվար կլինեի իր համար հայտնվել հարազատ վայրերում, որտեղ կիսատ էր թողել ուսումը Խարբերդի քոլեջում, մի քաղաքում, ուր անգամ դերձակություն էր սովորել ու աշխատել, որտեղ ապրում էին իր ընկերներից մի քանիսը, տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ։

Ավետիսը շուկայի ներսում կառք չտեսնելով, ուզեց դուրս գալ ու մերձակա տարածքում որոնել կառապանների, երբ հանկարծ ինչ-որ մեկը ձայն տվեց իրեն։ Այդ ձայնը անպամած երկնքում որոտի էր նման։ Շրջվեց։ Կանչողը տարեց կին էր, որ հացաբուլկեղեն էր վաճառում։ Նա Ջավենի հետ մոտեցավ և իսկույն ևեթ ճանաչեց տարեց կնոջը, որը դուրս գալով կրպակից՝ փաթաթվեց Ավետիսին՝ արցունքն աչքերին։

-Ճանաչեցի՞ր ինձ, տղա՛ս,- հարցրեց նա։

-ԻՆչպե՞ս կարող էի չճանաչել, Մայրանուշ հորքու՛ր,- ասաց Ավետիսը, նկատելով, որ նրա գլխին իր նվիրած գունավոր ու մաշված գլխաշորն էր, որ ինքը գնել էր առաջին աշխատավարձն ստանալուց հետո։ Նույնպիսի գլխաշոր գնել էր նաև իր մոր համար։ Մայրանուշը տարիներ առաջ էլ իրեն այդպես էր դիմում։

Այդ պահին նրանց մոտեցան երկու թուրք ոստիկաններ։ Ճանաչելով հաց վաճառող հայ կնոջը, նրանց համար դժվար չէր կռահելը, որ գրկախառնվողը երիտասարդ հայ պատանի էր։ Չէ՞ որ խարբերդցի տղամարդկանց, սկսած յոթ տարեկանից, հավաքել ու սպանդի էին ենթարկել։ Ոստիկաններն առհասարակ զգուշանում էին նրանցից, ովքեր Կովկասի ռազմաճակատներում կռվել էին և զենքեր գործածել գիտեին։

-Ո՞վքեր եք և ի՞նչ եք անում այստեղ,- հարցրեց ոստիկաններից մեկը՝ դիմելով տղաներին։

-Մենք Հունաստանի քաղաքացիներ ենք։ Այստեղ ենք եկել մեր հարազատներին գտնելու նպատակով,- պատասխանեց Ավետիսը։

-Խիստ կասկածում եմ, որ կգտնեք նրանց,-գավեշտով ասաց երկրորդ ոստիկանը։

-Ցույց տվեք ձեր փաստաթղթերը,- հրամայեց նույն ոստիկանը։

Պատանիները ներկայացրին իրենց անձնագրերը։ Թուրք ոստիկանը խոժոռ դեմքով բացեց անձնագրերը, ստուգեց և տեսնելով, որ չեն խաբում, հրամայական տոնով հարցրեց.

-Ո՞ր եք ուզում գնալ։

-Ղատեն գյուղ։

-Ղե, ուրեմն, ռադներդ քաշեք այստեղից,-փաստաթղթերը վերադարձնելով՝ կոպտեց ոստիկանը, և նրանք հեռացան։

Հացավաճառ Մայրանուշը շվարել ու կանգնած էր մնացել տղաների կողքին։ Երբ ոստիկանները հեռացան, նա դիմեց Ավետիսին.

-Հիմա կգնանք մեր տուն, մի կտոր հաց կուտեք ու կշարունակեք ճանապարհը։ Մերժել չկա։ Ջավենն այնպիսի հայացքով նայեց Ավետիսին, որ նշանակում էր՝ համաձայնվիր, մի քիչ էլ շունչ կառնենք։

-Լավ,-արձագանքեց Ավետիսը,-միայն թե, Մայրանուշ հորքուր, ի՞նչ մթերքների կարիք ունեք։

-Ամեն ինչ ունեմ։ Մի՛ անհանգստացիր,-նա շրջվեց՝ կողպեքով փակելու խանութի դուռը։

-Ջավեն, նրա մոտ մնա, իսկ ես հենց մոտակայքից միրգ ու բանջարեղեն վերցնեմ,- և Ավետիսը առանց պատասխանի սպասելու՝ քայլերն արագ ուղղեց խանութների կողմը։

Քիչ անց նա եկավ լիքը պայուսակը ձեռքին ու երեքով միասին հասան տիկին Մայրանուշի միհարկանի սեփական տանը։

-Մայրանուշ հորքուր, բայց ձեր տունը երկհարկանի էր, ինչքան հիշում եմ,-նկատեց Ավետիսը:

-Լավ ես հիշում: Իմ տունը տվեցի քրդերին, իսկ ես տեղափոխվեցի նրանց տուն: Դե, նրանք մեծ ընտանիք են, ես մենակ եմ ապրում: Ու՞մ է պետք հսկայական տարածքը:

Ջավենն իմացավ, որ Մայրանուշը Ավետիսի հեռավոր ազգականն էր, ում տանը որոշ ժամանակ նա ապրել էր և աշխատել:

-Իսկ Հայրապետ պա՞պը,- Ավետիսը հարցական դեմքն ուղղելով Մայրանուշ հորաքրոջը՝ նայեց սենյակի պատից կախված նրա լուսանկարին:

-Նա վաղուց չկա: Կոտորածի տարիներին երկուսով թաքնվել էինք ծանոթ քրդերի տան նկուղում,- հառաչեց տանտիրուհին:

-Այսինքն՝ այս տան նկուղում: Ճի՞շտ հասկացա,- Ավետիսի հետաքրքրասիրությունը նորից շարժվեց:

-Այո՛: Նրանք մեզ համար և՛ ուտելիք էին բերում, և՛ ջուր:

-Քրդերը հենց այնպես չէին օգնի ձեզ: Դուք էլ տվեցիք ձեր ոսկյա զարդերն ու թանկարժեք իրերը, նաև վերջում՝ երկհարկանի տունը:

Տիկին Մայրանուշը մի ակնթարթ լռեց: Նա հասկացավ, թե ինչքան շատ է հասունացել Ավետիսը:

-Քեզնից ոչինչ չեմ կարող թաքցնել,- ասաց տարեց կինը,- դու գաղթի ճանապարհներին անպատմելի դեպքերի ես ականատես եղել և միանգամայն տեղին եզրահանգումներ ես անում: Միևնույն է, Եղեռնից հետո թուրքերը և քրդերը թալանեցին հայերի գույքը: Թուրքական կառավարությունն անգամ հանձնաժողովներ էր ստեղծել, որոնք զբաղվում էին լքյալ գույքի վաճառքով: Հայկական մշակութային արժեքներն ամենաէականագին գնով էին վաճառվում:

-Սարսափելի է այդ մասին լսելը:

-Չեմ ուզում ոչինչ հիշել, որդիս:

Ավետիսի սիրտը ճմլվեց նրա խոսքերից, երբ իրեն «որդիս» անվանեց: Նրանց տանն ապրելու ընթացքում էլ միշտ իրեն այդպես էին դիմում ամուսիններով: Գուցե Ամերիկայում վաղուց բնակվող միակ որդու կարոտն էին առնում:

-Ձեր որդուց՝ Սուրենից, ի՞նչ տեղեկություն ունեք,-հարցրեց Ավետիսը:

-Ոչ մի տեղեկություն: Ամբողջ աշխարհը գիտեր, թե Թուրքիայում ինչպես են կոտորում հայերին: Նա պիտի մեզնով հետաքրքրվեր, բայց...,-նա թաշկինակով սրբեց թացացած աչքերը:

-Կներեք ինձ, որ ձեզ ցավացրի: Ախր այն ժամանակ էլ, երբ ձեր տանն էի ապրում, ձեր հարսին նամակ էր ուղարկում, բայց ձեզ ոչ մի տող: Հետո նրան իր մոտ կանչեց: Չէ՞ որ ես ձեզ մոտ էի, երբ ձեր հարսը ճամպուկը պատրաստեց, ծնողները եկան նրա ետևից ճանապարհելու դեպի Ամերիկա:

-Այո՛, այդպես էր, -գլուխը տխուր թափահարեց Մայրանուշը:

-Նրան ճանապարհելուց հետո երեքով նստեցինք բաց պատշգամբում և ինքնատեղով պատրաստված թեյ խմեցինք: Ես էլ ձեզ հետ շատ տխրեցի:

Ավետիսի ուղեղում չէր տեղավորվում միայն այն միտքը, թե ինչպես կարող է միակ որդին մոռանալ ծնողներին, չհետաքրքրվել նրանցով, հոգ չտանել նրանց մասին: Չէ՞ որ ինքն էլ կարող էր մորը թողնել միայնակ և մեկնել Ամերիկա՝ իր հորական պապի մոտ, բայց չգնաց: Իր հարազատ գյուղը լքեց ու մեկնեց Պոլիս միայն սովորելու նպատակով և հաճախ մորը նամակներ էր ուղարկում: Միայն ափսոսում էր, որ քիչ էր վաստակում, և նյութապես չկարողացավ մորն ու քույրերին աջակցել:

-Այն ժամանակ քանի՞ տարեկան էիր: Կարծեմ տասնչորս:

-Ո՛չ: տասներեք էի: Հետո մայրիկը չէր հասցնում դաշտի աշխատանքները: Գնացի օգնելու նրան ու մնացի գյուղում մինչև Պոլիս մեկնելս:

- Ձեր ընտանիքից գոնե դու փրկվեցիր, որդի՛ս:

-Աստված օգնեց ողջ մնալու, որ գուցե մի գործով օգտակար լինեմ ազգիս,-պատասխանեց Ավետիսը:

Տիկին Մայրանուշը նրա խոսքերից վախից կուչ եկավ:

-Չէ՛, գործ չունես թուրքերի հետ: Նրանք ավելի շուտ կվերացնեն քեզ, քան դու որևէ գործ կծեռնարկես, մանավանդ որ մեր հայերի մեջ լրտեսներ շատ կան:

Ջավենը լուռումունջ հետևում էր նրանց գրույցին: Այդ ընթացքում էլ ճաշը տաքացել էր: Տիկին Մայրանուշը նրանց խաշած լոբի և բրնձով փլավ հյուրասիրեց: Ավետիսի բերած բանջարեղենը և միրգն էլ մաքրեց, դրեց սեղանին: Պատանիները լվացվելուց հետո նստեցին սեղանի շուրջ:

-Հանգիստ ճաշե՛ք: Ես հիմա թեյնիկն էլ կտաքացնեմ: Հետո կխնդրեմ ջորեպան հարևանիս, որ ձեզ գյուղ հասցնի: Ավետի՛ս, միայն խոստացի՛ր, որ որևէ լավ լուր իմանալու դեպքում ետդարձի ճանապարհին անպայման ինձ կհանդիպես:

-Իհարկե, Մայրանուշ հորքո՛ւր...Խոստանում եմ:

Դատենը Արևմտյան Հայաստանի Խարբերդի գավառի 58 գյուղերից մեկն էր: Այն գտնվում էր Խարբերդ քաղաքից դեպի հարավ՝ տասնչորս կիլոմետր հեռավորության վրա: Բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, անասնապահությունը և արհեստներն էին: Դատենն ուներ Ս.Աստվածածին անունով եկեղեցի: Գյուղում գտնվում էր Դատեն բերդը, որը շրջափակված էր բլուրներով: 20-րդ դարի սկզբի բերդն ու նրա պարիսպներն ամբողջապես փլված էին: Եկեղեցուն կից գործում էր հայկական դպրոց, որն ուներ հարյուր աշակերտ: Այն գտնվում էր գյուղից դուրս, որի կողքին կար աղբյուր: Դատենի չորս կողմը թուրքի և քրդի գյուղեր էին: 1915թ. ապրիլին թուրք ոստիկանները գյուղ են մտել զենք ու զինամթերք որոնելու: Հայերի մեծ մասը ստիպված է եղել տեղացի մահմեդականներից զենք գնել և հանձնել, որպեսզի տանջանքների չենթարկեն իրենց: Այնուհետև հաջորդել են հայերի ձերբակալությունները և սպանությունները: Հուլիսի 3-ին հայ բնակչությունը տեղահանվել է: Հարևան շրջաններից քրդերն առիթից օգտվելով՝ մասնակցել են թալանին և հափշտակություններին: Թուրքերը քանդել են Դատենի հայկական եկեղեցին և դպրոցը: Գյուղը վերանվանել են Կալա Քոյ:

Ավետիսը Ջավենի հետ երբ կառքով հասան գյուղ, անսպասելի հուզմունքից նրա սիրտն սկսեց արագ բաբախել: Ջգաց, թե որպիսի անսահման սիրով էր կապված իր ծննդավայրին և որ գյուղի, հարազատների, ընկերների հետ կապված հուշերը նրան ուղեկցում էին թե՛ գաղթի ճանապարհներին, թե՛ Հունաստանում: Նա հասկացավ, որ այդպես կլինի միշտ, քանզի աշխարհում չկա ծննդավայրից, սեփական օջախից և դրանց հետ կապված հուշերից առավել թանկ:

-Հիմա ո՞ր ուղղությամբ պիտի գնանք,- երբ հասան գյուղ՝ հարցրեց ջորեպանը:

-Քշի՛ր դեպի աջ՝ իմ հայրական տան կողմը,-պատասխանեց Ավետիսը, թեև սրտի կսկիծով զգում էր, որ այնտեղ հավանաբար կան թուրքերն են բնակվում, կան էլ քրդերը:

Բայց դա այլևս ոչ մի նշանակություն չուներ: Ինքը շատ լավ գիտեր, որ տեղահանվել ու բնաջնջվել է Խարբերդի գյուղերի բնակչությունը, որ գետնին են հավասարեցրել ողջ Խարբերդի դաշտը: Երբ տեղ հասան և Ավետիսն ընկերոջ հետ իջավ կառքից, կառապանը հարցրեց.

-Նորից ե՞տ եք վերադառնալու: Սպասե՞մ ձեզ, թե՞...

-Այո՛: Սպասի՛ր մեզ:

Քուրդ ջորեպանը նույնպես իջավ կառքից ջուր տալու անասուններին: Մոտեցող կառքի ծայնից և տղամարդկանց խոսակցություններից նոր տանտերերը դուրս եկան տնից: Եվ ի զարմանս Ավետիսի՝ տանտերն իրենց տան մտերիմներից էր՝ քուրդ հովիվ Վալին, ով իրենց ոչխարներն էր տանում արածեցնելու: Նա առաջ եկավ ու ճանաչելով Ավետիսին՝ պինդ ողջագուրվեց նրան:

-Ինչ լավ է, որ դու ողջ ես մնացել, Ավետիս: Հավատա՛, ուրախությանս չափ ու սահման չկա: Նե՛րս համեցեք,- ասաց նա՝ հրավիրելով հյուրերին:

-Անասուններին կարո՞ղ եք ջուր տալ,- տանտիրոջը դիմեց կառապանը:

-Իհարկե: Դու արծակիր նրանց և մոտեցրու այստեղ: Իմ ձիերն էլ այստեղից են օգտվում:

Մինչ Վալին օգնում էր կառապանին, նրա կնոջ հրավերով Ավետիսը և Ջավենը ներս մտան տուն: Խեղճ պատանին քիչ մնաց կարոտախեղդ լինեք սաստիկ հուզմունքից: Իրենց տան իրերը տեղում էին՝ թախտը, որի վրա հաճախ ծնողներն էին պառկում հանգստանալու, երկաթյա ճաղապատ մահճակալները, սեղանը, աթոռները, պահարանը, նույնիսկ լուսամուտների վարագույրները: Կորստյան ցավից այնպիսի սարսուռ անցավ Ավետիսի մարմնով, որ առանց հրավերի սպասելու՝ նստեց դռան մոտ ընկած աթոռին: Հետո տանտիրուհուց մի բաժակ ջուր խնդրեց: Ջավենը նկատեց, որ ընկերոջ դեմքը քաթանի գույն էր ստացել: Քիչ անց ներս մտավ Վալին կառապանի հետ: Նա կնոջը կարգադրեց ճաշի սեղան պատրաստել:

-Չէ՛, Վալի՛, շնորհակալ ենք: Հորաքրոջս տանը ճաշել ենք, հետո ճանապարհ ընկել,- պատասխանեց Ավետիսը, ու նրա խաղաղ դեմքին ժպիտը վայրկենապես ծորաց ու հալվեց նրա որբացած հայացքում:

-Այդ դեպքում գոմեշի մածուն կհյուրասիրենք կամ էլ տաք թեյ,- Վալին ամեն կերպ ուզում էր հյուրասիրել նրանց:

Փետրվարի վերջերն էր: Դեռ ցուրտ էր: Սենյակի մեջտեղում վառարանի վրա թեյնիկը եռում ու թշշում էր:

-Կնի՛կ, մեր հյուրերի համար թեյ լցրու, որ տաքանան, -առաջարկեց Վալին և մոտենալով՝ բարձրացրեց թեյնիկի կափարիչը, հետո դիմեց Ավետիսին: -Եթե ասեմ, քեզ ո՞ր քամին է այստեղ բերել, ձիշտ չի հասկացվի: Սա քո օջախն է: Լավ ես արել, որ եկել ես: Կարող ես այստեղ մնալ, ինչքան կուզես: Եվ եթե մշտապես այստեղ պիտի մնաս, մենք ուրիշ տեղ կփնտրենք:

Ավետիսը մտածեց. «Ինչո՞ւ: Կարգին էլ տեղավորվել եք: Միևնույն է, ինչ էլ ասեք, ձեր քրդերի աչքը միշտ հայերի ունեցվածքի վրա էր: Դուք էլ հարմար առիթը բաց չթողեցիք»:

-Հը: Ինչո՞ւ ես լռում:

-Ես չեմ եկել այստեղ մնալու: Եկել եմ տեղեկություն իմանամ մերոնց մասին:

Վալին նույնպես մի պահ լռեց: Կինը թեյի բաժակներն էր լցնում:

-Դե, մենք՝ քրդերս, մեղավոր չենք, որ հայերին այստեղից քշել են ու սպանել: Թուրքերն են նման հրեշավոր ծրագիր կազմել: Ինքդ էլ գիտես, թե մայրդ ոնց էր վերաբերվում ինձ, ընտանիքիս, երեխաներիս ծնունդն էր շնորհավորում, -Վալին մեղավոր հայացքով նայեց Ավետիսին:

-Ես գյուղ եմ եկել ոչ ձեզ դատապարտելու համար, Վալի՛: Գիտեմ, թե ովքեր են Եղեռնի կազմակերպիչները: Իմ այստեղ հայտնվելու նպատակն ուրիշ է: Դու որևէ տեղեկություն ունե՞ս մորս ու քույրերիս մասին: Խնդրում եմ, պատմի՛ր այն ամենը, ինչ գիտես, վերցնելով թեյի տաք բաժակը՝ Ավետիսը զգաց, որ նաև սաստիկ մրսում էր:

Վալին ու կինը իրար հետ հայացքներ փոխանակեցին, և կինը գլխով դրական ազդանշան տվեց: Փոքր-ինչ վախեցած հայացքով Վալին սրտապնդվեց:

-Երբ թուրք ոստիկանները եկան և հայերին քշեցին այստեղից, այդ ժամանակ գյուղում էի...

-Առանց նախաբանի պատմիր,- անհամբեր, գրեթե շնչասպառ միջամտեց Ավետիսը:-
Մայրս քույրերիս հետ նրանց հե՞տ էին:

-Այո՛: Բայց եղավ մի պահ, երբ մայրդ՝ տիկին Ալմաստը, երեխաներին թողեց ու վազեց տուն ինչ-որ իր վերցնելու, սակայն դաժան ոստիկաններից մեկը կարծելով, թե նա ուզում էր փախչել, կրակեց նրա վրա, և մայրդ ընկավ:

-Ուրեմն՝ մորս գյուղո՞ւմ են սպանել: Աստված իմ, երա՞նի նա ողջ լիներ, ինձ վրա կրակած լինեին,-Ավետիսի աչքերը լցվեցին արցունքներով:

Վալին տեսնելով, որ Ավետիսը դողում էր հուզմունքից, խնդրեց կնոջը օղի բերել և թթու վարունգ: Հետո նա վեր կացավ տեղից և լցրեց բաժակները:

- Խմենք ծնողներիդ հիշատակի, բոլոր զոհերի հիշատակի համար,-առաջարկեց նա:

Ավետիսը մինչև վերջ դատարկեց բաժակը: Այնուհետև ինքը նորից լցրեց իր բաժակը և անխոս խմեց: Մարմնի դողն աստիճանաբար անցնում էր: Հիշեց, թե ինչպես գաղթի ճանապարհին հանդիպել էր իրենց հարևանուհի Վարդուշին, որն իրենից թաքցրել էր բոլորի աչքի առաջ կատարված դեպքը և հայտնել էր, թե մայրն այլ ուղղությամբ էր գնացել: Այժմ հասկանալի էր, որ նա պարզապես չէր ցանկացել ցավ պատճառել իրեն:

-Իսկ քույրե՞րս:

-Հարևանները նրանց ձեռքերից բռնած տարան իրենց հետ: Այլևս ոչինչ չգիտեմ:

-Մորս մարմինը որտե՞ղ է հանգչում:

-Զգիտեմ, Ավետի՛ս: Այդ օրը էլի մի քանի հոգու սպանեցին, հետո նրանց մարմինները դրեցին կառքի մեջ ու տարան:

Ավետիսը խոր արտաշնչեց՝ նորից լցնելով օղու բաժակը: Կյանքում այդքան չէր խմել: Բայց այդ օրը օղին օգնեց նրան լիցքաթափվելու: Տարիներ առաջ երբևիցե կարո՞ղ էր մտածել, որ սեփական օջախը կդատարկվեր ու կդառնար քրդերի սեփականությունը: Եվ թեև Վալին իրենց տան մտերիմ մարդկանցից էր, բայց այդ հանգամանքը դրությունն ամենևին չէր փոխում:

-Վալի՛, ես դեռ շատ հարցեր ունեմ քեզ տալու, նաև հորս գերեզմանին պիտի այցելեմ...Զգիտեմ, ոնց անել,-քթի տակ մրմնջաց Ավետիսը:

Տանտերն զգաց, որ պատանին կիսով չափ հարբել էր: Նա հասկացավ, որ քսան տարեկան հասակում դժվար էր գիտակցել, որ ընտանիքիդ բոլոր անդամները չկան ու պետք է աշխարհում այլևս մենակ մնաս:

-Շատ հոգնած ես երևում, Ավետի՛ս: Կուզե՞ս թախտին մի քիչ պառկի՛ր, հանգստացի՛ր: Հետո կշարունակենք զրույցը,- առաջարկեց Վալին՝ երեխաներին հրամայելով ազատել թախտը:

-Իսկ ես ի՞նչ պիտի անեմ,-դարձյալ հարցրեց կառապանը:

-Դուք՝ բոլորդ այսօր այստեղ կգիշերեք: Վաղը ցերեկով կճանապարհվեք,-պատասխանեց Վալին:-Անասուններին էլ կտանենք գոմ ու կկերակրենք: Հեչ մի՛ մտածիր:

-Վալին ճիշտ է ասում: Կներե՞ք ինձ, ես մի քիչ հանգստանամ թախտի վրա: Դուք առանց ինձ զրույցեք,- արձագանքեց Ավետիսը ու մանր քայլերով մոտենալով թախտին՝ հաճույքով փռվեց այնտեղ:

Տանտիրուհին ծածկոց զցեց նրա վրա:

Ավետիսը միանգամից քուն մտավ: Երագի մեջ ծնողներին տեսավ: Նրանք սիրով ինչ-որ հետաքրքիր պատմություններ էին անում նավթով վառվող լամպի շուրջը, իսկ մայրը նաև գուլպա էր գործում, մեկ-մեկ էլ գոմ էր մտնում տեսնելու համար, արդյո՞ք ոչխարները ծնեցին: Մանկավարժ հայրն էլ այդ ընթացքում դարձյալ հանեց հաստափոր տետրը և հանգիստ նշումներ արեց: Եվ այնքան իրական էր գծագրվում ամեն բան, որ երբ երկու ժամ անց Ավետիսը զարթնեց ու մի պահ նայելով սենյակի առաստաղին, թվաց, թե ոչինչ էլ չի կատարվել, որ ինքը սեփական օջախում պարզապես հանգստանում է: Բայց հետո, երբ շուրջ

եկավ ու տեսավ վառարանի կողքին նստած քրդերին, հասկացավ իրականության ու երազի միջև ընկած սահմանագիծը:

-Լավ հանգստացա՞ր, -հարցրեց նրան հարազատ օջախի նոր տանտերը:

-Այո: Շնորհակալ եմ, -զգաստացավ Ավետիսը:

-Մութն արդեն ընկել է: Գուցե հիմա ընթերնք միասին, - առաջարկեց Վալին:

-Հիմա կարող եմք, -արձագանքեց Ավետիսը և բարձրանալով թախտից՝ դուրս եկավ սենյակից մի քիչ մաքուր օդ շնչելու:

Ջավենը նույնպես հետևեց ընկերոջը:

-Դու քեզ նորմա՞լ ես զգում:

-Այո: Մի քանի բաժակ օդին ինձ տապալեց: Մեկը հարցնող լինի, թե ո՞ր օրվա խմողն եմ, - Ավետիսը ներողամտաբար ժպտաց: - Սակայն ներքին լարվածությունս անցավ:

Ընթրիքից հետո Ավետիսը Վալին խնդրեց դրսում կրակ անել ու կրակի շուրջը գրուցել:

-Չե՞ս մրսի: Երեկոները մի թեթև ցուրտ է լինում, - հարցրեց քուրդ հովիվը:

-Չէ՛, ուզում եմ գյուղիս թարմ օդը շնչել: Ով գիտե, գուցե այլևս հնարավորություն չունենամ այստեղ ոտք դնելու, - տխուր պատասխանեց Ավետիսը:

-Ասենք, ինչո՞ւ եմ ավելորդ հարցեր տալիս, յափնջիներ ունեմ, կբերեմ ձեր ուսերին կզցեմ, - ժպտալով ասաց Վալին և գնաց ցախանոց՝ փայտ բերելու:

Երբ կրակը թեժացել էր, տղամարդիկ յափնջիներն ուսերին նստեցին կրակի մոտ:

-Դե, ինչի՞ մասին կցանկանայիր, որ պատմեի, -համեստ աշակերտի պես հարցրեց քուրդ հովիվը՝ դիմելով Ավետիսին:

-Կուզենայի իմանալ, մեր գյուղի տղամարդիկ չե՞ն իմացել տեղահանության մասին, որ դիմադրություն ցույց տային, -հարցրեց Ավետիսը, թեև գաղթի ճանապարհին ականատես էր եղել, թե ինչպես են թուրք ոստիկանները դիմադրություն ցույց տվողների հետ հաշվեհարդար տեսնում:

-Էհ, -ձեռքը թափ տվեց Վալին: -Եթե թուրքական ողջ իշխանությունն էր ծրագրել տեղահանել իր երկրի տարբեր շրջաններում բնակվող հայությանը տասնյակ հազարավոր ոստիկանների և կանոնավոր զորքի օգնությամբ, զինաթափ եղած հայերն ի՞նչ անեին:

-Ուզում ես ասե՞լ, որ անիմաստ էր դիմադրելը:

-Եթե դիմադրեիր ու փախչեիր, ո՞ւր պիտի հասնեիր:

Ավետիսը մռայլվեց: Նա մտածեց, որ թուրքերը տարբեր ժամանակահատվածներում հայերին կոտորելով, նպատակ ունեին ստեղծել պանթյուրքիստական երկիր, ուր տեղ կգտնեն միմիայն թուրքերը:

-Ասեմ, որ մեր գյուղից քսանի չափ զինված երիտասարդներ բարձրացել էին լեռները, և երբ թուրք ոստիկանները մտան գյուղ՝ տեղահան անելու ժողովրդին, նրանք դիմադրություն ցույց տվեցին: Մի քանի ոստիկան սպանվեց: Այդպես նրանք վեց օր դիմադրեցին:

-Դա արդեն շատ լավ է: Հետո ի՞նչ եղան: Տղաներին բռնեցի՞ն, թե՞ նրանց հաջողվեց փախչել, - հարցրեց Ավետիսը:

Վալին փայտով խառնելով կրակը՝ շարունակեց իր պատմությունը:

-Մեզիրեհի կանոնավոր զորք եկավ՝ ճնշելու դիմադրությունը և ժողովրդին տեղահանեցին: Դիմադրող երիտասարդներն էլ ապաստան գտան Դերսիմի քրդերի մոտ:

-Իսկ դու, Վալի՛, փորձե՞լ ես հայերից ինչ-որ մեկին փրկել, -հարցրեց Ջավենը, որն իր հետաքրքրասիրությամբ չէր զիջում ընկերոջը:

Քուրդ հովիվը քթի տակ ժպտաց: Նա անպայման սպասում էր, որ իրեն նման հարց կտան: Թեկուզ քրդերն էլ մեծ չափով մասնակից են եղել հայերի գույքը թալանելուն, բայց և այնպես կային այնպիսիները, ովքեր իսկապես օգնության ձեռք են մեկնել նրանց: Եվ Վալին դրանցից մեկն էր:

-Մեր գյուղում փոքրիշատե ունևոր հայ տղամարդ կար, անուընթաց: Կինը մահացել էր: Ապրում էր աղջկա հետ: Հայրս նրանց տանը աշխատել է: Կարգին մարդ էր: Իմանալով, որ հայերին պիտի տեղահանեին, ինձ խնդրեց, որ օգնեմ նրան: Ես էլ խոստումս կատարեցի: Ուրեմն թորգոմն աղջկա հետ թաքնվել էին անկողիների համար նախատեսված պահարանի մեջ: Երբ ոստիկանները ներս մտան, նրանց չգտան: Այնտեղ մնացին մինչև ուշ գիշեր, մինչև գյուղում ամեն ինչ խաղաղվեց: Ես թաքուն գնացի նրանց ետևից: Աղջկան տարա ինձ մտերիմ քրդերից մեկի տուն, այնտեղ թողեցի, իսկ նրան օգնեցի, որ փախչեր անտառ՝ Եփրատ գետի մոտ:

Կրակի շուրջ նստածները ուշի-ուշով լսում էին Վալիին: Ավետիսը մի ակնթաթ մտքերի մեջ խորասուզվեց. «Երանի՜ ամեն բան երազ լիներ, և Վալին միայն իր հորինած հեքիաթները պատմեր», - մտածեց նա: Բայց հետո ծանր հառաչեց: Վալիի շունը եկել, կծկվել էր Ավետիսի ոտքերի մոտ ու նույնպես տաքանում էր: Պատանին կռացավ ու շոյեց շանը: Վալիին թվաց, թե նա այլևս իրեն չի լսում:

-Շարունակե՞մ պատմությունս, թե՞,- դիմեց նստածներին:

-Իհարկե, պատմի՛ր, իմանանք, տղամարդը ո՞րչ մնաց, -այս անգամ հարցրեց քուրդ կառապանը:

-Նա քառասուն օր մնաց անտառում: Երբեմն գիշերը ես ուտելիք էի նրան տանում: Մի անգամ էլ նկատեցի, որ անտառի մոտակայքում երկու թուրք զինվորներ են քնած: Հայտնեցի նրան այդ մասին: Նա ճարպիկ գտնվեց, գնաց նրանցից մեկին սպանեց, գենքը վերցրեց, մյուսը փախավ:

-Նրան բռնեցի՞ն, - Վալիի խոսքը միջամտեց Ավետիսը:

-Ո՛չ: Դրանից հետո թուրք զինվորներ էր բռնում, զինաթափ անում: Այդպես շարունակվեց մինչև 1916թ. ապրիլը: Չմեռն նա իր համար մի փոքրիկ հյուղակ սարքեց, որ ցրտին դիմանար: Նրան հաջողվեց փախչել որպես թուրք զինվոր,- իր խոսքն ավարտեց Վալին:

Քուրդ հովվի կերպարը Ավետիսի աչքում բարձրացավ: Թեկուզ նա մեկ հայի կյանք է փրկել՝ իր կյանքը վտանգելով: Նրան կարող էին հետևել կամ սպանել: Նման դեպքեր նույնպես եղել են:

-Իսկ գյուղում կա՞ն հայեր, որ վախից հավատափոխ են եղել,- հարցրեց Ավետիսը:

Վալին գլխով դրական ազդանշան տվեց:

-Գյուղում երկու հարյուր հայ ողջ են մնացել, քանի որ ընդունել են մահմեդականություն: Նրանք հիմա ծառայում են իրենց թուրք տերերին:

Ավետիսը հիշեց իր հետ սովորող Հովակիմին, որին մի քանի անգամ դասարանցիները ծաղրել էին, ուսուցիչն էլ չի միջամտել, ու նա այլևս դպրոց չհաճախեց: Հեռացավ ընդունելով մահմեդականություն: Մի՞թե վիրավորվելը պատճառ էր, որ մարդ փոխի իր կրոնը: Ոչ ոք այդպես էլ չհասկացավ նրա արարքը:

Կրակը կամաց-կամաց հանգչում էր:

-Գուցե գնանք տուն, մնացածը թեյի սեղանի շուրջը կպատմեն,- առաջարկեց տանտերը:

Գրեթե հանգած կրակի մոտ նստածներն անխոս վեր կացան և յափնջիները հանելով ուտեցին՝ մտան տուն: Ներսում դարձյալ վառարանը տաք էր: Վալիի կինը վառարանի մոտ նստած՝ կարկատան էր անում: Երբ տղամարդիկ ներս մտան, նա լուռուճուն կանգնեց տեղում՝ սպասելով հրամանի: Տանտիրոջ առաջարկով բոլորը թեյեցին: Բայց քնելուց առաջ Վալին Ավետիսի համար անակնկալ էր պատրաստել:

-Որտե՞ղ պիտի քնես,- հարցրեց նա Ավետիսին:

-Եթե թույլ տաս, այս թախտին, որտեղ մայրս՝ հոգնած գործերից, հանգստանում էր, պատասխանեց Ավետիսը՝ նստելով թախտին:

-Ի դեպ, մայրդ երբ ինձ հանդիպում էր, միշտ քեզնից էր խոսում: Նա քո նամակներին էր անհամբեր սպասում, նաև ինձ էր դիմել խնդրանքով, որ եթե Պոլիս գնացող լինի, քեզ համար

ծանրոց ուղարկի: Ես այդպես էլ ոչ մեկին չգտա,- Վալին ժամանակ էր շահում անակնկալը մատուցելու համար:

-Իսկ ի՞նչ էր ուզում ուղարկել: Երանի՜ իմանայի,-թախծոտ հայացքով Ավետիսը նայեց Վալին:

-Կիմանաս, եթե հիմա թախտից վեր կենաս,- խաղաղ տոնով ժպտաց Վալին և մոտենալով՝ թախտի վերևի մասը բարձրացրեց:

-Թախտի խորքում գունավոր լաթով ծալված միջին չափսի փաթեթ կա: Ավետի՛ս, քո ձեռքով վերցրո՛ւ այս փաթեթը, որ մայրդ է թողել քեզ համար:

Պատանին հուզված կռացավ ու համարյա հափշտակեց այն՝ երկու ձեռքով սեղմելով կրծքին: Նրա աչքերը լցվեցին արցունքներով:

Ներկաները քարացած հետևում էին նրան:

- Ավետի՛ս,- քար լռությունը խախտեց տանտերը:-Երբ դու փոքր էիր, շատ ճարպիկ էիր, խելացի, հնարամիտ: Ու ես սրտիս խորքում համոզված էի, որ դու ուր էլ հայտնվես, միևնույն է, ողջ կմնաս ու մի օր անպայման գյուղ կվերադառնաս: Այդ փաթեթը հինգ տարի շարունակ սպասում էր քեզ:

Վալին մոտեցավ ու ավագ եղբոր պես գրկեց Ավետիսին:

-Բացի՛ր փաթեթը: Չե՞ս ուզում տեսնել, թե մայրդ ի վերջո ինչ էր պահել քեզ համար,- հարցրեց Ջավենը:

Ազատվելով Վալիի գրկից, Ավետիսը կամաց բացեց փաթեթը: Այնտեղ մոր ձեռքով գործած տաք գուլպաներն էին և հոր ձեռագիրը, նրա կիսատ թողած գիրքը Արևմտյան Հայաստանի ազգային ազատագրական շարժման մասին: Ավետիսի համար դրանք աշխարհի ամենաթանկ նվերներն էին: Նա տանտիրոջ շան պես հոտոտեց գուլպաները, նաև հաստափոր տետրն այն հույսով, որ այդ իրերի վրա գուցե խնամքով պահված լինեի ծնողների բուրմունքը, այնքա՛ն ջերմ, անփոխարինելի ու հար-հավիտյա՛ն հիշվող...

Վաղ առավոտյան Ավետիսն արթնացավ աքաղաղի ծանոթ ու հարազատ կանչից: Նա արագ հագնվեց ու դուրս եկավ մաքուր օդ շնչելու: Հեռու հորիզոնից արևի առաջին ճառագայթները հայտնվեցին՝ թեթևակի շոյելով նրա դեմքը: Պատանին նայեց երկնքին: Ամպերը, որ երեկ թվում էին մոխրագույն, փոխակերպվել էին բաց, նուրբ վարդագույնի: Բնությունն աստիճանաբար կենդանանում էր: Այգում խոնարհաբար տարածվել էին կապույտ մանուշակները: Ինչ-որ տեղ երգում էին թռչունները: Ջգաց, թե ինչքան էր սիրում իր հայրենի գյուղը: Հիշեց, թե ինչքան հաճելի էր գարնանը նստել պատշգամբում և շնչել ծաղկած խնձորենու, բալենու, եղրևանու բուրմունքը: Իր համար Ղատեմը անսովոր գեղեցկություն ուներ իր միակ Ս.Աստվածածին եկեղեցով, հարուստ անտառներով, դաշտերով ու լեռներով:

Վալին կառապանի հետ արդեն գոմում էին, կերակրում էին անասուններին: Երբ դուրս եկան այնտեղից, տեսան Ավետիսին, որը տան շեմին կանգնել և մտազբաղ նայում էր հեռուներին:

-Բարի լույս, Ավետի՛ս,- գրեթե միասին ասացին նրանք:

Պատանին ժպիտով ողջունեց նրանց:

-Հը: Հո չե՞ս մտափոխվել,- հարցրեց կառապանը:- Այսօր գնալո՞ւ եմք, թե՞...

-Անպայման կմեկնենք հորս գերեզմանին այցելելուց հետո,- թախծոտ պատասխանեց Ավետիսը:

-Միայն թե նախաճաշից հետո,- լրացրեց Վալին:

-Բայց դու պիտի մեզ ոչ թե խարբերդ հասցնես, այլ՝ Կիրասուն: Մենք պետք է շոգենավով Պոլիս հասնենք,-ասաց Ավետիսը: -Խարբերդում այլևս անելիք չկա:

-Կտանեմ, միայն թե...,-կմկմաց նա:

-Եթե լրացուցիչ վարձատրության մասին ես ակնարկում, կպայմանավորվենք:

-Ես անասունների համար լրացուցիչ կեր կտամ, չես նեղվի,- նրանց խոսակցությանը խառնվեց Վալին:-Ճանապարհին էլ աղբյուրի կհանդիպեք, ջուր կտաս ջորիներին: Իմացիր, Ավետիսն իմ լավ բարեկամն է: Ոչ մի առարկություն չեմ ընդունում: Դու էլ իմ լավ մտերիմներից մեկը դարձար: Երբ անցնես այս կողմերով, անպայման ինձ հանդիպիր:

Ծեր կառապանը գոհ ժպտաց: Վալին հետո շրջվեց և խորդանոցից փայտ վերցնելով՝ մտավ տուն՝ վառարանը վառելու:

Ջավենը նույնպես արթնացել էր: Ուռքի վրա էր տանտիրուհին: Կառապանը Ավետիսի հետ նստեցին տան առջև դրված միակ նստարանին:

-Մայրանուշ հորաքրոջդ այլևս չե՞ս հանդիպելու,-հարցրեց նա:

-Դրա կարիքը չկա: Նրան խոստացել էի հանդիպել հարազատներիս մասին լավ լուր իմանալուց հետո: Կհաղորդես, որ մերոնք չկան: Մայրս քույրերիս հետ թուրք յաթաղանին գոհ են դարձել:

Կառապանը մի ակնթաթ լռելուց հետո ասաց.

-Նա շատ բարի կին է: Ափսո՛ս, որ որդին տեր չկանգնեց ծնողներին:

-Դու այդքան լավ ես ճանաչում հորաքրոջս,-հարցրեց Ավետիսը՝ շրջվելով նրա կողմը:

-Է՛հ,-հառաչանքով խոսեց կառապանը:- Մեր ընտանիքի շնորհիվ է այդ դժբախտ կինը ողջ մնացել: Նրան թաքցրել էինք մեր նկուղում ու կերակրել ենք: Մայրանուշի ամուսինը չդիմացավ ու մահացավ նկուղում: Ես ու որդիս գիշերով նրա մարմինը հողին հանձնեցինք:

Ավետիսը հասկացավ, որ հենց նույն քուրդ կառապանն էր տիրացել նրա երկհարկանի տանը՝ ցուցաբերած օգնության դիմաց: Ի՞նչ արած, հորաքույրը գոնե այդպիսով մասնակիցը չէր դարձել այն տանջանքներին, որ իրենց մաշկի վրա զգացել են հայ գաղթականները:

Հայտնվեց Ջավենը՝ սրբիչը ձեռքին: Տան անկյունում ջրով լի դույլ էր դրված: Նրանք միմյանց օգնեցին լվացվելու և մտան տուն: Թեյնիկը դեռ կրակին էր: Վալին կռացել ու շարունակում էր խնամքով խառնել օջախի կրակը:

-Վալի՛, Ջավենի հետ ուզում եմ հորս այցելել,-ասաց Ավետիսը՝ հետևելով տանտիրոջ շարժումներին:

-Դե, լավ, գնացե՛ք, միայն թե շուտ կվերադառնաք, -գլուխը բարձրացնելով պատասխանեց Վալին:

Գերեզմանները գտնվում էին գյուղի ծայրում: Հետևաբար տղաները գյուղի միջով դեռ զգալի ճանապարհ պիտի անցնեին: Անցորդների հանդիպելով, Ավետիսին թվաց, թե ինքը գտնվում է բոլորովին օտար վայրում, այն տարբերությամբ միայն, որ փողոցներն ու տները ծանոթ էին, մարդիկ՝ անծանոթ: Հայաթափ էր արվել իր ծննդավայրը: Քրդերն ու թուրքերն էին տիրացել հայերի տներին և ունեցվածքին:

Արդեն հասնում էին գերեզմաններին, երբ ճանապարհին դեմ-դիմաց Ավետիսը հանդիպեց հավատափոխ եղած իր մանկության ընկերոջը՝ Հովակիմին, որին Հուսեին էին անվանում: Նա ցախ էր շալակել: Ըստ երևույթին, մոտակա անտառից էր գալիս:

-Ավետի՛ս...Դու ո՞ղջ ես մնացել,-զվարթ տոնով ասաց նա:

-Ինչպես տեսնում ես, ողջ եմ, բայց չեմ ուզում հավատալ, որ իմ նախկին ընկերը այդպես հեշտությամբ կարող էր ընդունել մահմեդականությունը,- խիստ տոնով պատասխանեց Ավետիսը:

-Եթե այդպես չանեի, շատերի պես ինձ էլ կսպանեին,-փորձեց արդարանալ Հուսեյինը:

-Նախ՝ դու հավատափոխ եղար ջարդերից առաջ: Մենք այդպես էլ չհասկացանք, թե ինչպես համաձայնվեցիր դիմել այդ քայլին: Թե՞ թուրքերին ծառայելն ավելի պատվաբեր

է...Ասեմ քեզ, այնպես պատահեց, որ գաղթի ճանապարհին երեք թուրք երիտասարդներ ցանկացան ինձ օգնել մի պայմանով միայն, որ դառնամ մահմեդական, որ ինձ թլպատեն, ինչպես քեզ, անունս փոխեն, դնեն Հուսեին, ինչպես քոնը, հետո էլ թուրք աղջկա հետ ամուսնացնեն: Ես չհամաձայնվեցի: Ասացի, որ ես քրիստոնյա եմ, այդպես էլ հրաժեշտ կտամ կյանքիս: Իմ շրջապատի հարյուրավոր մարդիկ մեռնում էին սովից, հիվանդություններից, բայց հրաժարվում էին հավատափոխ լինել:

-Իմ տերերն ինձ լավ են վերաբերվում, -արդարացավ նա՝ խուսափելով ճիշտ պատասխանից:

-Մի՞թե այսքան ժամանակ գլխի չընկար, թե թուրքերը ինչքան են ատում հայերին: Հասկացիր, նրանք հավիտյան մեր թշնամիները կլինեն: Պետք եղած դեպքում քեզ էլ կվերացնեն:

-Իսկ ես նրանց ի՞նչ եմ արել, որ վերացնեն:

-Ջարմանալի տղա ես: Իսկ քո կարծիքով ի՞նչ եմ արել թուրքիայում ծնված ու բնակվող հարյուր հազարավոր հայերը, այդ թվում ծերերը, կանայք, երիտասարդները: Միայն քեզ նման ծառայել են նրանց:

Հուսեինը լռեց: Նրա դեմքին անմիջապես մռայլ ամպեր կուտակվեցին:

-Լռո՞ւմ ես, որովհետև պատասխան չունես: Մինչդեռ պատասխանը մեկն է՝ մենք ազգությամբ հայ ենք, դիմելով ընկերոջը՝ ասաց.-Գնանք, Ջավեն, մենք ուշանում ենք:

Ավետիսին ավելի ծանր տեսարան էր սպասվում: Հայերի գերեզմանների քարերը ոճրագործները ջարդուխուրդ էին արել Նրա հոր շիրմաքարը նույնպես երկու տեղից ջարդված էր: Նա թևքով սրբեց շիրմաքարի փոշին և քամու քշած չորացած տերևները: Ջավենը ծառերի չորացած ճյուղերը հավաքեց և ցանկացավ մաքրել գերեզմանի այդ հատվածը:

-Պետք չէ, ընկերս,-ծնկի գալով հոր շիրմաքարի առաջ՝ Ջավենին դիմեց Ավետիսը:-Ռու մի քիչ հեռու կանգնիր: Ուզում եմ զրուցել հորս հետ:

Ջավենը հեռացավ՝ թողնելով նրան մենակ: Առանց շիրմաքարից գլուխը բարձրացնելու՝ Ավետիսը հուզմունքից դողացող շուրթերով կամաց շշնջաց:

-Բարև, սիրելի հայրիկ: Տարիներ ի վեր ամեն օր երագել եմ ողջ մնալ ու այցելել քեզ: Երագանքս կատարվեց: Երանի՜ իմանալի, որ այս աշխարհում ամենից շատ քո կարիքն եմ զգում, քո խելամիտ մտքերի, խրատների, ջերմության...Ճիշտ էր քո և ընկերիներիդ տագնապը, որ թուրքերի կողքին ապրելով հայը պետք է զենքեր ունենա, քանի որ նրանք միշտ էլ կոտորել են մեզ ու կշարունակեն դա անել, քանզի մենք կանք: Թուրք բարբարոսները սակայն գտան մեր թաքցրած զենքերը, բոլորին զինաթափ արեցին ու կոտորեցին: Նրանց արյունոտ ձեռքերով սպանվեցին մայրս, քույրերս: Միայն ես եմ ողջ մնացել: Հայրիկ, հաճախ երևում ես իմ երագներում: Մի՛ նեղացիր ինձնից: Խոստանում եմ վրեժխնդիր լինել նրանցից, թե չէ այլևս հանգիստ ապրել չեմ կարող: Խոստանում եմ արժանապատիվ ապրել, եթե պետք է՝ մեռնել զենքը ձեռքիս...Ների՛ր ինձ, հայրիկ, ամեն ինչի համար...

Ավետիսը բարձրացավ՝ թափ տալով շորերը: Ջավենը սպասում էր նրան: Նա քայլերն ուղղեց գյուղի ծայրում գտնվող ս.Աստվածածին եկեղեցու կողմը: Հեռվից էլ տեսանելի էր, որ եկեղեցին նույնպես ավերել էին: Նրա սիրտը ցավից կտոր-կտոր էր լինում: Թեկուզ գաղթի ճանապարհներին էլ ականատես էր եղել ավերված տասնյակ եկեղեցիների: Սակայն իր հարազատ ծծնդավայրի եկեղեցին իր համար միանգամայն ուրիշ խորհուրդ ու նշանակություն ուներ: Այդտեղ նա կնքվել էր, նաև՝ քույրերը: Իր ծնողների պսակադրությունը նույնպես այդտեղ է կատարվել: Այդ եկեղեցին էին հաճախում համազյուղացիներով բոլոր ազգային տոներին: Տխուր խաչակնքվելով՝ նա ընկերոջ հետ շնչասպառ չլինելու համար նստեց կոտորված խաչքարերի մոտ: Հեռվից լսվում էր Եփրատ

գետի խշռոցը: Իր համար դա մանկության տարիների հրաշալի այն գետն էր, որտեղ ընկերներով լողում էին, երբեմն ձուկ որսում, վարդավառի տոներին աղջիկների վրա գետից բերվող դուլներով ջուր լցնում և ուրախանում: Ցավոք, կոտորածի տարիներին այդ նույն Եփրատը ողողվեց արյամբ, կուլ տալով տասնյակ հազարավոր մարդկանց:

-Չգնա՞նք, Ավետիս: Կառապանը մեզ է սպասում,-լռությունը խախտեց Ջավենը:

-Գնանք, միայն թե աղբյուրի մոտ կանգ կառնենք: Սաստիկ ծարավել եմ:

Կեսօրին, երբ Ավետիսը և Ջավենն իջան շոգենավից, Պոլսում գարնանային հաճելի եղանակ էր: Իր միակ ճամպուրկը ձեռքին նա կանգ առնելով՝ նայեց շուրջը: Հիշեց, թե ինչպես Եղեռնից առաջ նավահանգստում բեռնակրությամբ էր փող վաստակում, օրվա լրագրերն էր բաժանում՝ հացի փող վաստակելու համար: Այն ժամանակ նա իրեն սակայն հոգեպես փոքրիշատե բավարարված էր զգում, կարծելով, որ հաստատվել է աշխարհի ամենաաշքեղ քաղաքում: Այնինչ հետո հայտնվելով Աթենքում՝ հիմա բոլորովին այլ աչքերով էր նայում շուրջը: Պոլսում ինչքան էլ ճարտարապետական գեղեցիկ կոթողներ, տարբեր ծովերի վրայով անցնող կամուրջներ, թանգարաններ կառուցվեն, իր համար այն կմնա որպես ասիական քաղաք՝ թրքական տարազներով, մուղամներով, նամազներով, բռնատիրական կարգերով: Ականատեսը լինելով թուրքերի ձեռամբ հայերի հանդեպ կատարված վայրագություններին, նա այլևս չի կարող պատկերացնել, որ հայերը, ինչպես նաև այլ քրիստոնյաներ, անվտանգ կարող են ապրել նրանց կողքին:

-Հը, դեպի ո՞ւր պիտի գնանք,- Ավետիսին ծանր մտքերից հանեց Ջավենը:

-Հանգիստ եղի՞ր, կառքերից մեկը մեզ մոտ կկանգնի, քանի որ երկուսս էլ ճամպուրկներով ենք,- արձագանքեց Ավետիսը:

Եվ իսկապես, քիչ անց նրանց մոտ կանգնեց մի կառք, և անփույթ տեսքով կառապանը լուռումունջ նայեց երկուսին:

-Նստելո՞ւ եք, թե՞,- հարցական նայեց կառապանը:

-Իհարկե,- Ջավենը առաջինն իր ճամպուրկով թռավ կառքի մեջ՝ տեղ տալով ընկերոջը:

-Ո՞ւր եք գնալու,- հարցրեց թուրք կառապանը:

-Քշի՞ր դեպի կենտրոնական թաղամաս: Կասեմ, թե որտեղ է ապրում իմ հորեղբայրը,- պատասխանեց Ավետիսը:

Մինչև տեղ հասնելը նա մտածեց հարազատների մասին: Արդյո՞ք հորեղբոր տղային իրեն արտաքսելուց հետո թուրք ոստիկանները նկուղում չեն հայտնաբերել: Այնուհետև մտքերն Ավետիսին տարան հեռուն՝ դեպի մանկության անհոգ ու երջանիկ տարիները, երբ ծնողները ողջ էին, ու նրանք հաճախ էին խնջույքներ կազմակերպում, հարևանների, ընկերների հետ հաճույքով նարդի էին խաղում: Հայրն իր ընկերների հետ միայն գրուցում էր երկրի անցուդարձի ու զենքեր հայթայթելու մասին: Այնինչ հորեղբայրը, որ ապրում էր իրենցից շատ հեռու, հոր հետ քիչ էր հանդիպում հասկանալի պատճառներով, քանի որ տեղ հասնելու համար օրերով ճանապարհ պիտի գնաս:

Երբ կառքը կանգ առավ հորեղբոր երկհարկանի տան առջև, Ավետիսը ինքնաբերաբար հայացքն ուղղեց դեպի տան կողմը: Պատշգամբում մարդիկ երևացին: Վճարելով կառապանի ուղեվարձը, Ջավենի հետ նրանք ներս մտան դարպասից և աստիճաններով բարձրացան վերև: Մարտիրոս աղան իրեն հասակակից տղամարդու հետ նարդի էր խաղում: Տեսնելով Ավետիսին, նա միանգամից բարձրացավ տեղից, ձեռքերը սկզբում զարմացած տարածեց, հետո երկու ավերով ծածկեց դեմքը ու նորից բացեց:

-Աչքերիս չեմ հավատում...Ասե՛ք, որ երազի մեջ չեմ,- Մարտիրոս աղայի աչքերը թացացան հուզմունքից: Նրա ձայնից կինը հայտնվեց պատշգամբում և նույնպես ուրախ բացականչեց:

-Ավետիս...Բարով ես եկել...Չէ, Մարտիրոս, քո զարմիկն է: Հանգստացի՛ր,- տեսնելով, որ ամուսինը շատ հուզված էր, գնաց ջուր բերելու:

Մարտիրոս աղան մոտենալով՝ պինդ ողջագուրվեց հորեղբոր որդուն և գլուխը դնելով պատանու ուսին, համբուրեց նրա վիզը, հետո ձակատը, աչքերը, այտը:

-Իսկ ես մտածում էի...Լեզուս պապանձվի, որ դու այլևս ողջ չես: Փառք Աստծո, որ եղբորս ընտանիքից գոնե մեկը ողջ մնաց, որ ձեր օջախի ծուխը չի մարի...

Ավետիսն ազատվելով հորեղբոր գրկից, նրան ծանոթացրեց ընկերոջ՝ Զավենի հետ:

-Շատ ուրախ եմ, որ մենակ չես: Բարով եք եկել,-ու նա տանտիրոջ իրավունքով հրամայեց կնոջը՝ սեղան զգել հենց պատշգամբում:

Այնուհետև Մարտիրոս աղան մի կողմ դնելով նարդին՝ գրպանից հանեց թաշկինակը և սրբեց աչքերը: Նա չէր հիշում, թե երբ էր վերջին անգամ այդպես սաստիկ հուզվել: Հարևանը՝ վարժապետ Թորոսը, շվարած նայում էր նրանց:

-Արդեն հասկացար, որ եղբորս որդին է, Թորոս աղա: Նա Պոլսում էր ապրում և աշխատում, երբ թուրք ոստիկանները բռնեցին ու քշեցին այստեղից: Գնացել էի ոստիկանական բաժին, փող էի առաջարկել, որ ազատեի նրան: Չստացվեց: Ասացին, որ արձանագրություն են կազմել, որ Ավետիսի անունն արդեն այդ ցուցակի մեջ է և ոչինչ փոխել հնարավոր չէ: Ես մեղավոր էի զգում արժանահիշատակ եղբորս առջև, որ չկարողացա պաշտպանել նրա որդուն,- հարևանի հետ մտքեր փոխանակեց նա:

-Իսկ Ղազարը...Աղավնի՞ն: Ո՞ր են նրանք,- հարցրեց Ավետիսը՝ նայելով շուրջը:

-Աղավնին սովորում է, իսկ Ղազարը աշխատանքի է: Երեկոյան կլինի տանը,- պատասխանեց հորեղբայրը:

Այդ ընթացքում տիկին Երանուհին ձաշի սեղանը պատրաստել էր: Հավաքվածները նստեցին սեղանի շուրջը:

-Ի՞նչ եք խմելու, տղաներ: Գինի՞, թե՞ օղի,-տանտերը դիմեց պատանիներին:

-Հորեղբայր, երևի մենք մի բաժակ գինի կըմպենք մեր հանդիպման համար,-արձագանքեց Ավետիսը:

Հորեղբայրը գինի լցրեց բոլորի բաժակները: Տիկին Երանուհին միացավ տղամարդկանց՝ նստելով սեղանի ծայրին:

-Փառքդ շատ, Աստված,- դեպի երկինք նայելով ասաց Մարտիրոս աղան:-Շնորհակալ եմ, որ աղերսս լսեցիր՝ պահպանելով կոտորածից եղբորս մինուձար որդուն: Բոլորս քո խոնարհ ծառաներն ենք: Ների՛ր մեզ մեղքերի համար:

Եվ մի ակնթարթ լռություն պահպանելուց հետո Մարտիրոս աղան դատարկեց բաժակը: Նրան հետևեցին մյուսները՝ և՛ Թորոս աղան, և՛ պատանիները:

-Իսկ դուք հիմա որտեղի՞ց եք ժամանել,- հետաքրքրասիրությամբ հարցրեց Թորոս վարժապետը:

-Մենք Աթենքում էինք ապրում: Հետո վերադարձանք և գնացինք իմ ծննդավայրը,- պատասխանեց Ավետիսը:-Մերոնցից ուզում էի որևէ լուր իմանալ: Պարզեցի, որ ողջ չեմ, միայն քույրերիցս Սրբուհին է կենդանի մնացել: Խարբերդում այցելեցի որբանոց նրան տեսնելու, բայց գերմանացի ամուսիններ էին որդեգրել նրան ու տարել Գերմանիա: Այնպես որ...,-ու տխուր հառաչելով՝ նա ջուր խմեց:

-Թուրք իշխանավորները հայերի բնաջնջման այս ինչ ծրագիր իրականացրին,- խոր հոգոց հանեց Թորոս վարժապետը: -Մինչ Եղեռնը Պոլսում ապրում էր 165.000 հայ: Սակայն ինչքան հայ մտավորականների, ակտիվիստների գյուղերից եկածների են հավաքել, տարել ու ոչնչացրել: Հիմա երևի 50-60 հազար հայ հազիվ մնացած լինի:

-Լավ, եկե՛ք հանգիստ ձաշենք: Հետո կգրուցենք,- նրանց խոսակցությանը խառնվեց տանտիրուհին:-Կարևորը՝ մեր Ավետիսը հյուրընկալվել է մեզ, և մենք նրա գալուստով պիտի ուրախանանք:

Ավետիսը գլխով դրական շարժում արեց: Ճաշից հետո, այնուամենայնիվ, Մարտիրոս աղան շատ խնդրեց Ավետիսին որոշ դրվագներ պատմել աքսորականի իր ծանր կյանքից: Պատանին չառարկեց: Նա ևս մի անգամ հիշեց աքսորի ճանապարհին հարազատ դարձած այն դեմքերը, որոնք այլևս չկան: Բայց նրանք ցմահ կմնան նրա հիշողության մեջ:

Ավետիսը որոշեց մի քիչ մնալ Պոլսում: Նա ընկերոջ հետ աշխատանքի անցավ հորեղբոր տղայի՝ Ղազարի սեփական սրճարանում որպես օգնական, իսկ Ջավենը՝ որպես մատուցող:

Սրճարանը, ուր նրանք սկսեցին աշխատել, բավականին մարդաշատ էր լինում գրեթե ամեն օր: Ե՛վ խոհարարն էր համով ճաշեր պատրաստում, և՛ մատուցողներն էին սիրալիկ հաճախորդների հետ: Ու քանի որ Ղազարն օգնում էր հորը արտադրական փոքրիկ ձեռնարկն աշխատեցնելու համար, Ավետիսն էր հիմնականում զբաղվում սրճարանի հետ կապված հարցերով, թե՛ ժամանակին թարմ մթերքներ հայթայթելով, թե՛ կարգուկանոնով, թե՛ հաճախորդների սպասարկումը ըստ պատշաճի ձեռնարկելու գործը: Ջավենը ևս ընտելացել էր նոր աշխատանքին: Իսկ սրճարան մտնում էին տարբեր ազգությունների ու մասնագիտությունների մարդիկ, և՛ թուրքեր, և՛ հույներ, և՛ քրդեր, և՛ հայեր: Ավետիսը մշտական հաճախորդներին գիտեր դեմքերով: Սակայն վերջին շրջանում նրա ուշադրությունը գրավեց իր տարիքի 20-21 տարեկան մի հայ երիտասարդ, որը կառապան էր աշխատում: Երբեմն մենակ էր հաճախում, երբեմն էլ ինչ-որ տարեց տղամարդու հետ: Ավետիսը մտածեց, որ նա հավանաբար բարձր պաշտոնյա էր, քանի որ թիկնապահ ուներ: Այդ օրն էլ կեսօրին նրանք հայտնվեցին և կանչելով մատուցողին, ինչ-որ ուտելիքներ պատվիրեցին: Ավետիսը հեռվից դարձյալ ուշի-ուշով հետևեց նրանց: Տարեց տղամարդը բարձրահասակ էր, փոքր-ինչ փորը դուրս ցցած, կարմիր այտերով, սև, ոլորուն բեղերով և խոշոր աչքերով: Ժամանակ առ ժամանակ նա իր աչքերն այս ու այն կողմ էր չռում, հետո հանում էր չիբուխը և մռայլ ու լարված դեմքով քուլա-քուլա ծուխ էր արձակում: Ի տարբերություն նրան՝ երիտասարդը, որի հետ կարծես թե նա մտերմացել էր, ուներ ազնիվ ու շիտակ հայացք: Կազմվածքով Ավետիսի պես նիհար էր, արտահայտված հայկական քթով ու խոշոր աչքերով: Ճաշին նրանք նաև օղի պատվիրեցին: Տարեց տղամարդու գլուխը երբ տաքացավ օղուց, բարձր ձայնով համարյա գոռաց.

-Չեմ հասկանում, քո դաշնակցականներն ինձնից ի՞նչ են ուզում: Առավոտից մինչև երեկո իմ տան առջև պտտվում են: Նրանց ասա՛, թող խելիք մնան: Մենք էլ մարդիկ ունենք:

Երիտասարդը նրա ձայնից զգաստացավ ու աչքերը պտտեցրեց շուրջը, որտեղ թուրքեր ու քրդեր էին ճաշում: Հետո հայացքը հանդիպեց Ավետիսին, որն ակնդետ նայում էր նրանց:

-Պարոն Վահե՛, հանգիստ մնացե՛ք: Ձեր մասին վատ խոսող չկա, որ ձեզ հետևեն:

Տարեց մարդը կարծես փոքր-ինչ հանդարտվեց, շարունակելով սակայն մտահոգված դեմքով ճաշել:

-Ես ոչ մեկին չեմ ասել, թե պատերազմի տարիներին թուրք ոստիկաններով քանի՞ անգամ եք խուզարկության նպատակով մեր տուն եկել: Եվ ինչո՞ւ պիտի ասեի: Գիտեմ, որ ստիպված էիք եկել:

-Ապրե՛ս, Արշավիր: Քեզ պես ճիշտ մտածող քիչ կա մեր շրջապատում: Ղաշնակցականներին հաղորդի՛ր, որ ինձ այլևս չհետապնդեն, թե չէ՛ լավ չի լինի:

Հետո միասին մի գավաթ գարեջուր խմեցին և հեռացան: Ավետիսը մտածմունքի մեջ ընկավ: Ունկնդրելով նրանց խոսակցությունը, հասկացավ, որ տարեց մարդուն՝ Վահեին, ինչ-որ մարդիկ են հետապնդում, որոնք կապ ունեն դաշնակցության հետ, իսկ երիտասարդը՝ Արշավիր անունով, դաշնակցականների շարքերում էր: Բայց ի՞նչ գործ ուներ նրա հետ:

Ինչո՞ւ էր հաճախ նրա հետ սրճարանում հայտնվում և ուղեկցում նրան, առայժմ իրեն տարօրինակ թվաց:

Ի զարմանս Ավետիսի, հաջորդ օրն Արշավիրը մենակ մտավ սրճարան, թեյ պատվիրեց զաթայով և Ավետիսին իր մոտ կանչեց:

-Լսում եմ քեզ, ինչ-որ խնդիրնե՞ր կան,- հարցրեց Ավետիսը:

-Քո դեմքն ինձ ծանոթ չէ այս թաղերում: Պոլսեցի՞ չես,- հարցրեց Արշավիրը:

-Ո՛չ: Ես Խարբերդի շրջանի գյուղերից եմ: Այստեղ հորեղբայրս է ապրում: Սա նրանց սրճարանն է: Անունս Ավետիս է:

Մի ակնթարթ լռելուց հետո Արշավիրն ասաց.

-Ես Արշավիրն եմ: Երեկ իմ գրուցակիցը հարբած լինելով այնպես բարձր էր գոռում, որ, անկասկած, լսեցիր մեր խոսակցությունը:

Ավետիսը ներողամտորեն գլխով դրական շարժում արեց:

-Ես չէի ուզում լսել: Հավատա՛, միայն կարգուկանոնին էի հետևում, որ հանկարծ կռիվներ չլինեն:

-Գիտեմ: Բայց ինչպե՞ս եղավ, որ դու ողջ մնացիր: Հո քեզ չվիրավորեցի՞:

-Չէ՛: Միայն թե այդ հարցն ինձ այստեղ հաճախ է ուղղվում: Երբեմն անգամ մեղավոր եմ զգում, որ կենդանի եմ մնացել:

-Այլևս երբեք այդպես չմտածես: Ընդհակառակը ճակատագիրը բարյացակամ է գտնվել քո հանդեպ: Պարզապես խարբերդցիներին, հատկապես արու գավակներին բոլորին կոտորել են:

-Այդ ժամանակ ես Պոլսում էի, բայց ինձ այստեղից քշեցին: Այն ամենը, ինչին ես եմ ականատես դարձել, բառերով հնարավոր չէ նկարագրել,- Ավետիսը ծանր արտաշնչելով շարունակեց ասելիքը: -Բայց ես խոստացել եմ վրեժ լուծել թուրքերից:

- Ճիշտ որոշում ես կայացրել: Իսկ երբևէ զենք օգտագործե՞լ ես,-հարցրեց Արշավիրը:

-Ո՛չ: Ես տեսել եմ, թե ինչպես էին հայրս ու իր ընկերները զենքեր ձեռք բերում ու թաքցնում հայկական գերեզմաններում: Սակայն հայրս ինձ չէր սովորեցրել զենք բռնելը: Այն ժամանակ ես ընդամենը 11-12 տարեկան էի: Սակայն նա ընկերներին ասում էր, եթե մենք զենքը հանձնենք, մեզ ոչխարների պես կոտորելու են: Այդպես էլ եղավ:

-Չլինի՞ հայրդ հայրուկ էր,- հարցրեց Արշավիրը:

-Ո՛չ: Նա դաշնակցական էր, մասնագիտությամբ ուսուցիչ, պատմություն էր դասավանդում դպրոցում: Նա գիրք էր գրում հայերի -ասգային ազատագրական պայքարի մասին:

-Այսինքն՝ ֆիդայական շարժման մասին: Այդ շարժումը սկսվեց 1880-ական թվականների սկզբներին և տևեց մինչև 1907 թվականը: Ասեմ, որ նրանք միշտ պատրաստ էին իրենց կյանքը զոհել հայրենիքի և ժողովրդի համար,- ի լրացում պատասխանեց Արշավիրը:

-Այո, լսել եմ նրանց մասին:

-Եվ հայրենիքին անմնացորդ նվիրվելու ֆիդայական երդումը կատարվում էր Ավետարանի և խաչի վրա: Եթե ցանկություն ունես, քեզ կսովորեցնեմ զենք օգտագործելը, - առաջարկեց Արշավիրը: -Ուրախ եմ ծանոթության համար:

-Ես՝ նույնպես:

-Սովորաբար ո՞ր ժամերին եք փակում սրճարանը: Մենք դեռ պետք է գրուցենք: Հիմա հարմար չէ:

-Ժամը տասին: Համեցի՞ր: Կսպասեմ:

Ավետիսը բարեհամբույր ժպտաց: Արշավիրի հեռանալուց հետո նա անցավ իր գործին: Նրա համար միաժամանակ նաև անհասկանալի թվաց անծանոթ երիտասարդի պահվածքը: Ինչո՞ւ էր ցանկանում իր հետ հանդիպել, ինչի մասին պիտի գրուցեին: Չէ՞ որ արդեն հակիրճ ներկայացրել էր իր անձը: Եվ դատելով Արշավիրի ու տարեց տղամարդու՝ Վահեի

երեկվա զրույցի բովանդակությունից, Ավետիսը մտածեց, որ նա իրեն ամենայն հավանականությամբ ուզում էր ընդգրկել դաշնակցության շարքերը:

Ավետիսի անձը Արշավիրին վստահություն ներշնչեց: Այդպես մտածեց՝ հենվելով ներքին զգացողության վրա, որ նրան երբեք չէր խաբում: Նա ազնիվ ու խելամիտ հայացք ուներ, ահռելի դժվարությունները հաղթահարելու հզոր կամք: Ավետիսը մի պատանի է, ով ամեն օր կռվել է մահվան դեմ ու ողջ մնացել: Արշավիրը չէր կարող չնկատել, որ նա լինելով իր հասակակիցը, անգամ արտաքինով ինչ-որ չափով նման էր իրեն: Սակայն ի տարբերություն նրան, ինքը զենք օգտագործել գիտեր: Ավելին. օգնել էր կառքով թաքուն զենքեր տեղափոխել ինչպես իրենց տուն, այնպես էլ տեղափոխել էր համապատասխան վայրեր: «Ավետիսի հայրը դաշնակցական էր, և նույնպես զենքեր էր ձեռք բերում ընկերների հետ: Ղա արդեն լավ է, քանի որ Ավետիսը բնավորությամբ նույնպես ըմբոստ էր, անգամ վրեժխնդրության մասին է մտածում», - մտածեց Արշավիրը:

Երեկոյան ինն անց կեսին նա հայտնվեց սրճարանում՝ հանդիպելու Ավետիսին: Սակավաթիվ մարդիկ կային, քանի որ այդ ժամերին պատրաստվում էին փակել սրճարանը: Երբ Արշավիրը սովորության համաձայն տեղավորվեց սրճարանի անկյուններից մեկում, Ավետիսը բարեհամբույր ժպտալով մոտեցավ նրան ու ջերմորեն ողջունելուց հետո ասաց.

-Կարծես թե մի քիչ շուտ ես եկել, -ասաց նա՝ նայելով ձեռքի ժամացույցին, որը Ջավենն էր նվիրել իրեն:

-Չեմ խանգարի: Կնստեմ այստեղ մինչև վերջացնես:

Ջավենն այդ պահին մոտեցավ երկուսին:

-Ի՞նչ կուզենայիք մատուցել, -հարցրեց նա՝ նախ նայելով Արշավիրին, հետո հայացքը փոխանցելով ընկերոջը:

-Արշավիր, ծանոթացիր ամենամտերիմ ընկերս է՝ Ջավենը: Գաղթի ճանապարհին երկուսով հայտնվել էինք որբանոցում ու այնտեղից է սկսվել մեր մտերմությունը, - Ավետիսը հաճույքով ներկայացրեց ընկերոջը:

-Ուրախ եմ: Անունս Արշավիր է: Չեմ հրաժարվի մի բաժակ տաք թեյից:

-Լավ, այդ ընթացքում երկու բաժակ թեյ կբերես, Ջավեն, ես էլ կընկերակցեմ նրան, -ասաց Ավետիսը՝ տեղավորվելով Արշավիրի մոտ:

-Մի քիչ պատմիր քո մասին, Ավետիս, - ասաց Արշավիրը՝ զգուշությամբ նայելով շուրջը:

Հաճախորդները գնալով պակասում էին:

-Քո ժամանակը չի հերիքի, եթե երկար-բարակ խոսեմ: Եթե համառոտ պատմելու լինեմ, ապա կասեմ, որ Եղեռնից հետո մի քանի տարի ապրել ու աշխատել եմ ընկերոջս հետ Աթենքում՝ գործարաններից մեկում: Վերջերս եմ վերադարձել: Մեկնեցի Խարբերդ, այնտեղից էլ իմ ծննդավայրը՝ Ղատեմ գյուղը: Հարազատներս չկան: Նրանք էլ Եղեռնի զոհը դարձան: Այժմ, ինչպես տեսնում ես, Պոլսում եմ, սակայն այստեղ էլ չեմ մնա: Կմեկնենք Հայաստան, Ջանգեզուրի շրջան, որտեղ մարտեր են մղվում, -ասաց Ավետիսը և լռեց:

Ջավենը բերեց թեյը ու հեռացավ:

-Մի խոսքով, ուզում ես կռվել՝ չունենալով կռվելու փորձ, -ժպտաց Արշավիրը:

-Կարծում եմ, զենք բռնողներից շատերը փորձ չեն ունենում, բայց հետո սովորում եմ քաջաբար մարտնչել:

-Այո՛, իհարկե, -մտացրիվ պատասխանեց Արշավիրը և սպասեց մինչև սրճարանի վերջին հաճախորդն էլ հեռանար:

Մատուցողներից մեկն էլ խոհարարի հետ ավարտեցին աշխատանքը ու հեռացան: Մնաց Ջավենը, որը խոհանոցն էր կարգավորում:

-Ես քեզ կսովորեցնեն զենքից օգտվել կիրակի օրերին: Կառքով քաղաքից դուրս կգանք: Կգնանք այնպիսի վայր, ուր մեզ չեն հետևի,-ասաց Արշավիրը:

-Շատ լավ, Ջավենին էլ հետս կվերցնեն:

-Իմացած եղիր, որ յուրաքանչյուր հայ պետք է զենք գործածել իմանա և պետք եղած դեպքում հաշվեհարդար տեսնի թշնամու հետ: Թեև պատերազմն ավարտված է, Եղեռնի կազմակերպիչների դեմ մահվան դատավճիռ է կայացվել, միևնույն է, ինչպես Պոլսում, այնպես էլ Թուրքիայի այլ վայրերում ողջ մնացած հայերի հանդեպ հետապնդումը, հալածանքը շարունակվում է: Թուրքերն ատելությամբ ու թշնամանքով են նայում առհասարակ ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ հայերին: Պատկերացրու, քանի որ մեր տանը հաճախ են մարդիկ հավաքվում, ուստի թուրք ոստիկանների կողմից էլ հաճախ են խուզարկություններ անցկացվում,-ասաց Արշավիրը:

-Այդ դեպքում ինչպե՞ս Թուրքիայում պայքարել նրանց դեմ,- հարցրեց Ավետիսը:

-Ամեն ինչ հնարավոր է, միայն զգուշություն է պետք, քանի որ ամենուր հայ լրտեսներ կան: Արդեն ժամը տասն էր: Ջավենը խոհանոցից եկավ ու ներսից փակեց դուռը: Տեսնելով, որ տղաները թեյել են, նորից մոտեցավ նրանց:

-Գուցե՞ էլի ինչ-որ բան է պետք,-հարցրեց նա:

-Ո՛չ: Մենք գրուցում ենք:

-Լավ, ես էլ գնամ խոհանոց՝ գործերս ավարտեմ:

Երբ Ջավենը հեռացավ, Արշավիրը ցածր ձայնով խոսեց.

-Որպես գաղտնիք ասեմ, որ դաշնակցականների կողմից ստեղծվել է «Նեմեսիս» անվամբ խումբ, որի անդամները պետք է վերացնեն Եղեռնի կազմակերպիչ- մարդասպաններին ու դավաճաններին: Ցեղասպանություն իրագործած պարագլուխները թափառում են այլ երկրներում՝ ձուխ կյանք վարելով: Նրանք պիտի իրենց պատիժը ստանան:

Ավետիսը գրպանից հանեց ծխախոտի տուփը և մի հատիկ ծխախոտ վառեց ու լռեց: Մի տեսակ ճնշված զգաց այն մտքից, որ ինքը կարողացել է Հունաստանում հանգիստ ապրել: Նկատելով նրա հուզմունքը՝ Արշավիրը հարցրեց.

-Ինչ-որ բան այն չէ՞, Ավետիս:

-Ընդահակառակը, հիանալի ծրագրի մասին ես խոսում: Պիտի խոստովանեմ, որ Հունաստանում ապրելու տարիներին ինձ ժամանակ առ ժամանակ կարծես հետապնդում էր Նեմեսիս աստծո ուրվականը: Դե, այնտեղ հույները հպարտանում են ամենուր իրենց աստվածներով:

-Շատ լավ,- միանգամից պայծառացավ Արշավիրը:-Եթե դու էլ ես ուզում վրեժ լուծել, ինձ հետ կանցնես առաջին փորձաշրջանը: Իսկ իմ առաջին առաջադրանքը կլինի Վահե Իհսանին /Եսայան/ վերացնելը:

-Այն տարեց մարդո՞ւ մասին է խոսքը, որի հետ հաճախ հայտնվում ես մեր սրճարանում,- հարցրեց Ավետիսը:

-Այո: Հենց նա Եղեռնի ժամանակ հայ մտավորականների ու հեղափոխականների անվանացուցակը ներկայացրեց թուրք ոստիկաններին, որ ձերբակալեն նրանց: Ճիվաղային հոգով մատնիչ է Վահե Իհսանը, որը ոչ միայն պատերազմի ընթացքում, հիմա էլ շարունակում է իր ամոթալի գործը՝ դառնալով քեմալականների գործակալը: Վահեն դաշնակցության սև ցուցակի մեջ է:

-Հարմար պահ պիտի ընտրել նրան շարքից հանելու համար,- մտախոհ ասաց Ավետիսը:

-Ես էլ ուշի-ուշով հետևում եմ, թե ինչպես այդ գործողությունը կազմակերպել: Նա հանրակառքով է ճամփորդում և նույն ձևով իր տուն է վերադառնում: Բայց, միևնույն է, իմ ձեռքից չի պրծնի: Ես ոչնչից չեմ վախենում, թեկուզ ինձ բանտարկեն էլ...

Բավականին ուշ էր արդեն, երբ տղաներն իրար հրաժեշտ տվեցին: Արշավիրը Ավետիսին ու Ջավենին կառքով հասցրեց հորեղբոր տուն: Պայմանավորվեցին հանդիպել կիրակի օրը՝ զորավարություն անելու նպատակով:

Արշավիրն իր խոստման տերը եղավ: Նա Ավետիսի և Ջավենի հետ մի քանի անգամ զորավարություններ անցկացրեց: Գոհ էր իր աշխատանքից, քանի որ տղաները ընդունակ գտնվեցին և շուտ սովորեցին զենքից ճիշտ օգտվելու հնարքները: Արշավիրը մտադիր էր Ավետիսին ևս ընդգրկել իր առաջին լուրջ հանձնարարության ժամանակ: Պարզ էր, որ դավաճան Վահեին անապատի մեջ չէր հետապնդելու, այլ՝ բազմամարդ միջավայրում, ուր սովորաբար և՛ թուրք ոստիկաններ կարող են հայտնվել, և՛ դավաճանի թիկնապահները հնարավոր է միջամտեն: Հետևաբար, շատ արագ պետք է ոչ միայն գործողությունը իրականացվեր, այլև հաստատապես ևս երկու մարդու ներկայությունն անհրաժեշտ էր, որ աչալրջորեն հետևեն իրեն, հարկ եղած դեպքում նույնպես կրակեն կամ իրեն պաշտպանեն: Թեև դաշնակցականների կողմից իրեն էին կցել Արշակ անունով մի երիտասարդի:

Արշավիրը Ավետիսին խոստացավ հաջորդ օրը երեկոյան զենք բերել սրճարան:

Սովորականի պես Ավետիսը Ջավենի հետ վաղ առավոտյան բացում էին սրճարանը և մինչև ուշ երեկո սպասարկում էին հաճախորդներին: Հորեղբոր տղան՝ Ղազարը, առավոտյան կառքով մթերքներն էր բերում, հրահանգներ տալիս ու հեռանում: Պատահում էր, հայտնվում էր նաև երեկոյան ժամերին:

Ավետիսը չէր հոգնում աշխատանքից, միայն տհաճություն էր զգում ամեն օր թուրքերին տեսնելիս, նրանց զրույցները լսելիս: Սակայն նա փորձում էր համբերությամբ սպասել մինչև այն պահը, երբ կթողնի Պոլիսը:

Այդ օրը սրճարանում դարձյալ մի քանի թուրք երիտասարդ զինվորներ հարբել էին ու բարձրաձայն աղաղակում էին: Նրանք սեղանի շուրջ ցինիկաբար պարծենում էին, որ հայերի կոտորածի ժամանակ կանանցից ոսկեղեն ու զարդեր են թալանել և այժմ ինչպես ուզում ծախսում են դրանք զինետներում և հաճույքի համար այլ վայրերում:

-Ախր այդ գյավուրների կանայք նաև հիմար են: Ճանապարհներին երբ նրանց սկսում էինք խուզարկել, նրանցից շատերը ոսկիները կուլ էին տալիս: Իսկ մենք իմանալով այդ մասին կամ կասկած ունենալով, անմիջապես սպանում էինք նրանց և փորերը դաշույններով բացելով՝ ոսկին հանում էինք, -իբրև քաջագործություն իր արարքի մասին մեծամտաբար ասաց նրանցից մեկը:

- Ընկերոջս հետ մի քանի օր շարունակ քանդեցինք հայկական գերեզմանները, մտածելով, որ այնտեղ ոսկիներ կլինեն պահված, բայց ոչինչ չգտանք,-ասաց երիտասարդ թուրք զինվորը:

-Միևնույն է, ինչքան էլ սպանեցինք, կոտորեցինք նրանց, մեր գործը մինչև վերջ չարեցինք, քանի որ էլի հայեր են մնացել մեր երկրում,-ասաց զինվորներից առավել տարեցը:

-Բայց ողջ մնացածները վախից ընդունել են մահմեդականությունը: Ախր այդ հայերը վախկոտ արարածներ են:

Երեք զինվորներից մեկը, որ մինչ այդ չէր խառնվել խոսակցությանը՝ ասաց.

-Ղուք մոռանում եք, թե որոշ տեղերում ոնց են զինված հայ տղամարդիկ մեր զինվորների ու ոստիկանների վրա հարձակվել զաղթի ճանապարհներին: Եթե մեզ էլ զինաթափ անեին, ո՞նց պիտի կռվեինք նրանց դեմ:

-Գյավուրների դատապաշտպանն ես դարձել,- թունոտ հայացքով պատասխանեց երիտասարդ թուրք զինվորը:

-Եթե մենք արդար էինք, ապա սուլթանի հրամանով կոտորածի կազմակերպիչներին չէին դատի, որոշներին էլ մահապատժի ենթարկեին: Եկեք այդ մասին չխոսենք: Ալլահը մեզ երբեք չի ների:

-Այդ դո՞ւ ես խոսում ավաիհից,- նույն ըմբոստ զինվորը կանգնեց և ապտակի մի հարված հասցրեց նրան:

Ավետիսը մոտեցավ նրանց ու հանդարտ տոնով ասաց.

-Խնդրում եմ սրճարանում չկռվել: Դուք խանգարում եք ուրիշներին:

-Բայց դու ո՞վ դարձար, այ փսլնքոտ: Տեսքիցդ երևում է, որ գյավուրներից ես: Ուրախ եղի՛ր, որ գլուխդ էլ չեն թռցրել,- կատաղած ասաց ցատումով լի տարեց թուրք զինվորը:

-Եկե՛ք միմյանց չվիրավորենք և հանգիստ գնացե՛ք այստեղից,-հազիվ զայրույթը զսպելով և վիրավորանքը կուլ տալով՝ պատասխանեց Ավետիսը:

Երիտասարդները ոտքի կանգնեցին՝ վերցնելով ծխախոտի տուփերը: Նրանցից մեկը կանչեց մատուցողին և վճարեց:

-Մենք դեռ էլի կհանդիպենք: Մեր գրույցն ավարտված չէ,- հեռանալուց առաջ ոտից գլուխ արհամարհանքով չափելով Ավետիսին ասաց տարեց զինվորը:

Ավետիսի համար պարզ դարձավ, որ Պոլսում ապրող հայերը մինչև իրենց կյանքի վերջը պիտի հանդուրժեն թուրքերի կամայականությունները, ստորացումները, վիրավորանքները: Նրանք երբեք չեն համակերպվի այն մտքի հետ, որ իրենց կողքին կարող են ապրել ու աշխատել հայերը: Հիշեց Արշավիրի խոսքերը, որ հայերի տեղահանությունից ու ջարդերից հետո թուրքերն ավելի բացահայտ ձևով են ցույց տալիս իրենց աստելությունը:

Ուշ երեկոյան Արշավիրը եկավ կառքով: Երբ ներս մտավ սրճարան, մի երկու մարդ կար: Նրա ձեռքին թղթի տոպրակ էր: Դարձյալ տեղավորվելով մի սեղանի շուրջ, իր համար սուրճ պատվիրեց: Ավետիսը զգուշության համար դեմքի ժեստով հասկացրեց, որ շուտով կմոտենա նրան: Եվ երբ թուրք հաճախորդները հեռացան, Ավետիսը ջերմորեն ողջունեց Արշավիրին, թեև զինվորների վեճից հետո ոչ միայն նյարդայնացած էր, այլև ներքուստ կռիվ էր տալիս ինքն իր դեմ:

-Ջայրացած ես երևում: Ինչ-որ բա՞ն է եղել,-նկատեց Արշավիրը:

Ավետիսը նրան պատմեց սրճարանում տեղի ունեցած միջադեպի մասին:

-Եվ այդ թուրք սրիկաներին են ծառայել հայ մատնիչները: Մեծ գորավար Գարեգին Նժդեհը միանգամայն դիպուկ էր ասել.«Ամեն ազգի լավագույն զավակներին թուրքի փուռն է տալիս մինչև հիմա և մեզ չի հաջողվում դրան սատկացնել,- վրդովված խոսեց Արշավիրը:

-Մեզ ասելով էլ ո՞ւմ նկատի ունես,- հարցրեց Ավետիսը:

Ջավենը մոտեցավ երկուսին, բարեհամբույր ողջունեց Արշավիրին: Ջգալով, որ երկուսով նյարդային լարվածության մեջ են, կամաց հարցրեց.

-Որևէ բա՞ն է պետք:

-Ջավեն, եղբայրս, ինձ համար նույնպես մի բաժակ սուրճ բե՛ր,- ասաց Ավետիսը և Ջավենի հեռանալուց հետո նայեց Արշավիրին սպասելով նրա պատասխանին:

-Մեր դաշնակցական կենտրոնից ևս երկու մարդ են նշանակել Վահեին վերացնելու համար: Երևի որպես երիտասարդի ինձ չեն վստահում, որ կարող եմ այդ մատնիչին վերացնել,-փոքր-ինչ մտահոգված տոնով խոսեց Արշավիրը և կրկին շարունակեց,- Մինչդեռ երեկվանից հասկացա, որ այդ սրիկան պատրաստվում է Պոլսից հեռանալ՝ իր հետքը կորցնելու համար: Չէ՛, վաղը դրա հարցը պիտի լուծել: Այլևս ժամանակ չկա:

Եվ սեղանին դրած թղթե տոպրակը նա մեկնեց Ավետիսին:

-Այս գենքը քեզ համար է: Վերցրո՛ւ: Վաղն առավոտյան ժամը յոթին մեր թաղում կլինես: Կհետևես ինձ, նեղն ընկնելու դեպքում միայն կօգնես ինձ:

-Հասկանալի է,-գենքը վերցնելով՝ ոտքի կանգնեց Ավետիսը:-Ուշ է արդեն: Գնա՛նք:

- Ես ձեզ կառքով տուն կհասցնեմ,-ասաց Արշավիրը:
- Ավետիսը նրան դեռ այդքան լարված չէր տեսել: Ջավենը բերեց սուրճը:
- Պետք չէ, Ջավեն: Տանը կխմենք: Պատրաստվիր, միասին գնում ենք:
- Երբ հասան տուն և դուրս եկան կառքից, Ավետիսի հորեղբայրը երկհարկանի տան պատշգամբից տեսավ նրանց:
- Հալահա-հա... Կառքով եք տեղ հասնում այս կարճ ճանապարհը,- ասաց նա:
- Հորեղբայր, բարի երեկո,- մթության մեջ ժպտաց Ավետիսը:- Մեր սրճարանի հաճախորդներից էր: Նա այս կողմերով պիտի անցներ, չմերժեցինք օգտվել նրա ծառայությունից:
- Չե՞ք ցանկանում մեզ մոտ բարձրանալ: Մի քիչ կգրուցենք,-հարցրեց Մարտիրոս աղան:
- Այսօր շատ հաճախորդներ կային: Հոգնած ենք: Վաղը կգրուցենք,-պատասխանեց Ավետիսը՝ շարունակ մտածելով ձեռքի թղթե տոպրակը թողնել տանը:
- Քնելուց առաջ նա միայն Ջավենին պատմեց վաղն իր անելիքների մասին:
- Զգույշ կլինես,- ասաց ընկերը: -Ամեն փորձանք կարող է պատահել:
- Գիտեմ: Երբ Ղազարը առավոտյան հարցնի ինձնից, կասես, որ գործեր ունեմ, մի փոքր կուշանամ: Եթե պետք լինի, ինքս նրան կասեմ:
- Այդ օրը ոչ միայն Արշավիրը, այլև Ավետիսը ծանր ու երկյուղով լի գիշեր անցկացրին:

1920 թվականի մարտի 27-ն էր: Արշավիրը շատ վաղ արթնացավ: Ամբողջ գիշեր խառնիճաղանջ մտքերը հանգիստ չէին տալիս նրան: Ուղեղում անվերջ տարբեր վարկածներ էր մշակում մատնիչին սպանելու համար: Այն, որ լույսը բացվելուն պես աստիճանաբար փողոցները մարդաշատ են դառնում, և ինքը իր առջև դրված հանձնարարությունը պետք է կատարեր բավականին արագ, փորձելով վնաս չպատճառել փողոցում հայտնված անցորդներից ոչ մեկին:

Վահե Ինսանը միշտ թիկնապահով էր շրջում: Եթե թիկնապահն էլ համարձակվեր իրեն վնասել, անկասկած, նրան էլ շարքից կհանի: Եվ թուրք ոստիկանները, որ ամեն տեղ շրջում էին: Թերևս նաև հնարավոր էր, որ այդ պահին նրանք չհայտնվեն: Բայց եթե հայտնվե՞ն... Նույնիսկ փորձեն իր վրա կրակե՞լ: Իր ընկերները՝ Ավետիսը և Արշակը, չափազանց զգոն պիտի լինեն, որպեսզի հարկ եղած դեպքում պաշտպանեն իրեն, այլապես եթե իրեն բռնեն, այդ սրիկան հանկարծ չսպանվի, անհաջող մահափորձի պատճառով հաստատ կփախչի Պոլսից: Իսկ Վահե Ինսանին սպանելը այժմ դարձել էր Արշավիրի կյանքի գերխնդիրը: Թե չէ կստացվի, որ օրեր, շաբաթներ շարունակ դավաճանին հետևելը, նույնիսկ առանձին դեպքերում նրան ընկերակցելը, զուր ժամանակի վատնում էր: Ինքն իրեն պարզապես չի ների: Բացի այդ, դաշնակցականների կենտրոնական գրասենյակից նույնպես շտապեցնում էին գործը գլուխ հանել, այլապես նույն առաջադրանքը ևս ուրիշներին չէին հանձնարարի: Սակայն Արշավիրը ցանկանում էր անապայման ինքը վերացնել մատնիչին:

Նա մտքերով տարված՝ հասավ դավաճանի տան մոտ: Նայեց տան ուղղությամբ: Նրա բնակարանի պատուհանները դեռ փակ էին, վարագույրները՝ իջեցրած: Հետևաբար, դեռ պետք է սպասեր: Ղանդաղ քայլերով քայլերն ուղղեց դեպի Թարլա Պաշրի պողոտան: Ձեռքին խնամքով բռնել էր թղթե տոպրակ, որի մեջ էր ատրճանակը: Եկել էին ընկերները՝ Արշակը և Ավետիսը: Նրանք առանձին-առանձին հետևում էին Արշավիրին: Մինչև ժամը ութը քայլեցին փողոցներով: Հետո խանութները բացվեցին, մարդիկ սկսեցին անցուդարձ անել: Սակայն աստիճանաբար անցորդները շատանում էին:

Արշավիրը Թարլա Պաշրիի պողոտայով քայլում էր, երբ տեսավ, թե ինչպես մատնիչը դիմացից գալիս էր: Վահեի ձեռքերը գրպանի մեջ էին: Պատանին գիտեր, որ նրա գրպանում միշտ ատրճանակ կար: Վահե Ինսանը մոտեցավ Արշավիրին՝ քայլերը դանդաղեցնելով:

Նրա թիկնապահը գալիս էր ետևից: Արշավիրը ջանքեր գործադրեց ժպտալու՝ իբրև ծանոթների: Խորամանկ դավաճանը ևս ժպտաց: Չափազանց հարմար պահ էր ստեղծվել: Արշավիրը հանեց ատրճանակը և կրակեց: Այն մի քիչ վրիպեց, քանի որ գնդակը կպավ կոկորդին: Մատնիչի աչքերը չբեցին, բայց նա իրեն չկորցրեց: Այդ վիճակում էլ փորձեց ատրճանակը հանել գրպանից, մյուս կողմից էլ խռխռացող ձայնով անցորդներից օգնություն խնդրեց: Մատնիչի թիկնապահը վախից անհետացավ, չփորձելով անգամ ինչ-որ չափով պաշտպանել տիրոջը: Արշավիրը տեսնելով, որ մատնիչը ճիգ էր գործադրում իր վրա կրակելու, իսկույն ևեթ կրակեց նրա թևին, որ չկարողանա ձեռքը շարժել: Վահեն ցավից ծղրտաց: Փողոցում իրարանցում սկսվեց կրակոցներից, բայց ոչ ոք չհամարձակվեց միջամտել: Վահե Իսսանը մի քիչ քայլելով ընկավ գետնին, այնուհետև փորձեց վեր կենալ: Որոշել էր չհանձնվել: Սակայն Արշավիրը ժամանակ չտվեց դավաճանին: Ատրճանակի բոլոր փամփուշտները նրա գլխի վրա արձակեց: Մատնիչի գանգը ջածջախված էր:

Արշավիրը, որի նյարդերը սաստիկ լարված էին, մի պահ նայեց շուրջը: Մարդիկ էին հավաքվել: Հնարավոր էր նրանցից մեկը միջամտեր, և կրակոցները շարունակվեին: Դրանցից խուսափելու նպատակով նա ատրճանակը բարձրացրեց, գոռալով, որ կկրակի, եթե իրեն մոտենան ու վախեցրեց մարդկանց: Ցավոք, թուրք ոստիկաններից մեկը հայտնվեց: Արշավիրն իրեն չկորցրեց և ատրճանակի փողով նրա գլխին հարվածեց: Մեկ ուրիշ ոստիկան ձեռքը պարզեց, որ կրակի Արշավիրի վրա, Ավետիսը, որ մոտեցել էր մարդկանց, ինքը կրակեց: Ոստիկանն իսկույն ընկավ գետնին: Այնուհետև նա արագ գնաց այլ ուղղությամբ, Արշավիրն էլ վազեց բոլորովին այլ ուղղությամբ կողմնակի փողոցներով: Երբ համոզվեց, որ իրեն հետևող չկա, ետ նայեց: Միայն Արշակն էր հետևում իրեն, որն էլ նրան ապահով տուն տարավ:

Արշավիրն ու Ավետիսն այդ օրից հետո այլևս չհանդիպեցին իրար:

Ավետիսը դեպքի վայրից հեռանալուց հետո հասավ հորեղբոր տուն: Սիրտը սաստիկ արագ էր աշխատում: Նախ տազնապից, որ կարող էին իրեն աննկատ հետևել, երկրորդը՝ վիրժառության զգացումից: Առաջին անգամ կյանքում թուրք էր սպանել, այնինչ արյունոտ էին Թուրքիայում ապրող բոլոր թուրքերի ձեռքերը, քանի որ երիտթուրքերի իշխանությունը հայերի բնաջնջման իր հրեշավոր ծրագիրն իրականացրել էր զինվորների ու ոստիկանների միջոցով: Բոլորն են մասնակից դարձել հայերի սպանդին: Նա ցմահ իր հիշողությունից չի կարող ջնջել գաղթի ճանապարհներին ականատես եղած զարհուրելի տեսարանները: Ավետիսը քանիցս երդվել էր վրեժ լուծել նրանցից, որ որպես հայ երիտասարդ կարողանա հանգիստ խղճով ապրել աշխարհում: Նա շնորհակալ էր Արշավիրից, որ իր համար հնարավորություն ստեղծեց առաջին հանձնարարությունը հաջողությամբ կատարելու համար: Այսինքն՝ սովորեց զենք բռնել ու կիրառել այն:

Մտնելով իր սենյակը, նա մի քանի անգամ ևս պատուհանից նայեց դուրս, կրկին արձանագրելու, որ «պոչ» չունի: Հետո ատրճանակը գրպանից հանելով՝ մի լաթի մեջ փաթաթեց, դրեց ծոցագրպանը: Համոզվելով, որ հորեղբայրը տանը չի, նա գնաց այգու խորքը և ատրճանակը հարմար տեղ թաքցրեց: Իսկ երբ հասավ սրճարան, Ղազարն իրեն էր սպասում: Սրճարանում դեռ հատուկենտ մարդիկ կային: Նայելով նրա փոքր-ինչ շփոթված ու լարված դեմքին, Ղազարը հարցրեց.

-Ո՞ւր էիր գնացել:

-Կարևոր գործ ունեի:

-Ժամը ուրիշն այստեղ էի: Այդ ե՞րբ ես հասցրել ինչ-որ տեղ գնալ ու վերադառնալ:

-Ուրեմն, Ղազար, եթե ինձ հարցնելու լինեն, ես քեզ հետ էի ժամը ութին, երբ սրճարանը բացել ես: Հասկացա՞ր,- ասաց Ավետիսը: -Զավենին ու մյուս մատուցողին՝ Սարուխանին էլ նույնը կասենք:

-Դու ինձ վախեցնում ես: Ի՞նչ է պատահել,- հարցրեց Ղազարը:- Միասին գնանք պահեստ, այնտեղ կխոսենք:

Երբ ներսից փակեցին պահեստի դուռը, երկուսով նստեցին փայտե արկղների վրա:

-Թուրք ոստիկան եմ սպանել, -առանց նախաբանի պատասխանեց Ավետիսը:

-Դո՞ւ...Զե՞նք էլ ունեիր: Այդ ինչպե՞ս պատահեց,- հարցրեց Ղազարը տազնապալի հայացքով:

-Նա ընկերոջս վրա էր ուզում կրակել, ես էլ հասցրի առաջինը կրակել,- ասաց Ավետիսը և վերցնելով կողքի դարակից գարեջրի շիշը, բացեց այն:

Ղազարն զգաց, որ նա ծայր աստիճան լարված է:

-Մի՛ անհանգստացիր, եթե հարցնելու լինեն, կասենք, որ այստեղ էիր: Ես քեզ իմ կյանքով եմ պարտական, եղբայրս: Դու ինձ փրկեցիր: Սկզբում քո վարձած կացարանում էի մնում, երբ աշխատում էիր, իսկ հետո տեղափոխվեցի մեր տան նկուղը, որ ինձ թուրք ոստիկանները չտանեն: Բայց քեզ բռնեցին, ու դու թաքցրիր, որ բարեկամ ունես, որպեսզի ոստիկանները մեր տուն չհասնեն: Եվ նրանք քեզ տարան, թեև աշխատում էիր և կացարան ունեիր: Աստծո կամոք ողջ մնացիր: Ինչ էլ անես, իմացի՛ր, քո կողքին եմ,- ձեռքը դնելով Ավետիսի ուսին ասաց Ղազարը:

Ավետիսը խորը արտաշնչեց:

-Բայց ո՞վ էր այդ ընկերը, որին պարտավոր էիր պաշտպանել: Չէ՞ որ ընդամենը մեկ ամիս է, ինչ այստեղ ես եկել,- հարցրեց Ղազարը:

-Նրա անունը չեմ կարող ասել: Սակայն նա վերացրեց մի մատնիչի, ով հարյուրավոր հայ մտավորականների անվանացուցակ էր տվել թուրք ոստիկանությանը և բոլորին բռնել ու սպանել են: Նա իր չար գործը մեր օրերում էլ շարունակում էր: Ի դեպ, մեր սրճարանն էլ է մտել մի քանի անգամ:

Ղազարի բիբերը զարմանքից խոշորացան: Ականջներին չէր հավատում:

-Վահե Իհսանի մասի՞ն է խոսքդ: Այդ ամենամեծ մատնիչի՞:

-Դու գիտե՞ս նրան:

-Զգիտեմ, բայց նրա անունը շատերը լսել են: Լավ են արել, որ սատկացրել են, թեկուզ նրանից բացի էլի շատ հայ մատնիչներ կան:

-Ղազար, այստեղ Պոլսում վտանգավոր է ինձ համար աշխատելը: Չի իմացվի, մեկ էլ տեսար, անցորդներից ինչ-որ մեկը հետագայում իմ դեմքը հիշի ու մատնի,- ասաց Ավետիսը, որը հուզմունքից արդեն կիսով չափ դատարկել էր գարեջրի շիշը:

-Ի՞նչ ես առաջարկում:

-Ուզում եմ վաղը Զավենի հետ շոգենավ նստել ու հեռանալ: Միայն թե գումարի հարցում մի քիչ պիտի օգնես:

-Կօզնեմ անպայման: Մի՛ մտածիր: Իսկ երեկոյան հայրիկին այդ մասին ոչ մի խոսք: Պարզապես կասես, որ Հունաստան ես ուզում վերադառնալ:

-Այո՛, բայց ոչ թե Հունաստան, այլ՝ Հայաստան:

-Դե, լավ, գնանք տղաներին էլ զգուշացնենք, որ սրճարանում ես: Ես մի քիչ կմնամ, հետո կհանդիպենք տանը: Գումարը հետս կբերեմ,- ասաց Ղազարը և երկուսով դուրս եկան պահեստից:

Երեկոյան սրճարանը փակելուց հետո Ավետիսը Զավենի հետ գնաց տուն և հանդիպեցին հորեղբորը: Տնեցիները բոլորը տանն էին:

-Վա՛յ, տնաշեն, լավ էլ որոշեցիր տեսնել մեզ, -ասաց Մարտիրոս աղան Ավետիսին:- Ինչ սրճարանում աշխատում ես, մեզ մոտ քիչ ես լինում:

-Ընդունում եմ մեղքս, հորեղբայր: Ի՞նչ արած, հոգնած գալիս էինք տուն և ուզում էինք պառկել, հանգստանալ:

Մարտիրոս աղան անմիջապես կնոջը խնդրեց սեղան դնել:

-Շնորհակալ եմք: Մենք այնտեղ ճաշել ենք,-պատասխանեց Ավետիսը:

-Ուրեմն թեյ կխմենք միասին:

Մինչև տանտիրուհին ուղղվեց խոհանոցի կողմը, Մարտիրոս աղան ասաց.

-Թեկուզ տեղյակ եմ քո գործերից:

Ավետիսն անհանգիստ նայեց Ղազարին, որը գլխով բացասական նշան արեց, որ խոսքը միայն սրճարանի մասին է:

-Կարևորը դու աշխատասեր ես ու պատասխանատվությամբ ես կատարում ցանկացած աշխատանք,-ավելացրեց նա:

-Հորեղբայր, բայց մենք ուզում ենք վաղը հեռանալ Պոլսից,- հանկարծակի հայտարարեց Ավետիսը:

-Ինչո՞ւ այդքան շուտ...Հազիվ մեկ ամիս եք մնացել այստեղ,- Մարտիրոս աղան հարցական նայեց Ավետիսին, հետո Ղազարին դիմելով հարցրեց.-Հո եղբորդ չե՞ս նեղացրել:

Ղազարը բարեհամբույր ժպտաց.

-Հայրի՛կ, բայց ինչու պիտի վիճեի: Ինքդ էլ գիտես, որ զարմիկս ազնիվ է ու բարեխիղճ: Ղա նրա ցանկությունն է: Գաղթի սարսափելի ճանապարհներ անցած մարդը դժվար է հանդուրժում այստեղ թուրքերի լկտի խոսակցությունները, նաև՝ ներկայությունը:

-Իրավացի ես, եղբայրս,- հաստատեց Ավետիսը:- Այնպես որ, եկել ենք հրաժեշտ տալու ձեզ:

Մարտիրոս աղան նկատելիորեն հոնքերը կիտեց:

-Հազիվ ընտելացել էի, որ ողջ մնացած գոնե մի հարազատ ունեմ: Դու էլ թողնում, հեռանում ես:

-Եթե Աստված տա, մենք կրկին կհանդիպենք,-ասաց Ավետիսը:

-Ո՞վ գիտե: Ոտքերս այն աշխարհում մեկնած չլինեմ,- պատասխանեց Մարտիրոս աղան՝ կրկին դիմելով որդուն:- Իսկ դու զարմիկիս հետ փողային հաշիվները լուծե՞լ ես: Նա ճանապարհի վրա է: Ինչպես հարկն է, օգնի՛ր նրան:

-Մի՛ մտահոգվիր, հայրի՛կ: Ամեն ինչ կկարգավորեմ:

Թեյելուց հետո պատանիները ցանկություն հայտնեցին հրաժեշտ տալու նրանց: Մարտիրոս աղան պինդ փաթաթվեց Ավետիսին և հուզված շնջաց.

-Գուցե վերջին անգամն եմ քեզ տեսնում: Պինդ կաց ու մեզ երբեք մի՛ մոռացիր:

Ղազարը դուրս եկավ՝ ճանապարհելու տղաներին և իջավ առաջին հարկում գտնվող նրանց տրամադրված սենյակը: Ծոցագրպանից հանելով փողի ծրարը, մեկնեց Ավետիսին:

-Կարծում եմ, այսքանը ձեզ բավականին կհերիքի թե՛ շոգենավի տոմս առնելու, թե՛ ուրիշ ծախսերի համար,- ասաց նա:

-Շնորհակալ եմ, եղբայրս,- վերցնելով ծրարը՝ Ավետիսը ջերմորեն փաթաթվեց Ղազարին:

Հետո նրան հայտնեց այգում թաքցրած ատրճանակի տեղը:

-Ո՞վ գիտե, գուցե մի օր էլ ինձ պետք եղավ այն: Թուրքերի կողքին իսկապես վտանգված է հայերի կյանքը: Միշտ զգո՛ն պիտի լինենք: Բարի ճանապարհ եմ մաղթում ձեզ և խաղաղ գիշեր:

Այդ օրը Ավետիսը դարձյալ անհանգիստ գիշեր անցկացրեց: Նա Ջավենի հետ պետք է բռներ վտանգներով լի ճանապարհը ու այդ ճանապարհի հետ էին կապված նրա ծրագրի հետագա անելիքները: Չէր կարող կրկին Հունաստան մեկնել, քանի որ իր համար այժմ էականը նորանկախ Հայաստանի ճակատագիրն էր: Ջանգեզուրի երկրամասում թե՛ կռիվներ էին մղվում հայերի ու թուրքերի միջև: Նա ուզում էր իր լուծան ունենալ հայ ժողովրդի թշնամիներին ոչնչացնելու գործում:

Վաղ առավոտյան պատանհները հասան նավահանգիստ: Ավետիսը տոմսեր գնեց դեպի Բաթումի մեկնելու համար: Միաժամանակ նա անկատ փոքր-ինչ տագնապով իր շուրջն էր նայում: Մտածում էր, արդյո՞ք իրեն չեն հետևում: Բարեբախտաբար, տարածքում ոստիկաններ չերևացին: Այնուհետև նա ընկերոջ հետ ճամպրուկներով բարձրացան շոգենավ տանող աստիճաններով և մտան իրենց տրամադրած նավախուցը: Սակայն Ավետիսի սիրտը դեռ սովորականից արագ բաբախեց այնքան, մինչև որ շոգենավը հեռացավ ծովափից: Ջավենը, որ լուռ նստած էր նրա կողքին, զգաց, որ նա սաստիկ մտահոգ էր: Պատճառն, անկասկած, թուրք ոստիկանի սպանությունն էր: Ըստ նրա, բոլորովին արդարացի չէր լինի, եթե ընկերոջը որևէ մեկը ճանաչեր, և նա հայտնվեր ճաղերի ետևում: Այդ դեպքում նրանց բոլոր ծրագրերի իրականացումը հոդս կցնդեին: Այնինչ Ավետիսը Ջավենի համար և՛ եղբայր էր, և՛ ընկեր, և՛ կյանքի միակ ապավենը: Ու երբ ճակատագրի բերումով նրանք հասան Հունաստան և հունահայ համայնքը սիրով ընդունեց երկուսին, Ավետիսն անցավ աշխատանքի, իսկ Ջավենը շարունակեց ուսումը դպրոցում: Ավետիսն այդ ընթացքում միայն շաբաթ և կիրակի օրերին էր մասնավոր պարապմունքների հաճախում՝ տիրապետելու համար հունարեն լեզվին: Այդպիսով, նա տարիներ ի վեր երկուսի համար հացի փող էր վաստակում: Դպրոցն ավարտելուց հետո Ջավենն ընդամենը մեկ տարի աշխատեց: Երագում էր հետազայում բարձրագույն կրթություն ստանալ, ընտրել իրավաբանի մասնագիտությունը, որպեսզի հետազայում կարողանար պաշտպանել հասարակ մարդկանց իրավունքներն ու շահերը: Նա երբեք մտադրություն չի ունեցել Եղեռնից հետո վերադառնալ Թուրքիա, քանզի թուրքի ներկայությունն իրեն պիտի ամեն պահ հիշեցներ արյունալի ու ծանր այն տեսարանները, որոնց ականատեսն էր նա դարձել: Սակայն Ջավենին այժմ մտահոգում էր իրենց ճակատագիրը: Նրանք պատրաստվում են երկուսով հայտնվել պատերազմական թոհուրոհի մեջ: Ինչքա՞ն պիտի այնտեղ մնան... Միայն Աստծուն էր հայտնի: Եվ դեռ հարց էր, ո՞րչ կմնան, թե՞ ոչ: Բայց ինչ էլ պատահեր, ինքը պատրաստ էր լինել ընկերոջ կողքին, որը նպատակ էր դրել վրեժխնդիր լինել թուրքերից:

- Կուզե՞ս մի բաժակ սուրճ խմել,- Ջավենին մտքերից հանեց Ավետիսը:
- Այո՛, հաճույքով կխմեմ,- պատասխանեց Ջավենը:
- Մենք ուտելիք էլ ունենք տոպրակի մեջ: Հանի՛ր այնտեղից ինչ-որ պետք է նախաճաշի համար: Ես շուտով կգամ, -Ավետիսը առանց պատասխանի սպասելու՝ դուրս եկավ նավախցից:
- Ջավենը ծուլորեն վեր կացավ տեղից՝ բացելով ուտելիքի տոպրակը: Սակայն զգաց, որ ինքը բոլորովին ավորժակ չունի: Նայեց նավախցի միակ պատուհանից դուրս: Շոգենավը ահագին հեռացել էր ափերից և հանգիստ լողում էր ծովի ալիքներին համընթաց:
- Ավետիսը չուշացավ: Նա բերեց սուրճը քաղցր բուլկիների հետ: Նախաճաշելիս նկատեց, որ Ջավենը չկամությամբ էր օգտվում ուտելիքից:
- Պու քեզ վա՞տ ես զգում: Հո չե՞ս հիվանդացել,- հարցրեց Ավետիսը:
- Չէ՛: Հետո կուտեմ: Հիմա սուրճ կխմեմ:
- Լավ: Միայն թե բուլկիները թարմ են, մեկը վերցրո՛ւ,- մտահոգված տոնով առաջարկեց Ավետիսը:
- Ջավենն անխոս վերցրեց այն և սկսեց ուտել:
- Սուրճը համով էր,-ասաց նա:
- Գուցե ուտելուց հետո մի քիչ պառկեմ ու քնեմ,- ասաց Ավետիսը:-Ամբողջ գիշեր գրեթե չեմ քնել:
- Գիտեմ, անվերջ անհանգիստ պատվում էիր անկողնում,- արձագանքեց Ջավենը

-Ուրեմն՝ դու էլ չե՞ս քնել:

-Մի քիչ քնեցի,- թախծոտ ժպտաց Ջավենը և սեղանի ուտելիքը խնամքով դրեց փոքրիկ սառնարանի մեջ:

Երբ Ավետիսը պառկեց հանգստանալու, Ջավենը դուրս եկավ նավախցից ու բարձրացավ, կանգնեց տախտակամածի վրա:

Գարնանային պայծառ եղանակ էր: Ջավենը նայեց կապույտ երկնքին, հետո հայացքը սահեցրեց կապույտ ալիքներին: Ջգաց ջրի և երկնքի ներդաշնության կախարդական հմայքը: Ճերմակ գույնի շոգենավը սլանում էր առաջ: Շոգենավի ուղևորներին ուղեկցում էր ճայերի ճչոցը, ալիքների աղմուկը, ծովի թարմ բուրմունքը: Ջավենի դեմքին թաց աղի կաթիլներ ցայտեցին: Հատուկենտ մարդիկ կային: Տախտակամածի անկյունում փոքր աթոռին նստած միջին տարիքի մի տղամարդ ջութակ էր նվագում: Նրա կողքին կանգնած էր համարյա նույն տարիքի, կոկիկ հագնված տղամարդ, որը մեծ բաժակը ձեռքին գինի էր ըմպում: Տեսքից հասկացվում էր, որ եվրոպացի էր: Ջավենին հուշերը դարձյալ հեռու տարան: Հիշեց, թե ինչպես էր հայրը սիրում գինի կամ օղի խմել կում-կում արծաթե փոքր բաժակով: Դրան ոչ ոք ձեռք չէր տալիս: Անգամ երբ իրենց արքայերգին, արծաթից ու ոսկուց ուրիշ զարդեղենի հետ դա էլ վերցրին հետները: Ցավոք, հետո թուրք ոստիկանները խուզարկեցին իրենց և ամեն ինչ տարան:

-Համեցե՛ք, միասին մի բաժակ գինի կվայելենք,- Ջավենին ծանր մտքերից հանեց գինի խմող տղամարդը, որը խոսեց ֆրանսերենով:

-Շնորհակալ եմ,- պատանին անգլերենով պատասխանեց նրան:

Ջավենը Հունաստանում՝ դպրոցում սովորելու տարիներին նաև անգլերեն էր սովորել:

-Գիտեք, գինին հաճելի մտորումներ է մարդու մեջ արթնացնում,- այս անգամ անծանոթ տղամարդը խոսեց անգլերենով:

-Նայած ում համար,- պատասխանեց Ջավենը:- Մարդ պետք է հաճելի հուշեր ունենա: Եղեռնի ականատեսը ի՞նչ պիտի հիշի:

-Կներե՛ք ինձ...Դա իսկապես սարսափելի էր: Այդ տարիներին ֆրանսիական թերթերը գրում էին այդ մասին, զարհուրելի լուսանկարներ տպագրելով: Դուք հիմա ծնողների հե՞տ եք այստեղ:

-Ո՛չ: Ծնողներիս սպանեցին թուրքերը, նաև՝ քրոջս: Մեր ընտանիքից միայն ես եմ ողջ մնացել:

-Ինչո՞ւ այդ ամենից հետո ողջ մնալով վերադարձաք Թուրքիա: Թուրքերը հայերի ոխերիմ թշնամիներն են: Այդ մասին հիմա ամբողջ աշխարհը գիտի,- տղամարդը կռացավ, տախտակամածի հատակին դրած շիշը վերցրեց և գինի ավելացրեց բաժակի մեջ:

-Ընկերոջս էր պետք այստեղ կրկին գալը:

-Նա՞ էլ քո պես կորցրել է ծնողներին:

-Այո՛: Նա նույնպես միայնակ է մնացել:

-Ես Պոլսում առաջին անգամն եմ լինում: Ինձ հաղորդեցին, որ լավագույն ճարտարապետական հուշարձանները և պալատները հայերի ձեռքով են կառուցվել,- ֆրանսիացին խորը արտաշնչելով՝ շարունակեց.- Ջարմանալի է, ինչո՞ւ են թուրքերն այդքան ատում հայերին:

Ջավենը ոչինչ չպատասխանեց: Ի՞նչ ասեր: Ամբողջ աշխարհի առջև էր կատարվել հայերի կոտորածը, սակայն ոչ ոք չփորձեց կասեցնել Թուրքիայի իշխանությունների հայերին բնաջնջելու աղետալի ծրագիրը:

Ջավենը մի անգամ ևս ունկնդրելով ծովի ալիքների շուկը և թախիծով վայելելով քամու աղի համ ունեցող բուրմունքը, հեռացավ տախտակամածից՝ քայլերն ուղղելով իրենց նավախցի կողմը:

Հեռվից արդեն երևում էր Բաթումիի նավահանգիստը: Կեսօրին շոգենավը ափ հասավ: Պատանհներն ուղևորների հետ իջան շոգենավից և մի պահ կանգնեցին՝ ուշի-ուշով գննելով շուրջը: Ծովափից ոչ հեռու, գետնի վրա կույզ էր եկել մի ծեր ու կույր ջութակահար, որը ծուլորեն, անտրամադիր, դանդաղ ինչ-որ երաժշտություն էր նվագում: Նրա առջև դրված էր գլխարկը, որի մեջ սովորաբար անցորդները փող էին գցում: Տղաները մոտեցան նրան: Ավետիսը նույնպես մետաղադրամ գցեց: Դժվար չէր նկատել, որ ծեր երաժիշտը շատ չնչին գումար էր վաստակել: Կույր երաժշտին մոտեցավ նաև շոգենավում տախտակամածի վրա ջութակ նվագող երիտասարդը: Վերցնելով կույր երաժշտի ջութակը՝ նա եռանդով սկսեց այնպես նվագել, որ ոչ միայն մարդաշատ դարձավ տարածքը, այլև շատ մետաղադրամներ լցվեցին կույր երաժշտի գլխարկի մեջ:

-Կարո՞ղ եմ իմանալ՝ ո՞վ եք դուք,-հարցրեց ծեր երաժիշտը՝ մետաղադրամների զնգոցից զգալով, որ մարդիկ են հավաքվել շուրջը և հաճույքով են ջութակահարին ունկնդրում:

-Ես սովորական երաժիշտ եմ,-պատասխանեց անծանթ երիտասարդը:-Ցանկացա ընդամենը մի փոքր օգտակար լինել ձեզ:

-Շնորհակալ եմ, տղա՛ս: Դու կախարդական մատներ ունես և մեծ երաժիշտ կդառնաս: Նաև մեծ սիրտ ունես: Քանի օր է, տկար եմ զգում ինձ, հազիվ էի նվագում, որ հացի համար փող վաստակեմ:

Երիտասարդ ջութակահարը մեղմ ժպտաց և ջութակը տիրոջը վերադարձնելով՝ հեռացավ:

-Իսկ դուք որտեղի՞ց եք,- հետաքրքրասիրությամբ հարցրեց Ավետիսը:

-Իմ հայրենիքը մնացել է հեռվում: Ես Թուրքիայից եմ՝ Վանի նահանգից: 1915 թվականի կոտորածից մի կերպ ազատվեցինք, հայտնվեցինք այստեղ: Որդիս հետո մեկնեց Ֆրանսիա, ես ու կինս մնացինք: Բայց կինս մեկ ամիս առաջ մահացավ՝ ինձ թողնելով մենակ: Ապրելուս իմաստը ո՞րն է: Գոնե ես հրաժեշտ տայի այս կյանքին,- կույր երաժիշտը թաշկինակով սրբեց աչքերը:

-Ուրիշ հարազատներ չունե՞ք,- հարցրեց Ջավենը:

-Ո՛չ: Մեզ փախստականներիս համար կացարաններ են հատկացրել: Հարևաններս երբեմն այցելում են ինձ, տաք ճաշ են բերում ինձ համար:

-Պապի՛, մենք նույն երկրից ենք՝ Թուրքիայից: Մեր հարազատները Եղեռնի զոհ են դարձել: Աստված ինձ ու ընկերոջս կյանքը փրկել է, որ մենք վրեժխնդիր լինենք թուրքերից: Եթե կռվի դաշտ գնալու չլինեինք, քեզ հետներս կտանեինք,- ասաց Ավետիսը՝ հիշելով աքսորի ճանապարհին հանդիպած Մելքոն պապին, որին մինչև մահը օգնել էր, որ սովից չմահանար:

- Ձեզ բարի ճանապարհ եմ մաղթում, տղաներ: Թող թշնամու արծակած գնդակը ձեր պես որբերին չդիպչի երբեք...

Ծեր երաժիշտը վեր կացավ տեղից և շոշափելով գլխարկը, վերցրեց այնտեղ հավաքված մետաղադրամները, գլխարկը դրեց գլխին ու վերցնելով ձեռնափայտը՝ անխոս հեռացավ:

Ավետիսը թախծոտ մտածեց. «Ահա սա է հայի ճակատագիրը: Հազարավոր մարդիկ թողնելով իրենց տունն ու ունեցվածքը, թափառաշրջիկներ են դարձել՝ պատսպարվելով աշխարհի տարբեր վայրերում»:

Դպրոցահասակ տարիքի մի տղա մատուցարանը ձեռքին՝ տաք բլիթներ էր վաճառում: Ավետիսը հարցրեց նրանից, թե արդյո՞ք մոտակայքում առաքելական եկեղեցի կա: Նա ոչ միայն գլխով դրական նշան արեց, այլև ցույց տվեց ճանապարհը, թե ինչպես պետք է այնտեղ հասնել: Պարզվեց, որ եկեղեցին գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում: Եվ քանի որ հաճելի եղանակ էր, նրանք ուսապարկերով որոշեցին քայլել նշված ուղղությամբ:

Պատանհները վերջապես հասան Սուրբ Փրկիչ եկեղեցին: Այն կառուցվել էր 1887-1898 թթ: Եկեղեցին կառուցելու հիմնական միջոցները հավաքվել է քաղաքի հայ համայնքի կողմից, ինչպես նաև հայտնի նավթարդյունաբերող և գործարար Ալեքսանդր Մանթաշյանի բարեգործությամբ: Ճարտարապետն էր ավստրիացի Ռ.Մարֆելդը: Եկեղեցու առջև մագնոլիա տեսակի ծառ կար, որը 1890 թվականին տնկել է անվանի ծովանկարիչ և բարեգործ Հովհաննես Այվազովսկին:

Ավետիսն ու Ջավենը լուռ ու գլխահակ մտան եկեղեցի և մոմեր վառելով՝ իրենց խնդրանքն ուղղեցին առ Աստված: Անկասկած, նրանց ցանկությունն էր բարեհաջող հասնել Լեռնահայաստան, մասնակցել թուրքերի դեմ տարվող կռիվներին և ողջ ու առողջ ետ վերադառնալ:

Առանց իրար հետ որևէ բառ փոխանակելու, ընկերները երբ դուրս եկան եկեղեցուց, բակում երիտասարդ մի զինվորական, մագնոլիա ծառի տակ, կանգնած ծխում էր: Ավետիսը մոտեցավ նրան և հայերեն հարցրեց, թե ինչպես կարող են հասնել Ջանգեզուր:

Ջինվորականն, իրոք, հայ էր: Նա ոտից գլուխ չափելով ուսապարկերով պատանհներին՝ հարցին հարցով պատասխանեց:

-Իսկ դուք որտեղի՞ց եք ժամանել:

- Պոլսից: Մտադիր ենք մասնակցել հայ-թուրքական կռիվներին,- համարձակորեն հնչեցին Ավետիսի խոսքերը:

-Ահա՛ թե ինչ,- ժպտաց երիտասարդ զինվորականը:- Երևում է, որ այս կողմերում առաջին անգամն եք լինում:

-Այո՛, իրավացի եք:

-Գոնե՛ զենք բռնել գիտե՞ք:

Տղաները գլուխները դրական օրորեցին: Ավետիսը չուզեց մինչև վերջ անկեղծանալ, պատմել այն մասին, որ նույնիսկ մի թուրք ոստիկան է սպանել:

-Թեև այնտեղ, միևնույն է, դուք անպայման զորավարժությունների պիտի մասնակցեք, որ կարողանաք հմտորեն զենքից օգտվել,- շարունակեց զինվորականը: -Ուրեմն ծանոթանանք: Իմ անունը Շահեն է: Երկու ժամ հետո իմ ետևից զինվորական մեքենա կգա: Մենք պետք է Ջանգեզուր մեկնենք: Ես այստեղ մի քանի օր առաջ եմ եկել՝ կոնկրետ հանձնարարությամբ:

Շահենը երեսնամյա երիտասարդ էր՝ բարձրահասակ, թուխ մաշկով, շագանակագույն խոշոր աչքերով և ալիքածև մազերով: Նա քաջ զինվորական էր, որը տարիներ շարունակ մարտերի էր մասնակցել նախ զորավար Արդրանիկի, իսկ հետո՝ Գարեգին Նժդեհի հրամանատարության ներքո: Վաշտերից մեկի հրամանատարն էր:

Տղաները գոհ իրար հայացքներ փոխանակեցին:

-Ես Ավետիսն եմ, նա իմ ընկերն է՝ Ջավենը,- ասաց Ավետիսը:

-Շատ լավ: Հիմա միասին կգնանք մոտակա պանդոկը՝ ճաշելու: Երկար ճանապարհ ունենք անցնելու,- ասաց Շահենը և հանգցնելով ծխախոտը՝ առաջ անցավ:

Պատանհները հետևեցին նրան:

-Սրանից ավելի լավ տարբերակ դժվար թե գտնվեր,- ընկերոջ ականջին շշնջաց Ավետիսը:

Ջավենն ի պատասխան խոր արտաշնչեց:

Պանդոկը, ուր ներս մտան երեքով, անշուք տեսք ուներ: Ներսում գտնվող հաճախորդները վրացիներ էին: Երբ մատուցողը մոտեցավ նրանց, Շահենը տղաների համար ինչ-որ անծանոթ ուտելիքներ պատվիրեց: Երբ նա հեռացավ, Ավետիսն ասաց.

-Մեր ուսապարկերում էլ ուտելու բաներ ունենք, կարող ենք հյուրասիրել:

Շահենը բարեհամբույր ժպտաց՝ նայելով Ավետիսի դեմքի միամիտ արտահայտությանը:

-Ոչինչ, հետո դրանք ձեզ պետք կգան: Դուք հիմա վրացական ուտեստներից մի փոքր կօգտվեք:

Մինչ մատուցողը կբերեր պատվերը, նա դիմեց տղաներին:

-Արևմտյան Հայաստանի ո՞ր կողմերից եք:

-Ես Խարբերդի շրջանից եմ, Ջավենը՝ Ջեյթունից: Մեր հարազատները Եղեռնի զոհ դարձան: Մի կերպ մեզ հաջողվեց փրկվել: Աթենքում հայտնվեցինք, բայց հետո որոշեցինք վերադառնալ,-պատասխանեց Ավետիսը նաև ընկերոջ փոխարեն, թեև վրեժխնդրության զգացումը բացառապես իր սրտի խորքում էր բուն դրել:

-Հասկանալի է: Անցած տարի էլ զորավար Անդրանիկի կոչով բազմաթիվ արևմտահայեր եկան Ջանգեզուրը պաշտպանելու: Այնպես որ, հնարավոր է մեզ մոտ հանդիպեք ձեր երկրացիներին:

Ավետիսը թախծոտ ժպտաց:

-Շատ եմ լսել զորավարներ Անդրանիկի ու Գարեգին Նժդեհի մասին, ովքեր դեռ Բալկանյան պատերազմի ընթացքում կռվում էին թուրքերի դեմ, բայց բուլղարական բանակում: Աքսորի ճանապարհին երբեմն մտածում էի, թե ինչու նրանց հայ կամավորականներից կազմված զորագնդերը Եղեռնի ժամանակ չփորձեցին ջախջախիչ հարված հասցնել թուրք հրոսակներին:

Շահենը բարեհամբույր ժպտաց: Պատանի Ավետիսի բողոքը գուցե արդարացի էր, բայց իրավիճակներ են ստեղծվում, երբ անհնարին է դառնում համարձակ գործողությունների անցնելը:

-Կարծում ես նրանք այդ մասին չէ՞ն մտածել,- պատասխանեց Շահենը:-Թուրքական կանոնավոր զորքի դեմ մերոնք ո՞նց պայքարեին: Եթե առանձին տեղերում զենքերով դիմադրում էին, լրացուցիչ զորագնդեր էին բերվում հայերի ըմբոստությունը ճնշելու համար:

Մատուցողը շուտով բերեց պատվերը: Երեքով ախորժակով ճաշեցին: Պատանիները շատ հավանեցին վրացական խոհանոցը: Ճաշից հետո նրանք դարձյալ զրուցելով մի քիչ զբոսնեցին, մինչև եկավ զինվորական մեքենան: Նրա մեջ գտնվող վարորդը, ևս երկու հոգի Շահենի պես զինվորական հագուստով էին: Տղաները տեղավորվեցին մեքենայի մեջ և հինգ հոգով ճանապարհ ընկան դեպի Լեռնահայաստան:

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց 1918 թվականին, բայց Հայաստանի Հանրապետության համար այն դեռ ավարտված չէր: Ադրբեջանի հանրապետությունը, դաշնակցած Խորհրդային Ռուսաստանի հետ, ոտնձգություններ էր անում ՀՀ տարածքների նկատմամբ: Սյունիքը, Արցախը և Նախիջևանը 1918-1921 թթ. շատ ծանր օրեր ապրեցին, քանի որ Ադրբեջանը և Թուրքիան ձգտում էին վերացնել Հայաստանը: Նախիջևանի կողմից թուրքերը, իսկ Արցախի կողմից ադրբեջանցիները մեծաթիվ հրոսակախմբերով, 1919 թ. ամառվանից սկսած՝ անընդհատ հարձակումներ էին գործում Ջանգեզուրի վրա: ՀՀ կառավարության որոշմամբ Սյունիք ուղարկվեց 1919թ. օգոստոսի սկզբներին փոխգնդապետի աստիճան ստացած Գարեգին Նժդեհը՝ նշանակվեց որպես Կապարգողթի հրամանատար: Կապարգողթն իր մեջ ներառում էր Ջանգեզուրի երեք շրջանները՝ Կապանի, Գողթ, Արևիք: Այս երեք շրջանների անուններից է կազմված Կապարգողթ հապավումը:

1886 թ. հունվարի 1-ին Նախիջևանի Կզնութ գյուղում ծնված Գարեգին Նժդեհը /Գարեգին Տեր-Հարությունյան/ ռազմական հմուտ գործիչ էր, ուսանել էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ինչպես նաև Սոֆիայի Ֆերդինանդ թագավորի անվան զինվորական ուսումնարանում: 1907թ. նա ակտիվ մասնակցություն ունեցավ պարսկական հեղափոխությունում: 1912թ. մեկնելով Բուլղարիա՝ մասնակցել է Բալկանյան պատերազմին 300 հոգանոց հայ կամավորների ջոկատով և շատ պարգևների է արժանացել: Առաջին

համաշխարհային պատերազմի սկզբին նա անմիջապես զինվորագրվեց կամավորական շարժմանն ու դարձավ հայկական երկրորդ կամավորական ջոկատի փոխհրամանատարը /հրամանատար՝ Դրո/: Աչքի ընկավ նաև հայ-թուրքական ճակատում և կառավարական պարզևների արժանացավ ռուսների կողմից:

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության առաջին օրերից իսկ Նժդեհը ձեռնամուխ եղավ զորքի կազմակերպման հարցերին: 1918 թ. նոյեմբերին նա նշանակվեց իր հարազատ երկրամասի՝ Նախիջևանի գավառապետ: Այստեղ նա զբաղվեց հատկապես Երևանի և Նախիջևանի ճանապարհի բացման հարցով: Թուրքերը կուտակվել էին Արարատի Ավշար և շրջակա գյուղերում ու կտրել էին կապը հանրապետության մայրաքաղաքի ու Նախիջևանի միջև: Նժդեհը Ղազար Քոչարյանի օգնությամբ / Գառնիի քաջերից մեկը՝ Քաչալ Ղազար/ բացեց ճանապարհը և մաքրեց շրջանը թուրքերից:

Գարեգին Նժդեհը պատկառելի արտաքինով երիտասարդ էր՝ խոշոր, արտահայտիչ, խորիմաստ աչքերով, առնական դիմագծերով, սև ու խիտ ալիքածև մազերով, որոնք երևում էին սպայական գլխարկի տակից: Նա ընդամենը երեսուներեքամյա զինվորական էր, բանաստեղծ, անգերազանցելի հռետոր, կրակոտ ճառախոս: Առաջին չորս ամիսները Նժդեհը զբաղված էր խրամատաշինությամբ, ամրոցների շինությամբ: Խրամատներ պետք է ունենային բոլոր գյուղերը: Եվ ժողովուրդը, տղամարդ ու կին, մինչև իսկ երեխաները, մասնակցում էին խրամատաշինությանը: Նժդեհի հրամանով շրջանների բոլոր գյուղերի մեջ պետք է կառուցվեին միջնաբերդեր, որոնք պետք է կոչվեին այս կամ այն նահատակ հերոսի անունով՝ Քրիստափորաբերդ, Խեչոյաբերդ և այլն: Բոլոր ժողովրդական վաշտերը ունեին իրենց հեղափոխական սուրբը՝ Նիկոլ Դուման, Ռոստոմ և այլն:

Ստանձնելով Կապարգողթի հրամանատարությունը՝ Նժդեհի հրամանով զորքերը բաժանվեցին վաշտերի: Նշանակվեցին վաշտապետներ, հրամանատարներ, որոնք զբաղվում էին զինվորագրված գյուղացիների մարզումներով: Նժդեհը հասկանում էր, որ հասարակ գյուղացիների միջոցով պետք է կռվի կանոնավոր բանակների դեմ, նաև պիտի հաղթի: Ջինվորների հագուստները քաղաքացիական էին: Մեջքներին կախել էին քաթանե պայուսակներ, կրում էին գլխանոցներ/բաշլը/, կապել էին փամփուշտակալներ և շատերն ունեին ատրճանակներ: Ունեին նաև գառան մորթուց գլխարկներ, սեղմ գոտիներ:

Գարեգին Նժդեհը ժամեր, օրեր շարունակ նրանց սովորեցնում էր շարային արվեստի գաղտնիքները: Ջորավարը նստավայր ընտրեց Կապանի հանքերը: Նրա ամենաառաջին խնդիրն էր լուրջ հիմքերի վրա դնել ժողովրդի ինքնապաշտպանության գործը և կազմակերպել Սյունիքի ուժերը: Նժդեհի խորհրդով ու պահանջով գյուղացիներն իրենք էին զենքեր պատրաստում, հաճախ էլ թշնամու դեմ կռվում նրանցից խլված զենքերով ու ռազմամթերքով: Նժդեհի ղեկավարությամբ պատրաստվում էին ռմբակիր տակառներ: Ջորավարը գյուղացիներին սովորեցրեց պայթուցիկ տակառներ պատրաստելու և պայթեցնելու ձևերը: Ունենալով ռազմական փայլուն կրթություն և մարտական փորձ, Նժդեհը հասկանում էր, որ թշնամու դեմ կռվելիս պայթուցիկ տակառները պարզապես փրկություն էին հայ մարտիկների համար: Սրանք տասից մինչև երեսուն կիլոգրամանոց մետաղի տակառներ էին, որոնք լցվում էին մետաղի կտորներով և պայթուցիկ նյութերով: Երբ թշնամին գտնվում էր ներքևում կամ ձորերում, ծանր տակառները գլորվում էին սարսափելի աղմուկներով ու պայթյուններով, իրենց հետ թշնամու վրա թափելով ժայռաբեկորներ, պղնձի ու երկաթի կտորտանք: Թշնամին զարհուրած այդ ամենից՝ փախչում էր:

Նժդեհին հաջողվում է Սյունիքի ժողովրդի մեջ վերականգնել դիմադրողական ոգին և մահմեդականներից ազատել բազմաթիվ հայկական գյուղեր: Քաջ զորավարին ամենից շատ անհանգստացնում էր Գողթան գավառի հայության ճակատագիրը: Անհրաժեշտ էր պաշտպանել Ջանգեզուրի նախադուռ հանդիսացող Գողթանը և մարդկանց փրկել

ցեղասպանությունից: Գարեգին Նժդեհը 1920 թ. մարտի 20-ին սկսեց իր արշավանքը դեպի Օրդուբադ: Մինչ այդ Օխշիձորի, Գեղվաձորի և Շուռնուխի ճակատամարտերում փայլուն հաղթանակներ տարած Նժդեհի ջոկատներին հաջողվեց ազատագրել Գողթանը և անցնել Որոտանի կիրճը:

Կեսօրին վաշտի հրամանատար Շահենը պատանիների հետ զինվորական մեքենայով բարեհաջող հասան Կապան: Այն համարվում է Սյունիքի կենտրոնը: Քաղաքը հեռու է Երևանից 320 կմ, գտնվում է Ողջի գետի ափին, Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին: Հարավից և հյուսիսից շրջափակված է Մեղրու և Բարգուշատի լեռներով: Հեշտ էր քաղաք մտնել արևելյան կողմից, այդ պատճառով էլ քաղաքի այդ մասը պարսպապատված է եղել:

Շահենը հրահանգ տվեց զինվորներին՝ Ավետիսին ու Ջավենին տանել իր վաշտը, տրամադրել զենքեր, որպեսզի հենց նույն օրն էլ նրանք հնարավորություն ունենային մասնակցելու զորավարություններին: Իսկ ինքն շտապեց հանդիպելու Կապարգողթի հրամանատարին:

Գարեգին Նժդեհին հատկացրած տունը գտնվում էր Կապանի շուկայի՝ Ղանթարի դիմաց: Այն երկհարկանի մի շենք էր, պատկանում էր քաղաքի մեծահարուստներից մեկին: Երկրորդ հարկն ամբողջությամբ տրամադրվել էր նրան: Մարտական գործողություններից ազատ ժամանակ էր Նժդեհն այնտեղ լինում: Նրա սննդի մասին հոգում էին Կապանի բնակիչները: Տանը սպասավորներ չունեի, միայն շենքը հսկող զինվորներ կային: Տան գործերը կարգավորում էր Խորենը, որի հիմնական աշխատանքը հրամանների մատյանը վարելն էր: Այսինքն՝ զբաղվում էր գրագրությամբ, վառարանի, թեյի և նման այլ տնտեսական գործերով:

Գարեգին Նժդեհը արդարամիտ, ազնիվ, փորձառու մարդ էր, յուրաքանչյուր բարդ իրավիճակում կարողանում էր պատվով դուրս գալ, ճիշտ որոշումներ կայացնել, հաճախ չենթարկվելով ՀՀ կառավարության արձակած հրամաններին: Ջանգեզուրի ողջ բնակչությունը երդվում էր նրա անունով: Նժդեհը հաճախ շփվում էր հասարակ մարդկանց, զինվորների հետ, նրանց ոգևորում էր իր բոցաշունչ խոսքերով ու կոչերով, նաև մարտավարական դասեր էր տալիս: Իր կյանքի առաքելությունը տեսնում էր սրբազան հողը պաշտպանելու մեջ: Նա ամեն պահ պատասխանատու էր զգում իր զինվորների համար՝ ապահովելով նրանց զենքերով, սննդով: Լինելով ֆիզիկապես ուժեղ, դիմացկուն, խիզախ, անվերջ հպարտանում էր իր նախնիների հերոսական սխրանքներով, նույնը պահանջելով իր զինվորներից:

Երբ Շահենը ներս մտավ, Գարեգին Նժդեհը թեյ էր խմում: Մեծ զորավարը թեյ շատ էր սիրում: Հրամանատարին ջերմորեն ողջունելուց հետո՝ զեկուցեց.

-Սպարապետ, ձեր առաջադրանքը կատարված է: Նոր են վերադարձել Բաթումիից:

-Շատ լավ, Շահեն, մոտեցիր, միասին կթեյենք,- ու առանց պատասխանի սպասելու՝ Նժդեհը թեյ լցրեց նրա բաժակի մեջ:

-Ինձ հետ ևս երկու երիտասարդների են բերել, որոնք ցանկություն հայտնեցին կռվելու այստեղ: Արևմտահայեր են...

-Երևի Ցեղասպանությունից մի կերպ փրկվել ու վրեժխնդիր են ուզում լինել,- Նժդեհը մտախոհ կում արեց թեյից:

-Այո: Նրանք կորցրել են իրենց հարազատներին: Ի դեպ, իմ վաշտում էլի արևմտահայեր կան: Նրանք լավ էլ կռվում են:

-Շուշիում մարտյան ջարդերից հետո Վարանդայի շրջանից ահագին փախստականներ են եկել մեզ մոտ: Կանանց ու երեխաներին հազիվ տեղավորեցինք գյուղերում, իսկ տղամարդիկ ընդգրկվեցին տարբեր վաշտերում: Ինձ համար առաջին հերթին մարդկանց սննդով ապահովելն է: Մենք միշտ թշնամու զորամասերն ենք զինաթափում, սովը՝ մեզ:

Մինչդեռ եթե Արաքսի վրայով կամուրջ լիներ, կարող էինք բավարար քանակությամբ հաց ստանալ Պարսկաստանից:

Նժդեհն իր համար նորից թեյ լցնելով՝ շարունակեց.

-Հիշո՞ւմ ես, մինչ Գողթանը ազատագրելը, ինչ սարսափելի վիճակում էր հայտնվել բնակչությունը: Մարդիկ կատվի ու էջի միս էին ուտում: Դաշտերում չմնաց ո՛չ աղվես, ո՛չ ագռավ: Շատ գյուղեր իրենց օրը մթնեցնում էին բանջարով: Այդ օրերին հաճախ կարելի էր տեսնել, թե ինչպես մեր հերթավաշտերը իրենց հետ ճակատ էին տանում երկրագործական և տնային որոշ իրեր, որպեսզի մոտիկ գտնվող թուրք գյուղերում, որոնք նեղված էին բուլշևիկներից, փոխարինեն հացով դիրքապահների համար: Էլ չեմ ասում, որ իմ զինվորի ոտները կոշիկների փոխարեն ծածկում են տրեխները, որի հետ նա լեռների վրա մաշում է և իր ոտների կաշին անգամ ու շատ տեղ իր ծեծված ոտքերի արյունով անցած ճանապարհը ներկելով:

Այդ օրերին Գորիսի պահեստում հրանոթի փոխարեն ստացվեց մի հայ գյուղացու դիակը: Նա իր ջորիով մեկնել էր Վայոց Ձոր ռազմամթերք փոխադրելու: Սովից թուլացած դժբախտն ընկել էր ճանապարհին ու անշնչացել:

Մի ակնթարթ ծանր լռություն տիրեց:

-Սպարապետ, ո՞րն է մեր առաջիկա անելիքը:

-Կարգադրել եմ Կապանի հանքերում գեներալի և պայթուցիկ տակառներ պատրաստեն: Մի քանի օրից հարձակման պիտի անցնենք: Թուրքերից պիտի մաքրենք Ասկյուլումը, Թորոս իշխանի ծննդավայրը՝ Չավանդուր գյուղը,- պատասխանեց Գարեգին Նժդեհը:

Դուռը կամաց ծեծեցին:

-Ներս մտեք,- հուժկու ձայնով ասաց գորավարը:

Ներս մտավ վաշտի հրամանատարներից մեկը՝ Սիսակը:

-Սպարապետ, հարյուրից ավելի բուլշևիկ գերիներ ենք բերել Կապան: Ի՞նչ անենք:

-Բոլորին շարք կանգնեցրեք: Հիմա գալիս եմ,- Գարեգին Նժդեհը ոտքի կանգնեց, վերցրեց գեներալը և շտապ դուրս եկավ Շահենի հետ:

Հասնելով գերիների մոտ՝ նա խրոխտ ձայնով և ցասումով ասաց.

-Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում, իսկ դուք հանուն ինչի՞ եք կռվում, թշվառականներ: Մի կտոր հացի՞ համար: Մոռացե՞լ եք, թե ինչպես էին հայկական կամավորական ջոկատները կռվում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Օգնում էինք ձեզ կռվելու թուրքերի դեմ, հիմա այդպե՞ս եք մեզ ձեր երախտագիտությունը հայտնում, միանալով թուրքերի հետ, ճնշում, հալածում, թալանում ու սպանում եք մեր ժողովրդին:

Սպարապետը, այնուհանդերձ, կարգադրեց բոլորին փոխանակել գերված հայ բնակչության հետ ու հեռացավ:

Ավետիսն ու Ջավենը արագ ընտելացան զինվորական նոր միջավայրին: Նրանք գրեթե ամեն օր մասնակցում էին զորավարություններին: Ժամանակը շատ սուղ էր, քանզի մի քանի օր հետո պիտի հարձակման անցնեին: Վաշտում ընդգրկված էին 18-60 տարեկան տղամարդիկ: Նրանց մեջ կային նաև արևմտահայեր: Բոլորն իրենց քաղաքացիական հագուստներով էին: Նրանք թուրքական զինվորների պես հատուկ զինվորական զգեստներ չունեին: Դա նշանակում էր, որ նորանկախ Հայաստանն այնքան աղքատ էր, որ հայրենիքի պաշտպաններին համապատասխան հագուստներ չէր տրամադրել: Սակայն ամենքին համախմբում էր մի սևեռուն գաղափար՝ թշնամուն ջախջախել բոլոր ուղղություններով, սրբությամբ պաշտպանել իրենց հող-հայրենին, այլապես հայերին սպառնում էր ֆիզիկական բնաջնջման վտանգը: Վաշտի հրամանատարը Ավետիսին ևս բացատրել էր, որ թուրքերն

ադրբեջանցիների հետ ուզում են մաքրել Ջանգեզուրը, Նախիջևանը, որպեսզի Նախիջևանով ուղիղ կամուրջ կապեն Թուրքիայի հետ: Ռուս բոլշևիկները նույնպես օգնում էին նրանց: Հայտնի էր, որ անգամ գլխագին էին նշանակել Նժդեհի համար:

Ավետիսը Ջավենի հետ միասին վաշտի զինվորներից այնքան պատմություններ էին լսել սպարապետի սխրագործությունների մասին, որ ժամ առաջ ուզում էին տեսնել նրան, լսել հայրենաշունչ խոսքերն ու ճառերը: Մի բան ակնհայտ էր: Նրան պաշտում էին բոլորը:

Կեսօրին վաշտի հրամանատար Շահենը հայտնեց զինվորներին, որ գիշերը, լույսը չբացված, պետք է հարձակման անցնեին: Թե որ ուղղությամբ պիտի շարժվեին, լրացուցիչ հրահանգը կստանան հետո:

Ավետիսը ներքուստ թեթևակի տագնապ ու լարվածություն զգաց: Որքան է սպասել նա այդ օրվան: Առաջին անգամ զենքը ձեռքին յուրայինների հետ պիտի կռվեր թշնամու դեմ, այն նույն թշնամու, որը մեկուկես միլիոն հայ է կոտորել ու շարունակում է իր ցեղասպան ծրագիրը այժմ էլ Հայաստանում:

Արդեն մութ էր: Ե՛վ թշնամու, և՛ հայերի դիրքերում խարույկներ էին վառվում: Քանի որ լեռների վրա ձյուն կար, դիրքերում ցուրտ էր: Փշում էր Արաքսի քամին: Դեռ ոչ մի հրացանաձգություն չկար: Խարույկի մոտ հավաքվել էին վաշտերի հրամանատարները և զինվորները: Մթության մեջ նրանց մոտեցավ մի հեծյալ, որն իջնելով ձիուց՝ կանգնեց նրանց կողքին: Գարեգին Նժդեհն էր:

-Ընկեր Գարեգին, -ոգևորված նրա հանկարծակի այցից՝ ասաց վաշտի հրամանատարներից մեկը:

-Այո՛, ե՛ս եմ: Ուզում էի տեսնել, թե ինչպե՞ս է այստեղ վիճակը:

Ավետիսը խարույկից առկայծող բոցերի ներքո շունչը պահած նայեց արիական սքանչելի տեսքով, ռազմական հագուստով զորավարին: Պատանին հիացած հայացքը չէր կարողանում կտրել նրանից: Չէր պատկերացնում, որ նա այդքան ջահել էր, ընդամենը 34 տարեկան: Նրան թվում էր, թե քաջ ու փորձաշատ զորավարները պետք է ավելի տարիքով լինեին: Սակայն իրեն աշխարհի չափ հպարտ էր զգում, որ պիտի կռվեր նրա հրամանատարության տակ գտնվող վաշտերից մեկում: Աքսորի ճանապարհին քանի՞-քանի անգամ էր մտածել խիզախ զորավարի մասին: Հիմա նույնիսկ իր աչքերին չէր ուզում հավատալ: Դիմելով ընկերոջը՝ կամաց շշնջաց.

-Ասա՛ ինձ, որ ես երազում չեմ, որ իսկապես Գարեգին Նժդեհն է այստեղ:

-Չես սխալվում: Այդ նա է մեր դեմ-դիմաց կանգնած,- պատասխանեց Ջավենը:

-Ամեն ինչ կարգին է, սպարապետ,- այս ու այն կողմից արձագանքեցին վաշտերի պետերը:

-Գիտեմ, ձեր շարքերում նոր զինվորներ կան, ովքեր առաջին անգամ պիտի մասնակցեն մարտերին: Ուրեմն, իմացե՛ք, գնում ենք հաղթելու: Քաջերին, միայն քաջերին է լսում և զորավիգ լինում պատերազմների քմահաճ աստվածը: Վախկոտներն իզուր են կանչում նրան: Խույ է նա նրանց համար:

Իսկապես ռազմական հոգեբանները ճշտել են, որ զինվորների երեսուն տոկոսը մարտերից առաջ է վախ զգում, երեսունհինգ տոկոսը՝ մարտերի ընթացքում, մնացածը՝ մարտերից հետո:

-Հաղթանա՛կ, միայն հաղթանա՛կ,- միասին կրկնեցին խարույկի շուրջը հավաքված զինվորները:

-Տեսնո՞ւմ եք այն խարույկները,- ձեռքը երկարեց զորավարը:- Թշնամին նույնպես արթուն է: Լուսաբացին կան մեր դրոշակը կբարձրացնե՛ք կան դիակս,- խրոխտ ծայնով շարունակեց Նժդեհը ու ձին հեծնելով՝ հեռացավ:

-Հաղթանա՛կ, հաղթանա՛կ,- նորից գոչեցին զինվորները:

Ձանգեզուրի և Արցախի միջև ընկած թուրքական տարածքի առաջին հատվածը թուրքերից մաքրվելուց հետո, կռվի ծանրությունը փոխադրվեց Ասկյուլում: Իր անառիկ դիրքով Ասկյուլումը երկար ժամանակ պատուհաս էր դարձել հայ բնակչության համար: Նրա սեպածն բարձունքը հասնում էր Օխչի գետի աջ ափը՝ Սուսան սարի դեմ-դիմաց: Այն փակում էր Ձանգեզուրի նախադուռը: Ձանգելանի շրջանի թուրքերն օգտագործելով այդ բարձունքը՝ չարիքներ էին գործում արևելյան Կապանի դեմ: Գարեգին Նժդեհը մտածել էր, թե մարտավարության որ ձևը պիտի կիրառել այդ բարձունքին հասնելու համար: «Ճակատային գրոհը մեզնից շատ զոհեր կխլի: Չի օգնի նաև պայթուցիկ տակառը, որովհետև այդ գծի բոլոր տիրապետող դիրքերը գտնվում են թշնամու ձեռքին: Մնում է վտանգավոր, բայց օրհնված թևանցը: Ասկյուլումի փեշերին հայկական հին եկեղեցի կա, ուր թուրք հովիվների ու որսորդների շներն են հանգստանում տոթ օրերին: Մենք պարտավոր ենք հաղթել և այդ եկեղեցուն առավոտյան աղոթել», - ճանապարհին շարունակեց մտածել Գարեգին Նժդեհը:

Հարձակողական պլան մշակելով՝ նա իր զորագունդը բաժանեց երկու մասի: Ուժերի մի մասը տեղափոխեց Ասկյուլումի ճակատը, մի չնչին մասը տարածեց Որոտանի ափին, մնացած ուժերը կենտրոնացրեց Ասկյուլումի դեմ:

Ապրիլի 6-ի առավոտյան նա ազդանշան տվեց գրոհելու: Ջորամասերից մեկը պիտի տեղահաներ Ասկյուլումից աջ ընկած մի քանի գյուղեր և փակեր այդ տարածքը Ձանգելանից շարժվող թշնամու ուժերի դեմ: Այդ գործողությամբ հնարավոր կլիներ արագ թևանցելու բարձունքներին ամրացած թուրքերի թիկունքը: Թշնամին տեսնելով հայերի առաջխաղացումը, ուժեղ հրաձգություն սկսեց: Հայկական ուժերին զորավարը հրամայել էր առաջանալ առանց կրակելու: Սակայն այդ ժամանակ մթության մեջ բոցերի տեսքով ազդանշան տրվեց, որ աջ զորասյունը հաջողությամբ էր մտել թշնամու գյուղերը և հրդեհում էր խոտի դեզերը, դարմանոցները: Քաջ զինվորներից մեկը դինամիտով պայթեցրեց ժայռերից մեկը: Թևանցային զորասյունը շարժվեց առաջ: Թշնամին պաշարված էր: Նա շփոթված լքեց Ասկյուլումի բարձունքները: Նժդեհի մարտավարական այս ձևը կոչվում էր «մուրճ ու ոստայն»: Այսինքն՝ գլխավոր ուժերը պասիվ վիճակի մեջ են մնում, մինչև թշնամին թուլանում է և այդ ժամանակ հնարավորություն է ստեղծվում թիկնային արագ շարժումով կենդանի մուրճը՝ ուժը առաջ բերել և հարվածել: Այդպես թշնամիների փախուստի ընթացքում մեծ մասը ջարդուխուրդ եղան Նժդեհի թևանցային ուժերի կողմից:

Արդեն լուսաբացին Ասկյուլումի վրա բարձրացավ հայկական եռագույնը: Նժդեհը մի խումբ զինվորներով մտան եկեղեցի և խաչակնքվեցին: Դրան հաջորդեցին մյուս վաշտերի հրամանատարներն ու զինվորները:

Ավետիսը ցնծության մեջ էր, քանզի իր զինակիցների հետ ջարդելով թուրքերին, վրեժխնդիր էր լինում աքսորի ճանապարհին հարազատ դարձած այն մարդկանց համար, ովքեր արդեն չկային: Նա լուռ աղոթեց և խաչակնքվեց հաստատ համոզված լինելով, որ աղոթքը կհասնի իր հորը, Մելքոն պապին: Նայելով ծխից սևացած հայկական եկեղեցու պատերին, Ավետիսը հասկացավ, որ յուրաքանչյուր հայ մարդու սրբազան պարտքը պիտի լինի հայրենիքին ծառայելը: Նա այդ կռիվներում համոզվեց, որ հայ մարդը քաջ է, դինացկուն, ուժեղ, հայրենասեր: Նա ընդունակ է տանել ցավը, տառապանքը, հաղթահարել և՛ սովը, և՛ ցուրտը ծանր պայմաններում, բայց երբեք չհանձնվել, որովհետև գիտե, որ այդպիսով ինքը պատասխանատու է ոչ միայն իր կյանքի համար: Հայ զինվորը անձնագոհաբար պաշտպանում է իր երկիրը, իր ընտանիքը: Ու նա երդվեց զենքը ձեռքին մինչև վերջ կռվել Գարեգին Նժդեհի զորագնդում:

-Ջինվորներ, թշնամու ցանկությամբ շարունակվում է մեր արշավանքը: Վաղը, երբ ձեր խենթ գրոհներից և զարկերից թշնամին շշմած կթողնի իր գյուղերը, ձեզ դարձյալ կողջունեն մեր հինավուրց, այսօր թշնամուց պղծված, բերդերի և վանքերի ավերակները: Երբ ձորերում կլսվի ձեր զենքերի շաշյունը, հայ կանայք ծնկաչոք կաղոթեն ձեր զենքի հաջողության համար... Եղե՛ք անխնա ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղե՛ք կանանց, ծերերի և երեխաների նկատմամբ: Մեզ մեր լեռնաշխարհի բարձունքներում և ձորերում զորավիզ կլինի Ղավիթ-Բեկի վրիժառու ստվերը: Ով տիրեց մեր լեռներին, նա է տերը Ջանգեզուրի: Ուրեմն՝ առա՛ջ, դեպի բարձունքներ: Մեզ հետ է Աստված և մեր պատերազմական բախտը: Առա՛ջ,-Գարեգին Նժդեհը խրոխտ կոչով դիմելով զինվորներին՝ մի խումբ ծիսավորներով առաջ սլացավ:

Ասկյուլումը գրավելուց հետո Ջանգեզուրի ինքնապաշտպանական ուժերը Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ նվաճեցին Ասկյուլումի շրջակա բլուրները մի քանի գյուղերի հետ միասին: Իսկ արդեն երեկոյան ժամերին հայկական վաշտերը հրդեհեցին թուրքական գյուղերը, նաև Խուջահանի հարուստ շուկան: Հաջորդ օրը մարտական նույնպիսի խանդավառությամբ գրավեցին Չավանդուրը՝ քաջ հայրենասեր Թորոս իշխանի ծննդավայրը, թեև թշնամին օգնություն էր ստացել Ջաբրայիլի և Ղարադաղի խաներից: Ապրիլի 13-ի գիշերը հայկական զորամասին հաջողվեց իրենց հսկողության տակ վերցնել Շուքուրաթազի և Բարթազի ձյունածածկ բարձունքները: Թշնամին ոչ միայն մարդկային մեծ կորուստներ ունեցավ, այլև մեծ էր նաև նրա թողած ավարն ու հացի պաշարը: Գերազանցապես իրար հաջորդող այս մարտերը հաղթանակի փառքով պսակեցին մեծ զորավարի անունը:

1920 թ. ապրիլի 22-ին այդ հաղթանակը տոնելու համար Գորիսում կազմակերպվեց տոնահանդես և զորահանդես: Կապարգողթի ժողովուրդը լցվել էր հրապարակ և ցնծությամբ էր տոնում բոլորի հաղթանակը, քանի որ Ջանգեզուրում ապրող յուրաքանչյուր ոք իր ակտիվ մասնակցությունն էր ունեցել ձեռք բերված ռազմական հաջողությունների համար՝ սկսած մանկահասակ երեխաներից, կանանցից մինչև դաշտերում անասուններ արածեցնող հովիվը:

Հրապարակում զինվորական շարքերով կանգնած զորքի և ժողովրդի առջև ջերմ ելույթներով հանդես եկան Ջանգեզուրի քաղաքացիական մասի կառավարիչ, զինվորական կոմիսար Մելիք Յուլյանը, Հայաստանի խորհրդարանի անդամ Ջ.Յուլյանը, փառապանծ հերոս Գարեգին Նժդեհը: Կապանի հայությունը սիրելի զորավարին դրոշակ և «Պատվո սուր» նվիրեց, իսկ Սմբատ Մելիք Յուլյանն իր ստացած Գևորգյան խաչն անձամբ կախեց Նժդեհի կրծքին: Ժողովուրդը նաև Նժդեհին Ղավիթ -Բեկ կոչումը շնորհեց, քանի որ Նժդեհը դարձավ Ջանգեզուրի հայության ապավենը, պաշտպանն ու առաջնորդը: Այնինչ թշնամիները նրան Աժդահա փաշա էին անվանում:

Այդ ընթացքում սուրհանդակներ ժամանեցին Արցախից և նամակ հանձնեցին Ջանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար, զեներալ մայոր Նիկոլայ Ղազարյանին: Նամակում գրված էր. «Այժմ, երբ Արցախը բարձրացրել է ապստամբության սրբազան դրոշը և արնաքամ է լինում, պետք է օգնել նրան ոչ թե զորամասերով կամ դրամական միջոցներով, այլ մի փորձված առաջնորդով և ռազմամթերքով: Այդպիսի առաջնորդ այժմ գնդապետ Նժդեհն է, որի անունը դարձել է վրիժառության խորհրդանշան, և որի անունից թշնամին սարսափահար փախչում է, ինչպես ցույց տվեցին մոտիկ անցյալի դեպքերը: Երբ թշնամու կանոնավոր զորքերը լսեցին Նժդեհի Գողթանից վերադառնալու մասին, խուճապահար փախուստի դիմեցին: Գնդապետ Նժդեհը ստեղծված է ժողովրդի համար և նա պիտի լինի այնտեղ, ուր նրա կարիքն ավելի է զգացվում»:

Գեներալ մայորը ներկաներին ծանոթացրեց նամակի բովանդակությանը, և նրանք որոշեցին ընդառաջել արցախահայությանը: Նախ Մելիք-Յուլյանը կոչով դիմեց Ջանգեզուրի քաջարի զորքին ու գյուղացիությանը.

-Տաճկա-ադրբեջանական միությունը զինվորական եռուն գործողությունների է դիմել՝ օղակելով Արցախի սահմանները, ընդհանուր զինաթափության պահանջ է առաջադրել Արցախի հայությանը: Ջանգեզուրի հերոսներ, ձեզ եմ դիմում, ի զե՛ն, պաշտպանելու մեր պատմական Արցախը, որը ծածկված է հայության դարավոր կոթողներով, ցողված է մեր փառապանծ նախնիների արյունով:

Քաջարի մարտիկներ, կոչ եմ անում ձեզ՝ առա՛ջ, մինչև որ ազատ Հայաստանի Հանրապետության դրոշակը կծածանվի Արցախի բոլոր ամրոցների վրա...Առանց Ջանգեզուր-Արցախի չկա Հայաստան:

Այնուհետև առավել զգացմունքային, պատկերավոր ու անգերազանցելի հուժկու կոչով հանդես եկավ Գարեգին Նժդեհը:

-Ժողովուրդ, քեզ հետ խոսողը քո հրամանատարն է, քո վիրավոր սրտից զարնված հրամանատարը, որի սուրը վաղուց է, ինչ հանուն քո ինքնապաշտպանության չի հանգստացել պատյանում: Մնա՞ց մի բան, որ խնայելի, չզոհաբերելի քո՛ ազատության, քո՛ փրկության, քո՛ փառքի գործին: Քո՛ դաշտերում, քո՛ հողի վրա իմ արյունն է թափվել: Ղեռ չեն փակվել թշնամու՛ ինձ հասցրած վերքերը, իսկ քոնը, ժողովուրդ, քո հասցրածը միշտ թարմ պիտի մնա ու հազար վերքերի ցավով պիտի մորմոքվես: Ժողովուրդ, քո պատմության բոլոր դարերի անմոռաց պատգամ եմ հղում սերունդներին՝ չներել, չներել թուրքին: Այս օրերին էլ, երբ մենք թուրքերից ազատեցինք տասնյակ գյուղեր, նրանք փորձում են գրավել Արցախը: Ղա մենք թույլ չենք տա, քանի որ այդպիսով վտանգված կլինի ոչ միայն Սյունիքը, այլև՝ Հայաստանը: Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի: Առանց աշխարհագրական Հայաստանի այդ հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող: Հայաստանի կառավարությունն արդեն Արցախ է ուղարկել մի զորամաս Ղրոյի /Ղրաստամատ Կանայան/ հրամանատարությամբ: Կապարգողթի մեր զինված ուժերն էլ պիտի անպայման մասնակցեն այդ կռիվներին:

-Ար-ցախ...Հաղ-թա-նա՛կ,- վանկարկում էին մարդիկ և հրապարակում կանգնած հարյուրավոր զինվորները:

Գարեգին Նժդեհը բարձրացրեց աջ ձեռքը և այն բռունցք արած՝ նրանց հետ միասին կրկնեց. «Առա՛ջ, հաղթանա՛կ»: Ջորավարի կրակոտ ճառից հետո տոնահանդեսի կազմակերպիչները թամբելով իրենց ձիերը, առաջ շարժվեցին: Նժդեհը հրավիրեց նրանց ճաշի: ՀՀ խորհրդարանի անդամ Ջ. Յուլյանը հրաժարվեց, պատճառաբանելով, որ Երևանում գործեր ունի: Զինվորական կոմիսար Մելիք -Յուլյանի հետ նա ուղղվեց դեպի իր տան կողմը: Ողջ ճանապարհի ընթացքում Նժդեհը մտածում էր Արցախի մասին, քանի որ անգլիական գաղութարարները Ջանգեզուրն ու Արցախը հայտարարել էին Ադրբեջանի տարածք: Հայտնի էր, որ Արցախի հայությունը զայրույթով ընդունեց այդ հայտարարությունը և շարունակեց պայքարը մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար: 1920 թ. մարտի 22-ի երեկոյան իսլամական նովրուզ-բայրամի օրը թուրքերը ադրբեջանցիների հետ ներխուժեցին Շուշի՝ հրի մատնելով քաղաքի հայկական մասը և շրջակա գյուղերը: Այդ օրերին սպանվեց 20.000 հայ, 15.000-ը դարձան փախստականներ:

Երբ ձիավորները տեղ հասան, ձիերը կապեցին բակում և բարձրացան երկրորդ հարկ, Նժդեհի տնտեսվարը՝ Խորենը, դիմավորեց նրանց: Խոհանոցում երկու կապանցի կանայք կային, ովքեր ուտելիք էին բերել զորավարի համար: Այն սովորական ճաշերից տարբերվում էր, քանի որ տոնահանդեսի կապակցությամբ գառ էին մորթել:

-Օ՛, դուք ինձ փորձել եք ճոխությա՞նը հարմարեցնել,-կատակեց Նժդեհը՝ տեսնելով կանանց մատուցած ճաշը՝ գառան խաշլամա:

-Ընկեր Գարեգին, դուք երևի չեք էլ հիշի, թե երբ եք այն վերջին անգամ համտեսել: Մեր ժողովուրդը մեծ սիրով ու խոնարհումով է ծառայում ձեզ, -ասաց տարեց կանանցից մեկը:

-Այդ ես եմ անձնվիրաբար ձեզ ծառայում: Դուք բոլորդ ծառայում եք հայրենիքի համար: Ինացած եղե՞ք, որ բաներ կան, որոնք հավիտենական պաշտելի են՝ Աստված, Հայրենիք, Մայր,- պատասխանեց գորավարը և իր հյուրի հետ լվացվելուց հետո հաճույքով տեղավորվեց ճաշի սեղանի շուրջը:

-Ե՞րբ ես մտադիր դեպի Արցախ շարժվել,- նրա մտքերը կարդալով՝ հարցրեց զինվորական կոմիսարը:

-Հավանաբար երեք օր հետո: Ճաշից հետո պետք է գնամ Կապանի հանքերի իմ շտաբը, կիսկեմ, որ պայթուցիկ տակառներ պատրաստվեն...Համոզված եմ, մենք ահագին ջանքեր կգործադրենք դեռ Ջանգեզուրի և Արցախի միջև ընկած Բարգուշատ-Հաքարլու տարածքում թուրքերից ազատվելու համար: Ցավում եմ, որ Շուշիում հայերի կոտորածը եղավ ոչ արցախցիների մեղքով: Շուշի քաղաքի զինվորական ջոկատը ղեկավարում էր մի վաճառական, որը ռազմական գործից ոչինչ չէր հասկանում: Երևանում սխալ որոշում էր կայացվել, երբ Արցախի ազատագրության պատասխանատու էր նշանակել նման մարդու, և Շուշին վերածվեց մոխիրների կույտի: Շատ ողբալի է...Այնինչ ունենք զինվորականներ, որոնց կարելի էր վստահել քաղաքի պաշտպանությունը:

-Ի՞նչ արած... Թուրքերը, միևնույն է, ամեն պահ առիթ են փնտրում հայերին իրենց ծննդավայրից ջնջելու և արտաքսելու համար,- ի պատասխան ասաց Մելիք- Յուլյանը: Կարևորն այն է, որ ապրիլի 14-ին Դրոյի գորագունդն արդեն Շուշիում է և կռիվներ է մղում Վարանդայի ողջ տարածքում:

Դուռը կամաց ծեծեցին: Նժդեհի գրագիրն էր՝ Խորենը:

-Սպարապետ, ձեզ մոտ սուրհանդակներ են եկել:

-Ներս թողեք:

Ներս մտան երկու սուրհանդակներ՝ զինված սրերով և ատրճանակներով:

-Ընկեր Գարեգին, -խոսեց նրանցից ավագը:- Այդ մենք ենք Ջանգեզուրի հրամանատարությանն ուղղված նամակը բերել Արցախից և պետք է այդ նամակի պատասխանը մեզ հետ տանենք:

-Այո: Իհարկե,- Գարեգին Նժդեհը մոտեցավ գրապահարանին, դարակից հանեց մի թուղթ և գրեց պատասխանը, որ անպայման օգնության կհասնեն Արցախի ժողովրդին մի քանի օրից: Հետո մի ծրար վերցրեց և գրած երկտողը դնելով այնտեղ, դիմեց նույն սուրհանդակին:- Ե՞րբ եք ուզում ճանապարհվել:

-Երևի գիշերը,- պատասխանեց սուրհանդակը՝ նամակը թաքցնելով շորերի ծայրում:

-Այդպես ավելի անվտանգ կլինի:

-Շնորհակալ եմք, ընկեր Գարեգին:

Սուրհանդակներն ուզում էին հեռանալ, երբ գորավարը կանչեց Խորենին:

-Խորեն, տղաների հետ ուտելիք դիր: Նրանք երկար ճանապարհ ունեն անցնելու:

-Լսում եմ, սպարապետ:

Գրագրի հեռանալուց հետո Նժդեհը դիմեց սուրհանդակներին:

-Ի՞նչ տեղեկություն ունեք գեներալ Դրոյի մարտերից:

Այս անգամ սուրհանդակներից ավելի երիտասարդը իսկույն ևեթ ոգևորված պատասխանեց.

-Նա կոչով դիմել է արցախցիներին, խոստացել, որ կփրկի Արցախը: Հայտարարել է 23-25 տարեկան տղամարդկանց զորահավաք: Դրոն ետ է գրավել Ասկերանը և Շուշին: Արցախում նրա հրամանատարության տակ են մտնում 3000 զինվորներ ու կամավորներ: Նրա անմիջական ղեկավարությամբ հեռախոսային ցանցով է պատված հիմա Վարանդայի զլխավոր ձակատներն ու կենտրոնները:

-Շատ լավ, -զվարթ արծագանքեց զորավարը:

Խորենը ներս մտավ ուտելիքի տոպրակը ձեռքին և փոխանցեց սուրհանդակներին:

-Բարի ճանապարհ: Կարող եք գնալ,- ասաց Նժդեհը:

Սուրհանդակների հեռանալուց հետո Նժդեհը դիմեց զինվորական կոմիսարին:

-Մի քանի օր առաջ՝ ապրիլի 17-ին, մտերիմ ընկերս՝ Աշոտ Մելիք- Մուսյանն ինձ նամակ էր ուղարկել, որտեղ գրել է. «Գնա՛, վճռականորեն գնա՛ անկաշառ զինվորականի շավիղով, թող չխենթացնի քեզ այն հանգամանքը, որ արցախցիները ևս լսել են քո քաջագործությունները: Քո մահարձանի պատվանդանը վաղուց է, որ ես կոփում եմ, որպեսզի նա լինի հավիտենական, բոլոր քարերն անխառն մաքուր գրանիտից պիտի պատրաստեմ...»:

Ջանգեզուրի զինվորական կոմիսարը բարյացակամորեն ժպտաց զորավարին, որն առանձակի հպարտությամբ էր շեշտում իրեն ուղղված ընկերոջ ինքնասիրությունը շոյող տողերը: Թեև նա անվերապահորեն համոզված էր, որ Դրոյի և Գարեգին Նժդեհի օգնությամբ կարող էին արցախցիներն ազատվել թուրքերից՝ անկախ պահելով հայկական լեռնաշխարհը:

«Ես քո կենդանի սուրն եմ, հայրենիք, որը պետք է հաղթանակ բերի քեզ», - նժդեհյան այս կոչով էր սնվում Ջանգեզուրի համար կռվող յուրաքանչյուր մարտիկ: Ավետիսը քաջ գիտակցում էր, որ հայ երիտասարդը նախ և առաջ պարտավոր է ծառայել բանակում, առավել ևս, եթե պատերազմ է, զենքը ձեռքին պաշտպանել հայրենիքը: Ու երիցս հպարտ էր, որ զինվորների հետ հաղթահարելով բոլոր դժվարությունները, թուրքերից ազատագրում էին հայկական հողերը: Թեև, ինչ խոսք, նա գտնվում էր իր ծննդավայրից բավականին հեռու՝ լեռնային մի տարածքում, ուր անգամ կլիմայական պայմաններն ուրիշ էին: Բնականաբար, հարթավայրային միջավայրը տարբերվում էր լեռնային գոտուց: Եվ հայկական վաշտերում գտնվող զինվորների առօրյան հաստատապես տարբերվում էր առհասարակ ուրիշ երկրներում առկա զինվորական կյանքից: Ռազմական հագուստ չունենալով, ինքը Ջավենի հետ մեկտեղ իրենց հետ բերած շորերն էին փոխում, երկարաձիտ կոշիկների փոխարեն մնացել էին իրենց քաղաքացիական կոշիկներով ու բոլորովին հարմար չէր լեռներում դրանցով շարժվելը: Ջինվորների համար սնունդը բերում էին գյուղացիները: Հետևաբար, ճաշում էին ոչ ժամանակին: Ուտում էին ինչ որ պատահեր:

Յուրաքանչյուրին մի հրացան էր տրված և փամփուշտներ: Ավետիսը քնում էր՝ զենքը միշտ ձեռքին պինդ բռնած: Այն դարձել էր իր հավատարիմ ընկերը, որն օգնեց իրեն ապացուցել, որ թշնամուց վրեժխնդիր պիտի լինել նույն զենքով: Ջանգեզուրում շարունակվող կռիվները Ավետիսին դարձրել էին ճակատագրին հավատացող: Նա հավատում էր, որ եթե իրեն վիճակված էր մեռնել, ուրեմն կմեռնի, ինչ էլ որ անի: Հիշեց, թե ինչպես իրենց վաշտի զինվորներից մեկը մարտի նախօրեին վատ երազ էր տեսել, որ իբրև իր ատամները թափվում էին: Հաջորդ օրը թշնամու գնդացրային հարվածից նա երկու ոտքերից վիրավորվեց: Մինչև սանիտարները նրան կտանեին, ճանապարհին մահացավ շատ արյուն կորցնելու պատճառով: Դրա համար էլ Ավետիսը հասկացավ, որ պատերազմի ժամանակ զինվորը հաճույք է ստանում յուրաքանչյուր մանրուքից, որովհետև ամեն անգամ մարտերից առաջ մտածում ես, որ կհանդիպես մահվանը դեմ-դիմաց: Սակայն նաև տարօրինակ հաճույք զգաց, երբ սպանեց թուրքերին: Նա մտածեց, որ երևի իր շրջապատում ոչ ոք այնպես չէր ատում թշնամուն, ինչպես ինքը, որ կորցրել էր

հարազատներին, ընկերներին, ծննդավայրը: Նա այժմ մարմնում եղած միլիոնավոր բջիջներով զգում ու գիտակցում էր Գարեգին Նժդեհի կոչն ուղղված զինվորներին. «Հանուն հայրենիքի... Առաջ... Հաղթանա՛կ»:

Այնուհետև Ավետիսը հիշեց, որ երկու օր առաջ Ջավենի հետ դիրքերում հերթապահություն անելիս ուշ երեկոյան մի թուրքի գերի վերցրին: Նրանք սկզբում թեթևակի շարժում զգացին իրենց շուրջը, բայց հետո լուսնի շողերի ներքո մարդկային ստվեր նշմարելով, անշշուկ քայլերով փորձեցին մոտենալ նրան: Հաստ ծառաբնի մոտ վախվորած մի մարդ էր կուչ եկել:

-Ո՞վ ես դու,- հրացանն ուղղելով նրան՝ հարցրեց Ավետիսը:

Ջավենն այդ ընթացքում թիկունքից բահով հարվածեց անծանոթին: Նա ընկավ գետնին և աղերսով դիմեց տղաներին, որ իրեն չսպանեն, բաց թողնեն:

-Ինչո՞ւ էիր այստեղ հայտնվել,- թուրքերենով հարցրեց Ավետիսը:

-Լեզու էի ուզում բռնել ու տանել: Մերոնք խոստացել էին շատ փող տալ: Դե, ես էլ ընտանիք ունեմ, ցանկացա մի քիչ փող վաստակել,- պատասխանեց գերեվարվածը:

-Այսինքն՝ ավելի ճիշտ խոսիր, մեզնից մեկի գլուխը պիտի կտրեիր ու տանեիր,- հարցրեց Ավետիսը:

Թուրք գերին գլխով դրական նշան արեց:

-Հիմա կլինի հակառակը: Քեզ կսպանեն ու կնետեն ձորն ի վեր, որ գիշատիչների կեր դառնաս,- զայրացավ Ավետիսը ու ցանկացավ հրացանով կրակել, երբ Ջավենը կանգնեցրեց նրան:

-Սպասիր, Ավետիս, նրան կհանձնենք մեր դասակի հրամանատար Սիսակին: Հնարավոր է, որ մահից առաջ մեզ հետաքրքրող տվյալներ հայտնի:

-Ուրեմն, դու ինքդ այս սրիկային Սիսակի մոտ տար,- ասաց Ավետիսը՝ իջեցնելով հրացանի փողը:

Սակայն ինչ էլ լիներ, մարտերից առաջ կամ հետո զինվորները փորձում էին ամեն գնով գույներ հաղորդել իրենց ծանր կյանքին: Մարտիկները սիրում են երգել, պատմել տարբեր ծիծաղաշարժ պատմություններ, որոնց մեծ մասը հնարում էին:

Այդ օրն էլ երեկոյան դասակի տղաներով հավաքվել և կատակներ էին անում: Գեղամը՝ զինվորներից մեկը, որն ավելի տարիքով էր, պատմեց սերժանտի մասին մի ծիծաղաշարժ դեպք:

-Երկու զինվորներ որոշում են կատակել սերժանտի հետ: Մոտենում են և հարցնում. «Ընկեր սերժանտ, ի՞նչն է ծանր, մի կիլոգրամ երկաթը, թե՞ մի կիլոգրամ բամբակը»: «Հիմար հարց է,- պատասխանում է նա:-Իհարկե, երկաթը»: «Ո՛չ, հավասար են իրար», - ասում է զինվորներից մեկը: «Այդ դեպքում հիմա քո գլխին կխփեմ մի կիլոգրամ բամբակով, իսկ հետո՝ մի կիլոգրամ երկաթով, այն ժամանակ կտեսնենք»:

Ձինվորները քահ-քահ ծիծաղեցին: Ջավենի թիկունքին հենված Սարոն նույնպես ուզեց հետաքրքրաշարժ բան պատմել:

-Մի տղամարդու հաջողվում է բռնել ոսկե ձկնիկին, որը լեզու է առնում և ասում. «Բաց թող ինձ, ինչ կուզենաս, կկատարեմ ցանկությունդ»: Տղամարդը պատասխանում է. «Ուզում եմ հերոս դառնալ»: Չկնիկը հեռանում է, իսկ տղամարդու ձեռքին հայտնվում է երկու նռնակ հինգ տանկի դեմ:

Տղաները դարձյալ ուրախ ծիծաղեցին: Սարոն այս անգամ շարունակեց.

-Մի հանճարեղ տղա ավարտում է դպրոցը տասներեք տարեկանում, համալսարանը՝ տասնյոթ տարեկանում, իսկ հետո՞...,-մի պահ դադար է առնում:

Բոլորը ուշի-ուշով լսելով նրան՝ հարցնում են այս ու այն կողմից, կրկնելով՝ հետո՞:

Սարոն ծիծաղելով շարունակում է.

-Նա տասը տարի թաքնվում է անտառում, որ բանակում չծառայի:

Ջինվորները ուրախ հռռացին, երբ հանկարծ ներս մտավ վաշտի հրամանատար Շահենը: Նրանք անմիջապես ոտքի կանգնեցին՝ ջանալով դեմքերին լուրջ արտահայտություն տալ:

-Տեսնում եմ, որ մարտերից առաջ ձեր տրամադրությունը հաղթական է:

-Ընկեր Շահեն, -նրան դիմեց Սարոն,- հաղթանակի ձգտելու համար պետք է անպայման ուրախ պահենք մեզ:

-Վաղը բոլորդ մեկ մարդու պես ուշադիր պիտի հետևեք իմ հրահանգներին,- շարունակեց հրամանատարը:-Իսկ հիմա պատրաստվե՛ք, որ գնանք ընթրիքի: Շահենը փորձառու ժողովրդական վաշտապետ էր: Նա անչափ հոգատար էր իր զինվորների նկատմամբ: Երեք անգամ վիրավորվել էր մարտիկների կյանքը փրկելու պատճառով:

Ընթրիքից հետո զինվորները ևս մի փոքր հանգստացան: Իսկ երբ պառկեցին քնելու, նրանցից յուրաքանչյուրն ինչ-որ չափով ներքուստ տագնապ էր զգում: Բնականաբար, ամեն մեկը հստակ գիտակցում էր, որ մարտական տվյալ գործողությունն իր կյանքի համար կարող էր դառնալ վերջինը:

Ավետիսը մթության մեջ ձեռքը տարավ դեպի վզից կախված խաչը և շոշափեց այն: Ջգաց, որ, այնուհանդերձ, սպասվելիք մարտից առաջ սովորականից ավելի շատ էր անհանգիստ:

-Ջավե՞ն,-դիմեց նա ընկերոջը:-Քնա՞ծ ես:

-Ո՛չ: Ի՞նչ կա:

-Եթե հանկարծ մարտերում ինձ հետ որևէ բան պատահի, խոստացի՛ր, որ եկեղեցում մոմ կվառես իմ հոգու փրկության համար:

-Ավետի՞ս...Ի՞նչ ծանր մտքեր են տանջում քեզ: Ջանգեզուրն ազատագրված է թուրքերից, Արցախում էլ մեզ սպասվող կռիվներից հետո մենք միասին կվերադառնանք Հունաստան:

-Դա լավագույն տարբերակն է, որ մեզ կարող է սպասվել: Բայց չի իմացվի...Հենց այնպես զգուշացնում եմ քեզ որպես կրտսեր եղբոր:

-Թափառական մտքերդ հեռու տա՛ր քեզնից: Ես միշտ քո կողքին կլինեմ:

Մի ակնթարթ լռելուց հետո Ավետիսը շարունակեց.

-Գիտեմ...Բայց պատերազմ է: Միայն Աստված գիտե, թե մեզ հետ ինչ կարող է պատահել: Խոստացի՛ր, որ դու...

-Խոստանում եմ, -ընկերոջ խոսքը կիսատ թողնելով՝ պատասխանեց Ջավենը:- Իսկ հիմա քնի՛ր, վաղը նոր ու հաղթական օր կբացվի մեզ համար: Ես հավատում եմ, որ ամեն ինչ լավ կլինի: Բարի գիշեր...

Ավետիսն այլևս ոչինչ չխոսեց: Երկար մտորումներից հետո միայն կարողացավ քնել:

Լեռներից հրաշալի կարող են լինել միայն լեռները: Ով մի անգամ եղել է լեռներում, նա կհասկանա, թե ինչպիսի գեղեցկություն ու հզորություն է պարուրված այնտեղ: Լեռները մի ամբողջ աշխարհ են՝ հիասքանչ, հետաքրքրաշարժ, վտանգավոր և կախարհող: Նա գրավում է մարդկանց՝ հետախուզելու, թե ինչ է թաքնված այս կամ այն կիրճում ու բարձունքում: Շնչասպառ ես լինում, երբ բարձրանում ես լեռան գագաթը: Սակայն երբ նայում ես վերևից ներքև ընկած գետերին, ճանապարհներին, գյուղերին, ծաղկած այգիներին, աննկարագրելի հոգեկան բավականություն ես ստանում: Քո գլխավերևում լողում են ամպերը, և թվում է, թե ձեռքդ կհասնի դրանց: Դա միանգամայն անմոռանալի

զգացողությունն է: Ամբողջ աշխարհը կարծես ոտքերիդ առջև է փռված: Մեկ անգամ լինելով այնտեղ, հավերժ այնտեղ ես թողնում քո սրտի մի մասնիկը:

Ցավոք, կռիվները լեռնային միջավայրում համարվում է մարտական գործողությունների բարդ տեսակը: Ջինվորները պետք է պայքարեն ոչ միայն թշնամու, այլև բնության տարերքի, լեռնային դժվարահաս տեղանքի դեմ: Բազմաթիվ նեղ կիրճերն ու լեռնացքները դժվարացնում են զորամասերի տեղաշարժը և թշնամու համար հանդիսանում են հարմարավետ տեղանքներ արգելապատնեշ և դարան սարքելու համար: Բացի այդ, լեռնային բարդ ռելիեֆը սահմանափակում է զորամասերի գործելու ձևը: Դժվարանում է ինչպես նաև հսկողությունը չնկատվող տարածքի վրա և անհավասար գոտիներ են առաջանում կրակելու համար: Նաև առանցքային կետեր են հանդիսանում կամուրջները, լեռնանցքները: Այնինչ ով բարձրանում է լեռները, նա է ավելի ուժեղը:

Գարեգին Նժդեհն ի սկզբանե ռազմական իր շտաբը ստեղծելով Կապանի հանքերում, շրջագայեց Ջանգեզուրի գավառները, ուսումնասիրեց երկրամասի աշխարհագրությունը և տեղանքը: Կազմելով ժողովրդական վաշտեր, մարդկանց սովորեցրեց լեռներում կռվելու արվեստը, անշուշտ, ծանոթացնելով ռազմավարական զանազան հնարքների, այդ թվում լեռնային տեղեկագրության առավելություններից օգտվելու հետ: Կազմակերպվեցին նաև ռազմափորձեր:

Դեպի Արցախ մեկնելուց առաջ սպարապետը հնուտ հետախույզներ էր ուղարկել ուսումնասիրելու Ջանգեզուրի և Արցախի միջև ընկած Բարգուշատ- Հաքարլու տարածքը: Ինչպես և կանխագգում էր, տարբեր հատվածներում թշնամու զորամասերի կուտակումներ կային: Անհրաժեշտ էր անպայման ջախջախել թշնամուն, որպեսզի կարողանար մտնել Արցախի Դիզակի /Հադրութի/ շրջան., չեզոքացնելու համար Դրոյի զորքերի աջ թևին սպառնացող վտանգը:

Կեսգիշերին շեփորը ոտքի հանեց զինվորներին:

-Ջինվորներ, առա՛ջ,- արշավանքից առաջ հնչեց Նժդեհի ձայնը:- Դեպի հաղթանակ...Ինչքան էլ թշնամու զորքը թվով շատ լինի, ունենա արդիական զենքեր, չպետք է թույլ տանք, որ Սյունիքը և Արցախը վերածվի դիակների կամուրջի Արևելքի և Արևմուտքի առջև: Պիտի հաղթել գոյության իրավունքը չկորցնելու համար: Կան հաղթություն, կան հաղթական մահ:

Նժդեհը հարձակողական պլան էր մշակել: Իսկ հարձակողական գործողությունները լեռներում մշակում են ոչ թե ամբողջական զորագնդերով, այլ տարբեր ուղղություններով՝ լեռնային հովիտների, լեռնաշղթաների և ճանապարհների երկայնությամբ: Մինչ հարձակումն սկսելը՝ հայտնաբերվում էին թշնամու կրակային կետերը: Դեռ լույսը չբացված՝ հայ մարտիկները թուրքերի վրա գլորեցին հինգ փթանոց մի պայթուցիկ տակառ: Սկսվեց հարձակումը: Վաշտերից մեկը հայտնվեց թիկունքում: Մեկ ուրիշ զորամաս պիտի գրավեր թշնամու երկու դիրքերը: Սակայն հակառակորդը հնարավորություն ունեցավ պաշտպանվել, և վաշտերից մեկին հսկայական պայթուցիկների առատ գործածության շնորհիվ հաջողվեց դուրս գալ թշնամու օղակից: Այդ օրը ոչ մի հաջողություն չեղավ: Կռիվները շարունակվեցին: Գարեգին Նժդեհը առանձնացրել էր ուժեղ պահուստային ուժերը, քանի որ լեռնային տեղանքը լի էր անսպասելի իրավիճակներով: Լեռներում վճռորոշ էր հարձակումը հատկապես լեռնանցքների վրա: Երկրորդ օրը որոշվեց ինչ էլ լինի գրավել բարձունքներից մեկը, որը կարող էր իշխել լեռնանցքների վրա: Այդպես էր հարձակվողը հայտնվում թամբի վրա:

Ջինվորները հագիվ քարշ տվին հրանոթային արկերի հետ լեռնային հրանոթը՝ տեղադրելով այն լեռան վրա: Հրանոթների մոտ սովորաբար ավելի տարեցներն ու փորձառուներն էին: Նորից սկսվեցին մարտերը: Նժդեհը կանխատեսելով թշնամու գրոհի

ուղղությունները, իր և հակառակորդի միջև գտնվող բարձունքներում՝ ժայռերի տակ, իր մարտիկներին հրամայեց թաքցնել մեծ քանակությամբ դինամիտ: Թշնամին գրոհը դեռ չսկսած՝ այդ ականները պայթեցվեցին՝ առաջ բերելով «քարե կարկուտ» և ծխի ու փոշու ամպերով պատելով ձորերը: Միանգամից խուճապ առաջացավ թշնամու շարքերում, մանավանդ որ թուրքերը լեռնային կռիվները դեկավարելու փորձ չունեին: Սակայն թշնամին կատաղած դեպի հայերի դիրքերն էր շարունակում կրակել գնդացիներից, հրանոթներից: Ցավոք, հրանոթային արկերից մեկը կպավ Ավետիսի կրծքին, ու նա ընկավ:

Ջավենը շփոթված և հուզված բռնեց ընկերոջ ձեռքից: Իրենց դասակի հրամանատարը՝ Սարոն, հրամայեց կանչել սանիտարին, իսկ ինքը մոտեցավ իր վիրավոր գինվորին:

-Համբերիր, Ավետիս: Ամեն ինչ լավ կլինի:

-Ավետիս, ես քո կողքին եմ: Դու միշտ ուժեղ ես եղել, մի քիչ էլ դիմացիր, եղբայրս,- հուզված, գրեթե լացակումած ասաց Ջավենը:

Ավետիսը ծանր էր շնչում: Ջգում էր, որ շնչառությունը գնալով ավելի էր դանդաղում, որովհետև նաև արյունաքամ էր լինում:

-Ջավեն, պինդ մնա՛...Հիշիր, թե ինչ եմ քեզնից խնդրել: Ես հաղթական մահս գտա հայոց լեռներում, որն ավելի մոտ է երկնքին: Մնա՛ս բարով, ընկերս,- և նա ուշաթափված գլուխը մի կողմի վրա թեքեց:

Սանիտարը չուշացավ: Նա իր հետ մի կերպ քարշ տալով՝ պատգարակ էր բերել: Սակայն երբ բռնեց Ավետիսի ձեռքից, զգաց, որ զարկերակն այլևս չէր խփում: Նայելով Սարոյին և Ջավենին՝ նա գլուխը բացասաբար օրորեց: Ջավենը ծունկ չոքեց ընկերոջ կողքին և բարձրաձայն դառը հեկեկաց՝ ցնցելով ուսերը:

Այդ ընթացքում քաջ գինվորներից մեկը դինամիտով պայթեցրեց ևս մի հսկա ժայռ, և մոտակա լեռներն ու ձորերը թնդացնող դղրդյունին հետևեցին հայկական վաշտերի հաղթական ուռաները...